AMERIABANK

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021

AMERIABANK

Տեխնոլոգիական փոխակերպման և թվային էկոհամակարգերի զարգացման աշխարհում մեզ ոգեշնչում են բնական էկոհամակարգերի էվոլյուցիան և փոխկապակցվածությունը:

2021թ. տարեկան հաշվետվությունը բնական էկոհամակարգերի և դրանք պահպանելու կարևորության մասին է: Հաշվետվության յուրաքանչյուր բաժին նվիրված է որևէ էկոհամակարգի ու Հայաստանի տեսարժան վայրերին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

01 **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ**
Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ
Խորհրդի նախագահի ուղերձը
Գլխավոր տնօրենի ուղերձը
Պատմական իրադարձություններ
Միջազգային գործընկերներ
Մրցանակներ

02 **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
Արտաքին միջավայր
ՀՀ բանկային համակարգը
Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում
Բիզնես-մոդելը և ռազմավարությունը
Մանրածախ բանկային գործառնություններ
Կորպորատիվ և ներդրումային բանկային գործառնություններ
Առևտրային գործառնություններ
Նորարարություն և թվայնացում
Պատասխանատու բիզնես

03 **ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**
Ռիսկերի կառավարման նպատակները և սկզբունքները
Ռիսկերի կառավարման համակարգ
Ռիսկերի գործընթացների կազմակերպում և կառավարում
Ռիսկի ախորժակ

04 **ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
Խորհրդի նախագահի կորպորատիվ կառավարման ուղերձ
Կորպորատիվ կառավարման կառուցվածքը
Տնօրենների խորհուրդ
Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ
Տնօրենների խորհրդի անդամներ
Տնօրինություն և գլխավոր տնօրեն
Կազմակերպական կառուցվածքը
Մեր անձնակազմը

05 **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

06 **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
Անկախ աուդիտորի հաշվետվությունը
Ֆինանսական հաշվետվություններ

07 **ՀԱՎԵԼՎԱԾ**
Հապավումներ

© Վազգեն Հարությունյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

5-26

Ազատի ջրամբար,
Արարատի մարզ

Ջրային ռեսուրսներ

Ջուրն արժեք է: Ջրի աճող պահանջարկը ստիպում է մեզ ավելի հոգատար լինել, որպեսզի այսօր ու ապագայում կյանքն ու մարդկության զարգացումը հոսեն կայուն հունով:

© Մուշեղ Հակոբյան

Համառոտ ակնարկ

Իր ավելի քան 1 տրիլիոն դրամ ակտիվներով՝ Ամերիաբանկը Հայաստանի խոշորագույն ֆինանսական հաստատությունն է և ՀՀ տնտեսության առավել նշանակալի դերակատարներից մեկը: Հանդիսանալով դինամիկ զարգացող ունիվերսալ բանկ՝ Ամերիաբանկն իր սպասարկման բազմաֆունկցիոնալ հարթակի միջոցով մատուցում է նորարարական բանկային ծառայությունների ընդարձակ փաթեթ՝ թվային պրոդուկտների հստակ շեշտադրմամբ: Ամերիաբանկը որդեգրել է բիզնեսի պատասխանատու վարման քաղաքականությունը՝ նպաստելով Հայաստանի անցմանը դեպի կայուն ապագա:

Համառոտ ակնարկ

Հայաստանի բանկային համակարգի առաջատարը
Առաջինը շուկայում հիմնական ֆինանսական ցուցանիշներով գրեթե մեկ տասնամյակ շարունակ, աջակցություն Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերին

Նորարար և միտումների թելադրող
- ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ հարթակ՝ թվային լուծումների լայն կիրառմամբ
- հաճախորդակենտրոն թվային էկոհամակարգեր
- հաճախորդների գերազանց սպասարկում

Բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ԲՍԿ) պատասխանատվության լավագույն սկզբունքներ

- բացարձակ առաջատար իր մշակույթով և արժեքներով
- պատասխանատու բիզնես և ԲՍԿ մշակույթի խթանում
- կանաչ պարտատոմսերի առաջին թողարկողը Հայաստանում
- լավագույն փորձի վրա հիմնված կորպորատիվ կառավարում
- արհեստավարժ, փորձառու ղեկավարներ

Կայունություն և ճկունություն՝ աճի բարձր ներուժով
- բարձր կատարողականի պահպանում դժվարին ժամանակներում
- աճ և շահույթի ավելացում համավարակից հետո

Վարկանիշ

S&P

Երկարաժամկետ	B+
Կարճաժամկետ	B
Հեռանկարը	դրական
SACP	bb-

Moody's

Բանկային ավանդներ	Ba3/NP
BCA	B1
CRA	Ba3(cr)/NP(cr)
Հեռանկարը	կայուն

Հիմնական ցուցանիշները

ՀՀ բանկային համակարգի բացարձակ առաջատարը հիմնական ֆինանսական ցուցանիշներով.

Ակտիվներ՝
1,096 մլրդ ՀՀ դրամ



+0.5%
տարեկան

Կապիտալ՝
129 մլրդ ՀՀ դրամ



+17.5%
տարեկան

Զուտ շահույթ
19.4 մլրդ ՀՀ դրամ



+115.7%
տարեկան

Պարտավորություններ
967 մլրդ ՀՀ դրամ



Ավանդներ[1]
712 մլրդ ՀՀ դրամ



Զուտ վարկեր և փոխատվություններ՝
673 մլրդ ՀՀ դրամ



[1] Ընթացիկ հաշիվներ, ժամկետային ավանդներ և թողարկված արժեթղթեր

Ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ հարթակ՝ թվային լուծումների լայն կիրառմամբ

91%

բեռնաթափման գործակից [2]

1 տոկոսային կետով տարեկան աճ

56%

Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից

10 տոկոսային կետով տարեկան աճ

↑37% տարեկան

Ինտերնետ-բանկինգ համակարգի օգտատերեր

↑98% տարեկան

Գործարքներ ինտերնետ-բանկինգ համակարգով

↑14% տարեկան

Գործարքներ վճարային տերմինալներով

↑54% տարեկան

Ծրջանառությունը վիրտուալ POS-տերմինալներով

[2] Հեռավար և թվային ուղիներով կատարված գործարքների մասնաբաժինը բանկի կողմից կատարված գործարքների ընդհանուր թվում

Հաճախորդակենտրոն թվային էկոհամակարգեր



Հաճախորդների գերազանց սպասարկում

NPS[3] 74%

CEI[4] 9.6

3 Հաճախորդների հավատարմության ցուցանիշ

4 (Հաճախորդների փորձառության գործակից), որի առավելագույն արժեքը 10 է

Տնօրենների խորհրդի նախագահի ուղերձը

Անդրեյ Մկրտչյան

Հարգելի բաժնետերեր,

Հետադարձ հայացք գցելով 2021թ.-ին՝ վստահաբար կարող եմ փաստել, որ մենք հաղթահարեցինք դժվարությունները և դարձանք ավելի ուժեղ ու ճկուն՝ հավատարիմ մնալով կայուն զարգացում ապահովելու մեր որդեգրած ռազմավարությանը՝ ի շահ բոլոր ներգրավված կողմերի և հանուն հասարակության բարօրության: Քանի որ համավարակը պահպանվեց 2021թ. ողջ ընթացքում, մենք շարունակեցինք հարմարվել անդադար փոփոխվող իրականությանը և, չնայած անորոշություններին, կարողացանք գրանցել տնտեսական գործունեության ակտիվացում և զգալի աճ: Դիմակայելով կորոնավիրուսի նոր տեսակներին և ալիքներին՝ մենք կարողացանք ապահովել մեր աշխատակիցների և հաճախորդների անվտանգությունը և խուսափել գործունեության որևէ խափանումից ու գործառնական ռիսկերից:

2021 թվականը դարձավ ամբողջ ՀՀ տնտեսության վերականգնման և վերածննդի տարի: Սահմանափակումները և գործունեության դադարեցումները վերացվեցին, ինչի շնորհիվ աճ ապահովվեց տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում, իսկ ՀՆԱ-ի աճը կազմեց 5.7%: Տնտեսական վերելքի գործում ամենամեծ ներդրումն ունեցան առևտրի, ծառայությունների և արտադրության ոլորտները: Ամբողջ աշխարհում մակրոտնտեսական ամենալուրջ մարտահրավերը գնաճի բարձր մակարդակն էր, որը պայմանավորված էր մատակարարման շղթայի խափանումներով և այլ խոչընդոտներով: Գնաճի պայմաններում Կենտրոնական բանկին հաջողվեց կառավարել ռիսկերը. թեև Հայաստանում տասներկու ամիսների սպառողական գների կուտակային ինդեքսը կազմեց 7.2%, այնուամենայնիվ, դա ամենացածր ցուցանիշն էր մեր տարածաշրջանում: Չնայած որոշակի աննշան տատանումների՝ հայկական դրամը պահպանեց իր դիրքը որպես տարածաշրջանի ամենակայուն արժույթ: Միաժամանակ, բարելավվեց երկրի ընթացիկ վճարային հաշվեկշիռը, և ավելացան Կենտրոնական բանկի միջազգային պահուստները:

Լինելով խստորեն կանոնակարգված և բավականաչափ կապիտալացված, ուստի՝ ամուր և կայուն՝ ՀՀ բանկային համակարգը բարդ ժամանակներում դարձավ տնտեսական կայունության անկյունաքարը: Բանկային համակարգը ոչ միայն հաջողությամբ հաղթահարեց ճգնաժամը, այլև արդեն 2021թ. գրանցեց շահույթի զգալի աճ և ակտիվների որակի բարելավում՝ զուգորդված զգալի տեխնոլոգիական առաջընթացով թվային լուծումների ներդրման ուղղությամբ: Հանդիսանալով համակարգային նշանակության ամենախոշոր բանկը երկրում՝ մենք սերտորեն համագործակցեցինք կարգավորող մարմնի և կառավարության հետ և իրագործեցինք աջակցության ծրագրեր՝ միտված համավարակի բացասական ազդեցության նվազեցմանը:
2021թ. մեր թիմն ապահովեց բարձր ֆինանսական կատարողական և զգալի ձեռքբերումներ միջնաժամկետ ռազմավարական առաջնահերթությունների իրագործման տեսանկյունից: 2021թ. Ամերիաբանկը բանկային համակարգի բացարձակ առաջատարն էր՝ գրանցելով զուտ շահույթի աննախադեպ աճ 116%-ով և բարելավելով իր արդյունավետության ցուցանիշները: Համավարակի պայմաններում Բանկի թվային փոխակերպումն ընթացավ առավել արագ տեմպերով. ներդրվեցին

բարելավված թվային ուղիներ և ծառայություններ: Քանի որ համավարակի տարածման ընթացքում թվային ծառայություններն անհրաժեշտություն դարձան, մենք ընդարձակեցինք մեր կարողությունները և ներդրեցինք նոր թվային պրոդուկտներ ու ծառայություններ՝ ապահովելով գրեթե բոլոր ծառայությունների առցանց առկայությունը, արագացնելով գործընթացների իրականացումը և նվազեցնելով ֆիզիկական շփման անհրաժեշտությունը: Հաճախորդների բավարարվածության բարձր ցուցանիշը վկայում է այն մասին, որ մենք ճիշտ ուղու վրա ենք և հաջողությամբ բավարարում ենք մեր հաճախորդների կարիքները և սպասումները: Մեզ համար առաջնահերթ ռազմավարական նշանակություն ունի թվայնացման կարողությունների ընդլայնումը, որի վերջնական նպատակն է՝ ապահովել հաճախորդների անթերի սպասարկումը և բարձրացնել մեր գործունեության արդյունավետությունը:

Մեր մարդակենտրոն մոտեցումը և հավատարմությունը կայուն գործելակերպին կրկին դրսևորվեցին համավարակի պայմաններում, քանի որ մեր աշխատակիցների, հաճախորդների և հասարակության բարեկեցությունը առաջնահերթ է մեզ համար: Ամբողջ տարվա ընթացքում մենք կիրառեցինք ճկուն աշխատանքային մոդել. մեր աշխատակիցներից շատերը հնարավորություն ունեցան անհրաժեշտության դեպքում հեռավար աշխատելու, ինչը նվազեցրեց նրանց առողջությանն սպառնացող վտանգը և ապահովեց բարօրությունը: Վստահության վրա հիմնված մեր յուրահատուկ և կայուն կորպորատիվ մշակույթն օգնեց մեզ ապահովել աշխատանքի բարձր արտադրողականություն և ներգրավվածություն նույնիսկ այս բարդ ժամանակներում՝ հանգեցնելով ֆինանսական կատարողականի բարելավման:

Համոզված ենք, որ միայն արժեքների վրա հիմնված պատասխանատու գործելակերպն է երկարաժամկետ աճ ապահովում: Ուստի, մենք սահմանել ենք որոշակի բնապահպանական, սոցիալական և կառավարչական նպատակներ՝ մեր բոլոր գործընթացներում և աշխատանքներում պատասխանատու մոտեցման կիրառումն ապահովելու համար: Մենք շարունակում ենք ավելացնել կանաչ և էկոլոգիապես մաքուր նախագծերի ֆինանսավորումը, քանի որ դա զգալի դրական ազդեցություն է գործում շրջակա միջավայրի վրա և էապես նպաստում է անցմանը դեպի ցածր ածխածնային տնտեսություն: Բացի այդ, մենք շարունակելու ենք աջակցել հասարակությանը բազմաթիվ ԿՍՊ ծրագրերի միջոցով՝ անդրադառնալով մեր երկրի ապագայի և զարգացման համար կենսական նշանակություն ունեցող ոլորտներին:

Խոսելով հետագա ծրագրերի մասին՝ կցանկանայի վստահաբար նշել, որ կայուն հիմքերի և ընդլայնված հնարավորությունների շնորհիվ մեզ հաջողվելու է պահպանել աճի կայուն տեմպերը և շահութաբերության բարձր մակարդակն ու իրագործել մեր հավակնոտ նպատակները: Մենք ձգտելու ենք պահպանել և ամրապնդել շուկայի առաջատարի դիրքը, ապահովել մեր բիզնեսի էլ ավելի մեծ դիվերսիֆիկացում և հանդես գալ որպես միտումների թելադրող՝ ծառայությունների որակի և թվային լուծումների տեսանկյունից:

Տնօրենների խորհրդի անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ղեկավարությանը և ամբողջ թիմին նվիրվածության, ջանասիրության և մշտապես բարձր կատարողականի, իսկ մեր ներդրողներին և հաճախորդներին՝ հավատարմության և վստահության համար:

Անդրեյ Մկրտչյան
Տնօրենների խորհրդի նախագահ

Գլխավոր տնօրենի ուղերձը

Արտակ Հանեսյան

Հարգելի բաժնետերեր,

Ուրախ եմ փաստել, որ, չնայած շարունակվող մարտահրավերներին, 2021թ. մենք շատ բարձր արդյունքներ ունեցանք՝ դրանով իսկ ապացուցելով մեր ճկունությունն ու կայունությունը: Մեզ հաջողվեց ոչ միայն ապահովել մեր ռազմավարական ծրագրով նախատեսված առաջընթացը, այլև գրանցել շահութաբերության և արդյունավետության ցուցանիշների զգալի աճ: Համավարակի ողջ ընթացքում մեր հիմնական նպատակն էր՝ թվային կարողությունների և թվային ուղիների կիրառման շրջանակների ընդլայնումը, ծառայության որակի և գործառնական արդյունավետության բարձրացումը, ինչը կապահովի մեր կայուն աճը երկարաժամկետ հեռանկարում:

Բիզնես գործունեության ակտիվացման պայմաններում գրանցեցինք բարձր ֆինանսական արդյունքներ՝ զբաղեցնելով շուկայում առաջատար դիրքեր ըստ բոլոր հիմնական ցուցանիշների: Մեր շահույթի աճն աննախադեպ էր. ունեցանք երբևէ գրանցված ամենաբարձր շահույթը՝ 19.4 միլիարդ ՀՀ դրամի չափով, ինչը 116%-ով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից: Արդյունքում, արձանագրեցինք շատ ավելի բարձր շահութաբերության ցուցանիշներ. կապիտալի եկամտաբերությունը կազմեց 16.3% (7.8 տոկոսային կետով աճ): Մենք պահպանեցինք շուկայի առաջատարի դիրքը վարկային և ավանդային պորտֆելի գծով. մեր մասնաբաժինը շուկայում կազմեց համապատասխանաբար 16.7% և 16.5%: Ապահովեցինք մեր բիզնեսի էլ ավելի մեծ դիվերսիֆիկացում. մանրածախ և ՓՄՁ վարկերի մասնաբաժինը համախառն վարկային պորտֆելում առաջին անգամ գերազանցեց 50%-ի կարևոր շեմը՝ կազմելով 57%: Դա նշանակալի փաստ է մեր ունիվերսալ բանկային մոդելի համար՝ միտված ավելի բարձր շահութաբերություն, աճի ավելի լայն հնարավորություններ, ռիսկի և կենտրոնացման ավելի ցածր մակարդակ ապահովելուն: Տնտեսության վերականգնումը դրական ազդեցություն գործեց վարկային պորտֆելի որակի վրա, ինչի արդյունքում 3-րդ փուլի ներքո դասակարգված խնդրահարույց վարկերի ծավալը տարեվերջին կազմեց 3.2%՝ գրանցելով բարելավում 1 տոկոսային կետով: Մեր կապիտալի և իրացվելիության ցուցանիշների բարձր մակարդակը պահպանվեց. կապիտալի ցուցանիշները 2021թ. ընթացքում բարելավվեցին: Առաջին դասի կապիտալի և ընդհանուր կապիտալի համարժեքության միջին գործակիցները դեկտեմբերի դրությամբ կազմեցին 12.5% և 15.3% (1 և 1.7 տոկոսային կետով աճ), համապատասխանաբար՝ շնորհիվ զուտ շահույթի բարձր մակարդակի պահպանման: Իրացվելիության ցուցանիշների գծով գրանցեցինք նորմատիվային շեմերից շատ ավելի բարձր արդյունքներ. իրացվելիության ծածկույթի գործակիցը կազմեց 277%, իսկ զուտ կայուն ֆինանսավորման գործակիցը՝ 145%:

Մենք շարունակեցինք թվային փոխակերպման և զարգացման ուղին՝ ապահովելով առաջընթացի արագ տեմպեր, քանի որ համավարակը հանգեցրել էր վարքագծի փոփոխությանը և հեռավար բանկային լուծումների ու թվային ծառայությունների պահանջարկի աճին: Ինտերնետ/մոբայլ բանկինգի օգտատերերի թիվը նախորդ տարվա համեմատ աճեց 37%-ով, իսկ այդ համակարգերի միջոցով իրականացվող գործարքների քանակի աճը կազմեց 98%: Հեռահար և թվային

ուղիներով կատարված գործարքների մասնաբաժինը բանկի կողմից կատարված գործարքների ընդհանուր թվում կազմեց 91%, իսկ ինտերնետ բանկինգի օգտագործման գործակիցը՝56%, ինչը 10 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից: Տարին ուշագրավ էր հատկապես թվային շուկայում մեր ներկայության առումով. մենք ակտիվորեն գործարկում և զարգացնում էինք թվային էկոհամակարգերը, որոնք ներկայումս արդեն ընդգրկում են ավտոմեքենաների հարթակը, անշարժ գույքի հարթակը, էլեկտրոնային առևտուրը: Բացի այդ, ստեղծեցինք եզակի էկոհամակարգ ՓՄՁ-ների համար, որը ծառայելու է որպես միասնական հարթակ ՓՄՁ-ներին առաջարկվող բոլոր ծառայությունների համար: Հարթակում արդեն իսկ հասանելի են հաշիվների բացման, քարտերի և Ինտերնետ/մոբայլ բանկինգի համակարգերի պատվիրման ծառայությունները: 2021թ. ընթացքում ապահովեցինք բիզնես-գործընթացների ավտոմատացման ավելի բարձր աստիճան և բարելավեցինք տվյալների վրա հիմնված որոշումների կայացման ունակությունները: Մենք էապես բարելավեցինք ավտոմատացված սքորինգային վարկերի մոդուլների կանխատեսման հնարավորությունները՝ շնորհիվ արհեստական բանականության և մեքենայական ուսուցման տեխնոլոգիաների ներդրման, ինչն արդեն հանգեցրել է սպառողական վարկերի պորտֆելի որակի բարելավման:

2021թ. դրական էր նաև միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) հետ համագործակցության առումով: Գործընկեր ֆինանսական հաստատություններից ապահովեցինք 123 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով առաջնահերթ մարման վարկեր, հիմնականում ՓՄՁ-ների, կանաչ ծրագրերի, ինչպես նաև կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկություններին ֆինանսավորելու նպատակով: Թիրախային ֆինանսավորման շնորհիվ մենք կշարունակեք կայուն ապագայի ապահովմանը միտված մեր աշխատանքները՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին հանձնառությանը համահունչ: Ապահովեցինք նաև մոտ 34 մլն ԱՄՆ դոլարի երկարաժամկետ ստորադաս փոխառություն՝ Բանկի ընդհանուր կապիտալի ամրապնդման նպատակով: Ի լրումն մեր վաղեմի գործընկեր կազմակերպությունների, սկսեցինք համագործակցել նոր գործընկերների հետ՝ ընդլայնելով գործընկեր ՄՖՀ-ների շրջանակը և դիվերսիֆիկացնելով ֆինանսավորման աղբյուրները:

Մեր ձեռքբերումներն ու նվաճումները նշանավորվեցին 2021թ. ընթացքում մեզ շնորհված մի շարք պարգևներով և մրցանակներով: Հեղինակավոր Global Finance ամսագրի կողմից Ամերիաբանկը ճանաչվեց Հայաստանի լավագույն բանկ և լավագույն ներդրումային բանկ: Բացի այդ, Global Finance-ն Ամերիաբանկին շնորհեց նաև «Հայաստանի ամենահուսալի բանկ» մրցանակը: Ամերիաբանկը Euromoney ամսագրի կողմից արժանացավ 2021թ. գերազանցության մրցանակին որպես Հայաստանի տարվա լավագույն բանկ: Որպես դիտարկված հիմնական գործոններ ամսագիրը նշել է շահութաբերության զգալի բարելավումը, կայուն աճը, ռազմավարական փոխհարաբերությունները և թվայնացմանն ուղղված ակտիվ գործունեությունը:

Արտաքին միջավայրի և բանկի ֆինանսական գործունեության արդյունքների էական բարելավումն արտացոլվեց նաև վերանայված վարկանիշներում: Moody's Investors Service վարկանիշային գործակալությունը վերահաստատեց Ամերիաբանկի ազգային արժույթով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշը՝ վերանայելով հեռանկարը և սահմանելով այն «կայուն» նախկին «բացասականի» փոխարեն: Հաջորդիվ, S&P Global Ratings վարկանիշային գործակալությունը վերանայեց Ամերիաբանկի հեռանկարը՝ սահմանելով այն որպես «կայուն» նախկին «բացասականի» փոխարեն, և վերահաստատեց բանկին շնորհած B+/B երկարաժամկետ և կարճաժամկետ վարկանիշը: Հեռանկարի վերանայման հիմքում ընկած հիմնական գործոններն

են եղել Ամերիաբանկի առաջատար դիրքերը շուկայում, վերականգնվող մակրոտնտեսական միջավայրը, բանկի ապրանքանիշի ճանաչելիությունը տեղական շուկայում, պրոֆեսիոնալ ղեկավարների թիմը, թվայնացման ռազմավարությունը և պատշաճ կորպորատիվ կառավարումը: հաճախորդների բավարարվածության ինդեքսն էր: Լավագույն փորձառության ապահովումը հաճախորդների համար մշտապես առաջնահերթ ռազմավարական նշանակություն է ունեցել մեզ համար: Մենք ջանք չխնայեցինք՝ մեր հաճախորդների ակնկալիքները ոչ միայն արդարացնելու, այլև գերազանցելու ուղղությամբ՝ առաջարկելով նոր ծառայություններ և լուծումներ և, իհարկե, աջակցելով մեր հաճախորդներին առավել բարդ ժամանակներում: Արդյունքում, հաճախորդների հավատարմության ինդեքսը տարեվերջին կազմեց 74.4%, իսկ հաճախորդների փորձառության ինդեքսը գերազանցեց թիրախային 9.5 ցուցանիշը՝ կազմելով 9.6:

Խոսելով հետագա ծրագրերի մասին՝ կցանկանայի ևս մեկ անգամ հաստատել շուկայի բացարձակ առաջատարի դիրքը պահպանելու և, թվայնացման ու գործառնական արդյունավետության բարձրացման շնորհիվ, բարձր շահութաբերություն ապահովելու վճռականությունը: Մենք կարողացանք հարմարվել շարունակաբար փոփոխվող միջավայրին և աճի հնարավորություններ հայթայթել նույնիսկ ամենաբարդ ժամանակաշրջանում: Մենք ընդունեցինք ժամանակակից աշխարհի տեխնոլոգիական վերափոխումը և վարքագծի փոփոխությունը և ստեղծեցինք ճկուն մտածելակերպ, ընդարձակ գիտելիքներ և բարձր ներուժ ունեցող մասնագետների թիմ, որը պատրաստ է նոր բարձունքներ գրավել: Վստահությամբ նայելով դեպի ապագան՝ համոզված եմ, որ մեր թիմի ջանասիրության և նվիրվածության շնորհիվ կկարողանանք իրագործել նույնիսկ ամենահավակնոտ նպատակները:

Արտակ Հանեսյան
Տնօրինության նախագահ - գլխավոր տնօրեն

Մրցանակներ

2021թ. մրցանակներ և հավաստագրեր

- 2021թ. գերազանցության մրցանակ որպես տարվա լավագույն բանկը Հայաստանում՝ ըստ Euromoney ամսագրի
- 2021թ. լավագույն բանկը Հայաստանում՝ ըստ Global Finance ամսագրի
- 2021թ. լավագույն ներդրումային բանկը Հայաստանում՝ ըստ Global Finance ամսագրի
- 2021թ. ամենահուսալի բանկը Հայաստանում՝ ըստ Global Finance ամսագրի (մրցանակը շնորհվում է առանձնակի կայունությամբ և ճկունությամբ աչքի ընկնող կազմակերպություններին)
- Արտարժույթ փոխանակող լավագույն բանկը Հայաստանում՝ ըստ Global Finance ամսագրի
- 2021թ. լավագույն թողարկող բանկ Կովկասում մրցանակը՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) Միջազգային Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում
- «Որակի գերազանցություն 2020» մրցանակ (Straight-Through Processing Quality Award) միջազգային փոխանցումների բարձր որակ ապահովելու համար՝ ըստ Raiffeisen Bank International ավստրիական բանկի
- «Գործարքների ամենամեծ ծավալը Հայաստանում» մրցանակ Visa international վճարման համակարգից

BEST INVESTMENT BANK AWARD 2021
GLOBAL FINANCE

IFC International Finance Corporation WORLD BANK GROUP
Creating Markets, Creating Opportunities

VISA

Raiffeisen Bank International



Պատմական իրադարձություններ

2021թ. զարգացումներն ու ձեռքբերումները

23 մլն Եվրոյի առաջնահերթ մարման երկարաժամկետ վարկի ներգրավում Սևծովյան առևտրի և զարգացման բանկից:

8 մլն Եվրոյի երկարաժամկետ ստորադաս վարկային պայմանագրի կնքում responsAbility ընկերության հետ:

20 մլն ԱՄՆ դոլարի առաջնահերթ մարման երկարաժամկետ վարկի ներգրավում Blue Orchard կազմակերպությունից:

8.25 մլն ԱՄՆ դոլարի երկարաժամկետ ստորադաս վարկային պայմանագրի կնքում Սիմբիոտիքսի հետ՝ վարկի գումարը 15 միլիոն ԱՄՆ դոլարով ավելացնելու հնարավորությամբ: Գործարքը նպաստեց Բանկի ընդհանուր կապիտալացման ամրապնդմանը:

30 մլն ԱՄՆ դոլարի առաջնահերթ մարման երկարաժամկետ վարկի ներգրավում OPEC միջազգային զարգացման հիմնադրամից:

20 մլն ԱՄՆ դոլարի առաջնահերթ մարման երկարաժամկետ վարկի ներգրավում responsAbility ընկերությունից և Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամից (GCPF):

15 մլն Եվրոյի երկարաժամկետ ստորադաս վարկային պայմանագրի կնքում Տրիոդոս Ինվեսթմենթս Մենեջմենթ ընկերության հետ:

25 մլն ԱՄՆ դոլարի առաջնահերթ մարման երկարաժամկետ վարկի ներգրավում ՎԶԵԲ-ից՝ ՓՄՁ-ների և, մասնավորապես, կանանց կողմից ղեկավարվող բիզնեսների ֆինանսավորման նպատակով:

Ամերիաբանկը սկսեց համագործակցել երկու նոր վարկատուների՝ Տրիոդոս Ինվեսթմենթս Մենեջմենթ ընկերության և Blue Orchard կազմակերպության հետ:

Առևտրի ֆինանսավորման նպատակով ներգրավվել է ավելի քան 80 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 31 մլն ԱՄՆ դոլար ՎԶԵԲ-ից և 13 մլն ԱՄՆ դոլար Raiffeisen Bank International բանկից, ինչպես նաև 22 մլն ԱՄՆ դոլար KBC Bank N.V.-ից՝ ակրեդիտիվի թողարկմամբ գործարքների հետֆինանսավորման նպատակով:

Moody's վարկանիշային գործակալությունը վերահաստատել է Ամերիաբանկի ազգային արժույթով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշը՝ վերանայելով հեռանկարը և սահմանելով այն «կայուն»:

S&P Global Ratings վարկանիշային գործակալությունը բարելավել է Ամերիաբանկի հեռանկարը՝ սահմանելով այն «դրական» նախկին «կայունի» փոխարեն, և վերահաստատել է բանկին շնորհած B+/B երկարաժամկետ և կարճաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշը:

- ՓՄՁ-ների, կանաչ նախագծերի և կանանց կողմից ղեկավարվող բիզնեսների ֆինանսավորման նպատակով ապահովվել է 123 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով առաջնահերթ մարման վարկ:
- Բանկի ընդհանուր կապիտալացման ամրապնդման նպատակով կնքվել են ընդամենը 34 մլն ԱՄՆ դոլարի երկարաժամկետ ստորադաս վարկային պայմանագրեր:

Մեր հաջողության ուղին

1998

Մի խումբ երիտասարդ հայրենադարձ գործարարներ հիմնեցին **«Ամերիա» խորհրդատվական ընկերությունը**

2000-2006

Ամերիան դարձավ **ընկերությունների ԽՈՒՄԸ՝** գործունեության նոր ուղղություններով. իրավաբանական և հարկային խորհրդատվություն, բիզնես խորհրդատվություն, ներդրումաբանկային գործառնություններ, ակտիվների կառավարում

2007

1-ին ձեռքբերման գործարքը ՀՀ բանկային համակարգում. Հայաստանի ամենահին, սակայն ամենափոքր բանկերից մեկի՝ Հայներարտբանկի, բաժնետոմսերի ձեռքբերում

2008-2009

Վերանվանվեց Ամերիաբանկ
Աննախադեպ աճ համաշխարհային ճգնաժամի պայմաններում

2010

1-ին միաձուլման գործարքը ՀՀ բանկային համակարգում՝ Ամերիաբանկի և Կասկադ Բանկի միջև միաձուլման պայմանագիր կնքվեց

2011-2014

Ամերիաբանկը դարձավ **Հայաստանի առաջատար բանկը**
Ընդունվեց ռազմավարական որոշում՝ կորպորատիվից դառնալ ունիվերսալ բանկ, զարկ տալ մանրածախ գործառնություններին

2015

30 մլն ԱՄՆ դոլարի **ներդրում կապիտալում ԿԶԵԲ-ի կողմից***

50 մլն ԱՄՆ դոլարի **ստորադաս փոխառություն ՄՖԿ-ից***

1-ին հրապարակված միջազգային վարկանիշը՝ Fitch B+՝ «կայուն» հեռանկարով

2017-2019

ՀՀ բանկային համակարգի **բացարձակ առաջատարն** ըստ հիմնական ֆինանսական ցուցանիշների

30 մլն ԱՄՆ դոլարի **ներդրում կապիտալում Ասիական զարգացման բանկի կողմից** (2018թ. սկզբում)**

Moody's-ի Ba3 վարկանիշ՝ «կայուն» հեռանկարով
S&P-ի B+ վարկանիշ՝ «կայուն» հեռանկարով

2020-2021

Կանաչ պարտատոմսերի առաջին թողարկողը Հայաստանում՝ 42 մլն Եվրո արժեքով կանաչ պարտատոմսեր
Ակտիվները հատեցին 1 տրիլիոն ՀՀ դրամը

* Խոշորագույն գործարքը ֆինանսական կազմակերպության հետ Հայաստանում
** Ասիական զարգացման բանկի առաջին բաժնային ներդրումը Հայաստանում

Միջազգային գործընկերներ

Ամերիաբանկի գործընկեր հանդիսացող միջազգային ֆինանսական հաստատությունները և կնքված պայմանագրերի հանրագումարը համագործակցության մեկնարկից ի վեր

Բոլոր գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով

IFC
115 մլն
որից **50 մլն** ստորադաս փոխառություն
սկսած 2009

KFW DEG
55 մլն
սկսած 2009

European Bank for Reconstruction and Development
195 մլն
որից **30 մլն** ներդրում կապիտալում
սկսած 2010

PROPARCO GROUPE AFD
35 մլն
սկսած 2013

Black Sea Trade & Development Bank
51 մլն
Since 2014

responsAbility
57 մլն
որից **18 մլն** ստորադաս փոխառություն
սկսած 2016

symbiotics
44.75 մլն
որից **33,25 մլն** ստորադաս փոխառություն
սկսած 2018

BlueOrchard Impact Investment Managers
20 մլն
սկսած 2021

FMO Entrepreneurial Development Bank
սկսած 2009
200 մլն

Eurasian Development Bank
սկսած 2010
60 մլն

ADB
սկսած 2011
77 մլն
որից **30 մլն** ներդրում կապիտալում

QEB
սկսած 2013
85 մլն

OPEC FUND for International Development
սկսած 2015
75 մլն

GLOBAL CLIMATE PARTNERSHIP FUND managed by responsAbility
սկսած 2016
55 մլն
որից **15 մլն** ստորադաս փոխառություն

Triodos Investment Management
սկսած 2021
17 մլն
ստորադաս փոխառություն

ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

27-80

02.

Խուստուփ լեռ,
Սյունիքի մարզ

Անտառներ

Անտառների պահպանությունն աշխարհի ուշադրության կենտրոնում է: Մենք ամեն օր մեր ջանքերը պետք է ուղղենք անտառների պաշտպանությանը, վերականգնմանն ու կանաչապատմանը:

© Հայկ Բարսեղյան

Արտաքին միջավայր

Մակրոտնտեսական նախադրյալներ

2021 թվականը վերականգնման տարի էր Հայաստանի համար, ինչը պայմանավորված էր մեծամասամբ ռազմական և քաղաքական լարվածության թեթևացմամբ, նոր սահմանափակումների բացակայությամբ և համաշխարհային տնտեսության վերականգնմամբ կորոնավիրուսի դեմ պատվաստումների պայմաններում:

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)



2021թ. չորս եռամսյակների տվյալներով ՀՆԱ-ի աճին նպաստող հիմնական ճյուղերն էին առևտուրը, ծառայությունները և արդյունաբերությունը: Մասնավորապես, մինչ օրս վերականգնման ամենաբարձր տեմպը գրանցվել է բնակարանային հատվածում (+19.5% 2020թ. համեմատ), իսկ անշարժ գույքի հետ կապված գործունեությունն ունեցել է առավելագույն նպաստումը ՀՆԱ-ի աճին: Արդյունքում, կարելի է տեսնել, որ ավելացել է անշարժ գույքի հետ կապված գործունեության և առևտրի (աճին երկրորդ առավելագույն ներդրումն ունեցած ճյուղ) կշիռը ՀՆԱ-ում: Գյուղատնտեսությունը բացասական նպաստում է ունեցել տնտեսական աճին, իսկ մշակույթի, զվարճությունների և հանգստի ճյուղն ունեցել է առավելագույն բացարձակ բացասական նպաստումն աճին՝ արձանագրելով տեսակարար կշռի ամենամեծ կրճատումը:



Ակնկալվում էր, որ եթե չկիրառվեն ֆինանսական խթանման միջոցառումներ, 2022թ. տնտեսական աճը կկազմեր շուրջ 5%՝ 2021թ. վերականգնումից հետո: Այնուամենայնիվ, Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ռազմական գործողություններից հետո ի հայտ են եկել տնտեսական ռիսկեր, որոնք առավել ակտուալ են Ռուսաստանի և Ուկրաինայի հետ սերտ տնտեսական կապեր ունեցող երկրների համար, թեև այս իրավիճակը կարող է նաև որոշ հնարավորություններ ստեղծել: Մասնավորապես, ակնկալվում է, որ արտաքին առևտրի, դրամական փոխանցումների, զբոսաշրջության և ուղղակի օտարերկրյա ներդրումների ոլորտներն ավելի հակված կլինեն պոտենցիալ ռիսկերին և հնարավորություններին, որոնք կանդրադառնան տվյալ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա (տնտեսական աճ, գնաճ, փոխարժեքների տատանողականություն, վարկավորման ծավալներ և այլն):

Սպառողական գների ինդեքսը 2021թ. (դեկտեմբերից դեկտեմբեր) կազմել է 7.7%, միջին տարեկան գնաճը՝ 7.2%, որը բարձր է ՀՀ ԿԲ-ի նպատակային ցուցանիշից՝ 4.5 ± 1.5%: Միևնույն ժամանակ ողջ աշխարհում գների բարձրացման պայմաններում Հայաստանը շարունակում է պահպանել տարածաշրջանի ամենացածր ՍԳԻ-ն:

Կենտրոնական բանկի չափավոր միջամտությունը և կարգավորող դաշտի փոփոխությունները 2021թ. թույլ տվեցին զսպել արտարժույթի փոխարժեքի արագ աճը և տատանողականությունը: Դրան զուգահեռ, արտարժույթի ներհոսքի աճը և հետընտրական խաղաղ միջավայրը թույլ տվեցին բարելավել ապագայի կանխատեսումները: Արդյունքում, 2021թ. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ միջին փոխարժեքը կազմել է 504 ՀՀ դրամ մեկ դոլարի դիմաց (3% արժևորում տարեվերջի համեմատ): Չնայած ՀՀ դրամի փոքր արժեզրկմանը՝ այն շարունակում է մնալ ամենակայուն արժույթը տարածաշրջանում:

Ամենակայուն արժույթը տարածաշրջանում

(ԱՄՆ դոլարի նկատմամբ տարածաշրջանի այլ արժույթների փոխարժեքների դինամիկա)*



*Փոխարժեքի օրական տատանումները՝ որպես հիմք ընդունելով 2014թ. հունվար ամիսը

Աղբյուր՝ Bloomberg

Փոխարժեք (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար) և ՍԳԻ

	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Միջին տարեկան	401.8	409.6	415.9	477.9	480.5	482.7	483.0	480.5	489.0	503.8
Տարեվերջի դրությամբ	403.6	405.6	475.0	483.8	483.9	484.1	483.8	479.7	522.6	480.1
ՍԳԻ, % (դեկտեմբերից մինչև նախորդ տարվա դեկտեմբեր)	3.2	5.6	4.6	-0.1	-1.1	2.6	1.8	0.7	3.7	7.7
ՍԳԻ, % (12-ամսյա կուտակային)	2.6	5.8	3.0	3.7	-1.4	1.0	2.5	1.4	1.2	7.2

2021թ. Հայաստանի արտահանման ծավալը կազմել է 3 մլրդ ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով ավելանալով 19.1%-ով, մինչդեռ ներմուծման ծավալը կազմել է 5.3 մլրդ ԱՄՆ դոլար՝ կրճատվելով 16.9%-ով նախորդ տարվա համեմատ: 2019թ. համապատասխան ժամանակահատվածի համեմատ արտահանումը գրանցել է ավելի բարձր աճի տեմպ, ինչը պայմանավորված է հիմնականում պղնձի բարձր գներով:

Արտաքին առևտուր

Մլն ԱՄՆ դոլար



2021թ. դեպի **Հայաստան դրամական փոխանցումների** ծավալն աճել է 14.5%-ով:

Ընթացիկ հաշվի պակասորդի հարաբերակցությունը ՀՆԱ-ին կազմել է -4.4%՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 1.3 տոկոսային կետով: Հայաստանի **արտաքին պարտքը** 2021թ. կազմել է ՀՆԱ-ի 45.7%-ը 2020թ. 51.2%-ի համեմատ, գումարային արտահայտմամբ՝ 6,648.4 մլն ԱՄՆ դոլար, ինչը 9.7%-ով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից: Պետական պարտքը կազմել է ընդհանուր արտաքին պարտքի 95.04%-ը (2020թ.՝ 92.4%), իսկ մնացածը 4.96%-ը բաժին է ընկել ԿԲ-ին: Պետական արտարժութային պահուստները 2021թ. նվազել են 22.9%-ով՝ կազմելով 3.2 մլրդ ԱՄՆ դոլար: 2021թ. բյուջեի պակասորդը կրճատվել է՝ կազմելով ՀՆԱ-ի 4.4% (2020թ. այն 5.4% էր):

2021թ. S&P վարկանիշային կազմակերպությունն առաջին անգամ վարկանշել է Հայաստանի Հանրապետությանը և շնորհել է արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման «B+» սուվերեն վարկանիշ՝ «դրական» հեռանկարով: Moody's վարկանիշային գործակալությունն անփոփոխ է թողել Հայաստանի՝ տեղական արժույթով և արտարժույթով գնանշված երկարաժամկետ թողարկողի և արտարժույթով գնանշված չապահովված արտոնյալ պարտքի վարկանիշը՝ Ba3, և հեռանկարը՝ կայուն: Fitch միջազգային վարկանիշային կազմակերպությունը վերահաստատել է Հայաստանի արտարժույթով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման սուվերեն «B+» վարկանիշը՝ «կայուն» հեռանկարով:

ՀՀ ձեռնամուխ է եղել երկրում **ներդրումային և գործարար միջավայրի բարելավմանը:** Heritage Foundation հետազոտական կենտրոնի 2022թ. տնտեսական ազատության ինդեքսի համաձայն Հայաստանը զբաղեցնում է 58-րդ տեղը 177 երկրից և դասվում է չափավոր ազատ տնտեսությամբ երկրների շարքին: Ընդհանուր գնահատականն իջել է 6.6 միավորով, թեև որոշակի աճ է գրանցվել Դրամական ազատության և Կառավարության պարտաճանաչության ցուցանիշների մասով: Հայաստանը զբաղեցնում է 63-րդ տեղը 180 երկրների շարքում ըստ 2021թ. Մամուլի ազատության ինդեքսի և 58-րդ տեղը 180 երկրների մեջ ըստ 2021թ. Կոռուպցիայի ընկալման ինդեքսի, որը տարածաշրջանում լավագույն արդյունքներից մեկն է: Հայաստանը նաև բարելավել է իր դիրքը Համաշխարհային բանկի «Կանայք, բիզնես և օրենք» 2022թ. զեկույցում՝ ստանալով 87.5 միավոր (82.5 միավոր 2021թ.) հայրության վճարովի արձակուրդի ներդրման շնորհիվ: Հայաստանը զբաղեցնում է 5-րդ դիրքը աշխատաշուկայի կայունության առումով՝ ըստ ռազմավարության և պետական քաղաքականության ոլորտում մասնագիտացած Whiteshield Partners միջազգային խորհրդատվական ընկերության, որը մշակել է 2020թ. Աշխատանքի կայունության համաշխարհային ինդեքսը (GLRI) CEMS կառավարչական կրթության համաշխարհային միավորման հետ համատեղ:



ՀՀ բանկային համակարգը

2021թ. Հայաստանի ֆինանսական համակարգը պահպանեց կայունությունը և շարունակեց բարեհաջող զարգանալ՝ չնայած տարվա ընթացքում ծառացած խնդիրներին և մարտահրավերներին: Ընդհանուր առմամբ, 2021 թվականը բավականին բարդ տարի էր թե՛ ֆինանսական կայունության և թե՛ 2020 թ-ից շարունակվող անորոշության առումով: 2020թ. տեղի ունեցած ցնցումները (համավարակը, պատերազմը) անդրադարձան ֆինանսական համակարգի գործունեության արդյունքների վրա նաև 2021թ.:

Անորոշության կտրուկ աճի պայմաններում 2021թ. բոլոր բանկերը խուսափում էին ռիսկի գնալուց, ինչը բացասաբար անդրադարձավ բանկային համակարգի վարկավորման ծավալների վրա՝ հատկապես հաշվի առնելով 2020թ. կառավարության ծրագրերի շրջանակներում իրականացված վարկավորման զգալի ծավալները: Տարեվերջին բանկերը վերականգնեցին վարկավորման ծավալները, և 4-րդ եռամսյակում վարկային պորտֆելն ավելացավ 2.5%-ով, թեև տարեկան կտրվածքով ընդհանուր վարկերի ծավալը նվազեց 0.5%-ով: Հետհամաճարակային ժամանակահատվածում Հայաստանի ֆինանսական համակարգը ՀՀ տնտեսության վերականգնման հիմնական շարժիչն էր:

Ակնկալվում է, որ արդեն 2022թ. տնտեսության վարկավորման տեմպը կվերականգնվի:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի ֆինանսական համակարգը 2021 թվականը փակեց դրական արդյունքներով և սպասումներով թե՛ ֆինանսական միջնորդության, թե՛ կապիտալացման բարելավման և Բազելի ստանդարտներին անցնելու առումով:

Չնայած շարունակվող անորոշությանը՝ ոչ միայն հաջողվեց խուսափել իրացվելիության խնդիրներից ՀՀ ֆինանսական համակարգում, այլև ֆինանսական հաստատությունների թիվն աճեց:

Հայաստանում գործող ֆինանսական կազմակերպությունները

	2019	2020	2021
Բանկեր	17	17	17
Վարկային կազմակերպություններ	43	44	46
Ապահովագրական ընկերություններ	7	7	7
Հիմնադրամներ և ներդրումային կազմակերպություններ	37	45	53

Հայաստանի ֆինանսական համակարգում շարունակում են գերակայել բանկերը, որոնց բաժին է ընկնում համակարգի ակտիվների 84%-ը:

Ըստ 2021թ. արդյունքների՝ բոլոր բանկերը և վարկային կազմակերպությունների մի մասը ներառվել են 1000 խոշորագույն հարկատուների ցուցակում: Բանկերի կողմից 2021թ. վճարած հարկերի ծավալը տարեկան կտրվածքով աճել է 9%-ով:

Բանկային համակարգի շահույթն ավելացել է 62.1%-ով, մինչդեռ 2020թ. գրանցվել էր անկում 28%-ով: Ակտիվների ծավալն ավելացել է 7.5%-ով, ընդհանուր կապիտալը՝ 8.8%-ով, իսկ ավանդային պորտֆելը (ավանդներն ու թողարկված պարտատոմսերը)՝ 7.4%-ով:.

Ամուր կապիտալ և աճի հիմքեր

ՀՀ բանկային համակարգը հաջողությամբ հաղթահարել է 2020թ. կորոնավիրուսի և պատերազմի մարտահրավերները՝ միևնույն ժամանակ խուսափելով իրացվելիության խնդիրներից: 2021թ. բանկերին հաջողվեց ամրապնդել իրացվելիության և կապիտալի գործակիցները և բարելավել նորմատիվային ցուցանիշները:

Ներկայումս բանկային համակարգը բավականաչափ կապիտալացված է և ունակ է կլանել հնարավոր ռիսկերը և ցնցումները, ինչը վկայում է հետագա աճի և զարգացման համար բավարար հիմքերի մասին: Համակարգի իրացվելիության ցուցանիշները վկայում են այն մասին, որ բիզնեսը և քաղաքացիները վստահություն ունեն բանկային համակարգի հանդեպ:

Բանկերի նորմատիվային ցուցանիշները խոսում են այն մասին, որ բոլոր բանկերն ունեն տնտեսությունը ֆինանսավորելու և նոր միջոցներ ներգրավելու մեծ ներուժ:

- 2021թ. բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշը (Ն1/2) բարձրացել է՝ կազմելով 17.3%, մինչդեռ 2020թ. այն կազմում էր 17% (ԿԲ-ի պահանջ՝ 12%):
- Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև հարաբերակցությունը (Ն1/1 նորմատիվ) կազմել է 14.5%, մինչդեռ թույլատրելի նվազագույն մեծությունը 9% է:
- Իրացվելիության ցուցանիշները նույնպես բավականին բարձր են. բարձր իրացվելի ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր ակտիվներին (Ն2/1 նորմատիվ) կազմել է 32% (25.5% 2020թ.), բարձր իրացվելի ակտիվների հարաբերակցությունը ցպահանջ պարտավորություններին (Ն2/2 նորմատիվ)՝ 123.5% (բարձրանալով 109.7%-ից 2020թ.), մինչդեռ նորմատիվներով սահմանված է համապատասխանաբար 15% և 60%:

Հայաստանի բանկային համակարգում կարգավորումն ավելի խիստ է, քան տարածաշրջանի այլ երկրներում և անգամ եվրոպական շատ երկրներում, բայց նույն իսկ նման խիստ միջավայրում բանկերն ավելի բարձր ցուցանիշներ են արձանագրում, քան սահմանված նվազագույն նորմատիվները:

2021թ. ՀՀ ԿԲ-ն ստիպված էր խստացնել դրամավարկային քաղաքականությունը Հայաստանի տնտեսության վրա արտաքին գնաճային ճնշումները զսպելու, ինչպես նաև նոր գնաճի սպասումներին արձագանքելու նպատակով: Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ն վեց անգամ **բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը,** որն արդյունքում 5.25%-ից դարձավ 7.75%: Լոմբարդային ռեպո դրույքը և բանկերի կողմից արված ավանդների դրույքները բարձրացել են համապատասխանաբար 6.75%-ից և 3.75%-ից մինչև 9.25% և 6.25%:

Տնտեսությունում ֆինանսական միջնորդության ցուցանիշներից մեկը՝ վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը, վերջին 10 տարում զգալիորեն բարձրացել է՝ 2021թ. վերջում կազմելով 58%՝ 2011թ. 33.6%-ի համեմատ (9.6% 2000թ.).: Ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը գերազանցել է 100%-ը՝ կազմելով 101.4% ՝ 2011թ. 54.7%-ի համեմատ (23% 2000թ.):

Դոլարացման բարձր մակարդակը դարձյալ բանկային հատվածի կարևոր մարտահրավերներից մեկն է, թեև այս ցուցանիշը զգալիորեն նվազել է: Արդիական է նաև ազգային արժույթով ռեսուրսների պահանջը: 2021թ. վերջում բանկային համակարգի դոլարային և դրամային ավանդների հարաբերակցությունը կազմել է 52% և 48%, մինչդեռ 2020թ. այն 55% և 45% էր, իսկ 2019թ.՝ 58% և 42%: Դրամային վարկային պորտֆելի ավելի արագ աճի պայմաններում դոլարացման մակարդակը նվազել է՝ 2021թ. վերջի դրությամբ հասնելով 48%՝ 2020թ. 53% համեմատ: Սա մինչ օրս արձանագրված ամենացածր ցուցանիշն է: Այնուամենայնիվ, դոլարացման մակարդակը դեռ մնում է բարձր:

2021թ. թափ ստացավ բանկերի հաճախորդների անցումն սպասարկման թվային ուղիներին: Աճող մրցակցության և ամբողջ աշխարհում թվայնացման ակտիվ միտումների պայմաններում հայկական ընկերությունները սկսեցին մեծ ուշադրություն դարձնել տեխնոլոգիաների զարգացմանը և ներդրումներ կատարել այդ ուղղությամբ:

2021թ. անկանխիկ վճարումների և փոխանցումների ծավալը, ինչպես նաև թվային պրոդուկտներից օգտվողների թիվը շարունակում էին աճել: Այս առումով նկատելի է թե՛ բանկերի, թե՛ ֆինանսատեխնոլոգիական ընկերությունների կողմից առաջարկվող պրոդուկտների աճը, այդ թվում՝ նոր բջջային հավելվածների առումով: Անկանխիկ գործարքները շահավետ են ինչպես հաճախորդի ու բանկի, այնպես էլ պետության համար (օրինակ՝ հարկերի տեսանկյունից), ուստի կառավարությունը նույնպես խրախուսում է անկանխիկ և առցանց գործառնությունները՝ նախաձեռնելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Այսօր բանկերը ոչ միայն ակտիվորեն համագործակցում են ՏՏ ընկերությունների հետ, այլև ստեղծում հետազոտությունների և մշակումների սեփական կենտրոններ, որոնց նպատակն է խթանել թվային բանկային ծառայությունների ներդնումը: Միաժամանակ, գործունեության ընդլայնումը և հաճախորդների թվի աճը թելադրում են բանկերին վերանայել տվյալների կառավարման համակարգերը և ներդնել մեծածավալ տվյալների կառավարման լուծումներ: 2021թ. բանկերն ակտիվորեն օպտիմալացնում էին բիզնես-գործընթացները, հաճախորդների դասակարգումը և ստանդարտացնում առկա ընթացակարգերը՝ համապատասխանեցնելով դրանք առցանց ծառայություններին: Արդյունքում էապես նվազել է առօրյա գործառնությունների նպատակով բանկ այցելելու անհրաժեշտությունն ինչպես անհատ, այնպես էլ բիզնես հաճախորդների համար:

Բանկային ոլորտի շարունակական աճ՝ կորոնավիրուսով պայմանավորված համեմատաբար ավելի դանդաղ տեմպով

2018-2020թթ. երկնիշ աճի տեմպից հետո 2021թ. ակտիվների և հաճախորդների պարտավորությունների աճն զգալիորեն դանդաղել է, իսկ վարկային պորտֆելը՝ նվազել:

Ակտիվներ, մլրդ ՀՀ դրամ*



Վարկեր, մլրդ ՀՀ դրամ*



Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (ներառյալ բանկերի թողարկած արժեթղթերը), մլրդ ՀՀ դրամ*



Կապիտալ, մլրդ ՀՀ դրամ*



*Աղբյուր՝ Բանկերի 2021թ. 4-րդ եռամսյակի հաշվետվություններ, նախորդ տարիների տվյալները՝ թարմացված ըստ աուդիտորական հաշվետվությունների

2021թ. բանկային համակարգի համակցված ընդհանուր կապիտալը շարունակում էր աճել՝ արձանագրելով 8.8% աճ 2020թ. համեմատ և կազմելով 958 մլրդ ՀՀ դրամ: Ըստ 2021թ. արդյունքների՝ բանկային համակարգի մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում կազմել է 13.7%:

Կապիտալի աճին զուգահեռ գրանցվել է նաև ակտիվների և պարտավորությունների չափավոր աճ, մասնավորապես, 2021թ. բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 7.5%-ով՝ կազմելով 7.1 տրիլիոն ՀՀ դրամ, իսկ վարկերը նվազել են 0.5%-ով՝ կազմելով 4.0 տրիլիոն ՀՀ դրամ: Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում կազմել է 101.4%, իսկ վարկերինը՝ 57.7%:

Բանկերի պարտավորությունների ծավալն ավելացել է 7.3%-ով՝ կազմելով 6.1 տրիլիոն ՀՀ դրամ, իսկ բանկերի պարտավորությունների հարաբերակցությունը ՀՆԱ-ին կազմել է 87.7%: Միևնույն ժամանակ, 7.4%-ով աճել են պարտավորությունները հաճախորդների նկատմամբ՝ կազմելով 4.3 տրիլիոն ՀՀ դրամ: 2021թ. համակարգի մասնակիցները շարունակում էին ակտիվ կերպով միջոցներ ներգրավել տեղական և միջազգային կապիտալի շուկաներից:

Շահույթի զգալի աճ

ՀՀ բանկային համակարգի **զուտ շահույթը** 2021թ. կազմել է **87.3 մլրդ** ՀՀ դրամ նախորդ տարվա 53.8 մլրդ ՀՀ դրամի համեմատ:

Բոլոր բանկերը տարին փակեցին շահույթով:

Շահույթ*, մլրդ ՀՀ դրամ



*2021թ-ի շահույթ, նախնական, աուդիտ չանցած տվյալներ

Վարկային պորտֆելի որակի վատթարացումն ու պահուստներին արվող մասհանումների ավելացումը հիմնական գործոններն էին, որոնք զսպում էին շահութաբերության աճը 2020թ.: Ավելի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2020թ. պահուստավորման ծախսերի կտրուկ աճից հետո 2021թ. դրանց ծավալն էապես կրճատվել է, ինչը նպաստել է ավելի բարձր շահութաբերությանը:

Բանկային համակարգի որակական ցուցանիշները

Խնդրահարույց վարկերը մնում էին 2021թ. ՀՀ բանկային հատվածի առջև ծառացած մարտահրավերներից մեկը:

Պատմականորեն ՀՀ առևտրային բանկերի խնդրահարույց վարկերի ցուցանիշը միշտ ցածր է եղել՝ 4-5% սահմաններում: Համավարակից հետո մակարդակը փոքր-ինչ աճել է, բայց այդուհանդերձ չի գերազանցում հարևան երկրների ցուցանիշները: 2021թ. պորտֆելի որակը բարելավվել է:

Ակտիվների և կապիտալի եկամտաբերությունը 2021թ. վերջում կազմել է համապատասխանաբար 1.3% և 9.5%՝ բարձրանալով համապատասխանաբար 0.4 և 3.3 տոկոսային կետով:

Խնդրահարույց վարկեր*



Ակտիվների եկամտաբերություն**



Կապիտալի եկամտաբերություն**



* Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

** Հաշվարկվել է ըստ բանկերի հաշվետվություններում ներկայացված տվյալների:

Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում

Չնայած կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումներին, շուկայի զարգացումներին և այլ ցնցումներին՝ մեզ ոչ միայն հաջողվեց կանգուն մնալ, այլև ապահովել առաջանցիկ աճ բոլոր հիմնական ցուցանիշներով: Մենք կիրառում էինք ռիսկերի կառավարման հավասարակշռված մեխանիզմներ ու իրացվելիության կառավարման գրագետ մոտեցումներ՝ ֆինանսական ցուցանիշները և ռիսկով ճշգրտված շահութաբերությունը բարելավելու նպատակով:

Մենք զգալի ձեռքբերումներ ունեցանք թե՛ ֆինանսական ցուցանիշների բարելավման, թե՛ մեր պրոդուկտների, ծառայությունների ընդլայնման և թե՛ մեր տեխնոլոգիաների կատարելագործման ուղղությամբ: Մենք շարունակեցինք ներդրումներ կատարել թվայնացման ուղղությամբ՝ նպատակ ունենալով բարելավել հաճախորդների սպասարկման որակը, ներքին արդյունավետությունը, ինչպես նաև ծառայություններն ու գործառնությունները:

Մենք պահպանեցինք առաջատար դիրքերը որպես թիվ մեկ բանկ ըստ բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշների՝ զուտ շահույթ, ակտիվներ, վարկեր, պարտավորություններ, հաճախորդներին տրված վարկեր, սեփական կապիտալ և կապիտալի եկամտաբերություն: Ավելին, մենք ունեինք բավարար բուֆերներ՝ Բազել 3-ի պահանջների համաձայն կապիտալի ավելացմանը նախապատրաստվելու համար:

2021թ. վերջում մեր ակտիվների եկամտաբերությունը և կապիտալի եկամտաբերությունը կազմում էին համապատասխանաբար 1.8% և 16.3%, ինչն զգալիորեն բարձր է բանկային համակարգի միջին ցուցանիշից:

Մենք նաև ՀՀ կորպորատիվ պարտատոմսերի շուկայի առաջատարն ենք և ունենք 22% մասնաբաժին շուկայում: Ունիվերսալ բանկային մոդելի անցնելու ռազմավարությանը համահունչ մենք ավելացրել ենք մանրածախ և ՓՄՁ վարկերի մասնաբաժինը: Բացի այդ, մենք զգալի առաջընթաց ենք գրանցել հեռավար և թվային բանկային ծառայությունների զարգացման ուղղությամբ:

Բանկի հիմնական ֆինանսական ցուցանիշների և շուկայի մասնաբաժինների դինամիկան ներկայացված է գծապատկերներում:

1-ինն ըստ ակտիվների
մլրդ ՀՀ դրամ



Ընդհանուր զուտ վարկային պորտֆելը նախորդ տարվա համեմատ նվազել է 3.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է խոշոր վարկերի պորտֆելի կրճատմամբ և փոխարժեքի տատանումներով: Միևնույն ժամանակ, հաստատուն փոխարժեքով հաշվարկներով մեր ընդհանուր վարկային պորտֆելը գրանցել է 2% աճ: Բանկը շարունակում է դիտարկել ՓՄՁ և մանրածախ սեգմենտները՝ որպես առանցքային ռազմավարական ուղղություններ: Բանկի ՓՄՁ վարկավորման ընդհանուր պորտֆելը 2021 թ-ի վերջին կազմել է 150 մլրդ ՀՀ դրամ, ընդ որում նախորդ 3 տարվա ընթացքում միջինացված տարեկան աճը կազմել է 17.2%: Բանկի մանրածախ և ՓՄՁ վարկավորման մասնաբաժինն ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 57%, ինչը համահունչ է ռազմավարությամբ սահմանված առավել հավասարակշռված և ունիվերսալ բանկային մոդելին: Նախորդ 3 տարվա ընթացքում բանկի մանրածախ վարկավորման պորտֆելը կայուն կերպով աճել է միջինում 30%-ով, ինչի արդյունքում զուտ պորտֆելը կազմել է ավելի քան 216 մլրդ ՀՀ դրամ:

1-ինն ըստ ակտիվների
մլրդ ՀՀ դրամ



1-ինն ըստ ընդհանուր կապիտալի
մլրդ ՀՀ դրամ



1-ինն ըստ պարտավորությունների
մլրդ ՀՀ դրամ



1-ն ըստ զուտ շահույթի
մլն ՀՀ դրամ



Մեր կապիտալի եկամտաբերությունը միշտ բարձր էր բանկային համակարգի միջին ցուցանիշից, իսկ 2021թ. մենք դարձանք տվյալ ցուցանիշով առաջատարը:

Կապիտալի եկամտաբերության դինամիկա՝ բանկային համակարգ և Ամերիաբանկ



Ակտիվների եկամտաբերության դինամիկա՝ բանկային համակարգ և Ամերիաբանկ



Բիզնես-մոդելը և ռազմավարությունը

Չնայած 2021թ. շարունակվող խնդիրներին և անորոշությանը՝ Ամերիաբանկը շարունակեց ամրապնդել իր առաջատար դիրքերը ՀՀ բանկային համակարգում և վերահաստատեց իր ներուժը որպես ժամանակակից, կայուն, դինամիկ աճող և մրցունակ ֆինանսական հաստատություն՝ հետագա աճի և զարգացման մեծ հնարավորություններով: Համավարակի արդյունքում մենք վերանայել ենք մեր առաջնահերթ ռազմավարական նպատակները՝ շեշտադրելով մատչելի բանկային ծառայությունների հասանելիությունը և սպասարկման որակը, ինչի շնորհիվ Ամերիաբանկը դիրքավորվել է որպես առաջատար նորարարությամբ և սպասարկման չափանիշներով:

Մեր երկարաժամկետ ռազմավարությունը հիմնվում է կայուն զարգացման սկզբունքի վրա. մեզ համար կարևոր է ապահովել կայուն աճի հնարավորություն, որը կնպաստի երկրում մակրոտնտեսական կայունությանը և տնտեսական աճին: Համաձայն Բանկի միջնաժամկետ նպատակներին՝ մենք աճին զուգընթաց կարևորում ենք նաև արդյունավետության բարձրացումը, պատասխանատու բիզնես մոդելի պահպանումը և բիզնեսի աճը: Այս առումով թվային բանկինգը կարևորվում է ոչ միայն հաճախորդների բավարարվածությունը բարձրացնելու նպատակով, այլև ծախսատարության կրճատման տեսանկյունից: 2021թ. զգալի թափ ստացավ մեր թվային փոխակերպման գործընթացը, քանի որ համավարակի արդյունքում բնակչության վարքագծային փոփոխություններն սկսեցին ավելի արագ տեղի ունենալ, իսկ պահանջարկը հեռավար բանկային լուծումների և թվային ծառայությունների նկատմամբ զգալիորեն մեծացավ:

Մեր առաքելությունը

ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ

- մեր հաճախորդներին տրամադրելով **միջազգային որակի** ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ,
- իրականացնելով հասարակության **բարօրության** համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր,
- ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության զարգացման մեր սեփական մոդելը՝ միավորելով **հաջողակ մարդկանց,**
- շարունակաբար ավելացնելով մեր **բաժնետիրական արժեքը:**

Մեր տեսլականը

- Դառնալ ֆինանսական և գործարար լուծումներ տրամադրող **միջազգային ընկերություն:**
- Լինել թիրախային շուկաներում **առաջատարը** սպասարկման որակով և արդյունավետությամբ՝ ներգրավելով ընդհանուր արժեքներ կրող բացառիկ մարդկանց:

Այժմ որպես մեր գործունեության հիմնական ուղղություն մեր ուշադրության կենտրոնում են հետևյալ բնագավառները՝

- թվային ծառայությունների կատարելագործումը և դիվերսիֆիկացումը
- բանկային ծառայություններից հեռավար օգտվող հաճախորդների մասնաբաժնի ավելացումը
- գործառնական բանկային ծառայությունների տեսակարար կշռի ավելացումը
- սպասարկման բոլոր ոլորտներում հաճախորդների գոհունակության աստիճանի բարձրացումը
- մանրածախ բիզնեսի զարգացումը նպատակային ֆինանսավորման միջոցով
- ՓՄՁ ուղղության զարգացումը
- հետճգնաժամային ամենաբարձր ներուժն ունեցող բիզնեսների ֆինանսավորումը
- անկանխիկ շրջանառության և գործիքների ծավալի աճը

Բանկի ղեկավարության համար առանձնացվել են ռազմավարական ուշադրությանն արժանի հինգ հիմնական խնդիր.

- Լինել շուկայի **առաջատարը**. ապահովել մրցակիցների համեմատ առաջանցիկ օրգանական աճի տեմպեր՝ միևնույն ժամանակ շարունակելով դիտարկել ոչ օրգանական աճի հնարավորությունները: Շուկայում առաջատար դիրքերը պահպանելու համար մենք նախատեսում ենք առավել մեծ ուշադրություն դարձնել կապիտալի արդյունավետ օգտագործմանը՝ նպատակ դնելով ավելացնել ռիսկով կշռված ակտիվների եկամտաբերությունը: Բանկը շարունակելու է խթանել գործառնական բանկային ծառայությունները, որպեսզի մշտապես ավելացնի ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը: Ելնելով ներկայիս ժողովրդագրական իրավիճակից, ինչպես նաև

հաշվի առնելով բանկային ծառայությունների ներկայիս շրջանակը՝ մենք նպատակաուղղված ենք էապես ընդլայնելու մեր հաճախորդների բազան, ինչպես նաև ավելացնելու գործող հաճախորդներին խաչաձև վաճառքների ծավալը՝ ըստ նրանց ներկայիս կարիքների:

- Բարձրացնել **արդյունավետությունը.** ապահովել կապիտալի շահութաբերության պատշաճ մակարդակ, ինչպես նաև ծախսերի և եկամուտների հարաբերակցության առավել ցածր մակարդակ: Արդյունավետության բարձրացման նպատակով Բանկը նախատեսում է իրականացնել մի շարք ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ներքին գործընթացների և գործառույթների ավտոմատացմանը, կառուցվածքային մոդելի և բիզնես գործընթացների բարելավմանը:
- Ընդլայնել **թվայնացման** ծավալները. դառնալ հեռավար բանկային ծառայություններ մատուցող առաջատար բանկ՝ հնարավորինս ավտոմատացնելով գործընթացները: Մենք արդեն իսկ իրականացնում ենք և կշարունակենք իրականացնել մի շարք նախագծեր, որոնք մեծապես կնպաստեն թվային կապուղիների ընդլայնմանը և մի շարք պրոդուկտների թվայնացմանը: Նախատեսվում է նաև վճարման նոր տեխնոլոգիաների կիրառում: Այդ ամենը կնպաստի թվայնացման ծավալների ավելացմանը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի հաճախորդների փորձառության բարելավմանը:
- Բարձրացնել **դիվերսիֆիկացման** աստիճանը. ավելացնել մանրածախ և ՓՄՁ ծառայությունների պորտֆելների և գործառնական բանկային ծառայությունների ծավալը: Դիվերսիֆիկացումը բարձրացնելու նպատակով մենք նախատեսում ենք ըստ հաճախորդների ակնկալվող կարիքների վերանայել ներքին բիզնես գործընթացները և առաջարկվող ծառայությունները:
- Բարելավել սպասարկման **որակը.** լինել հաճախորդակենտրոն մեր գործունեության բոլոր ուղղություններում, ապահովել հաճախորդների լոյալության և հաճախորդների փորձառության ինդեքսի ամենաբարձր ցուցանիշները: Մենք մշտապես ներդրումներ ենք կատարում տեխնոլոգիաներում և անձնակազմի վերապատրաստումներում՝ ապահովելով անձնակազմի շարունակական զարգացում և սպասարկման որակի բարձրացումը:

Մեր միջնաժամկետ քանակական և որակական նպատակները բխում են առաջատար ունիվերսալ բանկ դառնալու ռազմավարական զարգացման նպատակից:

Մեր զարգացման ներկա փուլում մենք կարևորում ենք հիմնավորված և տվյալների վրա հիմնված որոշումների կայացումը: Այդ նպատակով մենք սկսել ենք իրականացնել տվյալների բազաների ստեղծման նախագծեր՝ ավելի համալիր և բարդ վերլուծություններ կատարելու նպատակով:

Մանրածախ բանկային գործառնություններ

2021թ. հիմնական ցուցանիշները

Համախառն մանրածախ վարկերի և փոխատվությունների մասնաբաժինն ընդհանուր վարկային պորտֆելում



Մանրածախ ավանդների և պարտատոմսերի մասնաբաժինն ընդհանուր պորտֆելում



Գործառնական շահույթ,
մլրդ ՀՀ դրամ



Ընդհանուր ակնարկ

Վերջին մի քանի տարվա ընթացքում մենք շարունակ ներդրումներ ենք կատարել մանրածախ ուղղության զարգացման մեջ՝ որպես մեր հիմնական ռազմավարական նպատակ՝ հաճախորդների համար ապահովելով ավելի արդյունավետ, անհատականացված լուծումներ: Մենք դարձել ենք մանրածախ բանկային ծառայություններ մատուցող խոշորագույն ընկերություններից մեկը շուկայում՝ այժմ առաջարկելով պրոդուկտների և ծառայությունների լայն տեսականի սպասարկման բազմաֆունկցիոնալ հարթակի միջոցով: Մենք նպատակաուղղված ենք մեր հաճախորդների համար ապահովելու անթերի սպասարկում և ուրախ ենք ունենալ հաճախորդների գոհունակության ամենաբարձր ցուցանիշները շուկայում: Թեև մեր հիմնական ուշադրության կենտրոնում էր թվային ուղիների և լուծումների ընդլայնումը, մենք շարունակեցինք ներդրումներ կատարել մասնաճյուղային ցանցի մեջ՝ 2021թ. բացելով ժամանակակից և տեխնոլոգիաներով հագեցած 5 նոր մասնաճյուղ:

Մանրածախ վարկերի ընդհանուր պորտֆելն աճել է 12.6%-ով, իսկ մանրածախ վարկերի կշիռն ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 38%, ինչը 5.6 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից:

ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

12.6%
Ընդհանուր մանրածախ վարկերի աճ

15%
Ընդհանուր մանրածախ բիզնես վարկերի աճ



20.7%
Ընդհանուր հիփոթեքային վարկերի աճ

98%
Ինտերնետ-բանկինգ համակարգով իրականացված գործարքների աճ

- Թվային փոխակերպման գործակիցը (անկանխիկի անցնելու գործակիցը) կազմել է 72%:
- Ակտիվ թվային օգտատերերի միջին ամսական թիվն աճել է 52%-ով:

Բեռնաթափման գործակիցը (հեռավար և թվային ուղիներով իրականացվող գործարքների կշիռը) 2021թ. կազմել է 91%՝ շնորհիվ հետևյալ միջոցառումների.

- Ինտերնետ-Բանկ համակարգում հասանելի ծառայությունների շրջանակի շարունակական ընդլայնում, օրինակ՝ քարտից քարտ փոխանցումներ,
- Բանկի սակագների վերանայում՝ մասնաճյուղերում առավել աշխատատար կանխիկ և անկանխիկ գործառնությունների ուսումնասիրության հիման վրա, որի նպատակն է խթանել հեռավար բանկային գործառնությունների օգտագործումը և նվազեցնել թղթային և այլ նմանատիպ ծառայությունների և գործընթացների կիրառումը:

Բեռնաթափման գործակից



Տարեկան աճ
1 տոկոսային կետով

Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից



Տարեկան աճ
10 տոկոսային կետով

Մանրածախ բանկինգի ենթաճյուղեր

Անհատական բանկային ծառայություններ

Վճարային քարտեր և անկանխիկ գործառնությունների խթանում

Կարևորելով անկանխիկ գործառնությունների դերը տնտեսական զարգացման և ստվերային տնտեսության կրճատման գործում՝ 2021թ. մենք շարունակել ենք խթանել քարտային վճարումները:

2021թ. քարտային բիզնեսը և հատկապես անկանխիկ վճարումները շարունակում էին մնալ մեր գործունեության գերակա ուղղություններից մեկը: 2021թ. թողարկված քարտերի թիվն աճել է 14.3%-ով: Մենք հիմնական ուշադրությունը դարձնում էինք անկանխիկ և էլեկտրոնային վճարումներին՝ փորձելով մեր հաճախորդներին հասանելի լինել ամենուր: Արդյունքում, 2021թ. անկանխիկ գործարքների տեսակարար կշիռն աճել է՝ կազմելով 41% (2020թ.՝ 37%): Քարտային գործառնություններից ստացված զուտ ոչ տոկոսային եկամուտը տարվա կտրվածքով ավելացել է 88%-ով: Մենք շուկայի առաջատարն էինք անկանխիկ գործարքների քանակով և ծավալով:

Անկանխիկ գործառնությունների խթանման նպատակով իրականացվել է մի քանի արշավ:

Առաջին արշավը «Ծոփ Ամառ»-ն էր: Արշավի շրջանակներում հունիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը ներառյալ Ամերիաբանկի Visa քարտերով արտերկրի օնլայն խանութներից կատարելով 5 և ավելի գործարք՝ 50,000 դրամ ընդհանուր արժեքով՝ հաճախորդները կարող էին մասնակցել «Ծոփ ամառ» գովազդային վիճակախաղին և ստանալ հնարավորություն հաղթելու հետևյալ նվերներից մեկը՝

- 100 հատ Visa Gold վճարային քարտ՝ 50,000 ՀՀ դրամ գումարով
- 5 հատ Visa Platinum վճարային քարտ՝ 500,000 ՀՀ դրամ գումարով

Արդյունքում, արշավի ժամանակահատվածում իրականացված գործարքների թիվն աճել է 48%-ով (2019թ. համեմատ, քանի որ 2020թ. գործում էր կարանտինը), իսկ գործարքների ծավալը՝ 28%-ով:

Եվս երկու արշավ («Ապրիր հայերեն» և «Ապրիր առանց սահմանների») մեկնարկել են տարեվերջին և նպատակաուղղված են թե՛ տեղական, թե՛ միջազգային գործարքների խթանմանը:

Քարտային բիզնեսի զարգացման հերթական կարևոր փուլ կդառնա Apple Pay տեխնոլոգիայի ներդրումը 2022թ. հունվարին: Այս գործիքը կօգնի էապես ավելացնել անկանխիկ գործարքների ծավալը:

2022թ. մենք նախատեսում ենք ներդնել NFC վճարումների հնարավորությունը iOS և Android համակարգերի օգտատերերի համար:

Մենք նաև ներդրել ենք քարտերի առաքման նոր տարբերակ: Այժմ հաճախորդները կարող են քարտերն ստանալ «Գլոբբինգ» ընկերության Online Shopping Network ցանցի պահատուփերի միջոցով: Երևանում արդեն գործում է պահատուփերի ավելի քան 40 կետ: Այս ծրագրի նպատակն է բարձրացնել հաճախորդների սպասարկման որակը և նվազեցնել քարտերի առաքման ծախսերը:

Մեկ այլ արդյունավետ նախաձեռնություններից է համագործակցությունը «Էյչ-Էս-Բի-Սի» բանկի հետ, որի արդյունքում Ամերիաբանկի և «Էյչ-Էս-Բի-Սի» բանկի քարտապանները կարող են կանխիկացնել գումարներ երկու բանկերի բանկոմատներից՝ առանց որևէ լրացուցիչ միջնորդավճարների:

Բանկը շուկայում պահպանում է առաջատար դիրքն ըստ էլեկտրոնային առևտրի և վճարային տերմինալների:

Բանկոմատների ամենամեծ ցանցը մայրաքաղաքում

vPOS տերմինալների խոշորագույն ցանցը երկրում

POS տերմինալների ամենամեծ ցանցերից մեկը երկրում



↑14% **տարեկան**
Գործարքներ վճարային տերմինալներով

↑54% **տարեկան**
Շրջանառությունը վիրտուալ POS-տերմինալներով

Վարկավորում

2019թ. Բանկը հաջողությամբ գործարկեց առցանց վարկավորման հարթակ ֆիզիկական անձ հաճախորդների համար: 2021թ. սպառողական վարկերի ավելի քան 92%-ը տրամադրվել է ավտոմատ եղանակով՝ 5 րոպեի ընթացքում:

Հարթակի որակի բարձրացման, հաճախորդների փորձառության բարելավման և հաստատումների ցուցանիշի բարձրացման նպատակով ներդրվել է մեքենայական ուսուցման նոր մոդել, որը հաշվարկում է հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման հավանականությունը և ներկայացնում է վարկի առաջարկ համապատասխան չափորոշիչներով:

Հաճախորդների ավանդներ

Մանրածախ ավանդային պորտֆելը հաճախորդների հավատարմության կարևորագույն ցուցանիշներից մեկն է: 2021թ. Բանկը շատ բարձր աճ է գրանցել մանրածախ ավանդների և պարտատոմսերի գծով՝ ամրապնդելով իրացվելիության ցուցանիշները:

Ֆիզիկական անձանց ավանդներ և պարտատոմսեր



Էկոհամակարգեր

Էկոհամակարգերը նոր իրողություն են, որոնք առաջարկում են հարմարավետություն և նոր փորձ ինչպես բանկային, այնպես էլ ոչ բանկային ծառայություններից օգտվողների համար: Մեր կողմից գործարկված հիմնական էկոհամակարգերն են. ավտոմեքենաների հարթակ՝ **automarket.ameriabank.am**, անշարժ գույքի հարթակ՝ **estate.ameriabank.am**, ՓՄՁ հարթակ՝ **sme.ameriabank.am**

Էլեկտրոնային առևտրի հարթակ

Էլեկտրոնային առևտուրն Ամերիաբանկի համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներից մեկն է, քանի որ այն անմիջապես ազդում է մեր հաճախորդների վարքագծի փոփոխության վրա՝ խթանելով թվային ֆինանսական ծառայությունների օգտագործումը:

Ամերիաբանկը մշակել է բազմաթիվ գործիքներ և ծառայություններ, որոնք նպաստել են Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացմանը:

ՓՄՁ ՀԱՐԹԱԿ

sme.ameriabank.am

Թվային լուծումներ ՓՄՁ-ների համար
ՓՄՁ բիզնես հաշվի/քարտի օնլայն բացում

2021 թվականի վերջում մենք մշակեցինք նոր թվային հարթակ՝ ՓՄՁ ամենօրյա բանկային կարիքներից ելնելով: Այս հարթակի օգնությամբ գործարարները կարող են հաշիվ բացել Ամերիաբանկում, ձեռք բերել բիզնես քարտ և անվճար ստանալ օնլայն/մոբայլ բանկինգ: Գործընթացն ամբողջությամբ օնլայն է և ստեղծված է մեր բիզնես հաճախորդների հարմարավետության համար: ՓՄՁ հարթակին մեկնարկից ի վեր օնլայն բացված բիզնես հաշիվների մասնաբաժինը ընդհանուրի մեջ հասել է շուրջ 10%-ի:

Օնլայն բացված
բիզնես հաշիվներ





ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՐԹԱԿ

automarket.ameriabank.am

Ավտոմեքենաների հարթակի շնորհիվ ավտովարկերի տրամադրման գործընթացը դարձել է ավելի հեշտ՝ հաճախորդներին հնարավորություն տալով մեքենա գնել առանց բանկ այցելելու: Հարթակի միջոցով առաջնային շուկայից մեքենաների ձեռքբերման համար տրված վարկերի կշիռը 2021թ. կազմել է 30%:

Ավտովարկերի
համախառն պորտֆել





ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԹԱԿ

estate.ameriabank.am

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

Անշարժ գույքի ձեռքբերման/վերանորոգման/կառուցապատման վարկեր

Մեր հիփոթեքային պորտֆելն արագ աճում է՝ վերջին երեք տարվա կտրվածքով միջինում ապահովելով 46% տարեկան աճի տեմպ և միևնույն ժամանակ պահպանելով վարկերի բարձր որակը:
Բանկը առաջատար դիրք է զբաղեցնում շուկայում հիփոթեքային վարկերի ծավալով՝ 21% շուկայի մասնաբաժնով:





Բիզնես բանկինգ



Ամերիաբանկն իր ՓՄՁ* հաճախորդներին առաջարկում է ֆինանսական ծառայություն-ների լայն տեսականի՝ զուգորդված շարունակաբար ընդլայնվող թվային տարբեր ուղիների հետ, որպեսզի մեր հաճախորդները կարողանան իրագործել իրենց ներուժը:

Մեր թվային ռազմավարության շրջանակներում մենք ամբողջովին ավտոմատացրինք վարկային հայտերի ներկայացման և հաստատման գործընթացը՝ արձագանքելով հաճախորդների արագ աճող պահանջներին: 2021թ. ՓՄՁ վարկերի 70%-ը տրամադրվել է թվային հարթակների միջոցով:

Մենք ինտեգրել ենք մեր կողմից մշակված եզակի լուծումը՝ ՓՄՁ վարկերի սքորինգային համակարգը, հարկային ծառայության տվյալների համակարգի հետ, ինչն աննախադեպ է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ տարածաշրջանի համար: Արդյունքում ՓՄՁ սքորինգի առցանց համակարգում այժմ գործում է երրորդ հաստատման տարբերակ՝ ըստ Պետական եկամուտների կոմիտեին ներկայացված հարկային տվյալների: Այս փոփոխության շնորհիվ վարկերի հաստատման գործակիցն էապես բարելավվել է:

Հայաստանի համար մեկ այլ աննախադեպ լուծումներից էր հաճախորդների առցանց ներգրավումը: Այժմ ՓՄՁ-ները կարող են դառնալ Ամերիաբանկի հաճախորդ առցանց եղանակով՝ Ամերիաբանկի կայքի միջոցով: Վերջին շրջանում մեր նոր բիզնես հաճախորդների շուրջ 10%-ը ներգրավվում են ՓՄՁ օնլայն պորտալի միջոցով:

Այլ պրոդուկտներ և ծառայություններ

2021թ. ներդրված ոչ ֆինանսական ծառայությունները՝

- Առցանց ԱՊՊԱ պայմանագրերի կնքում
- Առողջության, կրիտիկական հիվանդություններից և դժբախտ պատահարներից ապահովագրություն
- Գույքի առցանց ապահովագրություն

Մոբայլ բանկինգի նոր հավելված

Մենք նպատակաուղղված ենք ստեղծելու միասնական հարթակ, որտեղ կառաջարկվեն նաև այլ ֆինանսական և ոչ ֆինանսական հավելվածներ: Մենք անընդհատ զարգացնում ենք հեռավար բանկային ծառայությունները՝ տրամադրելով էժան և դիվերսիֆիկացված բանկային լուծումներ: Արդյունքում, 2021թ. մենք մշակեցինք MyAmeria նոր բանկային հավելվածը, որը գործարկեցինք 2022թ. սկզբին:

Մոբայլ բանկինգի նոր հավելվածի առավելությունները

- Նորարարական բանկի գաղափարի և հատկանիշների վրա հիմնված դիզայն
- Հարմարավետ ինտերֆեյս, հեշտ հասանելիություն և օգտագործման պարզություն
- Կրկնակի նույնականացման տրամաբանություն, որն ապահովում է անվտանգության բարձր մակարդակ

Հաճախորդները կարող են դիտել հաշվի մնացորդը, իրականացնել գործարքներ, կցել քարտը ApplePay-ին, կատարել NFC և այլ վճարումներ և նոր պրոդուկտների հայտ ներկայացնել ընդամենը մի քանի հպումով:

2022թ. նպատակները

Հետևյալ ոլորտները կմնան 2022թ. մանրածախ բանկային գործունեության մեր հիմնական բիզնես թիրախները.

- Թվային ծառայությունների կատարելագործում և դիվերսիֆիկացում
- Հեռավար բանկային ծառայություններից օգտվողների թվի աճ
- Ոչ տոկոսային եկամուտ ապահովող ծառայությունների մասնաբաժնի աճ
- Հաճախորդների գոհունակության աճ բոլոր բիզնես ոլորտներում
- Մանրածախ բիզնեսի զարգացում նպատակային ֆինանսավորման միջոցով
- Էկոհամակարգերի մշակում և բարելավում
- Անկանխիկ շրջանառության և գործիքների ծավալի աճ

Կորպորատիվ և ներդրումային բանկային գործառնություններ (ԿՆԲ)

2021թ. հիմնական ցուցանիշները

Ընդհանուր կորպորատիվ վարկեր և փոխատվություններ



Մասնաբաժինն ընդհանուր վարկերում և փոխատվություններում

Կորպորատիվ ավանդներ և պարտատոմսեր



Մասնաբաժինն ընդհանուր ավանդային պորտֆելում

Գործառնական շահույթ,
մլն ՀՀ դրամ*



* Ներառյալ շահույթը նախքան վարկերի հնարավոր կորուստների գծով մասհանումները, ընդհանուր վարչական ծախսերը և շահութահարկը

Ընդհանուր ակնարկ

Ամերիաբանկը Հայաստանի առաջատար կորպորատիվ և ներդրումային բանկն է ըստ բոլոր հիմնական ցուցանիշների: Բանկն ի սկզբանե հիմնադրվել է որպես կորպորատիվ և ներդրումային բանկ՝ սահմանափակ մանրածախ գործառնություններով: Որպես մասնագիտացած թիմ՝ մեր կորպորատիվ և ներդրումային գործառնությունների ստորաբաժանումը քաջ ծանոթ է տնտեսության բոլոր խոշոր ոլորտների առանձնահատկություններին: Մենք առաջարկում ենք անհատականացված կորպորատիվ, ներդրումային բանկային և խորհրդատվական լուծումներ՝ հաճախորդների օգտին ծառայեցնելով մեր պրոֆեսիոնալ թիմի փորձը և բարձր վերլուծական կարողությունները: Մեր ծառայություններն ու լուծումները մշակված են հաճախորդների բազմազան ֆինանսական կարիքները բավարարելու համար՝ լինի դա խորհրդատվական ծառայությունների, թե պարզապես ֆինանսավորման միջոցով: Մենք սպասարկում ենք Հայաստանի խոշորագույն կորպորատիվ հաճախորդներին և ֆինանսավորում երկրում իրականացվող ամենամեծ ռազմավարական նախագծերը: Հաշվի առնելով մեր կողմից մատուցվող կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայությունների բազմազանությունն ու մեր շուկայական փորձը՝ մենք հպարտ ենք, որ խոշոր ընկերությունները մեզ դիտարկում են որպես իրենց թիվ մեկ ֆինանսական գործընկերը: Չնայած վերջին տարիներին մեր գործունեությունն աստիճանաբար ավելի տարաբնույթ էր դառնում, կորպորատիվ բանկային ծառայությունները մնում են մեր մրցակցային առավելությունը, և մենք ակտիվորեն զարգացնում ենք դրանք ի պատասխան բազմակողմանի բանկային լուծումների պահանջարկի աճին:

Մենք նպատակաուղղված ենք պահպանելու առաջատար դիրքերը շուկայում՝ շարունակելով դիվերսիֆիկացնել կորպորատիվ բանկային պորտֆելը, նվազեցնելով կենտրոնացման մակարդակը և ավելացնելով «կանաչ» վարկերի կշիռը կորպորատիվ պորտֆելում: Մեր առաջնային միջնաժամկետ նպատակն է ավելացնել ՓՄՁ վարկերի և պրոդուկտների կշիռն ընդհանուր պորտֆելում, ինչպես նաև ապահովել ոչ տոկոսային եկամտի աճն ընդհանուր գործառնական եկամտի կառուցվածքում:

Ընդհանուր կորպորատիվ վարկային պորտֆելի կառուցվածքը

2021

Խոշոր վարկեր	ՓՄՁ	Ֆակտորինգ	Լիզինգ	Դեբիտորական պարտքեր ակրեդիտիվների գծով
278.1 մլրդ ՀՀ դրամ	**108.6 մլրդ** ՀՀ դրամ	**10.8 մլրդ** ՀՀ դրամ	**19.9 մլրդ** ՀՀ դրամ	**10.7 մլրդ** ՀՀ դրամ

Կորպորատիվ բանկային գործառնություններ

Խոշոր ձեռնարկությունների վարկավորում

Խոշոր ձեռնարկությունների վարկավորման ընդհանուր պորտֆել



Խոշոր ձեռնարկությունների վարկավորման կշիռն ընդհանուր կորպորատիվ վարկային պորտֆելում



Խոշոր ձեռնարկությունների վարկավորման կշիռն ընդհանուր վարկային պորտֆելում

Մենք շարունակում էինք նվազեցնել կենտրոնացման մակարդակն ունիվերսալ բանկային մոդելին անցնելու մեր ռազմավարությանը համահունչ: Արդյունքում, 2021թ. խոշոր ձեռնարկություններին տրված վարկերի պորտֆելը կրճատվել է՝ տարեվերջին կազմելով 278 մլրդ ՀՀ դրամ (21%-ով տարեկան նվազում): Տարեկան նվազման մեկ այլ պատճառներից էր ՀՀ դրամի արժեզրկումը, քանի որ խոշոր վարկերի զգալի մասն արտահայտված է արտարժույթով: Կենտրոնացման ռիսկի նվազումը հանգեցրեց ընդհանուր պորտֆելի որակի բարելավմանը: Չնայած պորտֆելի կրճատմանը՝ գրանցվել է նաև խնդրահարույց վարկերի տեսակարար կշռի նվազում 0.7 տոկոսային կետով:

Մեր ապակենտրոնացման քաղաքականության շնորհիվ խոշոր կորպորատիվ վարկերի մասնաբաժինը Բանկի ընդհանուր վարկային պորտֆելում կազմեց 40%, ինչը 9 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից:

Ապակենտրոնացմանը և վարկային պորտֆելի որակի բարելավմանը զուգահեռ մենք շարունակում էինք երկարաժամկետ զարգացում ապահովող առավել խոստումնալից ոլորտների և նախագծերի ֆինանսավորումը: Այդ առումով հատկանշական է մեր ներդրումն ինտենսիվ գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտում: Ունենալով բավականին մեծ փորձ վերջին սերնդի բարձր տեխնոլոգիաներով հագեցած ջերմոցների ֆինանսավորման ոլորտում՝ 2021թ. մենք սկսեցինք ֆինանսավորել ժամանակակից եվրոպական տեխնոլոգիաների կիրառմամբ վերջին սերնդի ինտենսիվ այգիների հիմնման ծրագրեր: Նշված ծրագրերի իրականացումն ուղղված է տնտեսության

արտահանման նոր ճյուղի ձևավորմանը, ընդգրկում է շահառուների մեծ խումբ, որոնք տեղակայված են հիմնականում մարզերում: 2021թ. ընթացքում հաստատվել է ընդհանուր առմամբ 700 հա այգիների հիմնման ծրագրեր, իսկ նման ծրագրերի իրականացման նպատակով տրված վարկերի ծավալը կազմում է շուրջ 26 մլրդ ՀՀ դրամ:

Հավատարիմ մնալով մեր «կանաչ» ռազմավարությանը՝ մենք շարունակել ենք ֆինանսավորել վերականգնվող էներգետիկայի ոլորտի խոշոր ներդրումային ծրագրեր: Հաշվետու տարվա ընթացքում հիմնական շեշտը դրվել է արևային ֆոտովոլտային նոր կայանների ծրագրերի ֆինանսավորման վրա: 2021թ. ընթացքում հաստատվել է չորս նոր արևային ֆոտովոլտային կայանների ֆինանսավորման ծրագիր՝ ընդհանուր 21.7 ՄՎտ դրվածքային հզորությամբ, իսկ տվյալ ծրագրերի իրականացման նպատակով հաստատված վարկավորման ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 5.5 մլրդ ՀՀ դրամ:

ՓՄՁ վարկավորում

2021թ. հիմնական ցուցանիշները

12.6%
տարեկան աճ



Կորպորատիվ ՓՄՁ վարկավորման ընդհանուր պորտֆել

6 տոկոսային կետով
տարեկան աճ



Կորպորատիվ ՓՄՁ վարկավորման կշիռն ընդհանուր կորպորատիվ վարկային պորտֆելում

2021թ. մենք զգալիորեն ավելացրել ենք ՓՄՁ վարկավորման ծավալները՝ միևնույն ժամանակ աջակցելով մեր հաճախորդներին համաճարակի դժվարին ժամանակներում իրենց բիզնեսի կայունությունն ու հետագա զարգացումն ապահովելու գործում: Առավել մեծ ուշադրության էին արժանացել Հայաստանի ռազմավարական ոլորտները՝ էներգետիկան, գյուղատնտեսությունը, շինարարությունը, զբոսաշրջությունը և այլն՝ առաջարկելով համապատասխան նոր պրոդուկտներ:

ՓՄՁ վարկավորման մեր թիրախային քաղաքականության շնորհիվ կորպորատիվ ՓՄՁ վարկերի պորտֆելն ավելացել է 12.6%-ով, իսկ կորպորատիվ ՓՄՁ վարկերի կշիռը Բանկի ընդհանուր կորպորատիվ վարկային պորտֆելում կազմել է 25%. Աճը հիմնականում ապահովվել է նորարարական և «կանաչ» ՓՄՁ ծրագրերի, ինչպես նաև սոցիալական ուղղվածություն ունեցող նախագծերի ֆինանսավորման ծավալների ավելացման շնորհիվ:

2021թ. մեր առանձնակի ուշադրության կենտրոնում էին հատկապես էներգաարդյունավետության ու էներգախնայողության ոլորտի ծրագրերը, որոնց իրականացման համար Բանկը ֆինանսավորում է տրամադրել ամենաշահավետ պայմաններով: Ամրապնդելով համագործակցությունը մեր գործընկեր միջազգային ֆինանսական հաստատությունների հետ՝ մենք բազմաթիվ նախագծեր ենք իրականացրել «կանաչ» տնտեսության վարկավորմանն ուղղված ծրագրերի շրջանակներում:

2021թ. մենք շարունակում էինք զարգացնել ՓՄՁ վարկավորման առցանց հարթակը՝ այն դարձնելով ՓՄՁ-ների համար նախատեսված համապարփակ էկոհամակարգ, որը հնարավորություն է տալիս բավարարել ՓՄՁ հաճախորդների բոլոր կարիքները մեկ թվային տիրույթում:

Ֆինանսական վարձակալություն (լիզինգ)

2021թ. հիմնական ցուցանիշները

Լիզինգի ընդհանուր պորտֆել

20 մլրդ
դրամ

Լիզինգի պորտֆելի աճ

52.7%
տարեկան աճ

2021թ. մենք շարունակում էինք պահպանել առաջատար դիրքերը շուկայում լիզինգի պորտֆելի ծավալով՝ ապահովելով պորտֆելի 52.7% տարեկան աճ:

Հաջողության հիմնական գրավականներից էին սպասարկման բարձր որակը, մատուցվող ծառայությունների համալիր փաթեթը և ֆինանսավորման ճկունությունը:

Լիզինգը շարունակում է մնալ գրավիչ և շահավետ գործիք թե՛ լիզինգից արդեն մեկ անգամ օգտված և թե՛ նոր ներգրավված հաճախորդների համար՝ շնորհիվ հաճախորդների կողմից կատարվող կանխավճարի փոքր չափի և գրավի անհրաժեշտության բացակայության: Մենք տրամադրում ենք լիզինգ և՛ ՓՄՁ, և՛ խոշոր իրավաբանական անձ հաճախորդներին՝ ընդլայնելով հաճախորդների շրջանակը և ապահովելով պորտֆելի դիվերսիֆիկացում:

2021թ. պետությունը շարունակեց սուբսիդավորել տոկոսագումարների ամբողջական վճարումն ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության դեպքում, որը ևս շատ շահավետ շարժառիթ էր տնտեսվարողների համար:

Լինելով առաջատար բանկ և ունենալով ամենամեծ կորպորատիվ պորտֆելը՝ Ամերիաբանկն իր ներդրումն է ունեցել նաև շուկայում լիզինգի մասին իրազեկվածության բարձրացման և զարգացման գործում:

Ֆակտորինգ

2021թ. հիմնական ցուցանիշները

Հետհամավարակային վերականգնման փուլում 2021թ. մեր ֆակտորինգային պորտֆելը պահպանեց կայուն աճի տեմպը: Ամերիաբանկի ֆակտորինգային պորտֆելի թիրախային ոլորտներն անփոփոխ էին՝ առևտուր, էներգետիկա, շինարարություն, տրանսպորտ, հանրային ծառայություններ:

Գործարքների զգալի մասը բաժին է ընկել արտահանման ֆակտորինգին, թեև հաճախորդներն ակտիվ օգտվում էին նաև տեղական ֆակտորինգի ծառայությունից: Մենք շարունակում էինք համագործակցել Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության հետ՝ ավելի շատ հնարավորություններ ընձեռելով արտահանողներին՝ կառուցելու ֆինանսապես ավելի արդյունավետ և վստահելի հարաբերություններ արտասահմանյան գործընկերների հետ: Արտահանողներն այժմ լավ ծանոթ են ֆակտորինգի առավելություններին և ակտիվորեն օգտվում են իրենց դեբիտորական պարտքերը կառավարելու համար:

Մենք մեր հաճախորդներին առաջարկում ենք ֆակտորինգային լուծումներ՝ տարբեր սցենարներով: Որպես դեբիտորական պարտքի զիջման միջոցով ֆինանսավորում՝ ֆակտորինգն ավելի գրավիչ է դարձել արագ աճող, վաճառքից կախված կազմակերպությունների համար, որոնց անհրաժեշտ են շրջանառու կապիտալ և հետաձգված վճարման պայմաններ՝ ավելի բարձր արդյունավետություն և շահութաբերություն ապահովելու համար:

Մենք շարունակում ենք առանձնահատուկ ուշադրություն դարձնել հաճախորդների բազայի դիվերսիֆիկացմանը և տնտեսության տարբեր ոլորտներից նոր հաճախորդների ներգրավմանը՝ նրանց ընձեռելով ֆակտորինգի գործիքների ճկունությունից օգտվելու հնարավորություն:

Ֆակտորինգի ընդհանուր պորտֆել

10.8 մլրդ դրամ

Գործարքների քանակը

616

Առևտրի ֆինանսավորում

2021թ. հիմնական ցուցանիշները

Ակրեդիտիվների և բանկային երաշխիքների պորտֆել տարեվերջի դրությամբ	Տրամադրված ակրեդիտիվների և բանկային երաշխիքների ընդհանուր ծավալ	Տրամադրված ակրեդիտիվների և բանկային երաշխիքների քանակը	Առևտրի ֆինանսավորման գործիքներից ստացված զուտ տոկոսային եկամուտը և միջնորդավճարները
35.4 մլրդ ՀՀ դրամ	**39.2 մլրդ ՀՀ դրամ**	**910**	**610 մլն ՀՀ դրամ**

Չնայած շարունակվող համավարակին՝ 2021թ. Ամերիաբանկը պահպանեց բարձր արդյունքները՝ մնալով ՀՀ առևտրի ֆինանսավորման շուկայի առաջատարը: Կորոնավիրուսի արդյունքում առաջացած խնդիրները հաղթահարելիս հաճախորդները շարունակում էին ստանալ Ամերիաբանկի աջակցությունը՝ նոր նշաձողերի հասնելու գործում: Դա հնարավոր էր ապահովել մեր ճկունության, հաճախորդների գերազանց սպասարկման և տարբեր բանկային պորդուկտների համակցության միջոցով հաճախորդների գործունեության տարբեր փուլերում ակտիվ աջակցության շնորհիվ:

2021թ. մեր ուշադրության կենտրոնում էին տնտեսական աճին նպաստող ոլորտները՝ գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, էներգետիկան, հանքարդյունաբերությունը, ՏՏ-ն, շինարարությունը, առողջապահությունը և առևտուրը:

Մենք ակտիվորեն մասնակցում էինք բոլոր խոշոր միջազգային ֆինանսական հաստատությունների՝ ՎԶԵԲ-ի, ՄՖԿ-ի, ԱԶԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրերին: Բացի նշված կազմակերպություններից թողարկող բանկի կարգավիճակին արժանանալուց, Ամերիաբանկը նաև առաջին հայկական բանկն է, որն ստացել է հաստատող բանկի կարգավիճակ ՎԶԵԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում (2013թ.), իսկ 2018թ.՝ նաև ԱԶԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում: Շնորհիվ նշված միջազգային ֆինանսական կազմակերպություններից և գործընկեր առևտրային բանկերից ստացված խոշոր վարկային սահմանաչափերի՝ մենք մեր հաճախորդներին տրամադրել ենք բնականոն աշխատանքն ու բիզնեսի զարգացումն ապահովող լավագույն լուծումները:

Մենք շարունակեցինք արդյունավետ համագործակցությունը մի շարք միջազգային բանկերի հետ, ինչպիսիք են BC Bank-ը, Raiffeisenbank-ը, ODDO BHF-ը, Unicredit-ը, Citibank-ը, Deutsche Bank-ը, Banca Popolare Di Sondrio-ն, Caixabank-և և այլն:

Ամերիաբանկի համար միջազգային ֆինանսական կազմակերպությունների և առևտրային բանկերի կողմից տրամադրված ֆինանսավորման հասանելի սահմանաչափը 2021թ. վերջում գերազանցում էր 80 մլրդ ՀՀ դրամը:

Մենք ֆինանսավորում ենք առևտուրն ինչպես տեղական ու միջազգային վճարային

գործիքների թողարկման և արտահանման/ներմուծման գործառնությունների սպասարկման, այնպես էլ միջազգային բանկերից ռեսուրսների ներգրավման և արտահանման ու ներկրման գործառնությունների ուղղակի ֆինանսավորման միջոցով: Առևտրի ֆինանսավորման նպատակով Ամերիաբանկի կողմից միջազգային ֆինանսական կազմակերպություններից և գործընկեր բանկերից ներգրավված ֆինանսավորումը 2021թ. կազմեց 38.8 մլրդ ՀՀ դրամ:

Տարիներ շարունակ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից շնորհվող բազմաթիվ մրցանակները վկայում են առևտրի ֆինանսավորման ոլորտում մեր առաջատար դիրքի մասին: Մասնավորապես, մենք արժանացել ենք հետևյալ մրցանակներին. ՎԶԵԲ՝ «Հայաստանում ամենաակտիվ թողարկող բանկ», ՄՖԿ՝ «Կովկասյան տարածաշրջանում առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում ամենաակտիվ թողարկող բանկ», ՎԶԵԲ՝ «Տարվա լավագույն գործարք» Հայաստանում նոր սերնդի օպտիկամանրաթելային ցանցի և «Տարվա լավագույն գործարք էներգախնայողության ոլորտում» էներգաարդյունավետ ջերմոցների կառուցումը ֆինանսավորելու համար, ՄՖԿ՝ «Լավագույն թողարկող բանկ առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում էներգիայի արդյունավետ օգտագործման նախագծերում» և «Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում սարքավորումների ֆինանսավորման գծով լավագույն գործընկեր բանկ»:

2021թ. մենք կրկին ունեցանք զգալի հաջողություններ՝ ճանաչվելով **Լավագույն թողարկող բանկը Կովկասում ՄՖԿ-ի առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում:**

Ներդրումաբանկային գործառնություններ

2021թ. հիմնական ցուցանիշները

Թիվ 1 տեղաբաշխողը Հայաստանում

12 թողարկում՝ ավելի քան 35 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 2021թ.

Պարտատոմսերի առաջատար թողարկողը ՀՀ շուկայում



մասնաբաժինը շուկայում

Ընդհանուր ակնարկ

Ամերիաբանկը հիմնադրվել է որպես կորպորատիվ և ներդրումային բանկ՝ սկզբում առաջարկելով միայն սահմանափակ մանրածախ բանկային ծառայություններ: Մեր մասնագետները գերազանց տիրապետում էին Հայաստանում կորպորատիվ բանկային բիզնեսի բոլոր նրբություններին, ինչը մեզ մրցակցային առավելություն տվեց կորպորատիվ բանկային գործառնությունների ոլորտում: Թեև վերջին տարիներին մենք անցել ենք ունիվերսալ բանկային մոդելի՝ առավել մեծ ուշադրություն դարձնելով մանրածախ բանկային ծառայություններին, մենք շարունակում ենք մնալ տեղական շուկայի առաջատարը կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայությունների ոլորտում: Մենք սպասարկում ենք Հայաստանի խոշորագույն կորպորատիվ հաճախորդներին և ֆինանսավորում Հայաստանում իրականացվող ամենամեծ ռազմավարական ծրագրերը:

Բանկի ռազմավարությանը և միջնաժամկետ նպատակներին համահունչ՝ մենք մտադիր ենք պահպանել առաջատար դիրքերը կորպորատիվ և ներդրումային բանկային գործառնությունների ոլորտում՝ շարունակելով դիվերսիֆիկացնել կորպորատիվ բանկային պորտֆելը և նվազեցնել կենտրոնացման մակարդակը: Կորպորատիվ հաճախորդների ֆինանսավորման մեխանիզմները դիվերսիֆիկացնելու և նրանց ռազմավարական աճը խթանելու նպատակով կիրառվելու են ներդրումաբանկային գործիքներ և պրոդուկտներ: Գործառնական եկամտում ոչ տոկոսային եկամտի կշռի աճը Բանկի հիմնական միջնաժամկետ նպատակներից մեկն է:

Ամերիաբանկի ներդրումաբանկային պրոդուկտները և ծառայությունները տրամադրվում են հետևյալ բիզնես ուղղությունների միջոցով.

Միաձուլումներ և ձեռքբերումներ

- Խորհրդատվություն գնորդին
- Խորհրդատվություն վաճառողին
- Բիզնեսի գնահատում

Կապիտալի շուկաներ

- Պարտքային ֆինանսավորման ներգրավում կապիտալի հանրային շուկաներում
- Բաժնային ֆինանսավորման ներգրավում կապիտալի հանրային շուկաներում
- IPO խորհրդատվություն

Կորպորատիվ ֆինանսներ

- Պարտքային ֆինանսավորման ներգրավում կապիտալի ոչ հանրային շուկաներում
- Բաժնային ֆինանսավորման ներգրավում կապիտալի ոչ հանրային շուկաներում
- Վարկանիշավորման խորհրդատվություն

Միաձուլումներ և ձեռքբերումներ

Ամերիաբանկը մասնագիտական խորհրդատվություն է տրամադրում կորպորատիվ և մանրածախ հաճախորդներին՝ միաձուլումների և ձեռքբերումների բոլոր ասպարեզներում:

Մենք առաջարկում ենք ծառայությունների լայն փաթեթ, ներառյալ՝

- Պոտենցիալ ներդրողի կամ թիրախային ընկերության որոնում, փաստաթղթերի պատրաստում (նախնական հուշագիր, տեղեկատվական հուշագիր)
- Գործարքի ռազմավարության մշակում, բանակցությունների վարում և գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն
- Աջակցություն ֆինանսական և իրավաբանական ստուգումների կազմակերպման, հաշվետվությունների կազմման և ներկայացման գործընթացներում
- Գործարար ծրագրի մշակում, ֆինանսական մոդելավորում և զգայունության վերլուծություն
- Բիզնեսի արժեքի և սիներգետիկ արդյունքի գնահատման հաշվետվությունների պատրաստում
- Աջակցություն գործարքի կնքման գործում, ներառյալ.

    - Վարկի ստացման և փոխառու միջոցների հաշվին բաժնեմասի գնման կազմակերպում
    - Գործարքի կառուցվածքի և վճարման կարգի սահմանում, սեփականատիրական կառուցվածքի փոփոխություն, աջակցություն ընկերությունների և իրավունքների գրանցման/վերագրանցման հետ կապված հարցերում
    - Խորհրդատվություն պետական մարմիններից (Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով) հակամենաշնորհային թույլտվությունների ստացման համար

- Իրավաբանական փաստաթղթերի պատրաստում (մտադրությունների մասին նամակ, գաղտնիության համաձայնագիր, նախնական պայմանների վերաբերյալ համաձայնագիր, բաժնետոմսերի առքուվաճառքի պայմանագիր, բաժնետերերի միջև համաձայնագիր) և աջակցություն բանակցային գործընթացում
- Հետգործարքային ուսումնասիրություններ և վերլուծություն

Բիզնեսի գնահատում: Մենք առաջարկում ենք գնահատման հետևյալ ծառայությունները՝

- Բիզնեսի/կապիտալի գնահատում՝ արժեքի մասին համապարփակ եզրակացությամբ
- Բիզնեսի/կապիտալի գնահատում՝ արժեքի հաշվարկներով
- Բիզնեսի/կապիտալի գնահատման հաշվետվությամբ սահմանված արժեքի ճշտության վերաբերյալ եզրակացությունների տրամադրում

Վերջին տարիներին Ամերիաբանկը միաձուլումների և ձեռքբերումների ոլորտում ներգրավել է ավելի շատ հաճախորդների, քան իր մրցակիցներից որևէ մեկը: Մենք ունենք ընթացիկ գործարքների ամենամեծ պորտֆելը, որն ընդգրկում է այնպիսի ոլորտներ,

ինչպիսիք են հեռահաղորդակցությունը, SS ծառայությունները, առևտրային անշարժ գույքը, հյուրանոցային բիզնեսը, գյուղատնտեսությունն ու հանքարդյունաբերությունը: Ամերիաբանկը մեծ ճանաչում ունի տեղական շուկայում իրականացված գրեթե բոլոր խոշոր միաձուլումների/ձեռքբերումների գործարքներում իր մասնակցության համար: Քանի որ 2021թ. կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը դեռ շարունակվում էր, տեղական շուկայում նոր ձեռքբերումներ և միաձուլումներ գրեթե տեղի չեն ունեցել, և մեր թիմը կենտրոնացավ գնահատման գործարքների վրա:

2021թ. մեր մասնագետներն սպասարկել են տասնյակից ավել գործարքներ՝ տրամադրելով խորհրդատվություն գնորդներին, վաճառողներին և ընդհանուր խորհրդատվություն միաձուլումների գործարքների վերաբերյալ, ինչպես նաև պատրաստել են գնահատման հաշվետվություններ Ամերիաբանկի կորպորատիվ հաճախորդների և բաժնետերերի համար:

Գնորդների կողմից խորհրդատվական ծառայություններն առավել պահանջված էին հանքաարդյունաբերության ոլորտում՝ պղնձի համաշխարհային շուկայի զարգացման և հետևաբար Հայաստանում շահագործվող հանքերի նկատմամբ տվյալ ոլորտի ներկայացուցիչների կողմից հետաքրքրության աճի արդյունքում: Մենք նաև խորհրդատվական ծառայություններ ենք տրամադրել հեռահաղորդակցման, էլեկտրոնային առևտրի և արագ սպառման ապրանքների ոլորտներին:

2021թ. հիմնական ձեռքբերումները

Մենք տրամադրել ենք վաճառքների գծով խորհրդատվություն հիմնականում առևտրային նշանակության անշարժ գույքի, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտներին, որոնք առավելապես տուժել են կորոնավիրուսի համավարակից և կարիք ունեին սեփական կապիտալի համալրման՝ կորոնավիրուսի հետևանքներին դիմակայելու համար:

Կապիտալի շուկաներ

Որպես տեղական կապիտալի շուկայի առաջատարը՝ Ամերիաբանկն առաջարկում է ծառայությունների ամբողջական փաթեթ պարտքային և բաժնային կապիտալի շուկաներում՝ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման կազմակերպումից մինչև երկրորդային շուկայում իրացվելիության ապահովում (մարքեթ մեյքինգ): Ի լրումն այս ամենի մենք տրամադրում ենք անհատականացված խորհրդատվություն և շուկայի վերլուծություն: Մեր ծառայությունները ներառում են՝

- Համապարփակ ստուգում նախքան առաջնային տեղաբաշխումը և խորհրդատվություն առաջնային տեղաբաշխման վերաբերյալ
- Խորհրդատվություն կորպորատիվ կառավարման ոլորտում և աջակցություն հաշվետու թողարկողի հաշվետվությունների պատրաստման հարցում

- Աջակցություն ազդագրի պատրաստման և ներկայացման հարցում
- Արժեթղթերի տեղաբաշխում
- Շուկայի ստեղծում (մարքեթ մեյքինգ)

Մենք կապիտալի շուկաներում նորարարի համբավ ենք ձեռք բերել աննախադեպ դեբյուտային նախագծերի իրականացման շնորհիվ: 2012թ. մենք կազմակերպեցինք կորպորատիվ պարտատոմսերի ամենամեծ տեղաբաշխումը: 2013 և 2014թթ. Ամերիաբանկը հանդես եկավ որպես ՄՖԿ-ի և ՎԶԵԲ-ի կողմից թողարկված առաջին դրամային պարտատոմսերի տեղաբաշխման գլխավոր կազմակերպիչ: 2019թ. Ամերիաբանկը հաջողությամբ տեղաբաշխեց գյուղատնտեսության և հանքային արդյունաբերության ոլորտների երկու առաջատար ընկերությունների՝ «Սպայկա» ՍՊԸ-ի և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, պարտատոմսերը տեղական շուկայում: ԶՊՄԿ-ի պարտատոմսերի թողարկումը կորպորատիվ պարտատոմսերի խոշորագույն տեղաբաշխումն էր Հայաստանում: 2020թ. Ամերիաբանկը թողարկեց Հայաստանում առաջին «կանաչ» պարտատոմսերը՝ 42 մլն եվրո արժեքով:

Ամերիաբանկը նաև տեղական շուկայի առաջատար թողարկողն է. 2021թ. վերջի դրությամբ Բանկի՝ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերը կազմել են 107 մլրդ ՀՀ դրամ, իսկ մեր մասնաբաժինը կորպորատիվ պարտատոմսերի ներքին շուկայում՝ 21.7%:



2021 թվականը հերթական նշանակալից տարին էր Բանկի համար կապիտալի շուկաների առումով: Մենք հաջողությամբ նախաձեռնեցինք պարտքային կապիտալի 12 նախագիծ/պարտատոմսերի տեղաբաշխում, ներառյալ՝

- «Սպայկա» ՍՊԸ-ի ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով պարտատոմսերի վերաֆինանսավորումը հաջորդական տեղաբաշխումների միջոցով:
- Ամերիաբանկի պարտատոմսերի 9 տրանշ՝ 30 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով

Մենք սերտորեն համագործակցում էինք միջազգային գործընկերների՝ կորպորատիվ և ներդրումային բանկային ոլորտի խոշորագույն ներկայացուցիչների հետ՝ փնտրելով եվրապարտատոմսերի համապատասխան ծրագրեր և կորպորատիվ հաճախորդներին ուղղորդելով եվրապարտատոմսերի թողարկմանը և բաժնետոմսերի առաջնային տեղաբաշխմանը նախապատրաստման գործընթացներում:

2020թ. վերջում թողարկված մեր «կանաչ» պարտատոմսերն արդեն 2021թ. սկզբին արդեն շրջանառվում էին Հայաստանի ֆոնդային բորսայում՝ ազդարարելով «կանաչ» պարտատոմսերի առաջին ցուցակումը հայկական բորսայում:

2021թ. մենք նաև կազմակերպել ենք «կանաչ» պարտատոմսերի ազդագրի գրանցումը ՀՀ կենտրոնական բանկում, ինչը թույլ կտա Բանկին ընդլայնել իր «կանաչ» պորտֆելը:

Կորպորատիվ ֆինանսներ

Ամերիաբանկի կորպորատիվ ֆինանսների ծառայությունն ապահովում է համապարփակ ու համակարգված մոտեցում ծրագրային և կառուցվածքային ֆինանսավորման հանդեպ, ներառյալ թե՛ մասնավոր ֆինանսական նախաձեռնությունները և թե՛ պետական և մասնավոր հատվածների գործընկերությունը: Մենք առաջարկում ենք բաժնային և պարտքային ֆինանսավորում ներգրավելու ծառայությունների ամբողջական փաթեթ, ներառյալ՝

- Հնարավոր վարկատուների/ներդրողների որոնում (Հայաստանում ներդրումներ կատարել ցանկացող միջազգային ներդրողների/վարկատուների ընդարձակ տվյալների շտեմարանի հիման վրա)
- Ծրագրի վերլուծություն և անհրաժեշտ շնորհանդեսային փաստաթղթերի պատրաստում
- Համապարփակ ուսումնասիրություն և իրավաբանական աջակցություն

- Նախնական համաձայնագրի պատրաստում և բանակցությունների վարում
- Վարկային պայմանագրերի/սինդիկացված վարկային պայմանագրերի/բաժնետոմսերի առքուվաճառքի պայմանագրերի պայմանների մշակում և համաձայնեցում
- Աջակցություն նախապայմանների սահմանման/ապահովման հարցում

Հիմնական ծառայություններին զուգահեռ կորպորատիվ ֆինանսների թիմը տրամադրում է նաև վարկանիշավորման խորհրդատվության ծառայություններ, ներառյալ՝

- Նախնական բանակցություններ վարկանիշային գործակալությունների հետ
- Խորհրդատվություն վարկանիշային գործակալություն ընտրելու վերաբերյալ
- Ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն՝ համապատասխան մեթոդաբանությամբ
- Աջակցություն կառավարչական շնորհանդեսի պատրաստման և ղեկավարության հետ հանդիպման նախապատրաստման աշխատանքներում

Տարիների ընթացքում Ամերիաբանկը ձևավորել է արդյունավետ գործընկերական հարաբերություններ միջազգային ամենահեղինակավոր ֆինանսական հաստատությունների հետ, որոնց միջոցով Բանկը ներգրավել է ավելի քան 1 մլրդ ԱՄՆ դոլարի ֆինանսավորում 2008թ. ի վեր:

2021թ. հիմնական ձեռքբերումները

2021թ. կորպորատիվ ֆինանսների մեր թիմը կենտրոնացավ աճի մեծ ներուժ ունեցող ընկերությունների որոնման վրա և սկսեց իրականացնել ծրագրեր արագ սպառման ապրանքների, գյուղատնտեսության, վերականգնվող էներգետիկայի և ենթակառուցվածքների զարգացման ոլորտներում: Ակնկալվում է, որ գործարքների մեծ մասը ավարտի կհասցվի և կփակվի 2022թ.:

Կորպորատիվ ֆինանսների մեր թիմը հաջողությամբ բանակցեց արագ սպառման ապրանքների ոլորտում գործող կորպորատիվ հաճախորդներից մեկի հետ՝ ձեռք բերելով միջոցների ներգրավման մանդատ՝ առևտրային նշանակության խոշոր անշարժ գույքի նախագծի ֆինանսավորման համար: Այժմ բանակցություններ են ընթանում երկու խոշոր ֆինանսական հաստատության հետ 26 մլն ԱՄՆ դոլար ծավալով երկարաժամկետ վարկի ներգրավման շուրջ: Գործարքների ավարտը նախատեսվում է մինչև 2022թ. կեսերը:

2021թ. հիմնական շեշտը դրվել է ենթակառուցվածքի ֆինանսավորման վրա՝ պետական և մասնավոր համագործակցության շրջանակներում: Հաստատվել են մի քանի խոշոր և էական նշանակություն ունեցող ենթակառուցվածքային ծրագրերի հայեցակարգեր, և այժմ ծրագրերը գտնվում են զարգացման փուլում՝ 2022թ. կեսերին հետագա ֆինանսավորման համար:

Առևտրային գործառնություններ

Հիմնական ցուցանիշները

- ՀՀ պետական արժեթղթերի ամենախոշոր առաջնային դիլերներից մեկը տեղական և արտասահմանյան շուկաներում
- Արտարժույթի առաջատար փոխարկողը Հայաստանում գործարքների ծավալով և ստացված շահույթով
- Բացարձակ առաջատարը բրոքերային ծառայություններ մատուցող տեղական ընկերությունների մեջ՝ ըստ շահույթի և առաջարկվող ծառայությունների տեսականու

Առևտրային գործառնություններից ստացված ոչ տոկոսային եկամուտ
մլն ՀՀ դրամ





Կորոնավիրուսի տնտեսական հետևանքները պահպանվում էին նաև 2021թ.: Անկայունությունն արտարժութային շուկաներում և գնաճին միտված միջավայրը, որտեղ Բանկը ծավալում էր իր գործունեությունը, ստեղծել են աննախադեպ իրողություն, որին անհրաժեշտ էր հարմարվել: Մենք յուրաքանչյուր դժվարություն դիտարկում ենք որպես զարգանալու և հարմարվելու նոր հնարավորություն. շարունակական զարգացման և ճկունության այս սկզբունքները թույլ տվեցին մեզ պահպանել առաջատար դիրքերը հայկական շուկայում առևտրային գործառնությունների գծով: 2021թ. առևտրային գործառնություններից (արտարժույթ, ոսկի և արժեթղթեր) և վերագնահատումից ստացված զուտ եկամուտը կազմել է 8,280 մլն ՀՀ դրամ, ինչը տվյալ շուկայի ընդհանուր զուտ եկամտի 20%-ից ավել է:

Ծախսերի վարման հետևողական մոտեցումները և ռիսկերի կառավարման բազմակողմ միջոցառումները զսպում էին համաշխարհային տնտեսական ցնցումների և 2021թ. խիստ բացասական իրական տոկոսադրույքների հետ կապված ռիսկերը: Թվային փոխակերպման մեր ծրագրերին համահունչ՝ մենք ընդլայնել ենք հիմնական թվային պրոդուկտների հնարավորությունները, այդ թվում՝ բրոքերային ծառայությունները:

Թեև 2021 թվականը մարտահրավերներով լի տարի էր, մեզ հաջողվեց արդյունավետ ձևով արձագանքել արտարժութային տատանումներին և պահպանել մեր առաջատար դիրքը արտարժույթի շուկայում, ինչի արդյունքում մենք գրանցել ենք արտարժութային գործառնություններից ստացված զուտ ոչ տոկոսային եկամուտի 53% տարեկան աճ: Մենք շարունակում էինք առաջարկել արտարժութային պրոդուկտների և ծառայությունների լայն տեսականի, այդ թվում՝ սփոթ գործարքների և ածանցյալ գործիքների մեծ ընտրություն (ֆորվարդ, սվոփ և այլն): 2021թ. Ամերիաբանկը միակ հայկական բանկն էր, որը փոխարկում էր շվեդական կրոնան՝ դառնալով տվյալ արժույթի համար միակ շուկա ստեղծողը Հայաստանում:

Մենք շարունակում էինք ակտիվորեն մասնակցել թե՛ ՀՀ և օտարերկրյա եվրապարտատոմսերի շուկայի, թե՛ կորպորատիվ պարտատոմսերի ներքին շուկայի գործունեությանը՝ մնալով մարքեթ-մեյքինգի ծառայություններ առաջարկող երկրորդ խոշորագույն ընկերությունը հաստատուն եկամտով գործիքների ներքին շուկայում: Մենք նաև պահպանում էինք մեր դիրքը շուկայում՝ որպես ՀՀ ֆինանսների նախարարության առաջատար դիլերներից (գործակալներից) մեկը: Չնայած տոկոսադրույքների աճին և գնաճի սպասումներին՝ տարվա ընթացքում Բանկը շահույթով էր իրականացնում արտարժույթով գործառնությունները:

Ամերիաբանկը Հայաստանի սակավաթիվ բանկերից է, որոնք բացում են բրոքերային հաշիվներ հեռավար եղանակով: Հաշվի բացման գործընթացում առաջարկվող ճկունության և ֆինանսական խորհրդատվության ծառայությունների զարգացման շնորհիվ Ամերիաբանկի բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդների թիվը 2021թ. աճել է 36%-ով: Համապատասխանաբար, երեք տարվա կտրվածքով բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդների թվի միջին աճը կազմել է շուրջ 48%:

Մեր բրոքերային ծառայությունները հասանելի են 23 երկրի 100-ից ավել մասնագիտացված առևտրային հարթակներում՝ հնարավորություն տալով իրականացնել տարատեսակ արժեթղթերի առքուվաճառք և մշտապես տեղեկացված լինել ֆինանսական շուկայի

զարգացումների մասին: Բացելով բրոքերային հաշիվ Ամերիաբանկում՝ հաճախորդը ստանում է հասանելիություն աշխարհի ամենամեծ ֆոնդային բորսաներին, ինչպիսիք են՝ NYSE-ն, NASDAQ-ը, AMEX-ն, ARCA-ն, CBOT-ը և այլն (ԱՄՆ), Տորոնտոյի և Մոնրեալի ֆոնդային բորսաները (Կանադա), LSE-ն (Լոնդոնի ֆոնդային բորսա), LSE International Order Book-ը (Միացյալ Թագավորություն), Ֆրանկֆուրտի բորսան FWB (Գերմանիա), Վիեննայի բորսան VSE (Ավստրիա), Բրյուսելի Euronext բորսան, Nasdaq OMX Europe-ը (NUROEN) (Բելգիա), Euronext France-ը SBF (Ֆրանսիա), Շվեյցարիայի ֆոնդային բորսան SWX (Շվեյցարիա), Borsa Italiana-ն (Իտալիա), Մադրիդի բորսան (Իսպանիա), Տոկիոյի բորսան TSE JPN (Ճապոնիա), Հոնկոնգի բորսան SEHK (Չինաստան), Ավստրալիայի բորսան ASX և այլն: Մեր հաճախորդները հնարավորություն են ստանում իրականացնել տարբեր արժույթներով գնանշվող արժեթղթերի առքուվաճառք և հետևել միջազգային շուկաներում արժեթղթերի գնանշումներին իրական ժամանակում:

Մենք առաջարկում ենք հայկական բանկային շուկայում առկա գործիքների ամենամեծ տեսականին, այդ թվում բաժնային գործիքները, հաստատուն եկամտով գործիքները, օպցիոններ, ֆյուչերսներ և այլ գործիքներ:

Ակտիվ ներգրավվածությունը տեղական և արտասահմանյան շուկաներում նպաստեց նրան, որ 2021թ. առևտրային գործառնությունների մեր թիմն արժանացավ մի շարք մրցանակների, մասնավորապես՝

Հայաստանի ֆոնդային բորսայի (AMX) մրցանակաբաշխության հաղթող 6 անվանակարգերում՝

- **«Բորսայի լավագույն անդամ՝ պետական պարտատոմսերի շուկայում»,**
- **«AMX-ի լավագույն գործընկեր՝ գլխավոր անվանակարգ (Grand Prix)»,**
- **«AMX-ի լավագույն գործընկեր՝ գլխավոր անվանակարգ (Grand Prix)»,**
- **«Լավագույն հաշվետու թողարկող՝ կորպորատիվ արժեթղթերի շուկայում շրջանառվող պարտատոմսերի մասով»,**
- **«Դեպոզիտար համակարգի հաշվի օպերատոր-ռեեստրավար»**
- **«Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ»:**

2021թ. Լավագույն ներդրումային բանկը Հայաստանում՝ ըստ Global Finance ամսագրի, արդեն 6-րդ անգամ 2016 թ-ից ի վեր

BEST INVESTMENT BANK AWARD 2021
GLOBAL FINANCE

Մեր ռազմավարությանը և միջնաժամկետ նպատակներին համահունչ մենք մշակել ենք թիրախային արդյունքի ապահովմանն ուղղված գործողությունների ծրագրեր՝ հետևյալ նպատակներին հասնելու համար.

- Բրոքերային ենթակառուցվածքի ամբողջական թվայնացում և բոլոր գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավման նվազեցում
- Առաջատար դիրքի պահպանում որպես Հայաստանի լավագույն բրոքեր՝ մշտապես բարձրացնելով սպասարկման որակը և ներդնելով նոր գործառույթներ
- Ameria Global Trading հարթակի ծածկույթի ընդլայնում՝ դուրս գալով Ասիական շուկաներ
- Բրոքերային և խորհրդատվական ծառայություններից օգտվող հաճախորդների թվի ավելացում՝ օգտատերերի ներգրավվածության և եկամտաբերության աճին զուգահեռ
- Արտարժութային գործառնությունների տեղական շուկայում առաջատար դիրքի պահպանում՝ միաժամանակ ընդլայնելով պրոդուկտների և ծառայությունների տեսականին՝ հաճախորդների թիվը մշտապես ավելացնելու նպատակով
- Մարքեթ-մեյքինգի որակյալ ծառայությունների շարունակական մատուցում կորպորատիվ թողարկողներին՝ ավելացնելով մարքեթ-մեյքինգի պայմանագրերի շրջանակներում գնանշվող արժեթղթերի ցանկը և դառնալով մարքեթ-մեյքինգի ծառայություններ առաջարկող առաջատար ընկերությունը հայկական շուկայում
- Բանկի դիրքի պահպանում և բարելավում՝ որպես ՀՀ ֆինանսների նախարարության առաջատար դիլերներից (գործակալներից) մեկը՝ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներին ակտիվ մասնակցության և երկրորդային շուկայում պարտատոմսերի ակտիվ առքուվաճառքի միջոցով

Նորարարություն և թվայնացում

Թվայնացման ռազմավարություն

Մենք հետևողականորեն իրականացնում ենք մեր թվային ռազմավարությունը և շարունակաբար բարելավում թվային ծառայությունները նորարար տեխնոլոգիական լուծումների միջոցով: Մենք համոզված ենք, որ նորարարությունը խթանում է գործող բիզնես-մոդելների շարունակական բարելավումը, ինչպես նաև հնարավորություն է տալիս մեզ ապահովել առավելագույն արդյունավետություն՝ մշակելով նոր ճշգրտված բիզնես-մոդելներ, որոնք դինամիկ փոփոխվող աշխարհում բիզնեսի աճի հիմնարար տարրերն են: Բանկը ձգտում է արժեք ստեղծել իր բոլոր հաճախորդների համար՝ շարունակաբար բարելավելով թե՛ անհատներին, թե՛ կորպորատիվ հաճախորդներին մատուցվող թվային ծառայություններն ինչպես հայկական, այնպես էլ տարածաշրջանի շուկաներում:

2021թ. մենք սահմանեցինք հստակ ռազմավարական օրակարգ՝ չափելի ցուցանիշներով, որոնք ընդգրկում են կազմակերպության նկրտումները թվայնացման ոլորտում մինչև 2025 թվականը:

Այդ ցուցանիշները փոխկապակցված են կազմակերպության արդյունավետության հիմնական ցուցանիշների (KPI) հետ՝ դրանով իսկ թվային օրակարգի կարևորությունն ու ազդեցությունը հասցնելով ինստիտուցիոնալ մակարդակի:

2021թ. մենք վերանայեցինք թվային փոխակերպման մեր օրակարգը՝ շեշտադրելով թվային պատրաստվածության կարևորությունը, որպեսզի ապահովենք, որ բոլոր հիմնական ֆինանսական ծառայությունների մատուցման գործընթացները բոլոր մակարդակներում լինեն ամբողջովին թվայնացված և ինտեգրման համար պատրաստ ձևաչափով: Հիմնական ֆինանսական ծառայությունների համատարած ինտեգրումը նախատեսված է ինչպես ներքին պրոդուկտների, այնպես էլ երրորդ անձանց անխափան ներգրավման համար: Թվային պատրաստվածություն ապահովելու մեր ձգտումը նպաստեց 2020թ. սկսված՝ հիմնական տեխնոլոգիական կառուցվածքի վերակառուցման ծրագրի ավելի արագ իրագործմանը:

Իր առջև սահմանելով հստակ նպատակներ՝ լինել նորարար, լինել առաջատարը տեխնոլոգիաների ոլորտում և ապահովել սպասարկման լավագույն որակը՝ Ամերիաբանկը կարճ ժամանակում դարձավ Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից մեկը:

Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից



Թվային ուղիներով վաճառքների մասնաբաժինը





Տարբեր ուղիներով իրականացվող գործարքների կշիռը



Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից



Բեռնաթափման գործակից*



* Հեռավար և թվային ուղիներով կատարված գործարքների մասնաբաժինը բանկի կողմից կատարված գործարքների ընդհանուր թվում

Բանկի ինովացիաների և թվայնացման ուղղությունը բաղկացած է հետևյալ հիմնասյուներից՝ թվային պրոդուկտներ և ծառայություններ, թվային ուղիներ, ներքին արդյունավետություն և հիմնական ցանցի վերակառուցում:

Թվային պրոդուկտներ և ծառայություններ. այս տարրը ներառում է երեք հիմնական ուղղություն՝ մոբայլև ինտերնետ-բանկինգ որպես ծառայությունների մատուցման հարթակ, ՓՄՁ էկոհամակարգեր և էլեկտրոնային առևտրի հարթակ: Այս երեք ուղղությունների, ինչպես նաև այլ գործող ուղղությունների (ավտոմեքենաների հարթակ, անշարժ գույքի հարթակ) համար որպես առաջնային խթանիչ գործոն են հանդիսանում հիմնական ֆինանսական ծառայությունները, որոնք պետք է սկզբից մինչև վերջ իրականացվեն թվային ձևաչափով 2022թ. թվային պատրաստվածության օրակարգի շրջանակներում:



Թվային ուղիներ. այս ուղղության հիմնական նպատակը գոյություն ունեցող բոլոր ուղիների միավորումն է միասնական թվային հարթակում, որտեղ ծառայությունները կարող են առաջարկվել մեկ տարբերակով՝ ըստ հաճախորդի նախընտրության, և ավարտվել մեկ այլ տարբերակով՝ լինի դա համացանց, բջջային հավելված, թե տերմինալ/բանկոմատ:

Ներքին արդյունավետություն. սա թվայնացման էական տարր է, որն անհրաժեշտ է ներքին ավտոմատացման օրակարգը լիարժեք կերպով իրականացնելու և հաճախորդակենտրոն թվային պրոդուկտներ ներդնելու համար: Այն ներառում է փաստաթղթերի լայնածավալ թվայնացում, էլեկտրոնային ստորագրությունների, հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման (CRM), բիզնես-գործընթացների ավտոմատացման/կառավարման, մարդկային ռեսուրսների կառավարման ծրագրեր, և այս ամենն ինտեգրվում է ներքին ծրագրային ինտերֆեյսի (API) միջոցով, որն ապահովում է տվյալների ամբողջականությունը, գործառնությունների իրականացման արագությունը և կառավարելիությունը:

Մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում գործընթացների ճկունությանը և ներքին արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շարունակաբար կատարելագործում դրանք: Մեր նպատակն է ամբողջ կազմակերպությունում ներդնել ճկունության վրա հիմնված գործելաոճ՝ որպես արդյունավետությունը բարձրացնելու, պրոդուկտների մշակման և ներդրման ժամանակը կրճատելու և թափանցիկ հաղորդակցություն ապահովելու խթան: Գաղափարներ հավաքելու, դրանք հայեցակարգերի վերածելու, պրոդուկտ ստեղծելու, թիմեր կազմելու, հաճախորդների տպավորությունները ձևավորելու, բոլոր ուղղություններով (թե՛ ներքին ավտոմատացման, թե՛ արտաքին պրոդուկտների մշակման գծով համագործակցելու մեր մոտեցումները թույլ են տալիս ապահովել ճկունության և արդյունավետության առավել բարձր մակարդակ:

Հիմնական ցանցի վերակառուցում. այս ուղղությունը թվարկված մյուս ուղղությունների անկյունաքարն է, քանի որ այն թույլ է տալիս համակարգերի սերվերային մասը (back-end) միացնել բոլոր թվային պրոդուկտներին ու ծառայություններին միկրոծառայությունների վրա հիմնված միասնական ճարտարապետության միջոցով: Նոր ճարտարապետական կառուցվածքը ձևավորված է հիմնական ծառայությունների (միկրոծառայությունների հարթակ) շուրջ և հանդիսանում է շարժիչ ուժ թվային փոխակերպման օրակարգի շրջանակներում մեր կողմից մշակվող բոլոր թվային պրոդուկտների համար: Բացի այդ, միկրոծառայությունների հարթակն ապահովում է անխափան ինտեգրում նոր գործընկերների համակարգերի հետ՝ իր հերթին նպաստելով մեր թվային օգտատերերի բազայի ընդլայնման աննախադեպ արագ տեմպին:

Դա հնարավորություն է տալիս հավաքագրել տվյալներ և բարելավել վերլուծությունների արդյունքները՝ օգտագործելով բազմաթիվ գործընկերների տվյալները, ինչպիսիք են «Նորք» կենտրոնը, ԱՔՌԱ-ն, ԱՐՔԱ-ն, ԷԿԵՆԳ-ը:

2021թ. մենք գործարկեցինք ՓՄՁ էկոհամակարգի առաջին փուլը, որի շնորհիվ թվայնացվել են հաշվի բացման և մոբայլ հավելվածի միջոցով հաճախորդների ներգրավման գործընթացները ՓՄՁ-ների համար: Շուտով նախատեսվում է ընկերությունների գրանցման գործընթացի թվայնացումը: Մենք արդեն իսկ ունենք հետևյալ հաջողությունները.

- Ստանդարտ մանրածախ ՓՄՁ վարկերի հայտերի շուրջ 30%-ը ներկայացվել է ՓՄՁ առցանց պորտալի միջոցով:
- 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված վարկերի ծավալը կազմել է շուրջ 19 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 4,223
- 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առցանց տրամադրված մանրածախ ՓՄՁ վարկերի ծավալը գերազանցում էր 11.6 մլրդ ՀՀ դրամը (3.1 մլրդ ՀՀ դրամի առցանց սքորինգային վարկեր, 8.5 մլրդ ՀՀ դրամի պլանշետի միջոցով տրամադրված վարկեր և 723 մլն ՀՀ դրամի Հարկային ծառայության մոդելի հիման վրա տրամադրված վարկեր):
- Նշված վարկերի 44%-ը տրամադրվել է նոր հաճախորդներին:

Մենք նաև գործարկել ենք հիփոթեքային էկոհամակարգի հերթական փուլը՝ լինելով առաջին հաստատությունը շուկայում, որն առաջարկում է հիփոթեքային վարկավորման ամբողջովին թվայնացված գործընթաց: 2022թ. սկզբին մենք թողարկեցինք թվային բանկինգի նոր հավելված (բետա տարբերակով), որը կառուցված է միկրոծառայությունների նոր հարթակի կիրառմամբ և ունի պաշտոնապես ներկառուցված Apple Pay վճարային գործառույթը, ինչի շնորհիվ մենք տարածաշրջանի առաջատար բանկերի շարքում ենք:

Պատասխանատու բիզնես

Որպես Հայաստանի ֆինանսական համակարգի առաջատարը՝ Ամերիաբանկը պատասխանատվություն է զգում Հայաստանի կայուն ապագան կառուցելու համար: Հավատարիմ մնալով կյանքի որակը բարելավելու մեր առաքելությանը՝ մենք մշտապես նախաձեռնում ենք միջոցառումներ՝ մարդկանց կարիքները ճիշտ գնահատելու և շահառուների լայն շրջանակի համար նպատակային, արդյունավետ և երկարաժամկետ լուծումներ մշակելու համար:

Մենք մեր բիզնես գործընթացներում ներդրել ենք կայունությանը, էկոլոգիական և սոցիալական ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականություններ, որպեսզի մատուցվող ֆինանսական ծառայությունների բացասական էկոլոգիական և սոցիալական ազդեցությունը լինի նվազագույն: Մեր խնդիրն է հավասարակշռել սոցիալական, էկոլոգիական և տնտեսական գործոնները՝ կիրառելով լավագույն միջազգային փորձը էկոլոգիական և սոցիալական ռիսկերի կառավարման բնագավառում:

Նպատակ ունենալով մեղմացնել կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերը և ստեղծել երկրի տնտեսության զարգացման հնարավորություններ, ղեկավարվելով շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման մեր ներքին քաղաքականությամբ՝ մենք պարտավորվել ենք ձևավորել ֆինանսավորման պորտֆել, որում կշեշտադրվեն ածխաթթու գազի արտանետումների նվազեցմանն ուղղված կանաչ նախագծերը: Կանաչ ակտիվների պորտֆելն ընդգրկում է բազում ցածր ածխածնային ոլորտներ (վերականգնվող էներգետիկա, էլեկտրահաղորդում, բաշխում և պահպանում, կայուն տրանսպորտ, ջուր, էկոլոգիապես կայուն շինարարություն, ջրային արդյունաբերության թափոնների կառավարում, SS լուծումներ):

Կայունության ապահովման ռազմավարություն

Կայունության ապահովման մեր ռազմավարության նպատակն է խթանել տնտեսության բարգավաճումը ներկայում և ապագայում և նպաստել շրջակա միջավայրի ամբողջականության ապահովմանը մեր հաճախորդների, հասարակության, աշխատակիցների և բաժնետերերի համար: Կայուն զարգացումը մեր ռազմավարության և բիզնես-մոդելի գերակա նպատակներից է, իսկ աջակցությունը կայուն գործելակերպ ունեցող հաճախորդներին և բիզնեսներին մեր ռազմավարական ծրագրի հիմնական տարրերից է: Մեր երկարաժամկետ պարտավորությունն է ստեղծել կայուն միջավայր և աջակցել մեր հաճախորդներին չեզոք ածխածնային տնտեսությանն անցնելու գործում:

Կայունության ապահովման մեր ռազմավարությունը նպաստում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) իրագործմանը՝ առանձնակի ուշադրության կենտրոնում պահելով կայուն զարգացման այն նպատակները, որոնք առավել կարևոր են և համահունչ մեր գործարար ռազմավարությանը:

Մեր գործունեության համար ԿԶՆ-ների կարևորությունը դասակարգելիս՝ մենք առանձնացրել ենք առավել մեծ նշանակություն ունեցող երկու չափանիշ.

- Համապատասխանություն՝ թե որքան է Կայուն զարգացման նպատակը վերաբերում Բանկին,
- Ազդեցություն՝ այն ազդեցությունը, որը կարող է ունենալ համապատասխան նպատակի իրագործումը

Կենտրոնանալով կայունության ապահովման մեր ռազմավարության վրա՝ մենք հատուկ ուշադրություն ենք դարձնելու Կայուն զարգացման հետևյալ նպատակներին, որոնք առավել կարևոր ենք համարում թե՛ Բանկի, թե՛ հասարակության համար:

Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն, մասնավորապես.

- Նպաստել վերականգնվող էներգետիկայի մասնաբաժնի ավելացմանը և էներգաարդյունավետության բարձրացմանը,

Մեր ներդրումը.

- Վերականգնվող էներգետիկայի համակարգերի ֆինանսավորում
- Տարեկան խնայողություն էլեկտրաէներգիայի սպառման գծով
- Հասանելիություն մաքուր էլեկտրականությանը

Կառուցել դիմակայուն ենթակառուցվածքներ, խթանել ներառական և կայուն արդյունաբերության զարգացումը և նորարարությունը, մասնավորապես.

- Արդիականացնել ենթակառուցվածքները և վերազինել տնտեսության ճյուղերը՝ դրանք կայուն դարձնելու նպատակով՝ ռեսուրսների ավելի բարձր արդյունավետությամբ և մաքուր, շրջակա միջավայրի համար անվտանգ տեխնոլոգիաների կիրառմամբ

Մեր ներդրումը.

- Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների մշակումը մեր հաճախորդների համար
- Ներդրումներ ՏՏ ենթակառուցվածքում՝ հաճախորդների սպասարկման լավագույն որակի ապահովման նպատակով առկա թվային ենթակառուցվածքն արդիականացնելու համար

Քաղաքները դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն, մասնավորապես.

- Բոլորի համար հասանելի դարձնել ապահով, մատչելի, հասանելի և կայուն տրանսպորտային համակարգեր և բնակարանային պայմաններ

Մեր ներդրումը.

- Ներդրումներ էներգիայի սպառման կրճատմանը նպաստող ենթակառուցվածքային նախագծերում
- Ներդրումներ «մաքուր» տրանսպորտային միջոցներում՝ արդյունավետության աճին նպաստող բոլոր էլեկտրական մեքենաներում
- Աջակցություն թերզարգացած համայնքներին տարբեր ծրագրերի իրականացման միջոցով

Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ

Մեր ներդրումը.

- Ներդրում այն ծրագրերում, որոնք թույլ են տալիս խուսափել ջերմոցային գազերի արտանետումներից
- Նպաստում ածխաթթվային արտանետումների զգալի կրճատմանը

Կլիմայի փոփոխության դեմ ուղղված միջոցառումներ և «կանաչ» ռազմավարություն

Մեր «կանաչ» ռազմավարությանը համահունչ մենք ջանքեր ենք գործադրում ածխաթթու գազի արտանետումները նվազեցնելու և Հայաստանում կլիմայի փոփոխությունների նկատմամբ կայուն տնտեսություն զարգացնելու նպատակով: Մենք ծավալում ենք մեր գործունեությունը պատասխանատու, կայուն և էկոլոգիապես մաքուր ձևով՝ աջակցելով ազգային ներդրումային և այլ կլիմայական ծրագրերում սահմանված և կլիմայի պահպանմանն ուղղված հավակնոտ նպատակների իրագործմանը և նպաստելով ջերմոցային գազերի արտանետումների նվազմանը: Մենք խթանում ենք կլիմայի փոփոխությանը հարմարվելու գործընթացները՝ ենթակառուցվածքների, էկոհամակարգերի և համայնքների մակարդակով կլիմայական փոփոխություններին դիմացկունությունն ամրապնդելու մոտեցումների մշակման գործում:

Մենք համոզված ենք, որ կլիմայի փոփոխությունը ենթադրում է և՛ ռիսկեր, և՛ հնարավորություններ, իսկ մենք՝ որպես ֆինանսական միջնորդ, կարող ենք առաջատար դեր ստանձնել Հայաստանում կլիմայի փոփոխության խնդիրների լուծման գործում: Էկոլոգիական կայունության ամրապնդումը կարևոր է մեր 2025թ. ռազմավարությամբ սահմանված նպատակներին հասնելու համար: Մինչ այդ մենք նախատեսում ենք իրականացնել հետևյալը.

- Ընդլայնել «կանաչ» ռազմավարությունը, կանաչ վարկավորումից զատ ներառել նաև այլ ոլորտներ
- Կազմել և ներկայացնել կայունության առաջին հաշվետվությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան
- Ստանալ էկոլոգիական և սոցիալական կառավարման վարկանիշ

Մինչև 2023 թվականը մենք նախատեսում ենք կրկնապատկել «կանաչ» վարկերի մասնաբաժինը մեր պորտֆելում, այդ թվում՝ վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության, ինչպես նաև էկոլոգիապես կայուն շենքերի և տրանսպորտի վարկավորման ոլորտներում:

*Էկոլոգիական և սոցիալական ռիսկերի կառավարումը ներկայացված է սույն հաշվետվության «Ռիսկերի կառավարում» բաժնում:

Կանաչ ծրագրեր

Մենք մտադիր ենք դառնալ տարածաշրջանի առաջատար «կանաչ» բանկը: Այդ նպատակով մենք մշակում և ներդնում ենք համապատասխան բանկային գործընթացներ և պրոդուկտներ՝ նախատեսված հատուկ մեր հաճախորդների համար: Հավատարիմ մնալով մեր պարտավորությանը՝ օգնել հասարակությանը անցնել ռեսուրսների արդյունավետ, ցածր ածխածնային և էկոլոգիապես կայուն տնտեսությանը՝ մենք շարունակում ենք նպաստել կայուն լուծումների մշակմանը՝ համապատասխան ծառայությունների և նորարարական պրոդուկտների ֆինանսավորման միջոցով:

2009թ-ից ի վեր մենք միջազգային ֆինանսական հաստատություններից և ներդրողներից ներգրավել և էներգաարդյունավետության ու վերականգնվող էներգետիկայի ոլորտների ֆինանսավորմանն ենք ուղղել ավելի քան 225 մլն ԱՄՆ դոլար: Բանկի գործընկեր միջազգային ֆինանսական հաստատությունների թվում են Նիդերլանդների զարգացման բանկը (FMO), responsAbility Investments AG-ն, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Ֆրանսիական զարգացման ֆինանսական գործակալությունը (PROPARCO), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Ավստրիական զարգացման բանկը (OeEB), Գերմանական ներդրումային կորպորացիան (DEG), Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամը (GCPF) և ուրիշներ:

2021թ. մենք կնքել ենք 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագրեր responsAbility Investments AG ընկերության և Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամի հետ՝ Հայաստանում ՓՄՁ-ների և «կանաչ» նախագծերի ֆինանսավորման նպատակով: Եվս 30 մլն ԱՄՆ դոլար մենք ներգրավել ենք ՕՊԵԿ-ի Միջազգային զարգացման հիմնադրամից՝ Հայաստանում կայուն էներգետիկայի և փոքր ու միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Վարկի շուրջ 50 տոկոսն ուղղվելու է փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը, իսկ մյուս կեսը՝ «կանաչ» ծրագրերին, մասնավորապես, էներգաարդյունավետությանն ու ածխածնային արտանետումների կրճատմանը նպաստող ծրագրերին: 2021թ. Ամերիաբանկը Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ միասին մասնակցեց Հայաստանում արդյունաբերական նշանակության արևային կայանի կառուցման ֆինանսավորմանը: Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում կառուցվող 55 ՄՎտ հզորությամբ կայանը ներկայումս արդյունաբերական մասշտաբի ամենամեծ արևային կայանն է Հայաստանում և իր տեսակով առաջինը: Կայանը կարտադրի այնքան մաքուր էներգիա, որքան պահանջվում է ավելի քան 20,000 տնային տնտեսություն էլեկտրաէներգիայով ապահովելու համար, և թույլ կտա խուսափել տարեկան 40,000տ ածխածնի արտանետումից: Տարեվերջին մենք ապահովեցինք 15 մլն եվրոյի լրացուցիչ կապիտալ «Տրիոդոս Ինվեսթմենթս Մենեջմենթ» ընկերությունից, որն ուղղված է լինելու փոքր և միջին բիզնեսի և «կանաչ» նախագծերի ֆինանսավորմանը:

Կանաչ պարտատոմսեր

2020թ. Ամերիաբանկը հաջողությամբ թողարկեց 42 մլն եվրոյի կանաչ պարտատոմսեր, որոնք 2021թ. սկզբում ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայում: Ներգրավված միջոցներն ակտիվորեն տեղաբաշխվեցին ողջ տարվա ընթացում:

Մեր կողմից թողարկված կանաչ պարտատոմսերը համահունչ են ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին և ուղղվում են հետևյալ նպատակների իրագործմանը՝ ԿԶՆ 7՝ մատչելի և մաքուր էներգիա, ԿԶՆ 9՝ արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ, ԿԶՆ 11՝ կայուն քաղաքներ և համայնքներ, ԿԶՆ 13՝ գործողություն հանուն կլիմայի:

Մենք մշակել ենք կանաչ պարտատոմսերի մանրամասն հայեցակարգ, որը համապատասխանում է Կապիտալի շուկաների միջազգային ասոցիացիայի կանաչ պարտատոմսերի թողարկման սկզբունքներին: Այդ հայեցակարգը ներկայացնում է «կանաչ» ֆինանսավորման միասնական մեթոդաբանությունը:

«Կանաչ» պարտատոմսերից ստացված միջոցները 2021թ. վերջի դրությամբ բարեհաջող տեղաբաշխված էին, իսկ «կանաչ» վարկերի ընդհանուր ծավալը գերազանցեց 26 մլրդ ՀՀ դրամ: Միջոցներն ուղղվել էին վերականգնվող էներգետիկայի (ներառյալ փոքր ՀԷԿ-եր (49.9%), արևային կայաններ (31.1%) և ՓՄՁ արևային էներգետիկայի ծրագրեր (19%) ֆինանսավորմանը: Արդյունքում 2021թ. հնարավոր դարձավ խուսափել ընդհանուր առմամբ 128,862 տոննա ածխաթթու գազի արտանետումներից, իսկ մաքուր էներգիայի արտադրության ընդհանուր ծավալը կազմեց 156,571,928 Կվտժ:



Աջակցելով համայնքին

2021թ. մենք հավատարիմ մնացինք մեր պատասխանատու մոտեցմանը՝ լուծել բազմաթիվ սոցիալական խնդիրներ:
Հաշվետու տարում Ամերիաբանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ծրագրերի շրջանակներում հատկացվել է 118 մլն ՀՀ դրամ, այդ թվում՝ 37 մլն ՀՀ դրամ՝ կրթության ոլորտին, 60 մլն ՀՀ դրամ՝ ենթակառուցվածքային ծրագրերին, 12 մլն դրամ՝ երեխաների առողջությանը և կյանքի որակի բարելավմանը, և 9 մլն ՀՀ դրամ՝ այլ ծրագրերի:

Ենթակառուցվածքային ծրագրեր սահմանամերձ շրջաններում

Ամերիաբանկի գործունեությունն ուղղված է գյուղական համայնքներում զարգացման ապահովմանը և կյանքի որակի բարելավմանը: Մենք աջակցություն ենք տրամադրել Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում պոմպակայանի տեղադրմանը, խմելու և ոռոգման ջրի մատակարարմանը: Մենք նաև ֆինանսավորել ենք Սյունիքի մարզի սահմանամերձ գյուղերում դպրոցական լաբորատորիաների կահավորումը և ճաշարանների համար կահույքի ձեռքբերումը «ռեԱրմենիա» հիմնադրամի միջոցով: Դրան զուգահեռ, այս տարի մենք և մեր աշխատակիցներն ամանորյա նվերներ ենք պատրաստել Սյունիքի մարզի սահմանամերձ գյուղերի երեխաների համար:

Կրթական ծրագրեր

Ամերիաբանկն աջակցում է երիտասարդ տաղանդներին կրթաթոշակների ֆինանսավորման միջոցով: 2021թ. այդ նպատակով մենք համագործակցում էինք UWC Դիլիջանի միջազգային դպրոցի, Հայաստանի ամերիկյան համալսարանի և «Այբ» հիմնադրամի հետ:

Բարեգործական ծրագրեր

Մեր բարեգործական ծրագրերի թիրախն է երեխաների կյանքի պայմանների բարելավումը և երեխաների առողջությունը: Ծրագրերն իրականացվում են մեր գործընկեր բարեգործական կազմակերպությունների հետ համատեղ («Ժպիտների քաղաք» (City of Smile), «Կաթիլ» բարեգործական հիմնադրամ, SOS մանկական գյուղեր):

Մեր թիմը

Մեր թիմը մեծ եռանդով ու նվիրվածությամբ մասնակցում է յուրաքանչյուր նախագծի և նախաձեռնության, որը Բանկն իրականացնում է տարբեր գործընկերների հետ միասին: Մեր թիմի անդամ լինելը նշանակում է լինել պատասխանատու բոլոր առումներով՝ ինքներս մեզ, մեր սկզբունքների, պետության և մարդկանց հանդեպ:

Մենք խստորեն հետևում ենք մեր ԿՍՊ քաղաքականության սկզբունքներին՝ ուղղված էկոլոգիապես կայուն գործելաոճին, որի նպատակն է կանխարգելել կլիմայի փոփոխությունը, նվազեցնել ջրի և թղթի սպառումը, խնայել էներգիան և օգտագործել վերամշակվող նյութերը մեր առօրյա գործունեության մեջ: 2021թ. Ամերիաբանկի գլխամասային գրասենյակում տեսակավորվել է 198 կգ պլաստիկ և 556 կգ թուղթ, ինչի շնորհիվ խնայել ենք 9.4 ծառ և 513 լիտր նավթ:

03.

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

92-129

ԼԵՌՆԵՐ

Լեռները կարևոր են աշխարհի բնապահպանական, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներին աջակցելու գործում: Մենք պետք է ընդունենք և լուծենք մարտահրավերները՝ լեռնային ռեսուրսների և էկոհամակարգերի կայուն կառավարումն ապահովելու նպատակով:

Խուստուփ լեռ,
Սյունիքի մարզ
3,206 մ.

© Հայկ Բարսեղյան

Ռիսկերի կառավարման նպատակները եւ սկզբունքները

Ամերիաբանկի ռիսկերի կառավարման մոդելը հիմնվում է ընդհանուր սկզբունքների, ուժեղ մշակույթի, կառավարման կուռ կառուցվածքի և առաջադեմ գործընթացների ու գործիքների վրա:

Ամերիաբանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը սահմանում է.

- Ռիսկերի կառավարման նպատակները և սկզբունքները
- Ռիսկի ախորժակի շրջանակները
- Բանկի որոշումներ ընդունող մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունների բաշխումը՝ ռիսկ պարունակող գործառնությունների իրականացման մասով
- Գործառնությունների իրականացման հիմնական ուղենիշներն ու չափանիշները
- Կառավարման կառուցվածքը, որն ապահովում է արդյունավետ վերահսկողություն ռիսկի ախորժակի շրջանակներում
- Այլ դրույթներ

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Բանկի Տնօրենների խորհրդի, Տնօրինության, Խորհրդին կից կոմիտեների, ղեկավարների և այլ աշխատակիցների կողմից՝ սկսած բանկի ռազմավարության մշակումից, ներառյալ բանկի գործունեության բոլոր ոլորտները:

Ամերիաբանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը բանկի զարգացման ծրագրերի անբաժանելի մասն է և հիմք է հանդիսանում ռիսկ պարունակող գործընթացները կարգավորելու համար: Այն Տնօրենների խորհրդի կողմից ընդունված սկզբունքների ամբողջություն է, որն ուղղված է բանկի գործունեությունն առավել արդյունավետ կերպով կազմակերպելուն՝ սահմանափակելով անբարենպաստ երևույթների հայտգալուդեպքում հնարավոր բացասական հետևանքները: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը պարբերաբար վերանայվում է՝ կախված Բանկի ռազմավարությունից, բիզնեսի բարդության աստիճանից և ձևավորվող մակրոտնտեսական միջավայրից:

Ընդունված կառավարման տեղեկատվական համակարգի համաձայն Բանկի Ռիսկերի կառավարման դեպարտամենտն ամիսը, եռամսյակը և տարին մեկ պարբերաբար իրականացնում է ռիսկերի գնահատում և արդյունքները ներկայացնում Բանկի Տնօրինությանը կամ մասնագիտացված կոմիտեներին (վարկային, ակտիվների և պասիվների կառավարման և այլն), ինչպես նաև Բանկի Տնօրենների խորհրդին ու ՀՀ Կենտրոնական բանկին:

Բանկում ռիսկերի կառավարման հիմնական նպատակներն են՝

- Ձևավորել բանկային գործիքների որակյալ պորտֆելներ՝ Բանկի համար նվազագույն ռիսկերով առավելագույն արժեքի ստեղծմամբ
- Կանխատեսելի, չափելի և կառավարելի դարձնել բոլոր հնարավոր կորուստները և ռիսկերը
- Ռիսկի բոլոր գործակիցները պահպանել ընդունելի սահմաններում, ապահովել կայունության բարձր պաշար (բուֆեր)
- Զարգացնել ռիսկի ախորժակի կառուցվածքը՝ նպաստելով Բանկի ռազմավարական նպատակների իրագործմանը

Ռիսկերի կառավարման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

- Բացահայտել Բանկի գործունեության ընթացքում առաջացող հնարավոր ռիսկերը
- Բացահայտել ռիսկերի առանձին տեսակների վրա ազդող գործոնները
- Իրականացնել առանձին ռիսկերի որակական և քանակական գնահատում
- Հաստատել ռիսկերի պարամետրերի համակարգը և ռիսկերի ընդունելի սահմանաչափերը
- Հավաքել և ղեկավարությանը ներկայացնել հնարավոր ռիսկերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն
- Հաստատել ռիսկերի միասնական ներքին հսկողության և մոնիթորինգի մեթոդները և համակարգերը
- Սահմանել ռիսկերի առանձին տեսակների կառավարման համար Բանկի Խորհրդի և գործադիր մարմնի անդամների պատասխանատվությունը
- Մշակել ռիսկի կանխատեսման, գնահատման և նվազեցման համապատասխան մեթոդներ և միջոցառումներ և վերահսկել այդ միջոցառումների իրականացումը

Ռիսկերը ժամանակին բացահայտելու կարևոր պայմաններն են՝ Բանկի ներքին հիմնական տնտեսական նորմատիվների և ռիսկերի ընդունելի սահմանաչափերի պահպանման պարբերական մոնիթորինգը, Բանկի հաշվեկշռի փոփոխությունների պարբերական վերլուծությունը, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների պահպանումը, պատմական տվյալների վրա հիմնված, կանխատեսված և կրիտիկական սթրես-թեստավորման հաշվարկների լայն ընտրությունը բոլոր պորտֆելների և ռիսկերի տեսակների գծով, ներքին և արտաքին մակրոտնտեսական միջավայրի մոնիթորինգը, մոդելների վրա հիմնված գնահատումը, Բանկում ռիսկերի առանձին տեսակների կառավարումը կանոնակարգող՝ ռիսկերի բացահայտման ու կառավարման մեթոդաբանությունն ու մեխանիզմները սահմանող ներքին իրավական ակտերի առկայությունը:

Ամերիաբանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- Բանկում ներդրվել է ռիսկերի կառավարման միասնական համակարգ, որը Բանկի ռազմավարական կառավարման հիմնական տարրերից մեկն է:
- Ռիսկերի կառավարումն ունի կանխարգելիչ դեր, մշտական և շարունակական բնույթ: Ռիսկերը բացահայտվում ու գնահատվում են Բանկի բոլոր գործընթացներում, և դրանց պատշաճ կառավարման համար մշտապես ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ:
- Բանկի ռիսկերի կառավարման համակարգը հիմնվում է առավել ճշգրիտ ռիսկ/եկամուտ հարաբերակցության վրա: Բանկը ռիսկ ձևավորող գործարքներից ընտրում է նրանք, որոնց ռիսկերը կարող է գնահատել և արդյունավետ կերպով կառավարել:
- Բանկը ձգտում է ճանաչել հաճախորդներին և հասկանալ նրանց ֆինանսական կարիքները: Բանկը խուսափում է հաճախորդների հետ համագործակցելուց, եթե չունի պատշաճ տեղեկություններ նրանց ֆինանսական վիճակի մասին: Հաճախորդների հետ աշխատելիս՝ Բանկը հետևում է լավագույն փորձին՝ կիրառելով KYC (Know Your Customer՝ ճանաչիր քո հաճախորդին) սկզբունքները:
- Էական ռիսկ առաջացնող գործարքները հաստատվում են «չորս աչքի» սկզբունքով՝ որոշ դեպքերում նաև ռիսկերի կառավարման անկախ մասնագետների ներգրավմամբ:
- Բանկի բոլոր գործիքների և գործընթացների համար սահմանվում և համապատասխան կարգերով ամրագրվում են իրավասությունների և պատասխանատվության հստակ շրջանակները (ներառյալ հաստատումների սահմանաչափերը): Յուրաքանչյուր գործընթացի համար սահմանվում և փաստաթղթերով ամրագրվում են ներքին հսկողության մեխանիզմները:
- Ցանկացած շեղում բանկի քաղաքականություններից և ներքին իրավական ակտերից պետք է հաստատվի տվյալ քաղաքականությունը կամ իրավական ակտը հաստատող կամ համապատասխան լիազորություն ունեցող այլ մարմնի կողմից (Տնօրինություն, Տնօրենների խորհուրդ):
- Բանկի գործունեության յուրաքանչյուր ուղղություն պատասխանատվություն է կրում ընթացիկ ռիսկերի բացահայտման և պարբերական մոնիթորինգի համար:
- Բանկում մշակվել և ներդրվել են կառավարչական տեղեկատվական համակարգեր, որոնք թույլ են տալիս առավել արդյունավետ կերպով կառավարել պորտֆելները:
- Յուրաքանչյուր բանկային գործիքի մասով ռիսկերի կառավարման մոտեցումները (հաստատումների սահմանաչափեր, ընդունելի պարամետրեր, պորտֆելների ծավալ, թույլատրելի շեղումներ և այլն) սահմանվում են համապատասխան գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտերով և/կամ քաղաքականություններով և հաստատվում Ռիսկերի կառավարման դեպարտամենտի կողմից:
- Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից:
- Բանկի գործունեությունը պարբերաբար ուսումնասիրվում և գնահատվում է Բանկի կառավարման մարմինների կողմից:

Ամերիաբանկի ռիսկերի կառավարման համակարգը բաղկացած է հետևյալ տարրերից.

- **Ռիսկի ախորժակ:** Տնօրենների խորհուրդը սահմանում է ընդունելի կորուստների/ռիսկի չափը յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար՝ ելնելով բանկի նպատակներից և ակնկալվող մակրոտնտեսական զարգացումներից: Ռիսկի ախորժակը բաշխվում է ըստ ռիսկերի բոլոր տեսակների՝ վարկային, շուկայական և գործառնական: Ըստ յուրաքանչյուր ռիսկին հատկացված ախորժակի՝ սահմանվում են ռիսկերի բոլոր պարամետրերը և սահմանափակումները:
- **Չափանիշներ և հաշվետվողականություն:** Կառուցվածքի այս տարրը ներառում է գործիքների հաստատման չափանիշների, ռիսկերի դասակարգման, յուրաքանչյուր բանկային գործիքին բնորոշ չափանիշների և կառավարչական հաշվետվությունների չափանիշների սահմանումը:
- **Սահմանաչափեր և կանոններ:** Բանկի բոլոր ֆինանսական գործառնությունների համար սահմանվում են հաստատումների, պորտֆելի սահմանաչափեր և համապատասխան կանոններ:
- **Ներդրումների ուղեցույց և ռազմավարություն:** Սահմանվում են բանկի ներդրումային գործունեության ռազմավարությունները, չափանիշները և շեղումների թույլատրելի չափերը: Նշված ուղեցույցները հիմք են հանդիսանում բանկի հեջավորման, ակտիվների ու պարտավորությունների կառավարման և այլ քաղաքականությունների համար:
- **Ռիսկ/եկամուտ հարաբերակցություն:** Բանկի ցանկացած ֆինանսական գործիքի վերաբերող ներդրումային բոլոր որոշումները հիմնվում են ռիսկ/եկամուտ մոտեցման վրա: Սահմանվել են աշխատակիցների խրախուսման համապատասխան մեխանիզմներ:



Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականություն

Ռիսկերի կառավարման համակարգ

Ստորև ներկայացված է բանկի ռիսկերի կառավարման համակարգի ընդհանուր մեխանիզմը: Այն ունի լավ մշակված կառուցվածք, որը նախատեսում է արտաքին և ներքին ռիսկերից պաշտպանվելու մի քանի մակարդակ:



Վարկային ռիսկի կառավարման հոսքագիր



Առևտրային ռիսկի կառավարման հոսքագիր



Գործառնական ռիսկի կառավարման հոսքագիր



Ռիսկերի գործընթացների կազմակերպում և կառավարում

Ռիսկերի կառավարումը բանկում իրականացվում է բոլոր մակարդակներում: Մասնավորապես, ռիսկերի կառավարման և ռիսկ ստանձնելու իրավասությունները սահմանվում են՝ որպես հիմք ընդունելով բանկի ռիսկի ախորժակը:

Տնօրենների խորհուրդը հաստատում է Բանկի ռազմավարությունը, վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ռիսկերի կառավարման, վարկային և այլ քաղաքականությունները, ներքին իրավական ակտերը, սահմանում է Բանկի ռիսկի ախորժակը (ռիսկերի ընդունելի չափանիշները և շեմը), այդ թվում՝ հաստատում ռիսկերի կառավարման պարամետրերի և ներքին նորմատիվների հրահանգը, վերահսկում է ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը, Բանկի ստանձնած ռիսկերի մակարդակը, դրանց համապատասխանությունը ռիսկի ախորժակին, հաստատում է այն բանկային գործարքները, որոնք Տնօրինության իրավասություններից դուրս են:

Խորհրդին կից գործող կոմիտեներն աջակցում են Տնօրենների խորհրդին և տրամադրում անկախ կարծիք հետագայում Խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերի վերաբերյալ:



Ռիսկերի կոմիտեն մասնագիտացած մարմին է՝ Խորհրդի մակարդակով ռիսկերի կառավարման մոնիթորինգն ու վերահսկումն իրականացնելու համար: Ռիսկերի կոմիտեի նպատակն է նպաստել Բանկում ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ կիրառմանը և շարունակական զարգացմանը՝ ռիսկերի կառավարման հարցերի շուրջ Տնօրենների խորհրդի և գործադիր մարմինների միջև արդյունավետ համագործակցություն, ռիսկերի կառավարման հարցերի շուրջ որոշումների կայացման արագություն և ճկունություն ապահովելու միջոցով:

Ռիսկերի կոմիտեի հիմնական խնդիրն է վերահսկողության ապահովումը հետևյալ ոլորտներում.

- Բանկի ռիսկերի կառավարման համակարգը և մշակույթը, վերջինիս ինտեգրումը կառավարման ընդհանուր համակարգին
- Բանկի վարկային, շուկայական, գործառնական, ռազմավարական, իրացվելիության և այլ էական ռիսկերի կառավարման/գնահատման քաղաքականությունները, այլ ներքին ակտերը և դրանց կիրառումը,
- Բանկի ռիսկի դիրքը և ռիսկի չափը, ռիսկի գործոններ
- Բանկի կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշները

Գործադիր մարմինը, մասնավորապես՝ Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենը, Տնօրինությունը և դրա անդամները ռիսկեր են ստանձնում Խորհրդի կողմից հաստատված քաղաքականության շրջանակներում և իրականացնում դրանց ընթացիկ կառավարումը, համակարգում Բանկի բիզնես-ուղղությունների գործունեությունը, իրականացնում ռիսկերի կառավարում՝ խորհրդի կողմից սահմանված ռիսկերի կառավարման պարամետրերի ներքո: Տնօրինությունը և Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենը հաշվետու են Տնօրենների խորհրդին: Տնօրինությունը կարող է վերոնշյալ լիազորությունները փոխանցել մասնագիտացված կոլեգիալ մարմիններին՝ կոմիտեներին (ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե, վարկային կոմիտե և այլն)՝ Բանկի հիմնական գործունեությունից բխող ռիսկերը կառավարելու նպատակով:

Մեծ վարկային կոմիտե (ՄՎԿ)

Մեծ վարկային կոմիտեի գործունեության հիմնական նպատակը Բանկի վարկային քաղաքականության իրականացումն է և վարկային պորտֆելի ձևավորումը՝ ապահովելով վարկային ռիսկի ընդունելի մակարդակը: Մեծ վարկային կոմիտեն որոշումներ է կայացնում Բանկի ընդհանուր կապիտալի մինչև 10% չափով՝ ղեկավարվելով համապատասխան ստորաբաժանումների, Ռիսկերի կառավարման դեպարտամենտի և անվտանգության ծառայության եզրակացություններով: Հաստատված պայմաններից շեղումով վարկերը նույնպես ենթակա են քննարկման Մեծ վարկային կոմիտեի կողմից:

Փոքր վարկային կոմիտե (ՓՎԿ)

Փոքր վարկային կոմիտեն ունի նույն նպատակները, ինչ Մեծ վարկային կոմիտեն, սակայն որոշումների կայացման սահմանաչափերն ավելի ցածր են: Կոմիտեի քննարկմանը և հաստատմանն են ներկայացվում մանրածախ և ՓՄՁ վարկերը: Փոքր վարկային կոմիտեն իրավասու չէ քննարկել կամ հաստատել վարկը, եթե պատասխանատու ստորաբաժանումներից թեկուզ մեկի եզրակացությունը բացասական է:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե (ԱՊԿԿ)

Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն բանկում մշտապես գործող կոլեգիալ մարմին է, որն ունի որոշումներ կայացնելու իրավասություն ակտիվների և պարտավորությունների կառավարման քաղաքականության շրջանակներում: Կոմիտեի նպատակն է Բանկի ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարման համար նախադրյալների ստեղծումը, որը հնարավորություն կտա Բանկի ստորաբաժանումներին ապահովել առավելագույն շահութաբերություն՝ իրացվելիության, արտարժութային և տոկոսադրույքի ռիսկերի ընդունելի սահմաններում: Կոմիտեի իրավասությունների շրջանակը ներառում է նաև ներդրումային քաղաքականության, տոկոսադրույքների, արտարժույթի, իրացվելիության, կապիտալի համարժեքության և ռիսկի պարամետրերի կառավարման խնդիրների քննարկումը և հաստատումը:

Տեղեկությունների բացահայտման կոմիտե

Տեղեկությունների բացահայտման կոմիտեի նպատակն է ապահովել Բանկի տեղեկությունների բացահայտման քաղաքականության պահպանումը և լիարժեք ու ժամանակին հասանելիություն Բանկի մասին հետևողական և վստահելի տեղեկատվությանը բոլոր շահագրգիռ անձանց համար: Տեղեկությունների բացահայտման կոմիտեն ուսումնասիրում է տեղեկատվությունը և որոշում, թե արդյոք այն պետք է դասակարգվի որպես էական այն դեպքերում, երբ տեղեկատվության դասակարգումը որպես էական ընդունված կանոնների և չափանիշների համաձայն դժվարություն է ներկայացնում: Կոմիտեն հաստատում և վերանայում է Բանկի խոսնակների ցուցակը, գնահատում է ներքին տեղեկությունների բացահայտումը հետաձգելու հնարավորությունը, կայացնում է որոշումներ հետաձգման վերաբերյալ Բանկի ներքին իրավական ակտերով և օրենսդրությամբ սահմանված շրջանակներում: Կոմիտեն նաև գնահատում է Բանկի վերաբերյալ շուկայում շրջանառվող էական լուրերը և ասեկոսեները և որոշումներ կայացնում դրանց արձագանքելու նպատակահարմարության ու ձևի վերաբերյալ, Բանկի ներքին իրավական ակտերով և օրենսդրությամբ սահմանված շրջանակներում հաստատում է բացահայտման ենթակա տեղեկությունները (հայտարարություններ, հաղորդագրություններ և այլն):



Վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման իրավասությունները բաշխվում են տարբեր մարմինների միջև, որոնց թվում են ինչպես կառավարման կոլեգիալ մարմինները, այնպես էլ անհատները: Սահմանաչափերը որոշվում են ըստ ռիսկի ախորժակի բաշխման ընդհանուր հայեցակարգի և պարբերաբար վերանայվում:

Վարկավորման հաստատված պայմաններից շեղումները ևս հաստատվում են ըստ սահմանաչափերի (կախված վարկի տեսակից և գումարից), իսկ որոշումները կայացվում են քվեարկության հիման վրա (պարզ մեծամասնություն, ճնշող մեծամասնություն): Կախված մակրոտնտեսական միջավայրից՝ Տնօրինությունն ընդունում է շեղումներով վարկերի հաստատման 4 հնարավոր ռեժիմներից մեկը: Մակրոտնտեսական ռիսկային զարգացումների դեպքում որոշումների ընդունման սահմանաչափերը խստացվում են:

Ռիսկերի կառավարման դեպարտամենտի պատասխանատվության շրջանակը բավականին լայն է: Այն ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- Մշակում է ռիսկերի կառավարման քաղաքականությունն ու կառուցվածքը
- Իրականացնում է բիզնես գործընթացների մակարդակով ռիսկերի կառավարման (ներքին հսկողության) համակարգի ներդնում
- Նոր ներդրվող գործիքների գծով ներկայացնում է ռիսկերի կառավարման վերաբերյալ առաջարկություններ,
- Հաստատված սահմանաչափերի ներքո տալիս է եզրակացություն բանկային գործարքների վերաբերյալ
- Մշակում և Բանկի ղեկավարությանն է ներկայացնում ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվություններ
- Ապահովում է Բանկի անձնակազմի իրազեկումը ռիսկերի կառավարման վերաբերյալ, անցկացնում ուսուցում և հրահանգավորում

Ներքին աուդիտի ստորաբաժանումը գնահատում է Բանկում ներդրված ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը, դրա պահանջների և չափանիշների պահպանումը Բանկի ստորաբաժանումների կողմից, հանդես է գալիս առաջարկներով՝ համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար, բացահայտված ռիսկերի վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնում Բանկի ղեկավարներին և Տնօրենների խորհրդին:

Ռիսկերի կառավարման հայեցակարգի արդյունավետությունն ապահովելու համար Բանկում ներդրվել է կառավարչական տեղեկատվության համակարգ, որն ապահովում է տեղեկատվության ուղղահայաց և հորիզոնական հոսքը որոշումների կայացման համար:

Կառավարչական տեղեկատվական համակարգը Բանկի ղեկավարությանը ներկայացնում է առաջնորդող, համընկնող և հետևորդ ցուցանիշներ Բանկի վարկային և այլ պորտֆելների վերաբերյալ: Համակարգի ներքո Տնօրենների խորհուրդը և Տնօրինությունն ստանում են հաշվետվություններ ի հայտ եկող ռիսկերի և դրանց հնարավոր հետևանքների մասին: Մասնավորապես, տարբեր եղանակներով Բանկի ղեկավարներին ներկայացվում են հետևյալ տեղեկություններն առանձին գործիքների մասով՝

- Բանկի պորտֆելների/ներդրումների կառուցվածքը
- Պորտֆելների եկամտաբերությունը և ժամկետային կառուցվածքը
- Ժամկետանց ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը
- Գրավադրված ակտիվների և ընդունված գրավների կառուցվածքը
- Խնդրահարույց վարկերի և կենտրոնացումների վերաբերյալ տեղեկատվություն
- Դեֆոլտի ենթարկված վարկերի վերադարձելիությունը
- Այլ տեղեկատվություն արդյունավետության վերաբերյալ



Ռիսկի ախորժակ

Ռիսկի ախորժակը ռիսկի այն ընդունելի մակարդակն է, որը Բանկը պատրաստ է ստանձնել իր կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակներին հասնելու համար: Վնասների առումով ռիսկի ախորժակը հնարավոր վնասների/ռիսկի չափն է, որը Բանկը պատրաստ է կրել կանխատեսվող միկրոտնտեսական միջավայրում իր կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակներն ու ծրագրերն իրագործելու համար: Գոյություն ունեն ռազմավարական ռիսկի ախորժակ (ռիսկի աստիճան միջնաժամկետից երկարաժամկետ տնտեսական ցիկլերի համար) և ընթացիկ (գործառնական) ռիսկի ախորժակ:

Ռազմավարական ռիսկի ախորժակը ռիսկի առավելագույն չափն է, որը Բանկը կարող է ստանձնել 3-ամյա կտրվածքով իր նպատակներին հասնելու համար «սուր լարվածության» մակրո սցենարի ներքո, իսկ գործառնական ռիսկի ախորժակը ռիսկի առավելագույն չափն է, որը Բանկը կարող է ստանձնել կանխատեսված մակրո սցենարի ներքո 1 տարվա կտրվածքով իր նպատակների իրականացման համար: Թե՛ ռազմավարական, թե՛ գործառնական ռիսկի ախորժակը որոշվում է մեկ տարվա կտրվածքով առաջացող ռիսկերի համար:

Ռազմավարական և գործառնական ռիսկի ախորժակները սահմանվում են Բանկի հիմնական բիզնես ուղղությունների՝ կորպորատիվ վարկավորման, մանրածախ վարկավորման և առևտրային գործառնությունների համար: Ռիսկի տեսակներն են.

- Վարկային ռիսկն ընդհանուր հաստատված ռիսկի ախորժակն է՝ կորպորատիվ և մանրածախ վարկավորման գծով:
- Շուկայական ռիսկն առևտրային գործառնությունների համար հաստատված ռիսկի ախորժակի (արտարժութային ռիսկ, արժեղթերի/կոնտրագենտի ռիսկ) և Բանկի հաշվեկշռում նշված ընթացիկ տոկոսադրույքի համար նախատեսված ռիսկի ախորժակի հանրագումարն է:
- Գործառնական ռիսկի ախորժակը հաստատվում է ներքին գործընթացներից, մարդկային գործոնից, տեխնոլոգիաներից, համակարգերից և արտաքին գործոններից բխող ռիսկերի համար:

Բանկի ռազմավարական ռիսկի ախորժակը չի կարող գերազանցել Բանկի համար ընդունելի ռիսկի աստիճանը կամ նախատեսել ՀՀ ԿԲ նորմատիվների որևէ խախտում: Բանկի ռազմավարական ռիսկի ախորժակը հաստատվում/վերանայվում է Տնօրենների խորհրդի կողմից առնվազն տարին մեկ անգամ:

Ընթացիկ տարվա համար Տնօրենների խորհուրդը հաստատում է ռազմավարական ռիսկի ախորժակը չգերազանցող ընթացիկ ռիսկի ախորժակ: Ընթացիկ ռիսկի ախորժակի սահմանաչափերը պայմանավորված են մակրոտնտեսական միջավայրի և շուկայի սպասումներով, որոնք ձևավորվում են Բանկի ռազմավարության քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով Բանկի համապատասխան պարամետրերի պլանավորված ցուցանիշները և սթրես-սցենարների արժեքները:

Ռիսկի ախորժակը կառավարում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն կամ Մեծ վարկային կոմիտեն, ինչպես նաև Տնօրենների խորհուրդը՝ սահմանաչափի գերազանցման դեպքում:

Բանկի ռիսկի ախորժակ

Հիմնական ռիսկերը և ռիսկերի կառուցվածքը

«Ռիսկ/եկամուտ» մոտեցման և ռիսկի ախորժակի բաշխման շրջանակներում Բանկը կիրառում է ռիսկի գնահատման և նվազեցման տարբեր գործիքներ և մեթոդներ: Բանկի ռիսկերը դասակարգվում են որպես վարկային, շուկայական, գործառնական և այլ ռիսկեր:

Վարկային ռիսկ:

Բանկը ենթարկվում է ֆինանսական կորուստ կրելու ռիսկի, երբ հաճախորդները կամ պայմանագրի կողմերը խախտում են սահմանված ժամկետներում վճարում կատարելու իրենց պարտավորությունները: Վարկային ռիսկը Բանկի ամենաէական ռիսկն է, քանի դեռ Բանկի հիմնական գործունեությունը ավանդական վարկավորումն է: Հաշվի առնելով տնտեսության դոլարացման համեմատաբար բարձր մակարդակը՝ ընդհանուր վարկային ռիսկի տարրերից է նաև փոխարժեքների տատանումով պայմանավորված վարկային ռիսկը (առաջանում է չապահովված վարկառուներին արտարժույթով տրամադրված վարկերի առկայության հետևանքով): Վարկային ռիսկը պարունակում է նաև կենտրոնացման ռիսկը՝ վարկային պորտֆելի որակի վատթարացման հավանականությունը, որը կարող է առաջանալ մեկ վարկառուի կամ փոխկապակցված վարկառուներին խոշոր վարկեր տրամադրելու արդյունքում:

Բանկում մշակվել է ռիսկերի շրջահայաց կառավարման ընթացակարգ՝ ռիսկերի հայտնաբերման, չափման և մոնիթորինգի համար: Վարկային ռիսկերի կառավարման համապատասխան թիմերը գնահատում և կառավարում են մանրածախ և կորպորատիվ գործառնությունների ռիսկերը թե՛ առանձին գործարքների, թե՛ պորտֆելի մակարդակով: Կիրառվում են ռիսկերի գնահատման և ռեյթինգավորման հատուկ ներքին մեթոդաբանություններ: Վարկային ռիսկի կառավարման նպատակն է պորտֆելի վերահսկումը, որակի մոնիթորինգը, ինչպես նաև վարկային ռիսկի կառավարման մեխանիզմների մշակումը և կիրառումը՝ սթրես-թեստերի, վաղ ահազանգման և ռիսկի հիմնական ցուցանիշների ու պարամետրերի, ոլորտային վերլուծության ու մոնիթորինգի հիման վրա:

Բանկի մոնիթորինգի համակարգի հիմքում է ռիսկերի բացահայտումը, որը թույլ է տալիս ժամանակին արձագանքել շուկայական փոփոխություններին, բացահայտել վարկային պորտֆելի թույլ կողմերը և նախանշել լուծումներ՝ հիմնավորված որոշումներ կայացնելու համար: Մոնիթորինգի են ենթարկվում առանձին վարկերը, ընդհանուր պորտֆելի կատարողականը, ինչպես նաև արտաքին միտումները, որոնք կարող են ազդել պորտֆելի ռիսկայնության մակարդա-

կի վրա: Վաղ ահազանգման ազդակները կարևոր դեր են խաղում վարկերի որակի վատթարացումը վաղ փուլում հայտնաբերելու և զսպող քայլեր ձեռնարկելու համար:

Վարկային ռիսկերի կառավարման բաժինը պարբերաբար վերլուծում է պորտֆելի միտումները, ներառյալ ընդհանուր վարկային պորտֆելի հնարավոր կորուստները, պորտֆելի որակը, իրականացնում է վարկերի դասակարգման դինամիկայի և պորտֆելի կենտրոնացման վերլուծություն և ամսական հաշվետվություն ներկայացնում վարկային կոմիտեին: Վարկային պորտֆելի որակի մասին հաշվետվություններն ամսական կտրվածքով ներկայացվում են Տնօրինությանը և Տնօրենների խորհրդին: Վարկային ռիսկերի կառավարման համակարգի շնորհիվ Բանկը կարողանում է ժամանակին բացահայտել և նվազեցնել ռիսկերը:

Շուկայական ռիսկի

գնահատումն ու կառավարումը հիմնվում են համապատասխան ռիսկի ախորժակի շրջանակներում «ռիսկ/եկամուտ» հարաբերակցության վրա, որը սահմանվում և բաշխվում է ըստ ռիսկի հետևյալ ենթատեսակների՝ տոկոսադրույքի, գնային, արժութային և բաժնեմասի գնի ռիսկեր: Շուկայական ռիսկն առաջանում է շուկայի տատանումների պատճառով ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության, արժույթի և տոկոսադրույքների անհամապատասխանության, ինչպես նաև արժեթղթերի, անշարժ գույքի, Բանկին պատկանող կամ որպես գրավ ընդունված ակտիվների գնի փոփոխության հետևանքով:

Գործադիր մակարդակում շուկայական ռիսկերի կառավարման համար պատասխանատու է ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն (ԱՊԿԿ): Բանկի նպատակն է կառավարել շուկայական ռիսկերը, սահմանել ընդունելի շեմեր և կիրառել որոշումների կայացման համապատասխան համակարգ՝ հնարավոր կորուստները ռիսկի ախորժակի նախանշված սահմաններում պահելու համար: Կիրառվող վաղ ահազանգման ազդակները և ռիսկի հիմնական ցուցանիշների համակարգը, տարատեսակ սթրես-թեստերը նպատակ ունեն հաշվարկելու շուկայական տարբեր զարգացումների ազդեցությունը Բանկի վրա, ինչպես նաև հասկանալ շուկայական ռիսկի բաց դիրքի սահմանաչափերն ըստ շուկայական ռիսկի բոլոր աղբյուրների: Իրականացվող սթրես-թեստերի սցենարները պարբերաբար վերանայվում են՝ արտացոլելով շուկայի պայմանները: Ռիսկերի պարամետրերի համակարգով սահմանվում են պարտադիր գործողություններ, պատասխանատու անձինք, ռիսկի գոտիներ, ինչպես նաև հաշվետվողականության և որոշումների կայացման կանոնները: Շուկայական ռիսկերի կառավարման համակարգը պարբերաբար

վերանայվում է և փոփոխվում Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների և շուկայական պայմանների զարգացմանը զուգահեռ:

Արժութային ռիսկ:

Արտարժույթով (հիմնականում ԱՄՆ դոլարով) արտահայտված ակտիվների և պարտավորությունների մեծ ծավալը Բանկի համար առաջացնում է արտարժութային ռիսկ: Արդյունքում, փոխարժեքի ցանկացած տատանում կարող է հանգեցնել ռիսկով կշռված ակտիվների արժեքի փոփոխության և ճնշման տակ դնել Բանկի կապիտալի ցուցանիշները: Արտարժութային ռիսկը նվազեցնելու նպատակով Բանկը կիրառում է ռիսկի ենթարկված արժեքի (VaR) մեթոդաբանությունը՝ հիմնվելով նախորդ ժամանակաշրջանների տվյալների և թեստերում օգտագործվող փոխարժեքների սիմուլյացիաների վրա, հաշվի առնելով տարբեր փոխարժեքների, դրանց տատանումների և հավանականության՝ նախկինում գրանցված հարաբերակցությունը: Ռիսկերի պարամետրերի համակարգը ներառում է նաև ընդհանուր բաց դիրքի պարամետրերը, որոնք սահմանափակվում են ըստ ռիսկի գոտիների, որոշում կայացնողների և սահմանաչափերի խախտման դեպքում ձեռնարկվող միջոցառումների: Արտարժութային ռիսկը, բաց դիրքի արդյունքում կորուստը, ռիսկով կշռված ակտիվների աճը վաղ փուլում կանխատեսելու և Բանկի կապիտալի, կապիտալի համարժեքության ցուցանիշի և իրացվելիության վրա դրանց ազդեցությունը չափելու համար կիրառվում են մի շարք սթրես-թեստեր՝ 3 հիմնական սցենարով: Բացի դրանից, Բանկը կիրառում է լրացուցիչ՝ առավելագույն արժեքի մոտեցում, որը հիմնվում է սիմուլյացիոն սխեմայի վրա և ապահովում արժութային ռիսկի վստահելի գնահատումներ: Այս մոտեցումը կիրառվում է ռիսկի և ակնկալվող կորուստի օպերատիվ գնահատման և կառավարման համար:

Տոկոսադրույքի ռիսկը

սահմանված ժամանակաշրջանում զուտ տոկոսային եկամտի նվազման ռիսկն է՝ պայմանավորված շուկայական տոկոսադրույքների փոփոխությամբ: Տոկոսադրույքի ռիսկի հիմնական աղբյուրներից մեկը ներդրումային պորտֆելն է, որը մեծամասամբ բաղկացած է հաստատուն եկամուտով գործիքներից: Տոկոսադրույքի ռիսկի մեկ այլ աղբյուր է լողացող տոկոսադրույքով ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջև ոչ զրոյական տարբերությունը, ինչպես նաև անհամապատասխանությունը հաստատուն եկամուտ ունեցող ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության միջև: Քանի որ լողացող տոկոսադրույքով վարկատեսակները տեղական շուկայում

լավ չեն զարգացած, լողացող տոկոսադրույքի տատանումները կարող են անդրադառնալ Բանկի վրա: Տոկոսադրույքի ռիսկը, ներառյալ հաստատուն տոկոսադրույքների փոփոխության արդյունքում առաջացող ճեղքվածքը, ակնկալվող վերանայման պարամետրը, լողացող տոկոսադրույքի դիրքի չհեջավորված մասը և արժեթղթերի պորտֆելը, վերահսկվում և նվազեցվում է ռիսկերի մեծաթիվ պարամետրերի միջոցով: Տոկոսադրույքի ռիսկի պարամետրերի համակարգը բաղկացած է ավելի քան 30 տարբեր տարրերից՝ ռիսկի համապատասխան գոտիներով, սահմանաչափերով և կառավարման լիազորություններով: Արժեթղթերի պորտֆելի ռիսկը կառավարվում է առանձին քաղաքականությամբ, որն ընդգրկում է պորտֆելի պարամետրերը, համապատասխան ակտիվների տեսակները, սթրես-թեստերը, ակտիվների տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման սահմանաչափերը և վաղ ահազանգման ազդակները, որոնք պարբերաբար վերանայվում են Բանկի գործունեության ընդլայնմանը զուգահեռ: Ռիսկերի կառավարման ընդհանուր քաղաքականությունը սահմանվում է Տնօրենների խորհրդի կողմից և կառավարվում ԱՊԿԿ-ի կողմից: Տնօրինությունն ապահովում է տոկոսադրույքի ռիսկի սահմանափակում՝ ռիսկի ախորժակի նախանշված չափով: Հնարավոր կորուստները գնահատվում են սցենարների վերլուծության, վիճակագրական սիմուլյացիայի, ռիսկի ենթարկված արժեքի և ակնկալվող պակասորդի հիման վրա:

Գնային ռիսկ:

Բանկը ենթարկվում է վարկերի ապահովման ծածկույթի նվազման ռիսկին՝ ապահովման միջոցների և բաժնային գործիքների շուկայական գների տատանման հետևանքով: Գնային ռիսկի հիմնական աղբյուրն է գրավադրված անշարժ գույքի արժեզրկումը: Գնային ռիսկը կարող է առաջանալ նաև կապիտալի գործիքների, ապրանքների, հիմնական միջոցների, գրավադրված շարժական գույքի և այլ ֆինանսական գործիքների շուկայական գների փոփոխության արդյունքում: Գնային ռիսկը կարող է էական ազդեցություն ունենալ վարկային ռիսկի վրա, քանի որ անշարժ գույքի գնային տատանումները կարող են հանգեցնել չապահովված վարկերի մեծ ծավալի առաջացման՝ պայմանավորված «վարկ/գրավ» հարաբերակցության աճով: Վարկային ռիսկի մեկ այլ տարր, որը փոխկապակցված է գնային ռիսկի հետ, միջազգային առևտրով զբաղվող վարկառուների վճարունակության անկման ռիսկն է, քանի որ նրանք կարող են տուժել տարբեր ապրանքների շուկայական գնի տատանումից: Մակրոմիջավայրի ռիսկի մոնիթորինգի ներքո պարբերաբար վերլուծվում է տեղական ընկերությունների վճարունակությունը: Ի պատասխան այդ ռիսկերին խստացվում են վարկավորման պայմանները, շեղումների սահմանաչափերը, ռիսկերի պարամետրերի ընդհանուր համակարգում ներառվում է

որոշումների կայացման հստակ սահմանված կարգ: Բանկը մշակել է գործողությունների ծրագրեր սթրես-թեստերով նախատեսված գնային ցնցումների արդյունքում առաջացող ռիսկերին վաղ փուլում արձագանքելու համար:

Իրացվելիության ռիսկ՝

ռիսկ, որ Բանկը չի կարողանա կատարել իր պարտավորությունները՝ առանց մեծ վնաս կրելու: Իրացվելիության ռիսկը կարող է էապես բարձրանալ հետևյալ դեպքերում.

- Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության զգալի անհամապատասխանություն
- Ոչ դիվերսիֆիկացված հաշվեկշիռ
- Խոշոր ավանդատուների և վարկառուների բարձր կենտրոնացում
- Արժութային ցնցումներ ֆինանսական շուկաներում, որոնք հանգեցնում են ավանդների դուրսբերման կամ տեղական արժույթով արտահայտված ավանդների փոխարկմանն արտարժութային ավանդների
- Ֆինանսական շուկայում իրացվելիության պակաս և ավանդների արտահոսք
- Արժեթղթերի պորտֆելի որակի անկում
- Որոշ ֆինանսական գործիքների (ռեպո, սվոփ, օվերնայթ և այլն) անսպասելի անհասանելիություն

Բանկը ձգտում է մշտապես ապահովել բարձր իրացվելի ակտիվների բավարար մակարդակ՝ ելնելով ցպահանջ ու կարճաժամկետ պարտավորությունների և ընդհանուր ակտիվների մեծությունից: Բարձր իրացվելի ակտիվների կառուցվածքն ըստ արժույթների, կանխիկ/անկանխիկ միջոցների որոշվում է՝ ելնելով Բանկի պարտավորությունների կառուցվածքից: Բանկը միջոցներ տեղաբաշխելիս ձգտում է ապահովել գործիքների բազմազանություն և կենտրոնացումների շարունակական նվազեցում: Դա ենթադրում է տեղաբաշխված միջոցների դիվերսիֆիկացում ըստ հաճախորդների կամ հաճախորդների խմբերի, գործիքների, տնտեսության տարբեր ճյուղերի և այլ չափանիշների, ինչպես նաև Բանկի ընդհանուր ակտիվներում դրանց տեսակարար կշռի սահմանում ու հսկողություն: Իրացվելիության ռիսկի պարամետրերը (օր.՝ կենտրոնացումը, ակտիվների և պարտավորությունների միջև ճեղքվածքը, տոկոսադրույքի ճեղքվածքը, բարձր իրացվելի ակտիվների ցուցանիշները և այլն) սահմանված են ռիսկերի պարամետրերի համակարգում: Դրա կառավարումը, այդ թվում՝ ռիսկի մակարդակի սահմանափակումը, հաշվետվողականության սկզբունքները, գործողությունների ծրագրերը, որոշումների կայացման քաղաքականությունները, պատասխանատու անձանց նշանակումը

և սթրես-թեստերի սկզբունքների կիրառումը, իրականացվում է ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգի շրջանակներում:

Գործառնա-կան ռիսկ:

Բազելի հայեցակարգի համաձայն Ամերիաբանկը սահմանում է գործառնական ռիսկը որպես ներքին գործընթացների, համակարգերի խափանման, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների հետևանքով առաջացող ռիսկ: Գործառնական ռիսկը բնորոշ է բոլոր պրոդուկտներին, գործընթացներին, համակարգերին և երրորդ կողմ հանդիսացող գործընկերներին: Այն առաջանում է բոլոր բիզնես ուղղություններում և օժանդակ գործառնություններում:

Գործառնական ռիսկերի կառավարման թիմը հանդես է գալիս որպես երկրորդ մակարդակի պաշտպանություն: Գործառնական ռիսկի կենսացիկլը ներառում է քաղաքականությունների, ընթացակարգերի, համակարգերի և որոշակի մեթոդների կիրառումը հաղորդակցման, խորհրդատվության տրամադրման, իրավիճակի սահմանման, գնահատման, ռիսկերի բացահայտման, վերլուծության և գնահատման, արձագանքման, վերանայման, մոնիթորինգի, հաշվառման և հաշվետվությունների ներկայացման գործընթացներում:

Բանկում անընդհատ իրականացվում է գործառնական ռիսկերի բացահայտմանը և գնահատմանն ուղղված հետևողական աշխատանք: Ռիսկերի կառավարումն իրականացվում է միասնական համակարգի միջոցով: Նոր գործընթաց կամ ծառայություն ներդնելուց առաջ Բանկը գնահատում է դրա կարևորությունը և համապատասխան գործառնական ռիսկերի նկատմամբ իր զգայունությունը: Գործընթացների և համակարգերի ռիսկերի գնահատման մեջ առանցքային դեր է խաղում տարբեր դեպքերի հավանականության և դրանց ազդեցության հաշվարկը, որի ճշգրտությունն ապահովելու նպատակով Բանկը վարում է գործառնական պատահարների և կորուստների տվյալների ավտոմատացված շտեմարան: Այն թույլ է տալիս վերլուծել ռիսկի աղբյուրները, դրանց բնույթը, պատճառները և միտումները, հաշվարկել հետագա գործառնական կորուստների վերականգնման համար անհրաժեշտ կապիտալի ծավալը: Մենք նաև ներդրել ենք կապիտալի՝ ըստ պրոդուկտների բաշխման մոդելը՝ սեփական մեթոդաբանությամբ, որը թույլ է տալիս սահմանել տվյալ պրոդուկտի հետ առնչվող գործընթացների և համակարգերի գնահատման խնդիրներն ըստ առաջնահերթության:

Խոշոր պատահարներից պաշտպանվելու նպատակով Բանկը լավագույն փորձին համապատասխան ապահովագրել է իր ակտիվները, գործառնությունները, պարտավորությունները և աշխատակիցների պատասխանատվությունը: Բանկն իր ակտիվները ապահովագրել է մի շարք ռիսկերից, այդ թվում՝ հրդեհից, պայթյունից, տարերային

աղետներից, երրորդ անձանց ոչ օրինաչափ գործողություններից, ինչպես նաև իր հաճախորդների համար ձեռք բերել երրորդ կողմի պատասխանատվության ապահովագրություն: Բանկը նաև ունի ֆինանսական հաստատությունների համապարփակ ապահովագրություն (Bankers' Blanket Bond) և իր տնօրենների ու ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն:

Բանկի բոլոր աշխատակիցները պատասխանատվություն են կրում իրենց գործունեության արդյունքում առաջացող գործառնական ռիսկերի կառավարման և վերահսկման համար:

Ռազմավարական ռիսկ:

Շուկայական իրավիճակի, հաճախորդի վարքագծի և տեխնոլոգիաների փոփոխությունները նույնպես կարող են բացասաբար անդրադառնալ կատարողականի վրա, եթե Բանկը ճկուն չլինի արտաքին փոփոխությունների հանդեպ: Հետևաբար, ցանկացած կազմակերպության նման Բանկը ևս ենթարկվում է ռազմավարական ռիսկերի: Ռազմավարական ռիսկերի կառավարման համակարգի հիմքում են պարբերական ռազմավարական քննարկումները, պլանավորումը, հաշվետվությունների ներկայացումը Տնօրենների խորհրդին և Տնօրինությանը, ինչպես նաև զարգացման բոլոր առանձին ուղղությունների շարունակական վերահսկողությունը: Բանկում ռազմավարական պլանավորման և ռազմավարության իրականացման գործընթացը կանոնակարգվում է Ռազմավարական վերլուծությունների իրականացման և գործարար ծրագրերի մշակման և մոնիթորինգի ընթացակարգով:

Տարեկան առնվազն երկու անգամ անցկացվում են ռազմավարության քննարկումներ, որոնց ընթացքում ուսումնասիրվում և Տնօրենների խորհրդին են ներկայացվում Բանկի ռազմավարությունը, ռիսկի ախորժակը, նպատակները և խնդիրները հաջորդող տարիների համար: Ռազմավարական քննարկումներից հետո սկսվում է եռամյա գործարար ծրագրի մշակումը, իսկ ծրագրի հաստատումից հետո այն կարող է վերանայվել միայն հիմնարար դրույթների և ենթադրությունների էական փոփոխությունների դեպքում:

Շրջակա միջավայրի ռիսկ՝

ընկերության գործունեության հետևանքով առաջացող կեղտաջրերի, արտանետումների, թափոնների, ռեսուրսների սպառման պատճառով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կամ դրա հավանականությունը, ինչպես նաև որոշակի գործունեության հետևանքով շրջակա բնական միջավայրի քայքայման վտանգը: Շրջակա միջավայրի ռիսկերի կառավարումը ենթադրում է շրջակա

միջավայրի առկա ռիսկերի բացահայտումը և դրանց կառավարման եղանակների ընտրությունը՝ մարդկանց առողջությունը և ընդհանուր շրջակա միջավայրը լավագույն ձևով պաշտպանելու համար: Հաճախորդի/ֆինանսավորվող ընկերության գործունեության վայրում կարող են առաջանալ սոցիալական խնդիրներ, որոնք հետզհետե կարող են ազդել մոտակայքում բնակվող համայնքների վրա: Իր գործունեության ընթացքում ղեկավարվելով շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման լավագույն միջազգային սկզբունքներով՝ Ամերիաբանկը հետամուտ է նաև իր հաճախորդների կողմից շրջակա միջավայրի և հանրության հանդեպ իրենց պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելուն: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման հիմնական տարրերն են.

- Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականությունը
- ·Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման հրահանգը
- Լավագույն փորձին համաձայն տվյալ ռիսկերի կառավարման գործընթացը ներդնելու և իրականացնելու համար անհրաժեշտ գործիքները

Բանկն ունի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համար պատասխանատու թիմ՝ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի ներդնումն ու ընթացիկ կիրառումն ապահովելու համար:

Հեղինակության ռիսկը

հեղինակության անկման հավանականությունն է, որի արդյունքում նվազում է ընկերության ընդհանուր արժեքը, և/կամ ավելանում են իրավական պահանջների պահպանման և այլ ծախսերը: Այն ընդգրկում է Բանկի էթիկայի, ապահովության, անվտանգության, կայունության, որակի և նորամուծությունների հետ կապված բացասական զարգացումները: Հեղինակության ռիսկը կառավարվում է Տնօրինության մակարդակում, սակայն առավել հիմնավորված որոշումներ կայացնելու համար ներգրավվում են նաև հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման, հասարակության հետ կապերի, ներդրողների հետ փոխհարաբերությունների, անվտանգության ստորաբաժանումները և այլ շահագրգիռ կողմեր: Տեղեկատվության բացահայտման և կառավարման հետ կապված հեղինակության ռիսկի զսպման աշխատանքներն իրականացվում են Տեղեկությունների բացահայտման կոմիտեի

կողմից՝ ներքին տեղեկատվության կառավարման, շուկայում ասեկոսեներին արձագանքման և այլ գործողությունների միջոցով: Անհամապատասխանության ռիսկը օրենսդրական և իրավական պահանջների խախտման ռիսկն է, քանի որ Բանկի գործունեությունը կարգավորվում է ազգային օրենսդրությամբ և վարկատուների հետ կնքված պայմանագրերով: Տվյալ ռիսկը կառավարվում է հատուկ ստորաբաժանումների կողմից, ներառյալ ռիսկերի կառավարման թիմը, իրավաբանական ծառայությունը, ընթացիկ վերահսկողության և ֆինանսական դիտարկումների ստորաբաժանումները: Բանկն իր գործունեությունը իրականացնում է կարգավորող մարմնի պահանջների համաձայն՝ միևնույն ժամանակ կիրառելով միջազգային չափանիշները: Նշված ռիսկերը սահմանափակվում են ներքին իրավական ակտերի, որոշումների կայացման և վերահսկողության եռաստիճան համակարգի միջոցով, այն է՝ ռիսկերի կառավարումն իրականացվում է հատուկ բաժնի, մասնագիտացած կոմիտեների և Տնօրինության կողմից:

Բանկը ենթարկվում է նաև այլ ռիսկերի, որոնց թվում են հեղինակության ռիսկը, օրենսդրական և իրավական պահանջների խախտման ռիսկը, իրավական ռիսկը և ՓԼ/ԱՖ ռիսկը:

Մակրոտնտեսական միջավայր

2021 թվականը տնտեսական վերականգնման տարի էր 2020 թ-ին գրանցված աննախադեպ ցնցումներից հետո: Սահմանափակումների և խափանումների վերացմանը զուգահեռ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում աճ է գրանցվել, իսկ ՀՆԱ-ն կազմեց 5.7%: 2021թ. ամենամեծ մակրոտնտեսական մարտահրավերը բարձր գնաճն էր: Կենտրոնական բանկը պրոակտիվ կերպով կառավարում էր ռիսկերը գնաճային ճնշումների պայմաններում, ու թեև 12-ամսյա կուտակային ՍԳԻ-ն կազմեց 7.2%, դա ամենացածր ցուցանիշն էր տարածաշրջանում:

Տնտեսական վերականգնմանը նպաստող հիմնական գործոններից էին բարձր պահանջարկը և ապրանքների գները (պղինձ), մասնավոր փոխանցումների աճող ծավալը և վերականգնվող առևտրի և զբոսաշրջության ոլորտները: Դրական միտումներ են գրանցվել նաև ՏՏ ոլորտում և գյուղատնտեսությունում: Աճ է արձանագրվել նաև շինարարության ոլորտում՝ անշարժ գույքի շուկայում բարձր պահանջարկի շնորհիվ, որը մասամբ պայմանավորված էր պետական ապահովության բնակարանային աջակցության ծրագրերով:

Տարեվերջի դրությամբ ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները հետևյալն էին. ակտիվների աճը կազմեց 7.5%, վարկային պորտֆելը գրեթե չի փոխվել, խնդրահարույց վարկերի միջին ցուցանիշը կազմեց 4.4%, կապիտալի համարժեքությունը՝ 17.3%, կապիտալի եկամտաբերությունը՝ 9.5%, մինչդեռ բանկային համակարգի ընդհանուր կապիտալի աճը կազմեց 8.8%:

2021թ. Ամերիաբանկը գործում էր միջին ռիսկի պայմաններում, և ռիսկի ախորժակի սահմանաչափերը չեն խախտվել: Կուտակված կորուստները կրկնակի ցածր էին նախորդ տարվա ցուցանիշներից: Բանկն ապահովել է կապիտալի ամենաբարձր եկամտաբերությունը բանկային համակարգում՝ ավելի քան կրկնապատկելով զուտ շահույթը:

Ռիսկերի կառավարման համակարգի զարգացումները և գործողությունները 2021թ.

Ելնելով իր ռազմավարական ծրագրից և գործարար մոդելից՝ 2021թ. Բանկը.

- Մշակել է վարկային ռեյթինգավորման նոր համակարգ կորպորատիվ վարկերի պորտֆելի համար, որը կօգտագործվի պայմանագրային պարտավորությունների խախտման հավանականությունը հաշվարկելու համար և յուրաքանչյուր կորպորատիվ վարկի ռիսկը համապատասխան դասին վերագրելու համար՝ վարկառուի մասին առկա տեղեկատվության հիման վրա, Բանկի ռեյթինգավորման համակարգի համաձայն: Վերջինս պետք է օգտագործվի վարկային ռիսկի հետ կապված պահուստավորման ծախսերի ավելի ճշգրիտ հաշվարկի համար:

- Մշակեց և ներդրեց վերլուծության և մոնիթորինգի նոր գործիք վարկային ռիսկի կառավարման նպատակով, նախաձեռնեց ռիսկերի կառավարման հետ կապված տվյալների պահոցի և տվյալների վերլուծության հոսքագծի հայեցակարգի մշակումը, որի նպատակն է նպաստել տվյալահեն որոշումների կայացման գործընթացին և ռիսկերի մոդելավորման ավելի զարգացած գործառույթի իրականացմանը:

- ՄՈՒ/ԱԲ հիմք ունեցող՝ ռիսկերի մոդելների մշակման շրջանակներում Բանկը կատարելագործեց ֆիզիկական անձանց համար ավտոմատացված թվային վարկային պրոդուկտների գծով ռիսկերի գնահատման/որոշումների կայացման մոդելները՝ չապահովված սպառողական վարկերի և ապառիկ վարկերի համար ներդնելով նոր ճարտարապետական կառուցվածք: Ավարտվել է ՓՄՁ առցանց վարկային պրոդուկտների հիմքում ընկած մոդելի մշակման փուլը, ընթացքում է ներդրման փուլը:

- Մշակվել է կանաչ վարկավորման հրահանգը և կանաչ պարտատոմսերի քաղաքականությունը՝ նպատակ ունենալով ներդնել կայուն ֆինանսավորման ստանդարտացված մոտեցում, ներառյալ էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի և ռեսուրսների արդյունավետության ֆինանսավորումը: 2021թ. մենք մշակել ենք ածխածնի արտանետումների հաշվարկի գործիքակազմ, որը կիրառել ենք շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից մեր հաճախորդների կարգավիճակը որոշելու համար: Կանաչ ֆինանսավորումը խթանելու համար 2021թ. մենք ամբողջությամբ տեղաբաշխեցինք 42 մլն ԱՄՆ դոլարի միջոցներ՝ ստացված առաջին կանաչ պարտատոմսերից՝ դրանք ուղղելով համապատասխան կանաչ ակտիվների 9 դասերից վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորմանը:

Վարկային ռիսկ

Ռիսկեր և անորոշություններ

2021թ. Բանկը գործում էր միջին վարկային ռիսկի պայմաններում՝ կապված հետհամավարակային և Արցախի Հանրապետությունում հետպատերազմական իրավիճակի հետ: Անցյալ երկու տարվա ընթացքում ձեռնարկած արդյունավետ միջոցների շնորհիվ հնարավոր դարձավ կայունացնել վարկային պորտֆելի որակը: Վարկայի ռիսկի հիմնական ցուցանիշները վերադարձան ցածր ռիսկի գոտի:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Պորտֆելի որակ և ծածկույթ

Բանկի խնդրահարույց վարկերի ցուցանիշը կազմեց 3.2%՝ տարեկան կտրվածքով բարելավելով 1.0 տոկոսային կետով: Բանկի տվյալ ցուցանիշը շատ ավելի ցածր է, քան Հայաստանի բանկային համակարգի միջին ցուցանիշը՝ ինչպես կորպորատիվ, այնպես էլ մանրածախ պորտֆելներում: Վարկային ռիսկի արժեքը 0.9% էր (2.8% 2020թ.): Բանկի ակնկալվող վնասը լավ ապահովված է, մասնավորապես, խնդրահարույց վարկերի ծածկույթը կազմում է 76.3%:

Ապահովման միջոցներ

Ապահովման միջոցները Բանկի համար վարկային ռիսկի զսպման ամենաէական գործիքն են, ուստի գրավի արդյունավետ կառավարումը ռիսկերի կառավարման գործընթացի հիմնական տարրերից մեկն է:

Բանկի պորտֆելը բոլոր ոլորտներում հիմնականում ապահովված է: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պորտֆելի 65%-ից ավելին ապահովված էր բարձր իրացվելի ակտիվներով

և անշարժ գույքով, 11.5%-ը՝ շարժական գույքով և այլ հիմնական միջոցներով, մնացած մասը՝ ապրանքանյութական պաշարներով, դրամական հոսքերով և երաշխավորություններով:

Կենտրոնացում

Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքը դիվերսիֆիկացված է ըստ հաճախորդների, պրոդուկտների և տնտեսության ճյուղերի, ինչը նվազագույնի է հասցնում վարկային ռիսկը:

2021թ. դեկտեմբերի 31 դրությամբ մանրածախ և ՓՄՁ հատվածը կազմում էր ընդհանուր պորտֆելի 60%, ընդ որում հիփոթեքային, ՓՄՁ և սպառողական վարկերը կազմում էին նշված հատվածի համապատասխանաբար 31%, 46% և 27%:

Ամենամեծ կենտրոնացումը գրանցվել է հիփոթեքային պորտֆելում, որն այդուհանդերձ չէր գերազանցում ընդհանուր պորտֆելի 30%-ը: Այլ ոլորտները 2021թ. վերջի դրությամբ առանձին-առանձին չէին գերազանցում ընդհանուր պորտֆելի 10%-ը:

Շուկայական ռիսկ

Ռիսկեր և անորոշություններ

Բանկի շուկայական ռիսկերը պայմանավորված են փոխարժեքների աճով, եկամտաբերության տատանումներով և տոկոսադրույքի բարձրացման սպասումներով՝ ինչպես հայկական, այնպես էլ միջազգային շուկաներում բարձր գնաճի միտումների պայմաններում: Տարածաշրջանի այլ արժույթների համեմատ ՀՀ դրամի փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ համեմատաբար կայուն էր՝ հիմնականում ՀՀ ԿԲ-ի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, որոնք ուղղված էին բանկային հ ամակարգում ազգային արժույթի հանդեպ պահանջարկի խթանմանը: Չնայած բարդ իրավիճակի՝ բաց դիրքերը պահպանվում էին ռիսկի ախորժակի սահմաններում և կառավարվում էին համարժեք ձևով: Տոկոսադրույքների աճ գրանցվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման արդյունքում: Ընդհանուր շուկայական ռիսկը կառավարվում էր Բանկի ռիսկի ախորժակի շրջանակներում հաստատված ընդունելի սահմաններում:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Շուկայական ռիսկերից առաջացող վնասը 2021թ. Բանկի կապիտալի 0.5%-ից էլ պակաս էր: Արտարժութային դիրքի վերագնահատումը 2021թ. դրական էր, ընդ որում ռիսկի հիմնական աղբյուրն աճող տոկոսադրույքներն էին: Արժեթղթերի պորտֆելի շուկայական ռիսկն ընդունելի էր և ռիսկի ախորժակի սահմաններում՝ շնորհիվ կարճ դյուրացիայի (<4 տարի) և վերագնահատման պորտֆելի ծավալի: Բանկի արժեթղթերի պորտֆելը հիմնականում բաղկացած է ՀՀ պետական պարտատոմսերից:

Ռիսկի զսպում

- Ռիսկի ախորժակի/հնարավոր կորուստների կառավարումն իրականացվում էր ներքին պարամետրերի և սահմանաչափերի, կանոնավոր սթրես-թեստերի, մոնիթորինգի և կանխատեսումների միջոցով:
- Տոկոսադրույքի ռիսկը կառավարվում էր ըստ բաց դիրքերի սահմանաչափերի և սթրես-թեստերի հիման վրա գնահատված կորուստների: Պարբերաբար (առնվազն ամիսը մեկ) հաշվարկվում էին և մոնիթորինգի ենթարկվում տոկոսադրույքների ընթացիկ և ակնկալվող փոփոխությունները:

Գործառնական ռիսկ

2021թ. հիմնական ուշադրության կենտրոնում էր համավարակի հետ կապված ռիսկերի պատշաճ կառավարումը և գործառնական ռիսկերի մոդելի պահպանումը: Բանկը ժամանակին հարմարվեց նոր միջավայրին՝ ապահովելով գործառնությունների և ծառայությունների անխափան իրականացում, հոգ տանելով իր աշխատակիցների և հաճախորդների մասին և ցուցաբերելով ճկունություն դժվարին իրավիճակներում: Գործառնական ռիսկերի կառավարման հիմնական ուղղություններն էին ռիսկերի և հսկողության ինքնագնահատման վարժությունները, որոնց շրջանակներում վերանայվել են Բանկի համար առաջնային կարևորություն ունեցող գործընթացները և բացահայտվել բարելավման ենթակա ոլորտները: Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը, մասնավորապես տեղեկատվական ռիսկերի և երրորդ կողմերի ռիսկերի մասով, և համապատասխան քաղաքականություններն ու մեթոդաբանությունները վերանայվել են՝ գործառնական ռիսկերի կառավարման ծրագրի արդյունավետ իրագործման նպատակով:

Ռիսկեր և անորոշություններ

Թվայնացման միտումները, վերլուծական փոխակերպումը և նոր մրցակցային միջավայրն առաջացնում են նոր ռիսկեր՝ կիբեր ռիսկեր, տվյալների և գաղտնիության ռիսկեր, երրորդ կողմի ռիսկեր, գործունեության անընդհատության խափանման ռիսկեր և այլ թվային ռիսկեր: Համավարակի պայմաններում ավելի շատ մարդկանց կողմից հեռավար աշխատանքի անցնելու արդյունքում բարձրանում է կիբերհարձակումների, ֆիշինգի և վնասակար ծրագրերի ներդրման ռիսկերը: Տվյալ ռիսկերի նվազեցման նպատակով բարելավվել է կիբերանվտանգության ահազանգման համակարգը, ուժեղացել հարձակումների կանխման մոնիթորինգի համակարգը: Մենք խստացրել ենք նույնականացման և օգտատերերի արտոնությունների սահմանափակումների հսկողությունը՝ առավել կարևոր տվյալների մուտքագրման և փոփոխության գործընթացներում: Թվայնացման օրակարգի շրջանակներում Բանկը որդեգրել է արագ փորձարկումների մշակույթը, լավագույն փորձի և բիզնես-լուծումների փոխանակման մոտեցումը:

Ներկայումս տեխնոլոգիական և մի շարք այլ ծառայություններ բանկերը պատվիրակում են այլ ընկերությունների: Պատվիրակման շնորհիվ մենք ապահովում ենք ավելի բարձր արդյունավետություն, թեև առաջանում են մի շարք մարտահրավերներ և ռիսկեր, այդ թվում՝ գործունեության անընդհատության խափանման ռիսկ, ՏՏ և կիբեր անվտանգության ռիսկեր, օրենսդրական և իրավական պահանջների խախտման ռիսկ, գործընթացային ռիսկ, տվյալների արտահոսքի, զեղծարարության ռիսկեր, պրոդուկտային ռիսկ, վարքագծի ռիսկ, արհեստական բանականության ռիսկ, թվային փոխակերպման, համբավի ռիսկեր և այլն: Երրորդ կողմի ռիսկերի զսպման նպատակով Բանկն ուսումնասիրում և գնահատում երրորդ կողմ հանդիսացող գործընկերներին ըստ իր ռիսկի կառավարման և վերահսկողության մոդելի:

Այս ռիսկերը կառավարվում են ընթացիկ հիմունքներով և շարունակական կերպով, ներառյալ ռիսկերի գնահատման և կառավարման միջոցառումների արդիականացումը, մոնիթորինգի և ուսումնասիրությունների իրականացումը: Ավելին, մոնիթորինգի և ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվում են հաշվետվությունների տեսքով: Բանկի բարձր օղակի ղեկավարությունը վերահսկում է հիմնական ռիսկերը և միջոցներ ձեռնարկում դրանց զսպման ուղղությամբ:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Գործառնական ռիսկերի կառուցվածքը կայուն էր, և գործառնական ռիսկը մնում էր ցածր մակարդակի վրա գործառնական ռիսկերի արդյունավետ կառավարման, լավ կանոնակարգված և վերահսկվող գործընթացների, գործունեության անընդհատության ապահովման համապարփակ ծրագրերի և ռիսկերի հայտնաբերման, արձագանքման և պաշտպանության զարգացած մեխանիզմների շնորհիվ: 2021թ. կրած ընդհանուր գործառնական վնասը չի գերազանցել կապիտալի 0.003%-ը: Վնասի 52%-ը գրանցվել է մանրածախ գործառնությունների ոլորտում և վերաբերում է գործառնությունների իրականացմանը և կառավարմանը: Տարեցտարի զգալիորեն ավելանում է Ամերիաբանկի քարտապանների և հեռավար բանկային ծառայություններից օգտվող հաճախորդների թիվը: Չնայած դրան՝ գործառնական վնասը մնում է ընդունելի մակարդակում, իսկ դրա հավանական աճի դեպքում կանխատեսվող ռիսկը դուրս չի գա ցածր ռիսկի սահմաններից:

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները 2021թ.

- Բարելավվել են ռիսկերի շրջանակը և ստանդարտ վերահսկողությունը որոշելու, բացահայտելու և գնահատելու գործընթացները՝ նպատակ ունենալով ամրապնդել և ստանդարտացնել ռիսկերի և վերահսկողության միջավայրը:
- Բանկը բարելավել է ՏՏ ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը՝ տեխնիկական

անվտանգության միջոցառումների՝ ռիսկերի նվազեցման ազդեցությունը որոշելու և մնացորդային ռիսկերը նվազեցնելու նպատակով:

- Բարելավվել և այլ համակարգերի հետ է ինտեգրվել գործառնական ռիսկերի պատահարների համակարգը, որն իրենից ներկայացնում է Բանկի մակարդակով գործառնական ռիսկերի գրանցամատյան, որտեղ գրանցվում և կառավարվում են ֆինանսական և ոչ ֆինանսական պատահարները:
- Մենք մշակել ենք ռիսկի հիմնական ցուցանիշներին վերաբերող ընդլայնված հաշվետվություններ, որտեղ ներկայացվում են քանակական տվյալներ Ամերիաբանկի ընդհանուր ռիսկերի և հսկողական միջավայրի վերաբերյալ:
- Թվային ռազմավարությունները, համակարգերը և մեթոդաբանությունները վերանայվել են ըստ գործառնական ռիսկի, իրականացվել են ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ:
- Մենք ներդրել ենք երրորդ կողմի ռիսկերի կառավարման համակարգ՝ ապահովելու համար, որ երրորդ կողմերի/արտաքին մատակարարների կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ռիսկերը մնան ընդունելի մակարդակում՝ Բանկի ռիսկի ախորժակին համապատասխան:
- Լրամշակվել են նաև բիզնեսի անընդհատության ապահովման և վերականգնման ծրագրերը: Մասնավորապես, վերանայվել է գործընթացների դասակարգման սանդղակը, առավել կարևոր գործընթացների շրջանակը, փուլերը, իրականացվել է ռիսկերի վերլուծություն՝ յուրաքանչյուր սցենարի համար անհրաժեշտ անընդհատության ռազմավարություն որոշելու համար, իսկ ստացված արդյունքները դիտարկվել են բիզնեսի անընդհատության ապահովման գործող ծրագիրը բարելավելու համար:
- Մշակվել և ամբողջությամբ փորձարկվել է վերականգնման ծրագիրը, որտեղ ներկայացված են ֆինանսական և մակրոտնտեսական սթրես-սցենարներ ըստ լրջության աստիճանի: Ծրագիրը լրամշակվում է յուրաքանչյուր տարի:
- Բանկի գործառնական ռիսկերի կառավարման գործիքներից մեկը ապահովագրությունն է: Որպես երկրորդ մակարդակի պաշտպանություն՝ մենք կազմակերպեցինք ռիսկերի ապահովագրության մրցույթ՝ կարողանալով ապահովել համապարփակ, արդյունավետ և Բանկի ռիսկերին համարժեք ապահովագրական ծածկույթ:

Իրացվելիության ռիսկ

Ռիսկեր և անորոշություններ

Հայաստանի բանկային համակարգի իրացվելիության մակարդակը բարձր մակարդակի վրա էր՝ գերազանցելով նորմատիվային պահանջը, ինչը պայմանավորված էր հիմնականում սահմանափակ վարկային պահանջարկով կապիտալի նորմատիվների խստացման պայմաններում:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Իրացվելիության բոլոր գործակիցները համապատասխանում էին ՀՀ ԿԲ պահանջներին անգամ ամենաբացասական սթրես-սցենարների դեպքում (որոնց հավանականությունը շատ ցածր էր): 2021թ. իրացվելիության ռիսկը ռիսկի ախորժակի սահմաններում էր և զսպվում էր ռիսկի ընդհանուր պարամետրերի շրջանակներում, իրացվելիության ռիսկերի պրոակտիվ գնահատման և կառավարման միջոցով:

Ռիսկի զսպում

Բարձր իրացվելի ակտիվների տեղաբաշխումը դիվերսիֆիկացվել է բարձր վարկանիշ ունեցող գործընկերների լայն ցանցի, ինչպես նաև ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացված կառուցվածքի միջոցով: Ամերիաբանկը շարունակաբար ընդլայնում է իր գործընկերների ցանցը՝ նոր կապեր հաստատելով արտասահմանյան ֆինանսական հաստատությունների հետ, ինչի շնորհիվ Բանկի համար հասանելի են դառնում մեծաթիվ ֆինանսական գործիքներ և իրացվելիություն ապահովող մեխանիզմներ:

Ավանդային բազայի կայունությունը և հետագա աճն ապահովելու համար Բանկը սահմանում էր ավանդների տոկոսադրույքները՝ ելնելով շուկայում առկա միտումներից: Բանկն աշխատում էր նաև այլ աղբյուրներից (միջազգային ֆինանսական հաստատություններ) ռեսուրսների ներգրավման ուղղությամբ:

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկեր:

Ռիսկեր և անորոշություններ

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարումն առավել կարևոր է դարձել բիզնեսում հաջողություն ունենալու համար: Ամերիաբանկը ձգտում է համագործակցել այն հաճախորդների հետ, որոնք պատշաճ կերպով կառավարում են շրջակա միջավայրի և

սոցիալական ռիսկերը: Բանկը նաև աջակցում է իր հաճախորդներին շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգ ներդնելու գործում: Բանկի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման ընթացակարգերը խրախուսում են հաճախորդներին, որ նրանք էլ իրենց բիզնեսը վարեն կայուն և պատասխանատու կերպով: Ամերիաբանկի՝ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգը հիմնվում է ՄՖԿ-ի, ԿԶԵԲ-ի, ԱԶԲ-ի և FMO-ի գործունեության պահանջների և չափանիշների, ինչպես նաև զարգացման ֆինանսավորման եվրոպական ֆինանսական հաստատությունների համաձայնեցված մոտեցումների վրա, որոնք վարկավորման ընթացքում շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատման գլխավոր չափանիշն են: Ռիսկերը բացահայտելու և գնահատելու համար Բանկը կիրառում է տեխնիկական փաստաթղթեր, որոնցով սահմանվում են ընդհանուր և տնտեսության առանձին ճյուղերին բնորոշ՝ օրինակելի գործունեության չափանիշները, ինչպես նաև ձեռնարկում է զսպող և կանխարգելիչ միջոցառումներ:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Բանկի վարկային պորտֆելի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերն ընդունելի մակարդակի վրա են: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի ավելի քան 80%-ը գտնվում են ցածր և միջին ռիսկի գոտում: «Բարձր Ա» դասի ռիսկային վարկառուներ Բանկի վարկային պորտֆելում ներկայացված չէին: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման և վարկային քաղաքականությունները և ընթացակարգերը նպատակ ունեն նվազեցնել ֆինանսավորվող ծրագրերի բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցությունը՝ ֆինանսավորման պայմաններ, հրահանգներ և նախապայմաններ սահմանելու, խորհրդատվություն տրամադրելու և շրջակա միջավայրի ու սոցիալական ռիսկերի կառավարման մասնագետներ ներգրավելու միջոցով:

Ներդրողների ու հաճախորդների հետ համագործակցության շրջանակներում Ամերիաբանկը վարում է իր բիզնեսը՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը՝ հիմնված միջազգային ֆինանսական հաստատությունների չափանիշների ու միջազգային լավագույն փորձի վրա: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման թիմը պատասխանատու է Բանկի պահանջներին համապատասխանող նախագծերի բացահայտման, ներքին քաղաքականություններին, օրենսդրությանը և չափանիշներին դրանց համապատասխանությունն ապահովելու համար:

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները 2021թ.

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը կառավարվում էին Բանկի վարկային ընթացակարգերին և շրջակա միջավայրի ու սոցիալական ռիսկերի կառավարման գործող համակարգին համաձայն, որը մշակվել է լավագույն միջազգային փորձի հիման վրա (ԿԶԵԲ-ի, ՄՖԿ-ի, ԱԶԲ-ի և FMO-ի գործունեության չափանիշներ/պահանջներ, զարգացման ֆինանսավորման եվրոպական ֆինանսական հաստատությունների համաձայնեցված մոտեցումներ): Ցանկացած ծրագիր ֆինանսավորելիս Ամերիաբանկը գնահատում էր

տվյալ ծրագրի՝ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը, ուսումնասիրում իրավական փաստաթղթերը, բացահայտում, հսկում և նվազեցնում ռիսկերը, իրականացնում մոնիթորինգ և կազմում համապատասխան հաշվետվություններ: Գնահատման արդյունքները և բացահայտված անհամապատասխանությունները ներկայացվում էին եզրակացության ձևով, որի հիման վրա վարկային պայմանագրերում ներառվում են պարտադիր պահանջներ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման վերաբերյալ: Իրականացվում էր բարձր ռիսկային հաճախորդների, այդ թվում՝ ոլորտների մոնիթորինգ: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատման շրջանակներում ներդրվել է սքորինգի համակարգ: Կորպորատիվ վարկավորման անձնակազմի համար անցկացվեցին մի շարք վերապատրաստումներ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի վերաբերյալ:

Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթաց

Կապիտալի համարժեքության գնահատման նպատակն է գնահատել կապիտալի կարիքները Բանկի ստանձնած ռիսկերին և արտաքին միջավայրի փոփոխություններին համարժեք կապիտալի մեծություն սահմանելու նպատակով: Կապիտալի վրա կորուստների ազդեցությունը հաշվարկելու համար կիրառվում են միաժամանակյա սթրես-թեստեր, երբ դիտարկվում է բոլոր ռիսկերի՝ միաժամանակ ի հայտ գալու հավանականությունը 4 տարբեր սցենարով: Բանկը գնահատում է կապիտալն ու դրա համարժեքությունը 12-ամսյա ժամանակահատվածի համար, հաշվարկում նվազագույն անհրաժեշտ կապիտալը, որը Բանկը պետք է համալրի՝ հաշվի առնելով ռիսկերից առաջացող կորուստները, ինչպես նաև կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների նպատակային մեծությունները: Առանձնացվում են ռիսկի հետևյալ տեսակները, որոնց ի հայտ գալու դեպքում Բանկը կարող է կրել վնաս՝ վարկային ռիսկ (պորտֆելի որակի, կենտրոնացման ռիսկ), շուկայական ռիսկ (լողացող տոկոսադրույք, եկամտաբերության կոր, ֆիքսված տոկոսադրույքի ճեղքվածք, արտարժութային և բաժնային գործիքների գնային ռիսկ), գործառնական վնաս, ռիսկով կշռված ակտիվների աճ և այլ հնարավոր ռիսկեր: Կապիտալը և հնարավոր կորուստները գնահատելու համար կիրառվում է ռիսկային զարգացումների մեկ բազային և երեք առանձին սթրես-սցենար՝ սկսած զածր ռիսկային լավատեսական սցենարից մինչև ճգնաժամային սցենարը: Այն դեպքերում, երբ գնահատման արդյունքում կապիտալի համարժեքության կանխատեսվող մեծությունն ամենահավանական սցենարում (որը համապատասխանում է մակրոտնտեսական սպասումներին) չի բավարարում ՀՀ ԿԲ նվազագույն պահանջները, Բանկը ձեռնարկում է գործողություններ՝ համարժեքության գործակցի բավարար մակարդակ ապահովելու համար: Այս ցուցանիշը խստորեն վերահսկվում է Բանկի ղեկավարության կողմից:

Սթրես-թեստեր՝ կապիտալի ցուցանիշը կումուլյատիվ սցենարի դեպքում



Մլն ՀՀ դրամ	Դեկտ-21	Դեկտ-20
1-ին մակարդակ	117,696	109,740
2-րդ մակարդակ	26,136	19,384
Ընդհանուր նորմատիվային կապիտալ	143,832	129,124
ՌԿԱ	940,874	927,581
Ընդհանուր կապիտալի համարժեքության գործակից (բազային)	15.29%	13.92%
Կապիտալի համարժեքության գործակից (12 ամսվա ակնկալվող սթրես-սցենար)	14.14%	12.94%

Ռիսկերի կառավարման համակարգի զարգացում

Ռիսկերի ավելի արդյունավետ կառավարման համար 2021թ. Բանկը վերանայեց ռիսկերի գնահատման և նվազեցման սկզբունքների, ընթացակարգերի և մեթոդաբանությունների մեծ մասը: Ներդրվեցին նոր գործիքներ և մեթոդներ:

Վարկային ռիսկերի կառավարման բնագավառում 2021թ. Բանկը մշակեց.

- Սպառողական և մանրածախ ՓՄՁ վարկավորման նոր առցանց մոդելներ՝ արհեստական բանականության կիրառմամբ
- Մոնիթորինգի գործիքներ՝ սպառողական վարկային պորտֆելի նկատմամբ ընթացիկ վերահսկողությունը բարելավելու նպատակով

Ամսական պարբերականությամբ ներկայացվող հաշվետվությունների միջոցով Բանկի ղեկավարությունը մշտապես տեղեկացվում էր վարկային պորտֆելի որակի, տնտեսության ճյուղերի, վարկային պրոդուկտների, ռիսկերի հիմնական ցուցանիշների և այլ ռիսկային գործոնների և դրանց դինամիկայի վերաբերյալ, որի արդյունքում ձևավորվում էին կոնկրետ հանձնարարականներ ռիսկերի գնահատման և նվազեցման ուղղությամբ: Արտահերթ մոնիտորինգի միջոցով մշտապես ուշադրության կենտրոնում էին պահվում բարձր ռիսկ պարունակող վարկերը, ինչը թույլ տվեց 2021թ. էլ ավելի նվազեցնել դրանց ծավալը: 2021թ. վարկային ռիսկն զգալիորեն նվազեցվել է:

Ֆինանսական ռիսկերի կառավարման բնագավառում 2021թ. Բանկը.

- Ընդլայնեց սթրես-թեստավորման համակարգը՝ շարունակելով ապահովել ռիսկի ախորժակի բաշխման գնահատումը համաձայն Բանկի ռազմավարական նպատակների և հաշվի առնելով մակրոտնտեսական միջավայրի փոփոխությունները
- Շարունակեց կանխատեսման՝ տվյալների և մոդելների վրա հիմնված համակարգի մշակումը ապագա մակրոտնտեսական սցենարների համար
- Բարելավեց բանկային պորտֆելի վրա տոկոսադրույքի ռիսկի ազդեցության կառավարման գործիքները, ռիսկերի սահմանաչափերի և հաշվետվողականության համակարգը
- Իրականացրեց մշակված հատուկ սցենարների, ցուցանիշների և գործողությունների համակարգի փորձարկում՝ առանձնացող բարձր ռիսկային հանգամանքներում բիզնեսի վերականգնման գործընթացը կանխատեսելու, գնահատելու և կառավարելու համար
- Բարելավեց առևտրային արժեթղթերի պորտֆելի ռիսկի պարամետրերի համակարգը՝ ռիսկի ախորժակի շրջանակներին, համապատասխան իրավասություններին և սահմանաչափերին համապատասխան


Գործառնական ռիսկերի վերաբերյալ հաշվետվություններ
Ծուկայական և իրացվելիության ռիսկերի վերաբերյալ հաշվետվություն
Ռիսկերի պարամետրեր, ռիսկի հիմնական ցուցանիշներ և սահմանաչափեր
Ծեղումների վերաբերյալ հաշվետվություն
Ռիսկերի մասին հաշվետվությունների ներկայացման համակարգ
(Տնօրենների խորհրդին, Տնօրինությանը, ԱՊԿԿ-ին, Վարկային Կոմիտեին, ՀՀ ԿԲ-ին)
Սթրես-թեստերի վերաբերյալ հաշվետվություն
Որոշումների կայացում, վարկային պորտֆելի որակ
Վարկային ռիսկի վերաբերյալ հաշվետվություն (բիզնես ուղղություններ, պրոդուկտներ, մասնաճյուղեր, ոլորտներ)
Մակրո ռիսկերի ցուցանիշներ
Հաշվետվություն շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի վերաբերյալ
Կապիտալի համարժեքության ներքին գնահատում

© Հայկ Ռ. Եղիազարյան

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

130-165

04.



Քաղաքներ

Քաղաքների ապագան համաշխարհային բազում ծրագրերի հիմքում է: Մենք ակտիվ աշխատում ենք քաղաքային տարածքների տեխնոլոգիական և ենթակառուցվածքային զարգացման ուղղությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով քաղաքների ներառականության, անվտանգության և կայունության բարձրացմանը:

Երևան, Հայաստան

©Սուրեն Մանվելյան

Կորպորատիվ կառավարման ուղերձ

Հարգելի՛ բաժնետերեր,

Ուրախ ենք ձեր ուշադրությանը ներկայացնել Բանկի կորպորատիվ կառավարման հաշվետվությունը 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար: Անցյալ տարին քաոսի պայմաններում վերաիմաստավորման տարի էր, և մենք զինվում էինք համբերությամբ ու համառությամբ նոր իրողությանը և մարտահրավերներին դիմակայելու համար: 2021 թվականը համեմատաբար ավելի հանգիստ էր կորոնավիրուսի և տնտեսական զարգացումների առումով, ինչը մեզ թույլ տվեց կենտրոնանալ մեր հիմնական նպատակներին հասնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու, ինչպես նաև Խորհրդի փոխակերպման ծրագրի արդյունքում որդեգրած մոտեցումները և սկզբունքները բարելավելու վրա:

Ամերիաբանկի Խորհրդի կազմում ապահովելով անկախ անդամների մեծամասնությունը՝ մեզ հաջողվեց ձևավորել որոշումների կայացման ավելի արդյունավետ, հավասարակշռված և ապակենտրոնացված մոդել: Խորհրդի յուրաքանչյուր անդամ ստանձնեց հատուկ դեր իր պատասխանատվության շրջանակի ներքո ինչպես Խորհրդի կազմում, այնպես էլ Խորհրդին կից համապատասխան կոմիտեում՝ հիմնվելով իր հմտությունների վրա: Այժմ Խորհրդի անդամներն ակտիվորեն ներգրավված են Բանկի գործունեության տարբեր բնագավառներում, ինչը վստահության մթնոլորտ է ստեղծում և էապես բարելավում է Խորհրդի և գործադիր ղեկավարության միջև հաղորդակցումը և տեղեկատվության փոխանակումը: Դերերի բաշխման և կոմիտեների արդյունավետ աշխատանքի շնորհիվ Խորհուրդը հնարավորություն ստացավ լիարժեք կենտրոնանալ իր հիմնական գործառույթի՝ ռազմավարական պլանավորման վրա՝ միաժամանակ վերանայելով Բանկի գործունեության նպատակը և առաքելությունը:

Մենք գիտակցում ենք Խորհրդի կազմում տարբեր տեսակետներ ունենալու կարևորությունը և գործում ենք միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ հմտորեն համատեղելով օրենսդրական պահանջների պահպանումը Խորհրդի բարձր կատարողականի հետ:

Որպես ֆինանսական շուկայի առաջատար՝ գալիք տարիներին մենք կենտրոնանալու ենք մեր անելիքների և արժեքների, կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման և թափանցիկության, մեր աշխատակիցների նկատմամբ պատշաճ հոգատարության, թիմի բազմազանության, հավասարության և ներառականության ապահովման վրա՝ դրանով իսկ սահմանելով նշաձող և թելադրելով չափորոշիչներ շուկայի մյուս մասնակիցների համար:

Մենք համոզված ենք, որ հմտությունների, փորձի և բազմազանության հավասարակշռված կառուցվածք ունեցող Խորհուրդն առանցքային դեր է կատարում բաժնետերերի համար կայուն արժեք ապահովելու գործում, և կշարունակենք կատարելագործել մեր կորպորատիվ կառավարման համակարգը: Մենք նաև պլանավորում ենք ներդնել Խորհրդի պարբերական գնահատման գործընթաց, ինչը միանշանակ կհանգեցնի կառավարման համակարգի բարելավմանը, դերերի և պարտականությունների ավելի հստակ բաշխմանը, ավելի ճիշտ որոշումների կայացմանը և ընդհանուր առմամբ Խորհրդի ավելի արդյունավետ գործունեությանը:

Անդրեյ Մկրտչյան
Տնօրենների խորհրդի նախագահ

Կորպորատիվ կառավարման կառուցվածք

Բաց և արդյունավետ հաղորդակցումը և Բանկի բաժնետերերի, Տնօրենների խորհրդի, ղեկավարության և այլ շահագրգիռ անձանց շահերի միջև հավասարակշռության պահպանումն Ամերիաբանկի կորպորատիվ կառավարման համակարգի հիմնաքարն են:

Մենք շարունակաբար կատարելագործում ենք կորպորատիվ կառավարման համակարգը՝ հետևելով նոր միտումներին ու կանոններին՝ արդյունավետ ու ամուր կորպորատիվ կառավարում ապահովելու, ինչպես նաև միջազգային լավագույն փորձին և օրենսդրական պահանջներին համապատասխան գործելու նպատակով:

Ամերիաբանկի կորպորատիվ կառավարման համակարգը կազմված է հետևյալ կառավարման մարմիններից՝ Բաժնետերերի ընդհանուր ժողով, որը համարվում է կառավարման գերագույն մարմինը, Տնօրենների խորհուրդ, Խորհրդին կից կոմիտեներ, Տնօրինություն և գլխավոր տնօրեն:



Տնօրենների խորհուրդ

Տնօրենների խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ռազմավարական ղեկավարումը՝ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Տնօրենների խորհրդի նպատակն է ապահովել Բանկի երկարաժամկետ զարգացումն ու հաջողությունը, ինչպես նաև հավասարակշռությունը Բանկի բաժնետերերի, ղեկավարության և այլ շահագրգիռ անձանց շահերի միջև:

2021թ. Տնօրենների խորհուրդն անցկացրեց 21 նիստ, որից 12-ը հեռակա էին՝ քվեարկության և քննարկումների համար նախատեսված հատուկ պորտալի միջոցով: Խորհուրդն անցկացրեց նաև 5 առկա նիստ Բանկի ռազմավարությունը և գործարար ծրագիրը, եռամսյակային հաշվետվությունները և ֆինանսական ցուցանիշները քննարկելու համար: Համավարակով պայմանավորված՝ նիստերն անցկացվում էին Zoom հարթակի միջոցով: Նախանշված օրակարգ և ժամանակացույց ունեցող պաշտոնական նիստերից բացի, Տնօրենների խորհուրդը, Խորհրդին կից կոմիտեները, ինչպես նաև Խորհրդի առանձին անդամներ հանդիպումներ և քննարկումներ են անցկացրել Բանկի գործադիր ղեկավարության և այլ պատասխանատուների հետ առանձին հարցերի շուրջ: 2020-2021թթ. այսպիսի ոչ պաշտոնական հանդիպումներն ավելի հաճախակի են անցկացվել:
Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի և Խորհրդին կից կոմիտեների գործունեությունը կարգավորվում է Խորհրդի և համապատասխան կոմիտեների կանոնակարգերով, որոնք սահմանում են Խորհրդի և կոմիտեների գործունեության հիմնական նպատակներն ու խնդիրները, իրավասությունների շրջանակը, նիստերի նախապատրաստման, հրավիրման և վարման կարգը:

Տնօրենների խորհրդի անդամներին նշանակում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը: Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավել տոկոսին տիրապետող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվել Տնօրենների խորհրդի կազմում առանց ընտրությունների՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Այն չի կարող 5 տարուց պակաս և 10 տարուց ավել լինել: Տնօրենների խորհրդի նախագահն ու անդամներն ունեն վերընտրվելու իրավունք:

Խորհրդի կազմը, անդամների թիվը և որակավորումը, ինչպես նաև փորձառությունն ու հմտություններն անմիջականորեն ազդում են Խորհրդի արդյունավետության վրա: Խորհուրդը պարբերաբար անդրադառնում է այս հարցին՝ հասկանալու համար, թե ինչպիսի մարդիկ են անհրաժեշտ Բանկին ներկայում և կարող են անհրաժեշտ լինել ապագայում՝ արդյունավետ կառավարման համար: Գիտակցելով Խորհրդի կազմում բազմազան հմտություններ և գիտելիք ունենալու բոլոր առավելությունները՝ մենք

Տնօրենների խորհրդում ընդգրկել ենք Բանկն արդյունավետ կերպով ղեկավարելու համար անհրաժեշտ ամենատարբեր ունակություններ և փորձառություն ունեցող մարդկանց: Խորհրդի նոր անդամներ ներգրավելիս՝ մենք հաշվի ենք առնում աշխարհագրական բազմազանությունը, բանկային գործի, ակտիվների կառավարման, խորհրդատվության, ֆինանսների և միջազգային բիզնեսի ոլորտներում հարուստ մասնագիտական փորձը:

Տեղեկատվության և կառավարման գործընթացների՝ ժամանակին և լիարժեք հասանելիությունն էական նշանակություն ունի Խորհրդի արդյունավետության համար: Բանկում ներդրվել է հատուկ Խորհրդի անդամների համար նախատեսված ներքին էլեկտրոնային համակարգ՝ պորտալ: Դա յուրօրինակ անվտանգ միջավայր է, որը հնարավորություն է տալիս Խորհրդի անդամները համագործակցել, մասնակցել Խորհրդի առօրյա աշխատանքին և համակարգել բոլոր փաստաթղթերը (որոշումները, արձանագրությունները, շնորհանդեսները, հաստատումները և հաշվետվությունները) մեկ վայրում, կազմակերպել քվեարկություն, հաղորդակցել Խորհրդի մյուս անդամների հետ, այդ թվում ներկայացնել հաշվետվություններ, փաստաթղթեր և տեղեկություններ և ամփոփել նիստերի արձանագրությունները:

Խորհրդի նախագահը կարևոր դեր է խաղում՝ ապահովելով, որ Խորհրդի բոլոր անդամները լինեն տեղեկացված և հնարավորություն ունենան լիարժեք մասնակցել Խորհրդի բոլոր քննարկումներին: Խորհրդի նախագահն է խթանում արդյունավետ կապը բաժնետերերի և Խորհրդի, ինչպես նաև Խորհրդի և ղեկավարության միջև:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Տնօրենների խորհրդի կազմում ընդգրկված էին Տնօրենների խորհրդի նախագահ-լիազոր անդամն ու 6 անդամ, որոնցից հինգը՝ անկախ:

Անուն, ազգանուն	Պաշտոն	Խորհրդի կազմում ընդգրկվելու տարին
Անդրեյ Մկրտչյան	Տնօրենների խորհրդի նախագահ	**2007**
Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	**2012**
Լինդսի Ֆորբս	Տնօրենների խորհրդի անդամ	**2018**
Ֆիլիպ Լինչ	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	**2018**
Ռիչարդ Օգդոն	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	**2020**
Տիգրան Դավթյան	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	**2020**
Կախաբեր Կիկնավելիձե	Տնօրենների խորհրդի անկախ	**2020**

Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ

Խորհուրդը կոմիտեներին է փոխանցել իրավասությունների լայն շրջանակ և շատ հարցերում հիմնվում է իրենց գործունեության արդյունքների վրա: Տնօրենների խորհրդի ուսումնասիրման կամ հաստատման ենթակա գրեթե ցանկացած նշանակալից հարց նախ պետք է քննարկվի կոմիտեների մակարդակով: Նման մոտեցումը Խորհրդին հնարավորություն է տալիս կայացնել հիմնավորված և արդյունավետ որոշումներ և ժամանակ խնայել ավելի բարձր մակարդակի ռազմավարական խնդիրների համար:

Կոմիտեների գործունեությունը որևէ կերպով չի ազդում Տնօրենների խորհրդի իրավասությունների ու պարտականությունների վրա և չի սահմանափակում Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը: Կոմիտեներն ունեն խորհրդատվական դեր, իսկ վերջնական որոշումները կայացվում են Խորհրդի կողմից:

Ներկայումս Բանկում գործում է Խորհրդին կից չորս կոմիտե՝ Աուդիտի կոմիտե, Ռիսկերի կոմիտե, Վարձատրության կոմիտե և Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե:

	Աուդիտի կոմիտե	Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե	Վարձատրության կոմիտե	Ռիսկերի կոմիտե
Լինդսի Ֆորբս	**Նախագահ**			Անդամ
Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի		Անդամ	**Նախագահ**	
Ռիչարդ Օգդոն	Անդամ			**Նախագահ**
Կախաբեր Կիկնավելիձե		**Նախագահ**	Անդամ	
Տիգրան Դավթյան	Անդամ			Անդամ
Ֆիլիպ Լինչ		Անդամ	Անդամ	
Անդրեյ Մկրտչյան				

Աուդիտի կոմիտե

Կոմիտեի հիմնական նպատակն է վերահսկել Բանկում ֆինանսական հաշվետվողականության, արտաքին աուդիտի և ներքին հսկողության գործընթացները և բարձրացնել դրանց արդյունավետությունը, ինչպես նաև ապահովել բաժնետերերի շահերի պաշտպանությունը:

2021թ. Աուդիտի կոմիտեն անցկացրեց 8 նիստ, որոնց ընթացքում հյուրընկալվեցին Բանկի արտաքին աուդիտն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչները, քննարկվեցին ՖՀՄՍ համաձայն ներկայացվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, ներքին աուդիտի ստորաբաժանման եռամսյակային հաշվետվությունները և ներքին հսկողության համակարգին վերաբերող այլ հարցեր:

Ռիսկերի կոմիտե

Ռիսկերի կոմիտեի հիմնական նպատակն է օժանդակել Տնօրենների խորհրդին ռիսկի ազդեցության, դիրքի և գործոնների վերահսկողություն իրականացնելիս, խորհրդատվություն տրամադրել ռիսկերի ռազմավարության վերաբերյալ, վերահսկել ռիսկերի կառավարման համակարգը և մշակույթը, ապահովել ռիսկերի և ռազմավարության համաժամանակյա կառավարումը, այդ թվում ռիսկի ախորժակի դիտարկումը և ռիսկերի մոնիթորինգը:

2021թ. Ռիսկերի կոմիտեն անցկացրեց 5 նիստ, որոնց ընթացքում ուսումնասիրվել են ռիսկերի կառավարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունները և այլ հարցեր, այդ թվում՝ ռիսկի ախորժակը և Բանկի վերականգնման ծրագիրը:

Վարձատրության կոմիտե

Վարձատրության կոմիտեի հիմնական նպատակն է նպաստել Բանկում ղեկավարության վարձատրության արդյունավետ համակարգի ձևավորմանը, ապահովել վարձատրության քաղաքականության վերահսկումը և բարելավումը, վարձատրության մեխանիզմների արդյունավետ կիրառումը՝ լավագույն ղեկավարներին ներգրավելու և պահելու, ինչպես նաև չարաշահման ցանկացած հնարավորություն բացառելու համար:

2021թ. Վարձատրության կոմիտեն անցկացրեց 3 նիստ: Ըստ սահմանված կարգի՝ նիստեր կայացան կիսամյակային և տարեկան գնահատումից հետո՝ քննարկելու համար անձնակազմի տարեկան պարգևատրման հարցը, ղեկավարների վարձատրությունը և անձնակազմի գնահատման ընդհանուր համակարգը:

Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե

Կոմիտեի գլխավոր նպատակը Բանկի Տնօրենների խորհրդի, վերջինիս կից կոմիտեների և ղեկավարության համար արհեստավարժ, հմուտ, փորձառու, առաքինի մասնագետներից բաղկացած կադրային բազայի ստեղծումն է, կորպորատիվ կառավարման ոլորտում միջազգային լավագույն փորձի ներդնումն օրենսդրական պահանջներին համապատասխան, ինչպես նաև փոխարինելիության անխոչընդոտ ապահովումն ու կադրային բարելավումը:

2021թ. կոմիտեն անցկացրեց 3 նիստ, որոնց ընթացքում քննարկվեցին Խորհրդի անդամների վարձատրությանը ու նրանց աշխատանքային պայմանագրերի պայմաններին վերաբերող հարցեր, փոխարինելիության պլանավորման և այլ ծրագրերի հետ կապված հարցեր, ներկայացվեցին առաջարկություններ:

Տնօրենների խորհրդի անդամներ

Անդրեյ Մկրտչյան

Տնօրենների խորհրդի նախագահ

Անդրեյ Մկրտչյանը Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի նախագահ է նշանակվել 2013թ. նոյեմբերիին:

Պրն Մկրտչյանն ավելի քան 25 տարի է, ինչ ղեկավարում է «Ամերիա» խումբը՝ հանդիսանալով խմբի հիմնադիրն ու նախագահը: Նրա հարուստ փորձը Հայաստանում ներդրումաբանկային գործունեության և կառավարման խորհրդատվության ոլորտներում դարձել է «Ամերիա» խմբի աճի ու զարգացման գրավականը: Անդրեյ Մկրտչյանն առաջին գործարարն է Հայաստանից, որ դարձել է Համաշխարհային տնտեսական համաժողովի նոր առաջնորդների ենթախմբերից մեկի հիմնադիր անդամ: Ա. Մկրտչյանը նաև մի շարք մասնավոր և պետական կազմակերպությունների խորհուրդների անդամ է:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Ստացել է Ամերիկյան տնտեսական ասոցիացիայի (AEA) կրթաթոշակը Կոլորադոյի պետական համալսարանի տնտեսագիտական բաժնում իր գիտական աշխատանքի համար, մասնակցել է մի շարք համալսարանների ծրագրերին, այդ թվում՝ Քինգսթոնի բիզնես-դպրոցի, Հարվարդի բիզնես-դպրոցի, INSEAD-ի և այլն ծրագրերի:

Լինդսի Մ. Ֆորբս

Տնօրենների խորհրդի անդամ

Լինդսի Ֆորբսն Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2018թ. օգոստոսին:

Ունի ավելի քան 40 տարվա փորձ առևտրային և ներդրումային բանկային գործառնությունների ոլորտում, որից ավելի քան 20 տարին՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկում (ՎԶԵԲ):

ՎԶԵԲ-ում աշխատանքի է անցել 1994թ.՝ որպես ավագ բանկիր/երկրների գծով տնօրեն (Կենտրոնական և Արևելյան Եվրոպա, պարտքային և բաժնային գործարքներ, փոխհարաբերություններ կառավարությունների հետ): 2000թ. ստանձնում է կորպորատիվ կապիտալի գծով տնօրենի պաշտոնը և սկսում մասնագիտանալ բաժնային գործարքներում տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: 2012-2016թթ. զբաղեցնում էր Ռուսաստանում արդյունաբերության, առևտրի և գյուղատնտեսության ոլորտներում գործարքների գծով տնօրենի պաշտոնը: ՎԶԵԲ-ում աշխատելու ժամանակ և 2016թ. ամբողջական դրույքով աշխատանքը դադարեցնելուց հետո ներկայացրել է ՎԶԵԲ-ը տասնամյակից ավելի ցուցակված և չցուցակված կազմակերպությունների և բանկերի խորհուրդների և աուդիտի կոմիտեների կազմում տարբեր երկրներում, այդ թվում՝ Խորվաթիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Ղազախստանում, Ռուսաստանում և Եգիպտոսում:

Նախքան ՎԶԵԲ տեղափոխվելը Լ. Ֆորբսը 13 տարի աշխատել է British Linen Bank-ում՝ Bank of Scotland-ի՝ ներդրումային բանկային գործունեության մեջ մասնագիտացող դուստր ընկերությունում՝ զբաղվելով կոմերցիոն վարկավորմամբ և մասնավոր ներդրումներով տարբեր երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում, որտեղ բնակվել է 1988-1991թթ.:

Ձեռք է բերել Norton Rose ընկերության՝ իրավական գործերով հավատարմատարի վկայական (1978) և աշխատել ընկերության առաքումների ֆինանսավորման բաժնում մինչև 1980թ.: Ավարտել է Օքսֆորդի համալսարանը (1975)՝ «իրավագիտություն» մասնագիտությամբ, և INSEAD բիզնես-դպրոցը (1981)՝ ստանալով գործարար կառավարման մագիստրոսի (MBA) կոչում:

Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Ռոբերտ Ֆոն Ռեկովսկին զբաղեցնում է Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամի պաշտոնը 2012թ. հոկտեմբերից:

Համաշխարհային մակարդակով ակտիվների կառավարման ոլորտում շուրջ 30 տարվա փորձառություն ունեցող Ռոբերտ Ֆոն Ռեկովսկին Fidelity Investments ընկերության՝ զարգացող շուկաների ռազմավարության բաժնի փոխնախագահն էր և պորտֆելի կառավարիչ: Կառավարել է ամերիկյան և կանադական ներդրողների մի շարք ինստիտուցիոնալ և մանրածախ ներդրումային հիմնադրամներ զարգացող շուկաներում:

1989թ. ընդունվել է Fidelity Investments ընկերության՝ ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումների ստորաբաժանումը: 1995թ. զարգացող շուկաների պարտքային գործիքների կառավարման խմբի հետ տեղափոխվել է բարձր եկամտաբերությամբ ներդրումների ստորաբաժանում՝ որպես սուվերեն պարտքային գործառնությունների վերլուծաբան: 1996թ-ից մինչև 1998թ. կեսերը ընկերության լոնդոնյան գրասենյակում զբաղվել է եվրոպական շուկայում կապիտալ ներդրումների ուսումնասիրությամբ՝ համատեղելով աշխատանքը վերլուծաբանի պաշտոնի հետ: 2002-2004թթ. եղել է զարգացող շուկաների հիմնադրամների՝ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանների մասով պատասխանատու առաջատար կառավարիչ: 2004թ. տեղափոխվել է Բոստոն, ուր ստանձնել է ընկերության՝ զարգացող շուկաներում կապիտալի ներդրումային հիմնադրամների կառավարումը:

Ավարտել է Նյու-Յորքի նահանգային համալսարանն Օլբանիում (SUNY)՝ ստանալով բակալավրի կոչում «քաղաքագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, ինչպես նաև Հյուսիսարևելյան համալսարանը՝ ստանալով քաղաքագիտության մագիստրոսի աստիճան: Ունի նաև ֆինանսների մագիստրոսի կոչում, որն ստացել է Բրենդայզ համալսարանում:

Ֆիլիպ Լինչ

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Ֆիլիպ Լինչն Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամ է 2018թ. հոկտեմբերից:

Ֆ. Լինչը ֆինանսների աշխարհում է ավելի քան 30 տարի, որից շուրջ 20 աշխատել է Lehman Brothers-ում՝ նախ որպես վերլուծաբան, հետո՝ Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տարածաշրջանի գծով ներդրումային գործառնությունների բաժնի համաղեկավար (1999-2002), Եվրոպայի գծով ֆինանսական գործառնությունների բաժնի ղեկավար (2003-2006), Եվրոպայի գծով բաժնային կապիտալի բաժնի համաղեկավար (2007-2008):

Lehman Brothers-ի՝ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Ասիայի հիմնարկները Nomura-ին վաճառելուց հետո Ֆ. Լինչն ստանձնեց Nomura-ի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի գծով (2008-2009), այնուհետև՝ Ասիա-Խաղաղ օվկիանոս տարածաշրջանի և Մերձավոր Արևելքի գծով (2010-2012):

2013-ից ի վեր Ֆ. Լինչը Stem Capital Partners-ի հիմնադիր գործընկերն է: Stem Capital Partners-ն ուղղակի ներդրումներով զբաղվող անկախ ընկերություն է, որը ֆինանսական և մասնագիտական ծառայություններ է իրականացնում Ասիայում:

Ավարտել է ԱՄՆ Յեյլի համալսարանը՝ «պատմագիտություն» մասնագիտությամբ (1987):

Ռիչարդ Օգդոն

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Ռիչարդ Օգդոնը Տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2020թ. հուլիսին:

Պարոն Օգդոնն ունի 30 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական ոլորտում: Նա բարձր պաշտոններ է զբաղեցրել ներդրումաբանկային ծառայություններ տրամադրող, կապիտալ ներդրումներ իրականացնող մասնավոր և ֆինտեխ ոլորտի ընկերություններում՝ մասնագիտանալով հատկապես Ռուսաստանի և ԱՊՀ երկրների ֆինանսական շուկաների զարգացման ուղղությամբ:

2012-2018թթ հանդիսացել է Միացյալ Թագավորության ֆինանսական ոլորտի վերահսկման մարմնի կողմից վերահսկվող, բրոքերային գործառնություններ իրականացնող Sova Capital (նախկինում՝ Otkritie) ընկերության խորհրդի անկախ անդամ և խորհրդին կից աուդիտի կոմիտեի նախագահ:

2000-ականներին Ռիչարդ Օգդոնն աշխատել է Մոսկվայում՝ Ռուսաստանի առաջատար «Տրոյկա Դիալոգ» անկախ ներդրումային բանկում, որտեղ 2003-2005թթ. զբաղեցրել է ներդրումային բանկինգի վարչության ղեկավարի պաշտոնը, ապա հանդիսացել է ռիսկերի և կապիտալի կառավարման գծով տնօրենը (2006-2011թթ.):

Պարոն Օգդոնն իր աշխատանքային գործունեությունն սկսել է 1987թ. UBS Warburg բանկում, որտեղ աշխատել է 13 տարի՝ մինչև 2000թ.՝ սկզբնավորելով բանկի գործունեությունը Ռուսաստանում (1992թ.) և հիմնադրելով բանկի գրասենյակը Մոսկվայում (1994թ.):

Ռ. Օգդոնն աշխատել է նաև կրթության ոլորտում՝ իր հաճախած Իթընն քոլեջում (2013թ.) և Քեմբրիջի «Կարիերայի հետազոտության խորհրդատվական կենտրոնում» (2000-2003թթ.)՝ օգնելով այդ երկու կազմակերպություններին կրթական նոր ծրագրերի համար դրամական միջոցների ներգրավման գործում:

Պարոն Օգդոնը հանդիսանում է Ռուսաստանի «Անկախ տնօրենների ասոցիացիայի» դիտորդ խորհրդի անդամ և համաշխարհային մարդասիրական նախաձեռնություն «Ավրորա» ֆորումի բարի կամքի միջազգային դեսպան:

Ավարտել է Օքսֆորդի համալսարանի Լինքոլնի քոլեջի դասական և ժամանակակից լեզուների ֆակուլտետը, ստացել է բակալավրի աստիճան (1984-1987թթ.):

Կախաբեր Կիկնավելիձե

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Կախաբեր Կիկնավելիձեն Տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2020թ. հուլիսին:

Պարոն Կիկնավելիձեն ունի առևտրային և ներդրումային բանկային ոլորտում ավելի քան 25 տարվա աշխատանքային փորձ: 2016-2019թթ. գբաղեցրել է Վրաստանի առաջատար ֆինանսական հաստատության՝ «Վրաստանի բանկի խումբ» (Bank of Georgia Group) ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնը, իսկ 2019թ. մինչև 2020թ. փետրվար ամիսը հանդիսացել է նույն ընկերության գլխավոր տնօրենի և տնօրենների խորհրդի խորհրդականը ռազմավարական և գործառնական հարցերով:

Մինչ այդ՝ 2008-2016թթ., պրն Կիկնավելիձեն եղել է Վրաստանի բանկային խմբի տնօրենների խորհրդի անկախ անդամ և աուդիտի ու ռիսկերի կառավարման կոմիտեների անդամ:

2007-2016թթ. հանդիսացել է Մեծ Բրիտանիայում գրանցված «Ռիոնի Քեփիթլ Փարթներս» ներդրումային ընկերության ղեկավար-գործընկերը և ներդրումների գծով տնօրենը:

Կ. Կիկնավելիձեն ունի կապիտալի շուկաներում աշխատանքային հարուստ փորձ: Նա գբաղեցրել է UBS ընկերության գործադիր տնօրենի պաշտոնը՝ 2005-2007թթ. ղեկավարելով Ռուսաստանի նավթի և գազի շուկաների գծով վերլուծություններ իրականացնող խմբի աշխատանքը: Նախքան UBS-ում աշխատանքի անցնելն ութ տարի աշխատել է «Տրոյկա Դիալոգ» ընկերությունում մետաղների, հանքային արդյունաբերության և կոմունալ ծառայությունների ոլորտների գծով, ապա հանդիսացել է հետազոտությունների վարչության ղեկավարի տեղակալը՝ համակարգելով նավթագազային ոլորտի մասնագետների թիմի աշխատանքը: Մինչ այդ աշխատել է ԱՄՆ-ում գործող «Legacy Investment Group» ներդրումային ընկերությունում՝ զբաղեցնելով ներդրումների գծով խորհրդատուի պաշտոնը:

Կ. Կիկնավելիձեն իր աշխատանքային գործունեությունն սկսել է 1994թ. «Վրաստանի բանկում» (Bank of Georgia)՝ որպես ֆինանսական գծով տնօրեն:

Ավարտել է Վրաստանի գյուղատնտեսական համալսարանը (Թբիլիսի, Վրաստան)՝ ստանալով տնտեսագիտության բակալավրի աստիճան, և Էմորիի համալսարանը (ԱՄՆ, Ջորջիա նահանգ)՝ ստանալով բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան:

Տիգրան Դավթյան

Տնօրենների խորհրդի անկախ

Տիգրան Դավթյանն Տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2020թ. հուլիսին:

Ունի աշխատանքային հարուստ փորձ Հայաստանի ֆինանսական ոլորտում, ինչպես նաև դասախոսական փորձ՝ ՀՀ առաջատար բուհերում:

Զբաղեցրել է ղեկավար պաշտոններ ՀՀ առևտրային բանկերում՝ եղել է «Ինեկոբանկ» ՓԲԸ տնօրինության նախագահ, գործադիր տնօրեն (2018-2019թթ.), «Կոնվերս Բանկ» ՓԲԸ տնօրինության նախագահ, գործադիր տնօրեն (2009-2016թթ.): Մինչ այդ զբաղեցրել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ գործադիր տնօրենի տեղակալի, ֆինանսական շուկաների վարչության ղեկավարի պաշտոնը (2008-2009թթ.):

2016-2018թթ. Տ. Դավթյանն աշխատել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում՝ որպես ֆինանսական քաղաքականության վարչության ղեկավար:

Ղեկավարել է USAID/EMG Հայաստանում ֆինանսական շուկաների զարգացման ծրագրի (2006-2008թթ.), ինչպես նաև USAID/IBM BCS Հայաստանում կապիտալի շուկաների զարգացման ծրագրի (2002-2004թթ.) աշխատանքային խմբերը:

1999-2002թթ. Տ. Դավթյանը զբաղեցրել է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի վարչության նախագահի պաշտոնը: Մինչ այդ հանդիսացել է ՀՀ վարչապետի խորհրդականը ֆինանսական շուկաների գծով (1998-1999թթ.):

Պարոն Դավթյանն իր աշխատանքային գործունեությունն սկսել է 1991թ.՝ որպես ներդրումային ընկերության գլխավոր տնօրեն, ապա աշխատել է ՀՀ Կենտրոնական բանկում, որտեղ զբաղեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ (1994-1998թթ.):

Զբաղեցրել է ծրագրի ղեկավարի և տնօրենի պաշտոնը «Էներգաինվեստ» ԾԻԳ-ում՝ ՀԲ/ՄՀՃԲ Էլեկտրահաղորդման և փոխանցման ծրագրի ներքո (2004-2006թթ.):

Եվրասիական համագործակցության ֆինանսաբանկային ասոցիացիայի համակարգող խորհրդի անդամ էր (2016-2020թթ.), ինչպես նաև Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ (2017-2020թթ.):

Ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետ-մաթեմատիկոսի որակավորում: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու է:

Տնօրինություն և գլխավոր տնօրեն

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ Տնօրինությունն ու գլխավոր տնօրենը: Տնօրինության կազմի մեջ են մտնում նախագահը և 6 անդամ (այդ թվում՝ գլխավոր տնօրենի տեղակալը և գլխավոր հաշվապահը): Գլխավոր տնօրենին և վերջինիս ներկայացմամբ՝ Տնօրինության անդամներին նշանակում է Տնօրենների խորհուրդը: Տնօրինության և գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում Բանկի ընթացիկ գործունեությանը վերաբերող բոլոր հարցերը, բացառությամբ Բանկի կանոնադրությամբ և այլ ներքին իրավական ակտերով այլ մարմինների բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

Արտակ Հանեսյան

Տնօրինության նախագահ - գլխավոր տնօրեն

Գլխավոր տնօրենն է 2007թ. հոկտեմբերից ի վեր: 2008թ. ապրիլից առ այսօր զբաղեցնում է «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենի պաշտոնը:
Ա. Հանեսյանն ունի ՀՀ բանկային համակարգում բարձրագույն ղեկավար պաշտոններում աշխատելու հարուստ փորձ: Այս ոլորտում նա աշխատում է ավելի քան 25 տարի: Աշխատանքային ուղին սկսել է «Արմինվեստբանկ» ՓԲԸ-ում որպես վարկային մասնագետ (1993-1994թթ.), մի շարք կարևոր պաշտոններ է զբաղեցրել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում, ներառյալ գլխավոր տնօրենի (2006-2007թթ.), գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնները, համակարգել է վարկավորման, առևտրային գործառնությունների և թղթակցային հարաբերությունների վարչությունները (1998-2006թթ.): Իր աշխատանքային գործունեության սկզբում աշխատել է ՀՀ Կենտրոնական բանկում հետևյալ պաշտոններում՝ Վերահսկողության, կարգավորման և արտոնագրման վարչության մասնագետ, ավագ մասնագետ, Վերահսկողության վարչության առաջին բաժնի պետ (1995-1998թթ.): Եղել է Հայաստանում Բազելյան կոմիտեի քարտուղարության ղեկավարը: Ներկայում պարոն Հանեսյանը նաև Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է:
1995թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը (տնտեսագետի որակավորմամբ)՝ ստանալով մագիստրոսի կոչում:

Գևորգ Թառումյան

Տնօրինության անդամ, գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական գծով տնօրեն

Տնօրինության անդամ է 2012թ. օգոստոսից:

1992թ. ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտը, 2004թ. մասնակցել Լոնդոնի Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի՝ ղեկավարների համար նախատեսված դասընթացին:

Գ. Թառումյանն ունի հայկական բանկերում և միջազգային/տարածաշրջանային բանկերի հայաստանյան մասնաճյուղերում գլխավոր տնօրենի տեղակալի և ֆինանսական տնօրենի պաշտոններում աշխատելու շուրջ 23 տարվա փորձ: Բանկային համակարգում իր գործունեությունն սկսել է 1994թ. ՀՀ Կենտրոնական բանկի Վերահսկողության ծառայությունում, որտեղ զբաղեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ, ինչպես նաև համակարգել Միջին Ասիայի և Կովկասի բանկերի վերահսկողության Բազելյան կոմիտեի տարածաշրջանային խմբի աշխատանքը Հայաստանում: 1999թ. տեղափոխվել է Հայներարտբանկ որպես ֆինանսական տնօրեն, իսկ 2006թ. նշանակվել է գլխավոր տնօրենի տեղակալ: Աշխատել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում որպես գլխավոր տնօրեն-Տնօրինության նախագահի տեղակալ և ֆինանսական տնօրեն (2007-2008թթ.), ինչպես նաև «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում՝ որպես գլխավոր ֆինանսական տնօրեն: 2012թ. մարտին նշանակվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ: 2012թ. հունիսից Գևորգ Թառումյանն աշխատում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում որպես գլխավոր տնօրենի տեղակալ և ֆինանսական գծով տնօրեն:

Բանկային համակարգում աշխատանքը Գևորգ Թառումյանը համատեղել է դասախոսական գործունեության հետ՝ բանկային համակարգի աշխատողների համար կարդալով դասախոսություններ ֆինանսական վերլուծության և ռիսկերի կառավարման թեմաներով: Հանդիսանում է բանկային գործի, ֆինանսական վերլուծության և ռիսկերի կառավարման վերաբերյալ մի շարք դասագրքերի հեղինակ և համահեղինակ:

Գագիկ Սահակյան

Տնօրինության անդամ, կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն

Տնօրինության անդամ է 2012թ. փետրվարից:

1995թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: 1995-1997թթ. ուսումը շարունակել է Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնեսի և կառավարման ֆակուլտետում և ստացել գործարար կառավարման մագիստրոսի կոչում: Գ. Սահակյանը մասնակցել է մի շարք մասնագիտական դասընթացների, այդ թվում՝ Հարվարդի համալսարանի Քենեդի կառավարման դպրոցում (2004թ.) և Հարվարդի համալսարանի բիզնեսի դպրոցում (2018թ.):

Գ. Սահակյանն ունի Հայաստանում որպես խորհրդական և ղեկավար աշխատելու մեծ փորձ: Նա Ամերիա թիմում է եղել ընկերության սկզբնավորման օրից՝ նախ աշխատելով որպես ավագ խորհրդական, իսկ հետո՝ գործընկեր և կառավարման խորհրդատվության բաժնի ղեկավար (1999-2012թթ.): Մասնակցելով Հայներարտբանկի ձեռքբերման ամբողջ գործընթացին՝ Ամերիաբանկում ստանձնել է կարևոր պաշտոններ՝ խորհրդական (2008-2010թթ.), կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն (2010-2012թթ.), Տնօրինության անդամ - կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն (2012-2019թթ.), Տնօրինության անդամ - կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն (2019 թ-ից առ այսօր):

Արման Բարսեղյան

Տնօրինության անդամ, մանրածախ բանկինգի տնօրեն

Տնօրինության անդամ է 2012թ. սեպտեմբերից:

Ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ «Համաշխարհային էկոնոմիկա» մասնագիտացմամբ: Ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում:

Ա. Բարսեղյանն ավելի քան 20 տարի է, ինչ աշխատում է մանրածախ բանկային ոլորտում՝ կուտակելով հարուստ փորձ: Աշխատանքային ուղին սկսել է 1997թ. «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում որպես ֆինանսական վերահսկողության բաժնի մասնագետ: Այնուհետև զբաղեցրել է տարբեր պաշտոններ, մասնավորապես՝ ֆինանսական վերահսկողության բաժնի գործառնությունների կառավարիչ (2001-2004թթ.), մասնաճյուղի կառավարիչ (2004-2008թթ.) և մանրածախ ծառայությունների դեպարտամենտի տնօրեն (2008-2012թթ.):

2012թ. հունիսին ստանձնել է Ամերիաբանկի մանրածախ բանկինգի տնօրենի պաշտոնը:

Գոհար Խաչատրյան

Տնօրինության անդամ, գլխավոր հաշվապահ

Գոհար Խաչատրյանը Ամերիաբանկի գլխավոր հաշվապահն է և Տնօրինության անդամը 2008թ-ից:

Ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ տնտեսագետի որակավորմամբ:

Ծուրջ 30 տարի է, ինչ աշխատում է բանկային համակարգում՝ ստանձնելով առանցքային պաշտոններ ինչպես կարգավորող մարմնում, այնպես էլ մասնավոր բանկերում:

Գոհար Խաչատրյանն իր աշխատանքային ուղին սկսել է ՀՀ Կենտրոնական բանկում, որտեղ զբաղեցրել է հետևյալ պաշտոնները՝ Գործառնական վարչության հաշվեգործառնական բաժնի հաշվապահ (1990-1992թթ.), Գործառնական վարչության տնտեսագիտական վերլուծությունների բաժնի տնտեսագետ (1992-1994թթ.), այնուհետև գլխավոր տնտեսագետ (1994թ.) և Վերահսկողության դեպարտամենտի առաջատար մասնագետ (1994-2000թթ.):

Այնուհետև տեղափոխվել է «Հայներարտբանկ» ՓԲԸ, ներկայումս՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, որտեղ աշխատելով առ այսօր՝ զբաղեցրել է հետևյալ պաշտոնները. Ֆինանսական դեպարտամենտի Հաշվեկշիռների և հաշվետվությունների վերլուծության վարչության պետ (2000թ.), Ֆինանսական հաշվետվությունների և ծախսերի վերահսկման վարչության պետ (2000-2001թթ.), Ֆինանսական դեպարտամենտի կառավարչական հաշվապահության վարչության պետ (2001-2003թթ.), գլխավոր կառավարչական հաշվապահ (2003-2006թթ.), գլխավոր հաշվապահ-կառավարչական հաշվապահության ղեկավար (2006-2008թթ.): Ամերիա Խմբի կողմից Հայներարտբանկի ձեռքբերումից հետո՝ 2008թ., նշանակվել է Տնօրինության անդամ-գլխավոր հաշվապահ (2008թ-ից առ այսօր):

Բանկային համակարգում աշխատանքը համատեղել է դասախոսական գործունեության հետ: Հաշվապահությանը վերաբերող մի շարք հրապարակումների համահեղինակ է:

Անդրանիկ Բարսեղյան

Տնօրինության անդամ, ռիսկերի կառավարման գծով տնօրեն

Տնօրինության անդամ է 2009թ. դեկտեմբերից:

Ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) «Հաշվիչ տեխնիկա և ինֆորմատիկա» ֆակուլտետը, ՀՊՃՀ մագիստրատուրան, այնուհետև՝ ասպիրանտուրան՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Անդրանիկ Բարսեղյանը մի շարք գիտական հոդվածների և հրապարակումների, այդ թվում՝ բանկային ռիսկերի կառավարման խնդիրներին վերաբերող նյութերի (նաև միջազգային) հեղինակ է:

Ա. Բարսեղյանը բանկային գործի, տնտեսագիտության և ռիսկերի կառավարման ոլորտի կարկառուն ներկայացուցիչ է: Աշխատանքային գործունեությունը բանկային տեխնոլոգիաների ոլորտում սկսել է 1995թ. «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում, որտեղ 1995-2002թթ. աշխատել է սկզբում որպես Իրացվելիության և ռեսուրսների կառավարման բաժնի պետ Բանկային տեխնոլոգիաների ավտոմատացման կառավարչությունում, այնուհետև որպես Բանկային ռիսկերի կարգավորման վարչության պետ և վերջապես որպես Ավտոմատացման վարչության պետ: 2003թ-ից աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ, այնուհետև՝ Ռիսկերի կառավարման վարչության պետ, բանկի Վարչության անդամ: «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում աշխատանքի է անցել 2009թ.՝ որպես Ռիսկերի կառավարման գծով տնօրեն և Տնօրինության անդամ:

Արմինե Ղազարյան

Տնօրինության անդամ, տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն

Տնօրինության անդամ է 2019թ. հոկտեմբերից:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը՝ «Արևելյան լեզուներ և գրականություն» մասնագիտացմամբ (1999թ.): 2009թ. ավարտել է ՀՀ Պետական կառավարման ակադեմիան «Հանրային կառավարում» մասնագիտությամբ:

Մասնակցել է միջազգային ճանաչում ունեցող մի շարք հաստատությունների մասնագիտական դասընթացների ու միջոցառումների (Սթենֆորդի համալսարանի բիզնես-դպրոց, «Սկոլկովո» բիզնես-դպրոց, «Օքսֆորդ Թրեյնինգ», Սբերբանկի կորպորատիվ համալսարան, KFW բիզնես-դպրոց, Սիլիկոնյան հովտի կազմակերպություններ, եվրոպական 15 առաջատար բանկ, Համաշխարհային տնտեսական համաժողով և այլն):

Ա. Ղազարյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 2001թ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Վարկային վարչության գործավար: 2004-2008թթ. իր մասնագիտական աճը շարունակել է մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում նույն բանկում որպես Անձնակազմի կառավարման բաժնի ղեկավար: 2008թ. հոկտեմբերին նշանակվել է Ամերիաբանկի Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար:

Հաշվի առնելով տիկին Ղազարյանի՝ մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում ունեցած հարուստ փորձն ու առաջնորդության հմտությունները՝ 2019թ. մայիսին նշանակվել է Ամերիաբանկի տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն: Նույն թվականի հոկտեմբերից զբաղեցնում է Տնօրինության անդամի, տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրենի պաշտոնը:

Կազմակերպական կառուցվածք



Մեր անձնակազմը

Ընդհանուր ակնարկ

Որպես Հայաստանի լավագույն գործատուներից մեկը՝ Ամերիաբանկը նպատակա ուղղված է լինել մարդակենտրոն, արդյունավետ և փոփոխություններ իրականացնող կազմակերպություն: Մեր հաջողության անկյունաքարն է մոտիվացված ու նպատակասլաց մարդկանցից բաղկացած երազանքի թիմը և արժեքահենք մշակույթը: Մենք ձգտում ենք շարունակական զարգացման, գիտելիքի փոխանակման, փոխադարձ աջակցության ու աճի: Մենք վստահ ենք, որ արդյունավետ թիմ ունենալու համար անհրաժեշտ է մոտիվացնել մարդկանց, ներգրավել նրանց ու հնարավորություն տալ շարունակաբար զարգանալու, ինչը նպաստում է թե՛ հաճախորդների, թե՛ բաժնետերերի գոհունակության մակարդակի բարձրացմանը:

Կարևորելով անձնակազմի բազմազանությունը՝ մենք համախմբել ենք տարբեր որակավորումներ, հատկանիշներ և փորձ ունեցող մարդկանց, որոնք վայելում են հավասար հարգանք և վերաբերմունք՝ անկախ սեռից, տարիքից, քաղաքական կամ կրոնական հայացքներից, ֆիզիկական կարողություններից կամ սոցիալական կարգավիճակից:

Որպես մարդակենտրոն ընկերություն՝ կորոնավիրուսի համավարակի ողջ ընթացքում մենք ձեռնարկում էինք մի շարք միջոցներ՝ մեր հաճախորդների և աշխատակիցների անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու համար:

Տաղանդների ներգրավում

Ամերիաբանկը ողջունում է եռանդուն, մոտիվացված, նպատակասլաց, հավակնոտ և նորարար անձանց, որոնք ցանկանում են միանալ Երազանքի թիմին, և պատրաստ է ներդրում կատարել նրանց մասնագիտական աճի մեջ: Այս նպատակով մենք լայնորեն կիրառում ենք մենթորների ինստիտուտը՝ ինչպես սկսնակ, այնպես էլ փորձառու մասնագետների սահուն ադապտացման և ինտեգրման համար: Մենք համոզված ենք, որ այս մոտեցման շնորհիվ ստեղծում ենք ավելի դինամիկ թիմ՝ դրանով իսկ բարձրացնելով ընդհանուր արդյունավետությունը:

Նոր տաղանդներ բացահայտելու և ներգրավելու նպատակով Ամերիաբանկը համագործակցում է Հայաստանի և Սփյուռքի լավագույն բուհերի հետ:

Համավարակի պայմաններում համալրման գործընթացը բավականին դժվարացավ, սակայն մենք արագ վերանայեցինք մեր համալրման ընթացակարգերը և մոտեցումները՝ ապահովելով գործունեության անընդհատությունը և բոլոր ծրագրերի իրականացումը՝ չնայած սահմանափակումներին: Մասնավորապես, մենք սկսեցինք ակտիվ կերպով կիրառել թվային և հեռավար ուղիները:

Հավատարիմ մնալով երիտասարդ մասնագետների ներգրավելու և վերապատրաստելու մեր նախաձեռնությանը՝ մենք շարունակեցինք ներգրավել ուսանակների և 13-րդ անգամ իրականացրինք «Ամերիա Սերունդ» ծրագիրը: Արդյունքում, 930 դիմողից 26-ը միացան մեր թիմին: Ծրագիրը հոյակապ հնարավորություն է ընձեռում 20-27 տարեկան նորավարտ մասնագետներին՝ ստանալու տեսական և գործնական գիտելիքներ ֆինանսական ոլորտի և բանկային գործի վերաբերյալ, աշխատանքային միջավայրում շփվելու փորձառու մասնագետների հետ:

Կարևորելով հարաբերությունները Սփյուռքի հետ՝ մենք ակտիվորեն համագործակցում ենք զանազան հիմնադրամների հետ և պրակտիկայի ու աշխատանքի հնարավորություն ստեղծում վերոնշյալ թիրախային խմբի համար՝ խրախուսելով տաղանդավոր հայ երիտասարդների վերադարձը Հայաստան և իրենց ներդրումը հայրենիքի բարգավաճման գործում՝ արտերկրում կրթություն ստանալուց հետո: Սփյուռքից մասնագետների ներգրավելու նպատակներից մեկը նաև տնտեսական աճին նպաստելն է, քանի որ նրանք Հայաստան են բերում միջազգային փորձն ու գիտելիքը: 2021թ. 48 տաղանդավոր երիտասարդներ հեռակա կարգով պրակտիկա անցան Ամերիաբանկում՝ զարգացնելով հմտություններն ու գիտելիքը:

Մենք շարունակում էինք ակտիվ կերպով ներկայացնել մեր ընկերությունը տարբեր համայնքներում և համալսարաններում: 2021թ. մենք մասնակցեցինք SS համայնքի համար կազմակերպված մի շարք միջոցառումների (Bar Camp, Data Fest, React կոնֆերանս), ինչպես նաև գործընկեր համալսարաններում սկսնակ մասնագետների համար իրականացված միջոցառումներին:

Տաղանդների ներգրավման գործընթացում Բանկը մեծ դեր է տալիս ներքին առաջխաղացմանը՝ խրախուսելով իր աշխատակիցներին ինչպես պաշտոնի առաջխաղացման, այնպես էլ մասնագիտացումը փոխելու գործում: 2021թ. աշխատակիցների 22%-ն ունեցել է առաջխաղացում: 2021թ. մեր թիմին միացավ 216 նոր անդամ, ինչի արդյունքում աշխատակիցների ընդհանուր թիվը կազմեց 1,157:

Անձնակազմի համալրման ընթացքում մենք դիտարկում ենք նաև սահմանափակ կարողություններով անձանց թեկնածությունը և ընտրությունը կատարելիս բացառում որևէ խտրականություն: Ավելին, մենք ձգտում ենք բարելավել մեր աշխատավայրը՝ թիմի բոլոր անդամների համար ստեղծելով հավասար հնարավորություններ:

Տաղանդների կառավարում

Բանկի արդյունավետության կառավարման համակարգի նպատակն է աշխատակիցների համար սահմանել կազմակերպության ռազմավարական նպատակներին համահունչ նպատակներ, ապահովել ռազմավարության իրականացումն ու աշխատակիցների շարունակական զարգացումը, գնահատանքն ու հավատարմությունը: Հստակ դրված նպատակներն իմաստավորում են աշխատանքը, սահմանում գործունեության չափանիշներ և օգնում գնահատել ռազմավարական նպատակների իրագործման

առաջընթացը արդյունավետության հիմնական չափանիշների (KPI) միջոցով, նպաստում են արժեքների վրա հիմնված վարքագծի, հետադարձ կապի մշակույթի ձևավորմանը և խթանում անձնական զարգացումը՝ «360 աստիճան» կորպորատիվ գնահատման համակարգի միջոցով:

Բանկում գործում են արդյունավետության կառավարման համակարգի հետ փոխկապակցված մի շարք գործընթացներ, ինչպիսիք են տաղանդների կառավարումը և փոխարինելիության ապահովումը: Տաղանդների կառավարման նպատակն է բացահայտել առավել արդյունավետ աշխատակիցներին, մշակել անհատական զարգացման ծրագրեր, պահել և մոտիվացնել աշխատակիցներին: Փոխարինելիության կառավարման նպատակն է բացահայտել և զարգացնել ներքին տաղանդներին առավել կարևոր նշանակություն ունեցող դերերի համար՝ դրանով ապահովելով բիզնեսի անընդհատությունը և աճը:

Մենք խրախուսում ենք բարձր էթիկական արժեքները, հարգանքը մարդու իրավունքների հանդեպ և բաց հաղորդակցումը: Մենք ներդրել ենք բողոքների ներկայացման և խախտումների մասին ահազանգման համակարգեր՝ ապահովելով էթիկայի և գործարար վարքագծի կանոնների պահպանումը: Մենք պարբերաբար գնահատում ենք աշխատակիցների ներգրավվածության աստիճանը և ելնելով գնահատման արդյունքներից մշակում գործողությունների նպատակային ծրագրեր: Մենք նաև վարում ենք ամենօրյա ներքին հաղորդակցություն, կազմակերպում կորպորատիվ միջոցառումներ, իրականացնում բարեկեցության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր:

Ուսուցում և վերապատրաստում

Մենք շարունակաբար ներդրումներ ենք կատարում մեր աշխատակիցների մասնագիտական զարգացման մեջ՝ խրախուսելով նրանց ինքնազարգացումը և կազմակերպելով տարբեր դասընթացներ: Մենք նաև աջակցում ենք մեր աշխատակիցներին՝ ֆինանսավորելով նրանց մասնակցությունը վերապատրաստման ու հավաստագրման ծրագրերին: Վերապատրաստման ծրագրերում առանձնահատուկ տեղ են գրավում բարձր և միջին օղակի ղեկավարության համար կազմակերպվող սեմինար-քննարկումները, որոնք վարում են համաշխարհային ճանաչում ունեցող մասնագետներ, այդ թվում՝ հայտնի բիզնես-դպրոցների հիմնադիրներ:

Ամերիաբանկը համագործակցում է տարբեր միջազգային կազմակերպությունների հետ՝ իր աշխատակիցներին ընձեռելով հնարավորություն ակտիվորեն մասնակցելու հեռավար ուսուցման ծրագրերի, ինչը հատկապես արդիական է համավարակի պայմաններում, և ստանալու միջազգային ճանաչում ունեցող այնպիսի հաստատությունների հավաստագրեր, ինչպիսիք են Հարվարդի բիզնես-դպրոցը, Սթենֆորդի բիզնես-դպրոցը, Chartered Management Institution-ը, CFA Institute-ը, ACCA-ը, PMP-ն և այլն:

Համավարակի պատճառով վերջին երկու տարիները դժվարին էին ուսուցման և վերապատրաստման առումով, բայց միևնույն ժամանակ բացվեցին զարգացման նոր հորիզոններ և դեպի թվայնացում ընթանալու հնարավորություններ՝ մեր նպատակներին համահունչ: Մենք արագ անցանք առցանց ուսուցման՝ բարձրացնելով մեր աշխատակիցների մասնակցությունը հեռավար եղանակով իրականացվող միջազգային համաժողովներին: Մենք նաև մեծ ուշադրություն էինք դարձնում ներքին դասընթացներին՝ ընդլայնելով Բանկի պրոդուկտների ու գործընթացների մասին գիտելիքները, բարձրացնելով սպասարկման որակը և խթանելով ներքին ուսուցման ռեսուրսները:

Չնայած ողջ տարվա ընթացքում գործող սահմանափակումներին և ճամփորդական խիստ կարգավորումներին՝ Ամերիաբանկը շարունակում էր ներդրումներ կատարել տարբեր միջոցառումներում՝ հավատարիմ մնալով իր սկզբունքներին և կարևորելով աշխատակիցների շարունակական զարգացումը: Ընդհանուր առմամբ, 2021թ. կազմակերպվել է ավելի քան 250 դասընթաց:

2021թ. ուսուցման և վերապատրաստման արդյունքները ներկայացված են ստորև.

- Մասնակցություններ ուսուցման ծրագրերում՝ 7,118
- Տարբեր դասընթացներին և զարգացման միջոցառումների մասնակցության ժամեր՝ 27,000
- Մեկ աշխատակցին 2021թ. բաժին ընկնող վերապատրաստումների/դասընթացների միջին քանակը՝ 6
- Մեկ աշխատակցին 2021թ. բաժին ընկնող վերապատրաստումների ժամերի միջին քանակը՝ 23
- Դասընթացների ժամաքանակի 44%-ը նվիրված էր ներքին վերապատրաստումներին, Բանկի պրոդուկտների և գործընթացների մասին գիտելիքի ընդլայնմանը, ինչպես նաև սպասարկման որակի բարձրացմանը:
- Դասընթացների ժամաքանակի 28%-ը ծախսվել է անձնակազմի մասնագիտական զարգացման և հավաստագրումների վրա:
- իսկ 15%-ը՝ թվային հմտությունների զարգացման և տեխնոլոգիական ոլորտի տարբեր միջոցառումներին մասնակցության վրա:

Արտոնությունների փաթեթ

Գրավիչ վարձատրությունը և արտոնությունների լավ փաթեթն ապահովում են աշխատակիցների մոտիվացման և ներգրավվածության բարձր մակարդակ, որի շնորհիվ Ամերիաբանկն ընկալվում է որպես Հայաստանի ֆինանսական շուկայի լավագույն գործատուն: Մենք գիտակցում ենք, որ որքան ուժեղ է մոտիվացումը, այնքան ավելի նվիրված ու հավատարիմ են աշխատակիցները կազմակերպության առաքելությանը, արժեքներին ու նպատակներին:

Կարևորելով աշխատակիցների մոտիվացումն ու երջանկությունն աշխատավայրում՝ մենք առաջարկում ենք խրախուսման լայն համակարգ ու մշտապես բարելավում այն: Մասնավորապես, Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է հատուկ զեղչեր տարբեր մշակութային վայրերում, ռեստորաններում և խանութներում, ինչպես նաև սպորտային ակումբների հատուկ առաջարկներ ի նպաստ առողջ կենսակերպի: Մենք մեր աշխատակիցներին ենք առաջարկում առողջության, ճանապարհորդության և դժբախտ պատահարներից ապահովագրություն, վճարվող բացակայություն հիվանդանալու դեպքում, երեխայի խնամքի վճարվող արձակուրդ և բացակայություն անձնական նպատակների համար՝ աշխատավարձի պահպանմամբ: Բացի այդ, մենք առաջարկում ենք մեր աշխատակիցներին բանկային գործառնությունների արտոնյալ պայմաններ, ինչը նրանց թույլ է տալիս օգտվել Բանկի ծառայություններից՝ նվազագույն ծախս կատարելով, իսկ շատ հաճախ նաև բոլորովին անվճար:

Մենք ակտիվորեն մասնակցում ենք մեր երկրում անցկացվող տարբեր սոցիալական միջոցառումների, այդ թվում՝ ֆինանսական հաստատությունների միջև անցկացվող չեմպիոնատներին, մրցույթներին ու սպորտային միջոցառումներին, ինչպիսիք են շախմատի մրցաշարը, ֆուտբոլի, բոուլինգի ու վոլեյբոլի մրցումները, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղը և այլն: Բանկը խրախուսում է նաև աշխատակիցների ներգրավումը բարեկեցությանն ուղղված գործունեությունում: Այդ նպատակով իրականացվում են զանազան ներքին միջոցառումներ՝ թիմային միջոցառումներ, սպորտ և յոգա, աշխատակիցների մասնակցությունը ԿՍՊ ծրագրերին և այլն: Թեև 2021թ. մենք շարունակում էինք խստորեն պահպանել սոցիալական հեռավորության կանոնները՝ համավարակի պայմաններում մեր անձնակազմի անվտանգությունն ու առողջությունն ապահովելու համար, կարատինի մեղմացումից հետո մենք վերսկսեցինք որոշ միջոցառումների իրականացումը: Մենք լիահույս ենք, որ 2022թ. կրկին կկարողանանք անցկացնել սոցիալական և սպորտային միջոցառումները:

Մշակույթ և հաղորդակցում

Մենք կարևորում ենք ազնվությունը, բաց և կառուցողական կապը, շարունակական հաղորդակցումը և աշխատակիցների տեղեկացվածությունը՝ դրանք համարելով մեր մշակույթի կարևոր տարր: Մենք մշակել ենք հաղորդակցման արդյունավետ ուղիներ՝ կորպորատիվ հաղորդակցությունը խթանելու նպատակով: Դրանք ներառում են ռազմավարական քննարկումներ, ղեկավարության եռամսյակային հանդիպումներ, ճանաչողական սեմինարներ նոր ընդունված աշխատակիցների համար, ամենօրյա հաղորդակցում սոցիալական հարցերի և գործընթացների վերաբերյալ և այլն: Մենք ձգտում ենք ապահովել հավասար հնարավորություններ և բաց հաղորդակցում ընկերության ներսում՝ բոլոր մակարդակներում:

2021թ. մենք գործարկեցինք նոր կորպորատիվ հարթակ հաղորդակցման համար նորությունների պորտալում՝ ապահովելով ավելի լավ հասանելիություն և օգտագործման հարմարավետություն: Մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում հաղորդակցությանը ռազմավարության, բրենդի և թվային օրակարգի վերաբերյալ, որպեսզի ապահովենք անձնակազմի կողմից դրանց ընկալումը, ընդունումը և մարդկանց ներգրավվածությունը՝ հաշվի առնելով մեր հիմնական առաջնահերթությունները և խնդիրները: Մենք հավասար կարևորություն ենք տալիս թե՛ անձնական, թե՛ թիմային ձեռքբերումներին և թիմին ենք ներկայացնում նորություններ նվաճումների մասին, հաջողության պատմություններ և իրավիճակային վերլուծություններ: Վերջին երկու տարվա ընթացքում կարևոր դեր էր կատարում տեղեկացումը անվտանգության և առողջության պահպանման կանոնների մասին՝ աշխատակիցների և հաճախորդների համար անվտանգ միջավայր ստեղծելու համար: Մենք նաև խրախուսում էինք հոգատարության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության դրսևորումը՝ պարբերաբար ներկայացնելով նյութեր և հաղորդագրություններ մեր կողմից իրականացվող ԿՍՊ ծրագրերի, պատասխանատու վերաբերմունքի և շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված մոտեցումների և գործողությունների մասին:

2022թ. առաջնահերթ նպատակները

2022թ. մեր ուշադրության կենտրոնում կլինեն նոր հմտությունների ձեռքբերմանն ուղղված վերապատրաստումները, առկա փորձի ընդլայնումը և ներքին ներուժի զարգացումը: Հատուկ շեշտ է դրվելու անձնակազմի՝ SS բնագավառում հմտությունների և կարողությունների զարգացմանը՝ թվային փոխակերպումը խթանելու նպատակով: Մեկ այլ առաջնահերթ նպատակներից է միջին և բարձր օղակի ղեկավարների համար զարգացման ծրագրերի իրականացումը՝ փոխարինելիության պլանավորումն ու բարձրակարգ սպասարկումն ապահովելու համար՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով վաճառքների և խաչաձև վաճառքի հմտությունների զարգացմանը: Մենք մշակել ենք և պատրաստվում ենք իրագործել նոր հմտությունների զարգացմանը և որակավորման բարձրացմանն ուղղված մի շարք ծրագրեր՝ ընկերության ներսում աշխատակիցների աճը խթանելու նպատակով: Հաշվի առնելով արագ փոփոխվող հնարավորությունները և որակյալ մասնագետների բարձր պահանջարկը շուկայում՝ մենք նախատեսում ենք իրականացնել բարեկեցությանն ուղղված նոր ծրագրեր և ընդլայնել խրախուսման գործիքները՝ աշխատակիցների ներգրավվածությունը բարձրացնելու և նրանց մոտիվացվածությունն ամրապնդելու նպատակով:



Մեր անձնակազմը

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ՝

1,157

Աշխատակիցների ընդհանուր թիվը (2021թ. վերջի դրությամբ)



Բիզնես ստորաբաժանումների անձնակազմ **Օժանդակող անձնակազմ**







05.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

166-171



Մթնոլորտ

Մթնոլորտի աղտոտումն այսօր խոշոր բնապահպանական ռիսկ է: Մենք ներդրումներ ենք կատարում՝ նվազեցնելու ջերմոցային գազի արտանետումների և առողջության համար վնասակար աղտոտիչների ծավալը: Մենք պաշտպանում ենք մարդկանց առողջությունը և արձագանքում համաշխարհային կլիմայական ճգնաժամին:

©Սուրեն Մանվելյան

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 2,

Հեռախոս՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Թողարկող/՝ 2021թ. տարեկան հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են և բոլոր էական առումներով համապատասխանում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4/04-ի պահանջներին:

2. Ներկայացված՝ 2021թ. աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Թողարկողի գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի համար:

Արտակ Հանեսյան	**Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն**	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Գևորգ Թառումյան	Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, Ֆինանսական տնօրեն	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Գոհար Խաչատրյան	Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
Գագիկ Սահակյան	Տնօրինության անդամ, Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արման Բարսեղյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Մանրածախ բանկինգի տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)
Արմինե Ղազարյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)
Անդրանիկ Բարսեղյան (անուն, ազգանուն)	Risk Management Director (պաշտոն)	(ստորագրություն)

© Անդրանիկ Թեշիշյան

06. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

172-279

Գյուղ Չինչին,
Տավուշի մարզ

Հող

Հողը կենսական նշանակություն ունեցող ռեսուրս է: Հողի որակի վատթարացումը կանխելու համար մենք օգնում են նվազեցնել բացասական ազդեցությունը և սերմանում ենք գիտելիքներ բնապահպանական արժեքների մասին: Մեզ առաջնորդում է ապագա սերունդների համար պատշաճ բնակավայր ստեղծելու գաղափարը:

© Անդրանիկ Քեշիշյան

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) *(ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք անդրադարձել ենք այս հարցերին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընդհանուր շրջանակում և վերջիններիս վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք արտահայտում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներ	
Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 19-ում:	
Աուդիտի առանցքային հարց	**Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր**
Հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները կազմում են ընդհանուր ակտիվների ավելի քան 61%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը, որը կանոնավոր հիմունքով գնահատվում է և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ, որոնք ներկայացված են ստորև: Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման մոդելը ղեկավարությունից պահանջում է կատարել մասնագիտական դատողություններ և ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված. – պարտքային ռիսկի նշանակալի աճի և պարտազանցման դեպքերի ժամանակին բացահայտում հաճախորդներին տրված վարկերի հետ կապված (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն), – պարտազանցում տեղի ունենալու հավանականության և պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատում, – ակնկալվող դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի համար: Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի և ակնկալվող պարտքային կորուստների ժամկետների և գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց:	Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներգրավելով նաև ֆինանսական ռիսկերի կառավարման գծով մասնագետներին: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարված մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը. – իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի փուլերի միջև բաշխումը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը: – ֆիզիկական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք ժամկետանց օրերի հաշվարկը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, թե արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կատարված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները: – 1-ին և 2-րդ փուլերին բաշխված հաճախորդներին տրված վարկերի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են խմբային հիմունքով, հիմք ընդունելով մեզ հայտնի տեղեկատվությունը, գնահատել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և համադրել ենք մոդելի ելակետային տվյալներն առաջնային աղբյուրների տվյալների հետ ընտրանքային կարգով:

	– իրավաբանական անձանց տրված 2-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք պարտազանցման դեպքում առաջացող կորստի հաշվարկում օգտագործված ելակետային տվյալների տեղին լինելը: Մենք ներգրավել ենք գնահատման մեր ներքին մասնագետներին պարտազանցման դեպքում առաջացող կորստի հաշվարկում օգտագործված գրավադրված գրավի արժեքների տեղին լինելն ընտրանքային կարգով գնահատելու գործում մեզ աջակցելու համար: – իրավաբանական անձանց տրված 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար Բանկի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ գրավի իրացումից ակնկալվող մուտքերը և իրացման ակնկալվող պայմանները: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել հաճախորդներին տրված այն վարկերին, որոնք ըստ հավանականության կարող են առավել նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա: – ֆիզիկական անձանց տրված վարկերի համար ընտրանքային կարգով ստուգել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մոդելներում օգտագործված ելակետային տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը, վճարումների ուշացման ժամանակին արտացոլումը և վարկերի բաշխումը փուլերին, – ֆիզիկական անձանց տրված 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք՝ շուկայում հասանելի տեղեկատվության հետ համեմատության միջոցով, ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար Բանկի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ գրավի իրացումից ակնկալվող մուտքերը և իրացման ակնկալվող պայմանները: – գնահատել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2021թ. հունվարի 1-ի դրությամբ կատարած գնահատումները 2021թ. փաստացի արդյունքների հետ: – գնահատել ենք նաև, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներն ըստ պատշաճի արտացոլում են Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվությունում պարունակվող տեղեկատվությունը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը կտրամադրվի մեզ այս աուդիտորական եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը չի անդրադառնում այլ տեղեկատվությանը, և մենք չենք արտահայտի որևէ հավաստիացում այդ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և այդ տեղեկատվությանը ծանոթանալիս դիտարկել, թե արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկատվությանը կամ կարող է այլ կերպ էականորեն խեղաթյուրված լինել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Բանկը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

– հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության

հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

– պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

– գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

– եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տեղեկացված հարցերից մենք ընտրում ենք այն հարցերը, որոնք առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք ներկայացնում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող նորմերով արգելվում է հարցի հրապարակային բացահայտումը, կամ երբ խիստ հազվագյուտ դեպքերում, մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացնել աուդիտորական եզրակացությունում, քանի որ ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ըստ ողջամիտ ակնկալիքների կարող են գերակշռել ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի անունից

KPMG Armenia LLC

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
9 մարտի 2022թ.

	Ծնթգ.	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	6	69,992,691	65,387,533
Այլ տոկոսային եկամուտ	6	3,144,325	1,873,340
Տոկոսային ծախս	6	(32,662,210)	(31,179,929)
Զուտ տոկոսային եկամուտ		**40,474,806**	**36,080,944**
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	7	7,144,770	5,250,022
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	7	(2,053,290)	(1,471,612)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ		**5,091,480**	**3,778,410**
Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով	8	2,465,815	(3,602,132)
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	9	5,920,451	8,653,830
Զուտ (վնաս)/օգուտ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով		(106,457)	365,430
Այլ գործառնական եկամուտ	10	588,832	2,877,652
Այլ գործառնական ծախսեր	11	(3,805,377)	(3,376,726)
Գործառնական եկամուտ		**50,629,550**	**44,777,408**
Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով	12	(6,157,183)	(17,968,823)
Այլ արժեզրկում և պահուստներ		(65,466)	85,872
Գործառնական եկամուտն արժեզրկումից հետո		**44,406,901**	**26,894,457**
Անձնակազմի գծով ծախսեր		(13,303,851)	(9,239,870)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	13	(7,231,329)	(6,472,458)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**23,871,721**	**11,182,129**
Շահութահարկի գծով ծախս	14	(4,455,654)	(2,181,925)
Շահույթ տարվա համար		**19,416,067**	**9,000,204**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.			
• իրական արժեքի զուտ փոփոխություն		(386,132)	(317,511)
• շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար		87,295	(299,653)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		*(298,837)*	*(617,164)*
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար՝ առանց շահութահարկի		**(298,837)**	**(617,164)**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**19,117,230**	**8,383,040**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային	29	166.04	77.05
Նոսրացված	29	166.04	77.05

181-ից 281-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրինության կողմից 2022թ. մարտի 9-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արտակ Հանեսյան

Տնօրինության նախագահ — Գլխավոր տնօրեն

Գոհար Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	264,090,145	234,412,812
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	16(ա)		
• Բանկի կողմից պահվող		8,223,960	9,476,566
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	16(բ)		
• Բանկի կողմից պահվող		7,920,255	8,026,999
• Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		4,096,530	3,181,002
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	16(գ)		
• Բանկի կողմից պահվող		37,915,734	33,722,305
• Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		15,770,574	17,814,988
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	17	43,333,261	35,523,809
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	18	7,533,683	17,258,217
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	19	673,086,264	696,495,523
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	10,649,082	10,740,536
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	21	11,163,102	10,643,891
Հետաձգված հարկային ակտիվ	14	-	1,028,409
Առգրավված ակտիվներ	19	1,326,280	1,823,888
Այլ ակտիվներ	22	11,278,135	10,613,778
Ընդամենը ակտիվներ		**1,096,387,005**	**1,090,762,723**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16(ա)	92,827	504,412
Բանկերի ավանդներ և մնացորդներ	23	56,649,761	55,845,516
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	28	18,011,594	20,005,910
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	24	600,614,296	598,960,666
Թողարկված պարտքային արժեթղթեր	25	111,074,943	106,916,313
Այլ փոխառություններ	26	127,712,418	128,907,362
Ստորադաս փոխառություններ	26	27,393,716	48,416,832
Ընթացիկ հարկային պարտավորություն		454,831	2,610,472
Հետաձգված հարկային պարտավորություն	14	664,044	-
Հանձնառությունների գծով պահուստ	32	244,929	359,219
Վարձակալության գծով պարտավորություն	21	12,106,310	11,231,832
Այլ պարտավորություններ	27	12,436,087	7,298,587
Ընդամենը պարտավորություններ		**967,455,756**	**981,057,121**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	29		
Բաժնետիրական կապիտալ		54,385,935	37,386,880
Էմիսիոն եկամուտ		174,726	17,065,364
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		(265,959)	32,878
Չբաշխված շահույթ		74,636,547	55,220,480
Ընդամենը սեփական կապիտալ		**128,931,249**	**109,705,602**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**1,096,387,005**	**1,090,762,723**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		73,975,542	65,690,282
Վճարված տոկոսներ		(32,080,253)	(29,533,354)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		7,144,770	5,250,022
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(2,053,290)	(1,471,612)
Զուտ մուտքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից		290,078	400,657
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		7,647,683	6,120,126
Այլ գործառնական (վճարումներ)/մուտքեր		(3,805,377)	407,760
Աշխատավարձ և այլ վճարումներ աշխատակիցներին		(9,491,879)	(10,220,658)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(3,798,652)	(3,376,062)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		1,022,948	(1,361,058)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ		(7,696,239)	(8,004,235)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր		9,809,681	7,399,559
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		(33,699,271)	(76,194,832)
Այլ ակտիվներ		124,158	(2,626,135)
Գործառնական պարտավորությունների (նվազում)/աճ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		1,676,826	(3,185,246)
Բանկերի ավանդներ և մնացորդներ		4,962,739	18,322,438
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր		(2,000,002)	19,997,109
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		37,699,399	(27,258,508)
Այլ պարտավորություններ		1,773,309	(1,046,605)
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		**51,502,170**	**(40,690,352)**
Վճարված շահութահարկ		(4,853,245)	(1,667,413)
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր		**46,648,925**	**(42,357,765)**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(2,580,288)	(1,975,728)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(5,199,788)	(1,360,698)
Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		4,708,651	977,321
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(15,248,444)	(31,158,779)
Մուտքեր ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		13,009,591	13,682,127
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		**(5,310,278)**	**(19,835,757)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	21	(1,988,756)	(1,853,981)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	29	108,417	95,484
Ստացված այլ փոխառություններ և ստորադաս պարտավորություններ	26	60,442,469	29,686,570
Այլ փոխառությունների և ստորադաս պարտավորությունների մարում	26	(63,438,777)	(33,524,720)
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	25	113,175,030	61,954,944
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	25	(99,882,931)	(15,091,797)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**8,415,452**	**41,266,500**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**49,754,099**	**(20,927,022)**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(20,034,617)	7,991,450
Արժեզրկման գծով պահուստի փոփոխությունների ազդեցությունը		(42,149)	(5,306)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		234,412,812	247,353,690
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	15	**264,090,145**	**234,412,812**

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Բաժնետիրա-կան կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատ-ման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	37,347,200	17,009,560	650,042	46,220,276	101,227,078
Շահույթ տարվա համար	-	-	-	9,000,204	9,000,204
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ					
• իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	(317,511)	-	(317,511)
• շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	-	-	(299,653)	-	(299,653)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**-**	**-**	**(617,164)**	**9,000,204**	**8,383,040**
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում					
Բաժնետիրական կապիտալի թողարկում	39,680	55,804	-	-	95,484
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**39,680**	**55,804**	**-**	**-**	**95,484**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**37,386,880**	**17,065,364**	**32,878**	**55,220,480**	**109,705,602**
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	37,386,880	17,065,364	32,878	55,220,480	109,705,602
Շահույթ տարվա համար	-	-	-	19,416,067	19,416,067
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ					
• իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	(386,132)	-	(386,132)
• շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	-	-	87,295	-	87,295
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**-**	**-**	**(298,837)**	**19,416,067**	**19,117,230**
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում					
Բաժնետիրական կապիտալի թողարկում	16,999,055	(16,890,638)	-	-	108,417
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**16,999,055**	**(16,890,638)**	**-**	**-**	**108,417**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**54,385,935**	**174,726**	**(265,959)**	**74,636,547**	**128,931,249**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայներարտբանկ» ՓԲԸ) (Բանկ) հիմնադրվել է 1992թ. դեկտեմբերի 8-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկը ձեռք բերեց «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերությունը՝ գնելով Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ը: 2011թ. ընթացքում «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերությունը վերանվանվեց «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ): 2013թ-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) Լիմիթիդ ձեռք բերեց Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը:

2015-2020թթ. ընկած ժամանակաշրջանում «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) վաճառեց իր բաժնետոմսերի մի մասը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին (ՎԶԵԲ), Ասիական զարգացման բանկին (ԱԶԲ), «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությանը և «Աֆեյան հիմնադրամ Հայաստանի համար» Ինկ.: 2020թ. հուլիսի 14-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) վերանվանվեց «Իմաստ Գրուպ» (Սի-Ուայ):

2021թ. մարտի 9-ին «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունն ամբողջությամբ ձեռք բերեց Բանկի կողմից լրացուցիչ թողարկված 125 բաժնետոմսերը 320,000 դրամ անվանական արժեքով՝ 867,339 դրամով մեկ բաժնետոմսի համար:

2021թ. ապրիլի 29-ին Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատեց բաժնետիրական կապիտալի համալրումը՝ բաժնետիրական կապիտալ փոխանցելով 16,891 միլիոն դրամի չափով էմիսիոն եկամուտը: Այս գործարքից հետո 1 բաժնետոմսի անվանական արժեքը 320 հազար դրամից ավելացավ 465 հազար դրամի:

Ստորև ներկայացված է Բանկի բաժնետերերի կազմը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2021թ.	2020թ.
«Իմաստ Գրուպ» (Սի-Ուայ)	48.90%	48.95%
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ)	17.74%	17.76%
Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)	13.93%	13.94%
«Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ»	11.92%	11.83%
«Աֆեյան հիմնադրամ Հայաստանի համար» Ինկ.	7.51%	7.52%
	100.00%	**100.00%**

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չուներ վերջնական վերահսկող կողմ:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի և երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ է: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն ունի 23 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան փ. 2:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի աշխատակիցների թիվը կազմում էր 1,157 (2020թ-ին՝ 1,109):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 34-ում

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ և միտված են բարելավման վերջին տարիների ընթացքում:

2021 ֆինանսական տարին հատկորոշվում է որպես վերականգնման շրջան 2020թ. ընթացքում Covid-19 համավարակի հետևանքով առաջացած տնտեսական անկումից հետո: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ուսումնասիրության համաձայն՝ ներկայումս ընթանում է տնտեսության վերականգնում՝ 2022թ-ին կանխատեսվող 4.5% աճով: Կառավարության 2021-2026թթ. տնտեսական ծրագիրը նպատակ ունի խթանել արտահանմանը միտված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների միջոցով:

Քաղաքական անհանգստությունները վերացնելու համար ՀՀ կառավարությունը հայտարարեց և անցկացրեց արտահերթ խորհրդարանական ընտրություններ 2021թ. հունիսին:

Covid-19 համավարակի բացասական հետևանքների մեղմացման մասին է վկայում նաև «Standard & Poor's» վարկանիշային գործակալության կողմից 2021թ. հոկտեմբերի 12-ին Հայաստանին B+ վարկանիշի շնորհումը՝ դրական հեռանկարով:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 480.14 դրամ և 522.59 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 542.61 դրամ և 641.11 դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու

համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 4(ե)(i),
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր:

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. ընտրել մոդել ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար, որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 30(գ),
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում – Ծանոթագրություն 35:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի փոփոխություններ

(ա) Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում. 2-րդ փուլ (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 փոփոխություններ)

Բանկն առաջին անգամ կիրառել է ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման 2-րդ փուլի ընթացքում ընդունված փոփոխությունները (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 փոփոխություններ) 2021թ. հունվարի 1-ից:

Բանկը 2-րդ փուլի փոփոխությունները կիրառել է հետընթաց: Այնուամենայնիվ, 2-րդ փուլի փոփոխություններով թույլատրվող բացառությունների համաձայն, Բանկը որոշել է չվերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունն այդ փոփոխությունների ազդեցությունն արտացոլելու համար: Քանի որ Բանկը չի իրականացրել գործարքներ, որոնց համար ուղենիշային տոկոսադրույքը փոխարինվել է այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքով 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, փոփոխությունների հետընթաց կիրառումն ազդեցություն չի ունեցել սեփական կապիտալի սկզբնական մնացորդի վրա:

Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման հետ կապված 2021թ. հունվարի 1-ից կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականության առանձին դրույթներ

2-րդ փուլի փոփոխությունները նախատեսում են գործնական բնույթի պարզեցում ՖՀՄՍ որոշ պահանջների հետ կապված: Այս պարզեցումը վերաբերում է ֆինանսական գործիքների, վարձակալության պայմանագրերի կամ հեջավորման հարաբերությունների փոփոխմանը, որը պայմանավորված է պայմանագրում ուղենիշային տոկոսադրույքի փոխարինումով նոր այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքով:

Եթե ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքը փոխվում է ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում, Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումը պահանջում է պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

- փոփոխությունն անհրաժեշտ է որպես բարեփոխման ուղղակի հետևանք և
- պայմանագրային դրամական հոսքերը որոշելու նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին, այսինքն՝ անմիջապես նախքան փոփոխությունը գործող հիմքին:

Եթե ի լրումն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունների կատարվում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության այլ փոփոխություններ, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքն ուղնեիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Այնուհետև, Բանկը լրացուցիչ փոփոխությունների նկատմամբ կիրառում է պայմանների փոփոխման հաշվառմանը վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթները:

Փոփոխությունները նախատեսում են նաև բացառություն, որը թույլ է տալիս օգտագործել տոկոսադրույքի փոփոխությունն արտացոլող վերանայված զեղչման դրույքը վարձակալության պայմանների փոփոխության հետևանքով վարձակալության պարտավորությունը վերաչափելու դեպքում, որը պահանջվում է ուղնեիշային տոկոսադրույքի բարեփոխումով:

Եվ վերջապես, 2-րդ փուլի փոփոխությունները նախատեսում են մի շարք ժամանակավոր ազատումներ հեջի հաշվառման որոշ պահանջներից այն դեպքում, երբ ուղնեիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող փոփոխությունը վերաբերում է հեջավորված հոդվածին և/կամ հեջավորող գործիքին, և թույլ են տալիս շարունակել հեջավորման հարաբերությունն առանց ընդհատման:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 4-ում: Ծանոթագրություն 30-ում բացահայտված է համապատասխան տեղեկատվություն այն ռիսկերի, ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ, որոնց տոկոսադրույքները հաշվարկված են LIBOR-ի հիման վրա:

(բ) Վարձակալության գծով զիջումներ COVID-19 հետ կապված 2021թ. հունիսի 30-ից հետո ընկած ժանամանակաշրջանների համար. ՖՀՄՍ 16-ի փոփոխություն

Բանկը ժամկետից շուտ է կիրառել 2021թ. մարտին հրապարակված *«Վարձակալության գծով զիջումներ COVID-19 հետ կապված 2021թ. հունիսի 30-ից հետո ընկած ժանամանակաշրջանների համար. ՖՀՄՍ 16-ի փոփոխություն»*: Նախքան այս

բավարարող վարձակալության գծով զիջումները, որոնք COVID-19 ուղղակի հետևանքներ են, հանդիսանում են վարձակալության վերափոխումներ: Բանկը ոչ պարտադիր գործնական բնույթի պարզեցումը կիրառել է 2020թ-ին: 2021թ-ին հրապարակված փոփոխությունը մեկ տարով երկարաձգել է ոչ պարտադիր գործնական բնույթի պարզեցման կիրառման հնարավորությունը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Բացառությամբ Ծանոթագրություն 3-ում բացահայտված փոփոխությունների, ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար: 2021թ. հունվարի 1-ից գործող այլ նոր ստանդարտները և փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել ստորև ներկայացված Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդներն, այդ թվում՝ ՀՀ դրամով արտահայտված պարտադիր պահուստը և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- Ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է համապատասխան ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված այլ տոկոսային եկամուտը ներառում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ոչ ածանցյալ պարտքային ֆինանսական գործիքների և ֆինանսական վարձակալություններում զուտ ներդրումների գծով տոկոսային եկամուտը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 4 (գ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք առաջանում են հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են եկամտի առաջացմանը և չեն բխում հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից, Բանկը դասակարգում է որպես այլ գործառնական ծախսեր: Մնացած բոլոր ծախսերը դասակարգվում են որպես ընդհանուր վարչական ծախսեր:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Բանկն ունի ֆիքսված տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որոնց հետ կապված հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում: Վարկառուն հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Բանկը որոշել է, որ այս վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, քանի որ այս հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույքն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Բանկն այս վարկերը դիտարկում է որպես ըստ իրենց էության լողացող տոկոսադրույքով վարկեր (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)):

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի

գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում

Երբ ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում փոխվում է ամոտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքը, Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումը պահանջում է պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

- փոփոխությունն անհրաժեշտ է որպես բարեփոխման ուղղակի հետևանք և
- պայմանագրային դրամական հոսքերը որոշելու նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին, այսինքն՝ անմիջապես նախքան փոփոխությունը գործող հիմքին:

Եթե ի լրումն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունների կատարվում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության այլ փոփոխություններ, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքն ուղնեիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Այնուհետև, Բանկը լրացուցիչ փոփոխությունների նկատմամբ կիրառում է պայմանների փոփոխման հաշվառմանը վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթները:

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են

գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով հետ ստանալ/վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրս գրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

iv. Արժեզրկում

Տես նաև Ծանոթագրություն 30 (գ):

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալություններում,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ (բացառությամբ ֆինանսական վարձակալություններում զուտ ներդրումների), որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 30 (գ)):

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված չեն) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված են):

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ՝* որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (դրամական պակասորդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ՝* որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- *չօգտագործված փոխատվության հանձնառություններ՝* որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր՝* որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես նաև Ծանոթագրություն 30 (գ):

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 4 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 30 (գ)):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները և զուտ ներդրումները ֆինանսական վարձակալություններում պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանակությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում

նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
- *իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «Ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորությունը պահանջվում է պարտքային գործիքի պայմանագիրը կարգավորող օրենքներով և կանոնակարգերով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և

- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելավճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:
Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

(զ) Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը, ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքերը և ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքերը (տես Ծանոթագրություն 4 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում:

(է) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(ը) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) և սկզբանապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(թ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով կրեդիտորական պարտքերի կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերը: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ժ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

• վարձակալված գույքի բարելավում	5-ից 20 տարի
• համակարգիչներ և կապի սարքավորումներ	5-ից 10 տարի
• տնտեսական գույք	5-ից 10 տարի
• փոխադրամիջոցներ	7 տարի

(ի) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 1-ից 10 տարի:

(լ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

(խ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները, ներառյալ հարկերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(ծ) Առգրավված գրավ

Առգրավված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով:

(կ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:
Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:
Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(h) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Բանկը ներկայացնում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթի վերաբերյալ տվյալներ իր սովորական բաժնետոմսերի համար: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է Բանկի սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին՝ ճշգրտված Բանկին պատկանող իր սեփական բաժնետոմսերի թվով: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթը որոշվում է ճշգրտելով Բանկի սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը և շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի կշռված միջին թիվը՝ ճշգրտված Բանկին պատկանող իր սեփական բաժնետոմսերի թվով՝ բոլոր նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի ազդեցությունը հաշվի առնելու համար, որոնք իրենցից ներկայացնում են աշխատակիցներին տրամադրված փոխարկելի պարտատոմսերը և բաժնետոմսերի օպցիոնները:

(ձ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն, առևտրային բանկային գործունեություն:

(ղ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:
Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները

վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(ճ) Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Բանկը որոշում է, թե արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

(i) Բանկը՝ որպես վարձակալ

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Բանկին չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Բանկը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Բանկը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Բանկը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես ակնկալվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Բանկի գնահատականի փոփոխություն, եթե Բանկը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Բանկը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների գծով վարձավճարները Բանկը ճանաչում է որպես ծախս գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Վարձակալության գծով զիջումներ COVID-19 հետ կապված

Բանկը կիրառել է *«Վարձակալության գծով զիջումներ COVID-19 հետ կապված 2021թ. հունիսի 30-ից հետո ընկած ժանամանակաշրջանների համար. ՖՀՄՍ 16-ի փոփոխություն»*: Բանկը կիրառում է գործնական բնույթի պարզեցումը, որը թույլ է տալիս չգնահատել, թե արդյոք որոշակի պայմանները բավարարող վարձակալության գծով զիջումները, որոնք COVID-19 ուղղակի հետևանքներ են, հանդիսանում են վարձակալության վերափոխումներ: Բանկը հետևողականորեն կիրառում է գործնական բնույթի պարզեցումը նմանատիպ բնութագրեր ունեցող պայմանագրերի նկատմամբ և նմանատիպ հանգամանքներում: Վարձակալության գծով այն զիջումներ համար, որոնք վերաբերում են վարձակալության այնպիսի պայմանագրերին, որոնց հետ կապված Բանկը որոշում է չկիրառել գործնական բնույթի պարզեցումը, կամ որոնք չեն համապատասխանում գործնական բնույթի պարզեցման չափանիշներին, Բանկը գնահատում է, թե արդյոք առկա է վարձակալության վերափոխում:

(ii) Բանկը՝ որպես վարձատու

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը: Երբ Բանկը հանդես է գալիս որպես վարձատու, այն վարձակալության սկզբում որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական կամ գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելու համար Բանկը գնահատում է, արդյոք վարձակալությամբ փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Այս

գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է որոշ ցուցանիշներ, մասնավորապես, արդյոք վարձակալության ժամկետի մեջ է ներառվում ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

Եթե պայմանագիրը պարունակում է վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչներ, Բանկը կիրառում է ՖՀՄՍ 15-ը պայմանագրում սահմանված հատուցումը վերագրելու համար:

Գործառնական վարձակալության գծով ստացված վարձավճարները Բանկը ճանաչում է որպես եկամուտ գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում՝ «այլ հասույթի» կազմում:

(մ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2021թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(i) Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Բանկը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար: Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ փոփոխությունների կիրառման կուտակային հետևանքը ճանաչվում է որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների սկզբնական մնացորդի ճշգրտում՝ ըստ կիրառելիության: Համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում: Բանկը որոշել է, որ բոլոր պայմանագրերը կավարտվեն մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելը:

(ii) ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» կատարելագործում. Վճարները ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման «10 տոկոսի» թեստում

Որպես ՖՀՄՍ ստանդարտների 2018-2020թթ. տարեկան կատարելագործումների մաս՝ ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9-ի փոփոխություն: Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք Բանկը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները նշանակալիորեն տարբերվում են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն վարկառուի և վարկատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ վարկառուի, կամ վարկատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Բանկը փոփոխությունը կիրառում է այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխվել կամ փոխարինվել այն տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, որի ընթացքում Բանկն առաջին անգամ կիրառել է փոփոխությունը: Փոփոխությունը գործում է 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամ կիրառելու հնարավորությամբ:

(iii) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՍ տարեկան կատարելագործումներ, 2018-2020թթ. ժանամանակաշրջան
- Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)

- ՖՀՍՄ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* և ՖՀՍՄ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)

5 Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակների համար Բանկի գործունեությունը բաժանված է հետևյալ երեք գործառնական սեգմենտների՝ հիմք ընդունելով մատուցվող ապրանքները և ծառայությունները:

Մանրածախ բանկային գործունեություն	Ֆիզիկական անձանց, փոքր և միկրո ձեռնարկությունների ավանդների սպասարկում, սպառողական վարկերի, օվերդրաֆտների, վարկային քարտերի, փոքր և միկրո վարկերի տրամադրում:
Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի և վարկային գծերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների սպասարկում, ներդրումային բանկային ծառայությունների մատուցում, այդ թվում՝ անդերրայթինգի ծառայություններ և ֆինանսական խորհրդատվություն:
Առևտրային բանկային գործունեություն	Արտարժույթի առուվաճառքի գործառնություններ, պարտատոմսերի պորտֆելի կառավարում, կարճաժամկետ միջոցների ներգրավվում կամ տրամադրում միջբանկային վարկերի միջոցով, հետգնման պայմանագրեր իրացվելիության կառավարման նպատակների համար, բրոքերային ծառայությունների մատուցում և այլն:

Ռեսուրսների բաշխման և գործունեության վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով՝ ղեկավարությունը վերահսկում է իր ստորաբաժանումների գործունեության արդյունքներն առանձին հիմունքով: Շահութահարկը կառավարվում է շահույթը նախքան եկամտահարկով հարկումը հիմունքով և բաշխվում է գործառնական սեգմենտների միջև:

Գործառնական սեգմենտների միջև փոխանցումների գները հիմնված են պարզած ձեռքի հեռավորության սկզբունքի վրա, ինչպես և երրորդ կողմերի հետ գործարքների դեպքում:

2021թ. կամ 2020թ. չի գրանցվել մեկ արտաքին հաճախորդի կամ պայմանագրային կողմի հետ իրականացված որևէ գործարք, որից ստացված հասույթը կազմել է Բանկի ընդհանուր հասույթի 10%-ը կամ ավելին:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված տեղեկատվություն Բանկի գործառնական սեգմենտների եկամտի և շահույթի, որոշ ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ:

2021թ.	**Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ**	**Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ**	**Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ**	**Ընդամենը հազ. դրամ**
Զուտ տոկոսային եկամուտ	14,449,310	21,076,214	4,949,282	40,474,806
Զուտ ոչ տոկոսային եկամուտ	2,283,544	3,939,271	3,931,929	10,154,744
Միջսեգմենտային եկամուտ	6,964,106	(2,854,350)	(4,109,756)	-
Գործառնական շահույթ	**23,696,960**	**22,161,135**	**4,771,455**	**50,629,550**

2021թ.	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով	(1,502,253)	(4,654,930)	-	(6,157,183)
Այլ արժեզրկում և պահուստներ	(32,733)	(32,733)	-	(65,466)
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,735,327)	(546,635)	(151,752)	(3,433,714)
Անձնակազմի գծով ծախսեր և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(11,897,456)	(4,137,137)	(1,066,873)	(17,101,466)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	**7,529,191**	**12,789,700**	**3,552,830**	**23,871,721**
Շահութահարկի գծով ծախս	(1,405,323)	(2,387,196)	(663,135)	(4,455,654)
Շահույթ տարվա համար	**6,123,868**	**10,402,504**	**2,889,695**	**19,416,067**

2021թ.	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	261,792,092	428,180,027	90,093,635	780,065,754
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	488,883,792	434,238,586	18,403,228	941,525,606

2020թ.	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Զուտ տոկոսային եկամուտ	11,793,376	18,454,424	5,833,144	36,080,944
Զուտ ոչ տոկոսային եկամուտ	697,356	4,791,999	3,207,109	8,696,464
Միջսեգմենտային եկամուտ	8,296,441	(3,419,688)	(4,876,753)	-
Գործառնական շահույթ	**20,787,173**	**19,826,735**	**4,163,500**	**44,777,408**
Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով	(10,255,619)	(7,713,204)	-	(17,968,823)
Այլ արժեզրկում և պահուստներ	42,936	42,936	-	85,872
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,339,628)	(589,175)	(167,593)	(3,096,396)
Անձնակազմի գծով ծախսեր և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(8,449,813)	(3,260,777)	(905,342)	(12,615,932)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	**(214,951)**	**8,306,515**	**3,090,565**	**11,182,129**
Շահութահարկի գծով ծախս	41,943	(1,620,818)	(603,050)	(2,181,925)
Շահույթ տարվա համար	**(173,008)**	**6,685,697**	**2,487,515**	**9,000,204**

2020թ.	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	232,578,086	487,509,039	91,845,467	811,932,592
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	365,962,851	572,730,409	20,817,666	959,510,926

Տոկոսաբեր ակտիվները ներառում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերը և փոխատվությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի, հաճախորդներին տրված համախառն վարկերը և փոխատվությունները և ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի ավանդները և մնացորդները (բացառությամբ լորո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքերը, հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառությունները և ստորադաս փոխառությունները:

Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Ստորև ներկայացված է հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի բացվածքն ըստ սեգմենտների ՖՀՄՍ 15-ի շրջանակում 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

2021թ.	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	4,987,194	1,855,623	301,953	7,144,770
Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից	-	29,012	-	29,012
Այլ հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	118,244	93,285	5,607	217,136
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**5,105,438**	**1,977,920**	**307,560**	**7,390,918**

2020թ.	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	3,273,109	1,629,796	347,117	5,250,022
Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից	-	1,979,083	-	1,979,083
Այլ հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	372,757	331,269	41	704,067
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**3,645,866**	**3,940,148**	**347,158**	**7,933,172**

Հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը հիմնականում առաջանում է Հայաստանում գտնվող հաճախորդների հետ պայմանագրերից:

2021թ-ին ոչ մի հաճախորդի բաժին չէր ընկնում Բանկի ընդհանուր հասույթի 10%-ից ավելին: 2020թ-ին Բանկի Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեության սեգմենտի մեկ հաճախորդի հետ պայմանագրից ստացված հասույթը կազմում էր Բանկի ընդհանուր հասույթի մոտ 25% (1,960,000 հազար դրամ):

6 Զուտ տոկոսային եկամուտ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	63,070,967	58,367,764
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	3,712,701	3,793,887
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	949,037	967,301
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	664,777	654,823
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր	663,644	529,034
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	104,483	135,159
Այլ	12,843	11,485
	69,178,452	**64,459,453**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	814,239	928,080
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	**69,992,691**	**65,387,533**
Այլ տոկոսային եկամուտ		
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	1,888,452	935,850
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	708,203	592,525
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	547,670	344,965
Այլ տոկոսային եկամուտ	**3,144,325**	**1,873,340**
Ընդամենը տոկոսային եկամուտ	**73,137,016**	**67,260,873**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	14,605,028	14,893,638
Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ	6,520,139	8,537,676
Թողարկված պարտքային արժեթղթեր	6,471,167	3,880,180
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,859,651	1,723,106
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	1,444,073	455,751
Վարձակալության գծով պարտավորություններ	1,343,129	1,359,428
Ակրեդիտիվների և տրամադրված երաշխավորությունների գծով կրեդիտորական պարտքեր	408,246	329,915
Այլ	10,777	235
Ընդամենը տոկոսային ծախս	**32,662,210**	**31,179,929**
Զուտ տոկոսային եկամուտ	**40,474,806**	**36,080,944**

7 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		
Պլաստիկ քարտերի սպասարկման վճարներ	3,949,186	2,466,956
Դրամական փոխանցումներ	925,905	788,726
Կանխիկացում, հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	853,484	771,339
Բրոքերային ծառայություններ և անդերրայթինգ	609,604	416,582
Երաշխավորությունների և ակրեդիտիվների տրամադրում	426,030	561,626
Վճարահաշվարկային գործառնություններ	212,819	160,277
Այլ	167,742	84,516
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	**7,144,770**	**5,250,022**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	1,610,638	1,032,296
Դրամական փոխանցումներ	279,707	225,418
Երաշխավորությունների և ակրեդիտիվների տրամադրում	71,130	72,177
Այլ	91,815	141,721
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	**2,053,290**	**1,471,612**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ	**5,091,480**	**3,778,410**

(ա) Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Բանկի հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը հիմնականում ներառում է միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը, խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայությունների մատուցումից ստացվող հասույթը: Բանկը միջնորդավճարների և այլ վճարների, խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայությունների գծով հասույթը հիմնականում ճանաչում է ժամանակի որոշակի պահին: 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31 ավարտված տարիների շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը ներառում է.

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	7,144,770	5,250,022
Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից	29,012	1,979,083
Այլ հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	217,136	704,067
	7,390,918	**7,933,172**

(բ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի վերաբերյալ:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Այլ ակտիվներում ներառված դեբիտորական պարտք	**74,113**	**77,288**

8 Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Զուտ օգուտ/(վնաս) արժութային և տոկոսադրույքային ածանցյալ գործիքների գծով	2,205,984	(3,281,828)
Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով	259,831	(320,304)
	2,465,815	**(3,602,132)**

9 Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	7,647,683	6,120,126
Զուտ (վնաս)/օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(1,727,232)	2,533,704
	5,920,451	**8,653,830**

10 Այլ գործառնական եկամուտ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Եկամուտ մատուցված ծառայություններից	174,011	126,532
Եկամուտ ապահովագրական գործակալությունից	110,943	71,260
Եկամուտ պահատուփերից	60,296	45,671
Զուտ եկամուտ առգրավված ակտիվների վաճառքից	59,654	282,000
Եկամուտ դատական գործերի համար ստացված հատուցումներից	39,487	13,322
Եկամուտ վճարային տերմինալներից	30,282	11,344
Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից	29,012	1,979,083
Եկամուտ ապահովագրությունից	28,369	26,793
Զուտ օգուտ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից	-	193,942
Այլ	56,778	127,705
	588,832	**2,877,652**

11 Այլ գործառնական ծախսեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Վճարային համակարգերի գծով ծախսեր	1,283,681	861,254
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամին	685,324	630,564
Ծրագրային ապահովման սպասարկում	418,844	413,532
Գրավի գրանցման ծախսեր	158,183	198,886
Բրոքերային ծառայությունների վճարներ	131,741	156,106
Գործակալական վճար	125,500	220,521
Ապահովագրության գծով ծախսեր	121,987	121,967
Վարկային ռեգիստրի գծով ծախսեր	110,957	73,423
Ֆինանսական համակարգի հաշտարար	110,019	95,657
Բանկոմատների սպասարկման ծախսեր	100,935	88,881
Ինկասացիա	86,716	88,723
Պահառուական ծառայություններ	76,671	54,753
Վճարված տույժեր և տուգանքներ	18,426	3,284
Այլ	376,393	369,175
	3,805,377	**3,376,726**

12 Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների գծով արժեզրկումից կորուստները:

հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,106	-	-	24,106
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	(1)	-	-	(1)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	(7,141)	-	-	(7,141)
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	(1,756,611)	(1,395,808)	9,595,273	6,442,854
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	(13,091)	(15,317)	336,161	307,753
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	(7,182)	-	-	(7,182)
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր	(12,863)	-	-	(12,863)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	32,925	-	-	32,925
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(22,038)	-	-	(22,038)
Այլ ֆինանսական ակտիվներ	4,654	304	(491,898)	(486,940)
Փոխատվության հանձնառություններ	(86,972)	(12,475)	(14,843)	(114,290)
Ընդամենը ծախս պարտքային կորուստների գծով	**(1,844,214)**	**(1,423,296)**	**9,424,693**	**6,157,183**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների գծով արժեզրկումից կորուստները:

հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(5,306)	-	-	(5,306)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	(1)	-	-	(1)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	21,070	-	-	21,070
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	4,429,578	226,948	12,626,379	17,282,905
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	146,028	18,937	138,866	303,831
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	13,549	-	-	13,549
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր	40,925	-	-	40,925
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	32,539	-	-	32,539
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(12,039)	-	-	(12,039)
Այլ ֆինանսական ակտիվներ	5,935	(123)	42,541	48,353
Փոխատվության հանձնառություններ	214,555	10,525	17,917	242,997
Ընդամենը ծախս պարտքային կորուստների գծով	**4,886,833**	**256,287**	**12,825,703**	**17,968,823**

13 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	3,433,714	3,096,396
Գովազդ և շուկայավարում	831,369	711,146
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	444,066	375,571
Վարկերի վերադարձման գծով ծախսեր	365,015	296,809
Չփոխհատուցվող հարկեր վարձակալության պայմանագրերի գծով	348,517	336,814
Անձնակազմի վերապատրաստման և այլ ծախսեր	339,430	328,010
Մասնագիտական ծառայություններ	288,231	215,120
Անվտանգության ծառայություն	238,604	219,359
Վարձակալության գծով այլ ծախսեր	184,568	134,854
Կապի և տեղեկատվական ծառայություններ	137,451	143,035
Բարեգործություն և հովանավորություն	117,736	233,664
Էլեկտրականության և կոմունալ ծախսեր	104,090	85,758
Ապահովագրություն	87,629	67,693
Գրասենյակային ծախսեր	67,764	35,305

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Հարկեր՝ բացառությամբ աշխատավարձի գծով հարկերի և շահութահարկի	43,528	38,755
Գործուղումների և ներկայացուցչական ծախսեր	28,882	20,817
Այլ	170,735	133,352
	7,231,329	**6,472,458**

14 Շահութահարկի գծով ծախս

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	2,697,604	3,993,304
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով	1,758,050	(1,811,379)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**4,455,654**	**2,181,925**

2021թ-ին ընթացիկ հարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2020թ. համեմատ փոփոխություն տեղի չի ունեցել):

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2021թ. հազ. դրամ	%	2020թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	23,871,721		11,182,129	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	(4,296,910)	(18.0)	(2,012,783)	(18.0)
Չնվազեցվող ծախսեր	(158,744)	(0.7)	(169,142)	(1.5)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**(4,455,654)**	**(18.7)**	**(2,181,925)**	**(19.5)**

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություն և զուտ հետաձգված հարկային ակտիվ համապատասխանաբար 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	74,577	(73,566)	-	1,011
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	24,889	(23,637)	65,597	66,849
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	294,337	(2,090,733)	-	(1,796,396)
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ և պահուստներ	11,126	(180,052)	-	(168,926)
Հիմնական միջոցներ	13,667	20,859	-	34,526
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	(1,915,901)	(93,458)	-	(2,009,359)
Վարձակալության գծով պարտավորություններ	2,021,730	157,406	-	2,179,136
Այլ ակտիվներ	32,175	(3,327)	-	28,848
Այլ պարտավորություններ	569,337	520,313	-	1,089,650
Այլ փոխառություններ	(97,528)	8,145	-	(89,383)
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	**1,028,409**	**(1,758,050)**	**65,597**	**(664,044)**

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	(70,940)	145,517	-	74,577
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(103,230)	(7,356)	135,475	24,889
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(1,257,594)	1,551,931	-	294,337
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ և պահուստներ	(138,415)	149,541	-	11,126
Հիմնական միջոցներ	(16,916)	30,583	-	13,667
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	(1,957,487)	41,586		(1,915,901)
Վարձակալության գծով պարտավորություններ	2,047,186	(25,456)	-	2,021,730
Այլ ակտիվներ	82,733	(50,558)	-	32,175
Այլ պարտավորություններ	601,295	(31,958)	-	569,337
Այլ փոխառություններ	(105,077)	7,549	-	(97,528)
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	**(918,445)**	**1,811,379**	**135,475**	**1,028,409**

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	22,847,846	20,782,469
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	227,124,335	197,979,703
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
• Aa1-ից Aa3 վարկանիշով	6,006,225	5,398,655
• A1-ից A3 վարկանիշով	4,476,989	6,047,879
• Baa1-ից Baa3 վարկանիշով	2,753,282	3,773,668
• Ba1-ից Ba3 վարկանիշով	853,311	340,486
• առանց վարկանիշի	70,306	107,995
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	**14,160,113**	**15,668,683**
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**264,132,294**	**234,430,855**
Պարտքային կորստի գծով պահուստ	(42,149)	(18,043)
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**264,090,145**	**234,412,812**

Պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշերից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկը չունի բանկերում տեղաբաշխված միջոցներ, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվները վերաբերում են վճարահաշվարկային գործունեությանը (տես Ծանոթագրություն 17) և անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(18,043)	-	-	(18,043)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	18,043	-	-	18,043

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(42,149)	-	-	(42,149)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(42,149)**	**-**	**-**	**(42,149)**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(23,349)	-	-	(23,349)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	23,349	-	-	23,349
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(18,043)	-	-	(18,043)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(18,043)**	**-**	**-**	**(18,043)**

16 Ներդրումային արժեթղթեր և ածանցյալ ֆինանսական ակտիվներ

(ա) Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	4,285,560	5,499,944
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր	637,242	-
Ընդամենը կառավարության պարտատոմսեր	**4,922,802**	**5,499,944**
Հայկական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր		
• Ba1-ից Ba3 վարկանիշով	1,449,305	1,087,359
• B1-ից B3 վարկանիշով	714,740	1,699,343
• առանց վարկանիշի	1,059,391	1,172,405
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	**3,223,436**	**3,959,107**
Ընդամենը Բանկի կողմից պահվող պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	**8,146,238**	**9,459,051**

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**8,146,238**	**9,459,051**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		
Արժութային սվոփեր	77,722	17,515
Ընդամենը ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**77,722**	**17,515**
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**8,223,960**	**9,476,566**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		
Արժութային սվոփեր	92,827	504,412
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**92,827**	**504,412**

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշերից:

(բ) Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	6,256,620	4,967,983
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր	616,137	-
Ընդամենը կառավարության պարտատոմսեր	**6,872,757**	**4,967,983**
Հայկական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր		
• Ba1-ից Ba3 վարկանիշով	6,883	-
• B1-ից B3 վարկանիշով	-	91,377
• առանց վարկանիշի	487,810	1,905,870
Օտարերկրյա կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր		
• B1-ից B3 վարկանիշով	474,498	978,804
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	**969,191**	**2,976,051**
Ընդամենը պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	**7,841,948**	**7,944,034**
Բաժնային ներդրումներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	78,307	82,965
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	**7,920,255**	**8,026,999**

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
ՀՀ կառավարության պարտատոմսեր	-	3,181,002
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր	4,096,530	-
Ընդամենը կառավարության պարտատոմսեր	**4,096,530**	**3,181,002**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշերից:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար: Կորստի պահուստը չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(52,998)	-	-	(52,998)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	25,492	-	-	25,492
Մարված ակտիվներ	10,558	-	-	10,558
Վաճառված ակտիվներ	12,008	-	-	12,008
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	(26,020)	-	-	(26,020)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(30,960)**	-	-	**(30,960)**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(65,037)	-	-	(65,037)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	768	-	-	768

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Մարված ակտիվներ	-	-	-	-
Վաճառված ակտիվներ	19,592	-	-	19,592
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	(8,321)	-	-	(8,321)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(52,998)**	**-**	**-**	**(52,998)**

(i) Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված չգնանշվող բաժնային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներում ներառված են ստորև ներկայացված չգնանշվող բաժնային արժեթղթերը.

Անվանումը	**Գրանցման երկիրը**	**Հիմնական գործունեությունը**	**Վերահսկվող %**		**2021թ. հազ. դրամ**	**2020թ. հազ. դրամ**
			2021թ.	**2020թ.**		
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	Վճարային համակարգ	3.75%	3.75%	44,841	49,499
SWIFT	Հայաստանի Հանրապետություն	Դրամական փոխանցումներ	0.00%	0.00%	33,466	33,466
					78,307	**82,965**

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումները հիմնականում ներառում են պարտադիր բաժնետոմսերը ֆոնդային բորսաներում և քլիրինգային կազմակերպություններում: Բանկի ղեկավարությունը գտնում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքը մոտարկում է դրանց սկզբնական արժեքին 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(գ) Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2021թ. հազ. դրամ	**2020թ. հազ. դրամ**
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	36,440,646	33,667,392
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր	639,897	-
Ընդամենը կառավարության պարտատոմսեր	**37,080,543**	**33,667,392**
Հայկական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր		
• B1-ից B3 վարկանիշով	-	152,601
• առանց վարկանիշի	965,804	-
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	**965,804**	**152,601**
Ընդամենը Բանկի կողմից պահվող պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	**38,046,347**	**33,819,993**
Պարտքային կորստի գծով պահուստ	(130,613)	(97,688)
Ընդամենը Բանկի կողմից պահվող ամորտիզացված արժեքով չափվող զուտ ներդրումային արժեթղթեր	**37,915,734**	**33,722,305**

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	8,324,800	-
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր	7,445,774	17,814,988
Ընդամենը կառավարության պարտատոմսեր	**15,770,574**	**17,814,988**

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշերից:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(97,688)	-	-	(97,688)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(28,604)	-	-	(28,604)
Մարված ակտիվներ	24,979	-	-	24,979
Վաճառված ակտիվներ	-	-	-	-
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	(29,300)	-	-	(29,300)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(130,613)**	-	-	**(130,613)**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(65,149)	-	-	(65,149)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	2,502	-	-	2,502
Մարված ակտիվներ	17,387	-	-	17,387
Վաճառված ակտիվներ	8,032	-	-	8,032
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	(60,460)	-	-	(60,460)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(97,688)**	**-**	**-**	**(97,688)**

17 Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում	3,364,500	2,312,500
Ավանդ ՀՀ ԿԲ-ում, պարտադիր պահուստներ	31,416,814	30,931,188
Այլ բանկերին տրված վարկեր և փոխատվություններ		
Հայկական բանկեր		
• Ba1-ից Ba3 վարկանիշով	487,895	528,866
• առանց վարկանիշի	-	1,836,523
Այլ բանկեր		
• Ba1-ից Ba3 վարկանիշով	8,145,003	-
• առանց վարկանիշի	-	2,824
Ընդամենը այլ բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	**8,632,898**	**2,368,213**
Ընդամենը բանկերին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	**43,414,212**	**35,611,901**
Պարտքային կորստի գծով պահուստ	(80,951)	(88,092)
Ընդամենը բանկերին տրված զուտ վարկեր և փոխատվություններ	**43,333,261**	**35,523,809**

(ա) Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

Վարկային քարտերով գործառնությունների համար ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցը ոչ տոկոսակիր ավանդ է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի ելքագրումը սահմանափակված է:

Բանկերից պահանջվում է ՀՀ ԿԲ-ում պահել կանխիկ ավանդ (պարտադիր պահուստ) ներգրավված միջոցների համար: ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 4% (2020թ-ին՝ 2%) և ամբողջությամբ պահվում է ՀՀ դրամով: Արտարժույթով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 18%, որից 10%-ը պահվում է ՀՀ դրամով, իսկ 8%-ը՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով (2020թ-ին՝ 10%՝ ՀՀ դրամով և 8%՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով): ՀՀ դրամով պահվող ավանդը ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: ՀՀ դրամով պահվող պարտադիր պահուստները դասակարգվում են որպես դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ (տես Ծանոթագրություն 15), քանի որ կարող են ելքագրվել անհրաժեշտության դեպքում:

Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ: Այս պահուստները չեն համարվում դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ և ներառված են բանկերին տրված վարկերի և փոխատվությունների կազմում: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պահվող ավանդներում ներառված է 31,416,814 հազար դրամ գումարով պարտադիր պահուստը արտարժույթով ներգրավված միջոցների համար (2020թ-ին՝ 30,931,188 հազար դրամ):

(բ) Բանկերին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող այնպիսի բանկեր, որոնց գծով մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Բանկերին տրված վարկերը և փոխատվությունները ժամկետանց կամ արժեզրկված չեն և ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բանկերին տրված բոլոր վարկերը և փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ամորտիզացված արժեքով չափվող բանկերին տրված վարկերի և փոխատվությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(88,092)	-	-	(88,092)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Մարված ակտիվներ	88,092	-	-	88,092
Դուրսգրված գումարներ	-	-	-	-
Արտարժույթի մասով ճշգրտումներ	-	-	-	-
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	(80,951)	-	-	(80,951)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(80,951)**	**-**	**-**	**(80,951)**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(67,022)	-	-	(67,022)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Մարված ակտիվներ	67,022	-	-	67,022
Դուրսգրված գումարներ	-	-	-	-
Արտարժույթի մասով ճշգրտումներ	-	-	-	-
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	(88,092)	-	-	(88,092)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(88,092)**	**-**	**-**	**(88,092)**

18 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Առանց վարկանիշի փոքր և միջին չափի հայկական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	6,509,063	9,988,781
Միջին չափի հայկական բանկերից ստացվելիք գումարներ		
• B1-ից B3 վարկանիշով	-	4,651,941
• առանց վարկանիշի	1,024,620	2,617,496
Ընդամենը համախառն դեբիտորական պարտքեր հակադարձ հետգնման պայմանագրերի գծով	**7,533,683**	**17,258,218**
Պարտքային կորստի գծով պահուստ	-	(1)
Ընդամենը զուտ դեբիտորական պարտքեր հակադարձ հետգնման պայմանագրերի գծով	**7,533,683**	**17,258,217**

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ կամ ֆինանսական կազմակերպություն, որի գծով մնացորդները գերազանցեն Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերը վերագրելի են խոշոր հայկական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին: Բոլոր գումարները դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ակտիվների համար որպես ապահովություն ընդունված գրավ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի դիմաց գրավադրված էին 8,478,694 հազար դրամ իրական արժեքով ՀՀ կառավարության արժեթղթերը (2020թ-ին՝ 18,956,896 հազար դրամ):

19 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

	Ծնթգ.	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր	19(ա)	428,111,574	486,218,524
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	19(ա)	220,437,296	196,622,644
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	19(բ)	10,820,379	11,352,912
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր	19(գ)	10,702,129	12,859,539
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված համախառն վարկեր և փոխատվություններ		**670,071,378**	**707,053,619**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	19(դ)	19,900,741	13,033,506
Պարտքային կորստի գծով պահուստ		(16,885,855)	(23,591,602)
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր և փոխատվություններ		**673,086,264**	**696,495,523**

(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր		
Խոշոր ընկերություններին տրված վարկեր	278,128,033	353,785,213
Փոքր և միջին ընկերություններին տրված վարկեր	149,983,541	132,433,311
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**428,111,574**	**486,218,524**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր		
Հիփոթեքային վարկեր	141,193,211	116,987,087
Ֆիզիկական անձանց տրված սպառողական վարկեր	79,244,085	79,635,557
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	**220,437,296**	**196,622,644**
Ընդամենը իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված համախառն վարկեր	**648,548,870**	**682,841,168**
Պարտքային կորստի գծով պահուստ	(16,405,548)	(22,966,663)
Ընդամենը իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված զուտ վարկեր	**632,143,322**	**659,874,505**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	446,950,704	15,682,799	23,585,021	486,218,524
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	173,960,921	-	-	173,960,921
Մարված ակտիվներ	(200,569,161)	(1,718,048)	(1,218,871)	203,506,080)
Տեղափոխում 1-ին փուլ	2,282,319	(2,236,410)	(45,909)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(2,645,707)	2,645,707	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(3,774,867)	(1,916,985)	5,691,852	-
Վերականգնումներ	-	-	1,792,329	1,792,329
Դուրսգրված գումարներ	-	-	(9,098,554)	(9,098,554)
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(15,369,581)	(2,396,581)	(3,489,404)	(21,255,566)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**400,834,628**	**10,060,482**	**17,216,464**	**428,111,574**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	393,406,245	19,160,907	14,086,560	426,653,712
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	215,489,122	-	-	215,489,122
Մարված ակտիվներ	(167,218,336)	(2,124,484)	(112,028)	169,454,848)
Տեղափոխում 1-ին փուլ	4,170,389	(4,170,389)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(12,490,528)	12,490,528	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(2,128,853)	(11,162,539)	13,291,392	-
Վերականգնումներ	-	-	343,277	343,277
Դուրսգրված գումարներ	-	-	(6,969,771)	(6,969,771)

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	15,722,665	1,488,776	2,945,591	20,157,032
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**446,950,704**	**15,682,799**	**23,585,021**	**486,218,524**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	3,721,879	3,217,165	7,408,239	14,347,283
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,352,666	-	-	1,352,666
Մարված ակտիվներ	(1,559,563)	(163,609)	(164,632)	(1,887,804)
Տեղափոխում 1-ին փուլ	761,324	(713,967)	(47,357)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(57,942)	57,942	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(100,758)	(971,034)	1,071,792	-
Ձեղչի ծախսագրում	-	-	874,702	874,702
Վերականգնումներ	-	-	1,792,329	1,792,329
Դուրսգրված գումարներ	-	-	(9,098,554)	(9,098,554)
Արտարժույթի մասով ճշգրտումներ	(228,403)	(24,411)	(479,207)	(732,021)
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա և ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(350,082)	20,411	5,161,174	4,831,503
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**3,539,121**	**1,422,497**	**6,518,486**	**11,480,104**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	1,169,370	3,999,711	5,206,502	10,375,583
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,190,533	-	-	2,190,533
Մարված ակտիվներ	(370,090)	(203,775)	(12,186)	(586,051)
Տեղափոխում 1-ին փուլ	16,594	(14,579)	(2,015)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(377,536)	377,536	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(144,023)	(2,388,641)	2,532,664	-
Ձեղչի ծախսագրում	-	-	(98,902)	(98,902)
Վերականգնումներ	-	-	343,277	343,277
Դուրսգրված գումարներ	-	-	(6,965,771)	(6,965,771)
Արտարժույթի մասով ճշգրտումներ	283,468	339,267	648,130	1,270,865
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա և ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	953,563	1,107,646	5,756,540	7,817,749
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**3,721,879**	**3,217,165**	**7,408,239**	**14,347,283**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆիզիկական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	183,194,635	7,215,470	6,212,539	196,622,644
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	83,482,559	-	-	83,482,559
Մարված ակտիվներ	(42,308,626)	(71,777)	(429,322)	(42,809,725)
Տեղափոխում 1-ին փուլ	149,569	(149,569)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(5,426,429)	5,426,429	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(3,693,103)	(3,815,989)	7,509,092	-
Վերականգնումներ	-	-	1,388,061	1,388,061
Դուրսգրված գումարներ	-	-	(6,937,279)	(6,937,279)
Ակտիվի մնացորդի փոփոխություն տոկոսներից և արտարժույթից	(6,261,743)	(1,727,868)	(3,319,353)	(11,308,964)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**209,136,862**	**6,876,696**	**4,423,738**	**220,437,296**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	147,599,723	816,744	2,819,103	151,235,570
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	77,217,394	-	-	77,217,394
Մարված ակտիվներ	(33,023,824)	(68,452)	(357,767)	(33,450,043)
Տեղափոխում 1-ին փուլ	48,617	(30,836)	(17,781)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(7,322,420)	7,322,420	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(4,704,220)	(233,515)	4,937,735	-
Վերականգնումներ	-	-	1,345,075	1,345,075
Դուրսգրված գումարներ	-	-	(3,815,988)	(3,815,988)
Ակտիվի մնացորդի փոփոխություն տոկոսներից և արտարժույթից	3,379,365	(590,891)	1,302,162	4,090,636
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**183,194,635**	**7,215,470**	**6,212,539**	**196,622,644**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆիզիկական անձանց տրված վարկերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	3,573,341	1,509,225	3,536,814	8,619,380
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,413,070	-	-	2,413,070
Մարված ակտիվներ	(1,702,753)	(63,193)	(136,503)	(1,902,449)
Տեղափոխում 1-ին փուլ	8,662	(8,662)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(180,549)	180,549		-
Տեղափոխում 3-րդ փուլ	(457,945)	(747,552)	1,205,497	-
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա և ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(1,882,741)	1,013,307	2,505,302	1,635,868
Ձեռչի ծախսագրում	-	-	251,952	251,952
Վերականգնումներ	-	-	1,388,061	1,388,061
Դուրսգրված գումարներ	-	-	(6,937,279)	(6,937,279)
Ճշգրտումներ արտարժույթի մասով	(145,810)	(16,589)	(380,760)	(543,159)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,625,275**	**1,867,085**	**1,433,084**	**4,925,444**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	1,407,771	217,051	1,553,641	3,178,463
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,298,415	-	-	2,298,415
Մարված ակտիվներ	(1,237,597)	(63,771)	(273,601)	(1,574,969)
Տեղափոխում 1-ին փուլ	21,796	(8,662)	(13,134)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(279,088)	279,088	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(581,425)	(50,400)	631,825	-
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա և ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	1,938,436	1,192,506	4,006,286	7,137,228
Ձեռչի ծախսագրում	-	-	221,987	221,987
Վերականգնումներ	-	-	1,345,075	1,345,075
Դուրսգրված գումարներ	-	-	(3,815,988)	(3,815,988)
Ճշգրտումներ արտարժույթի մասով	5,033	(56,587)	(119,277)	(170,831)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**3,573,341**	**1,509,225**	**3,536,814**	**8,619,380**

(i) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Վարկեր խոշոր ընկերություններին				
• ոչ ժամկետանց	257,737,871	7,827,475	5,653,431	271,218,777
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	6,909,256	6,909,256
Ընդամենը համախառն վարկեր խոշոր ընկերություններին	**257,737,871**	**7,827,475**	**12,562,687**	**278,128,033**
Պարտքային կորստի գծով պահուստ	(1,850,687)	(893,832)	(4,756,167)	(7,500,686)
Ընդամենը զուտ վարկեր խոշոր ընկերություններին	**255,887,184**	**6,933,643**	**7,806,520**	**270,627,347**
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
• ոչ ժամկետանց	141,150,683	1,503,444	587,321	143,241,448
• մինչև 30 օր ժամկետանց	1,939,995	82,918	51,031	2,073,944
• ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց	6,079	646,645	97,378	750,102
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	3,918,047	3,918,047
Ընդամենը համախառն վարկեր փոքր և միջին ընկերություններին	**143,096,757**	**2,233,007**	**4,653,777**	**149,983,541**
Պարտքային կորստի գծով պահուստ	(1,688,434)	(528,665)	(1,762,319)	(3,979,418)
Ընդամենը զուտ վարկեր փոքր և միջին ընկերություններին	**141,408,323**	**1,704,342**	**2,891,458**	**146,004,123**
Ընդամենը համախառն վարկեր իրավաբանական անձանց	**400,834,628**	**10,060,482**	**17,216,464**	**428,111,574**
Ընդամենը զուտ վարկեր իրավաբանական անձանց	**397,295,507**	**8,637,985**	**10,697,978**	**416,631,470**
Հիփոթեքային վարկեր				
• ոչ ժամկետանց	135,500,246	2,776,866	717,052	138,994,164
• մինչև 30 օր ժամկետանց	246,899	15,193	43,194	305,286
• ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց	-	408,797	139,827	548,624
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	1,345,137	1,345,137
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**135,747,145**	**3,200,856**	**2,245,210**	**141,193,211**
Պարտքային կորստի գծով պահուստ	(306,522)	(249,640)	(454,615)	(1,010,777)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**135,440,623**	**2,951,216**	**1,790,595**	**140,182,434**
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց*				
• ոչ ժամկետանց	72,905,482	3,218,589	733,287	76,857,358
• մինչև 30 օր ժամկետանց	481,031	43,474	38,547	563,052
• ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց	3,204	413,777	92,045	509,026
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	1,314,649	1,314,649
Ընդամենը համախառն սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	**73,389,717**	**3,675,840**	**2,178,528**	**79,244,085**
Պարտքային կորստի գծով պահուստ	(1,318,753)	(1,617,445)	(978,469)	(3,914,667)
Ընդամենը զուտ սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	**72,070,964**	**2,058,395**	**1,200,059**	**75,329,418**
Ընդամենը համախառն վարկեր ֆիզիկական անձանց	**209,136,862**	**6,876,696**	**4,423,738**	**220,437,296**
Ընդամենը զուտ վարկեր ֆիզիկական անձանց	**207,511,587**	**5,009,611**	**2,990,654**	**215,511,852**
Ընդամենը համախառն վարկեր հաճախորդներին	**609,971,490**	**16,937,178**	**21,640,202**	**648,548,870**
Ընդամենը զուտ վարկեր հաճախորդներին	**604,807,094**	**13,647,596**	**13,688,632**	**632,143,322**

* Ֆիզիկական անձանց տրված սպառողական վարկերը հիմնականում ներառում են վարկային քարտերը և օվերդրաֆտները, առցանց սպառողական վարկերը և ապառիկ գնումների համար տրված վարկերը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Վարկեր խոշոր ընկերություններին				
• ոչ ժամկետանց	324,731,233	10,644,203	6,899,828	342,275,264
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	11,509,949	11,509,949
Ընդամենը համախառն վարկեր խոշոր ընկերություններին	**324,731,233**	**10,644,203**	**18,409,777**	**353,785,213**
Պարտքային կորստի գծով պահուստ	(2,302,726)	(1,960,147)	(5,274,548)	(9,537,421)
Ընդամենը զուտ վարկեր խոշոր ընկերություններին	**322,428,507**	**8,684,056**	**13,135,229**	**344,247,792**
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
• ոչ ժամկետանց	122,048,271	4,078,067	871,720	126,998,058
• մինչև 30 օր ժամկետանց	171,200	123,243	91	294,534
• ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց	-	837,286	20,167	857,453
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	4,283,266	4,283,266
Ընդամենը համախառն վարկեր փոքր և միջին ընկերություններին	**122,219,471**	**5,038,596**	**5,175,244**	**132,433,311**
Պարտքային կորստի գծով պահուստ	(1,419,153)	(1,257,018)	(2,133,691)	(4,809,862)
Ընդամենը զուտ վարկեր փոքր և միջին ընկերություններին	**120,800,318**	**3,781,578**	**3,041,553**	**127,623,449**
Ընդամենը համախառն վարկեր իրավաբանական անձանց	**446,950,704**	**15,682,799**	**23,585,021**	**486,218,524**
Ընդամենը զուտ վարկեր իրավաբանական անձանց	**443,228,825**	**12,465,634**	**16,176,782**	**471,871,241**
Հիփոթեքային վարկեր				
• ոչ ժամկետանց	110,981,104	3,570,354	273,982	114,825,440
• մինչև 30 օր ժամկետանց	165,651	33,210	31,677	230,538
• ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց	-	313,588	176,259	489,847
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	1,441,262	1,441,262
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**111,146,755**	**3,917,152**	**1,923,180**	**116,987,087**
Պարտքային կորստի գծով պահուստ	(228,404)	(313,343)	(557,268)	(1,099,015)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**110,918,351**	**3,603,809**	**1,365,912**	**115,888,072**
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց*				
• ոչ ժամկետանց	71,150,129	1,710,621	380,812	73,241,562
• մինչև 30 օր ժամկետանց	897,751	335,588	73,760	1,307,099
• ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց	-	1,252,109	178,519	1,430,628
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	3,656,268	3,656,268
Ընդամենը համախառն սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	**72,047,880**	**3,298,318**	**4,289,359**	**79,635,557**
Պարտքային կորստի գծով պահուստ	(3,344,937)	(1,195,882)	(2,979,546)	(7,520,365)
Ընդամենը զուտ սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	**68,702,943**	**2,102,436**	**1,309,813**	**72,115,192**
Ընդամենը համախառն վարկեր ֆիզիկական անձանց	**183,194,635**	**7,215,470**	**6,212,539**	**196,622,644**
Ընդամենը զուտ վարկեր ֆիզիկական անձանց	**179,621,294**	**5,706,245**	**2,675,725**	**188,003,264**

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ընդամենը համախառն վարկեր հաճախորդներին	**630,145,339**	**22,898,269**	**29,797,560**	**682,841,168**
Ընդամենը զուտ վարկեր հաճախորդներին	**622,850,119**	**18,171,879**	**18,852,507**	**659,874,505**

* Ֆիզիկական անձանց տրված սպառողական վարկերը հիմնականում ներառում են վարկային քարտերը և օվերդրաֆտները, առցանց սպառողական վարկերը և ապառիկ գնումների համար տրված վարկերը:

(ii) Գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերլուծություն

Իրավաբանական անձանց տրված վարկեր

Իրավաբանական անձանց տրված վարկերը ենթակա են պարտքային առումով գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքային որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավը տալիս է լրացուցիչ ապահովվածություն, և Բանկը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ձեռքբերված գրավի հիմնական տեսակներն են՝

- Առևտրային վարկերի համար՝ անշարժ գույք, սարքավորումներ, պաշարներ և դրամական միջոցներ,
- Մանրածախ վարկավորման համար՝ անշարժ գույք:

Բանկը ձեռք է բերում նաև երաշխավորություններ մայր կազմակերպություններից՝ նրանց դուստր կազմակերպություններին տրված վարկերի համար:

Ղեկավարությունը հետևում է գրավի շուկայական արժեքին, պահանջում լրացուցիչ գրավ՝ դրա հիմքում ընկած պայմանագրի համաձայն, և հետևում է ձեռքբերված գրավի շուկայական արժեքին՝ վարկի արժեզրկման պահուստի բավարար լինելը ստուգելիս:

Ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված վարկերի վերադարձելիությունը ավելի շատ կախված է վարկառուների վճարունակությունից, քան գրավի արժեքից, և Բանկի համար պարտադիր չէ վերանայել գրավի արժեքի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆիզիկական անձանց տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը:

Գրավով ապահովված և վարկային քարտերով տրամադրված օվերդրաֆտների համար որպես գրավ են ծառայում հիմնականում անշարժ գույքը և ավտոմեքենաները: Վարկային քարտերով տրված այլ օվերդրաֆտների համար ապահովվածության միջոց է հանդիսանում աշխատավարձը: Ավտոմեքենաների վարկերի դիմաց գրավադրվում են գնված ավտոմեքենաները: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սպառողական վարկերն ապահովված են անշարժ գույքով, շարժական գույքով, աշխատավարձով, դրամական միջոցներով և անհատական երաշխավորություններով:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի համար որպես ապահովություն ծառայող գրավի վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2021թ.	Գրավի գնահատված շուկայական արժեք							
հազ. դրամ	Համախառն հաշվեկշռային արժեք	Անշարժ գույք	Ավտոմե-քենաներ	Այլ	Ավելցուկ	Ընդամենը գրավ	Զուտ ենթարկվա-ծություն	Համապա-տասխան ԱՊԿ
Վարկեր իրավաբանական անձանց	17,216,464	11,635,063	1,744,565	6,029,044	(3,443,417)	15,965,255	1,251,209	6,518,486
Հիփոթեքային վարկեր	2,245,210	2,668,337	84,730	12,590	(936,170)	1,829,487	415,723	454,615
Սպառողական վարկեր	2,178,528	1,464,602	166,886	54,009	(593,110)	1,092,387	1,086,141	978,469
Ընդամենը	**21,640,202**	**15,768,002**	**1,996,181**	**6,095,643**	**(4,972,697)**	**18,887,129**	**2,753,073**	**7,951,570**

31 դեկտեմբերի 2020թ.	Գրավի գնահատված շուկայական արժեք							
հազ. դրամ	Համախառն հաշվեկշռային արժեք	Անշարժ գույք	Ավտոմե-քենաներ	Այլ	Ավելցուկ	Ընդամենը գրավ	Զուտ ենթարկվա-ծություն	Համապա-տասխան ԱՊԿ
Վարկեր իրավաբանական անձանց	23,585,021	14,127,620	553,089	6,395,278	(2,118,151)	18,957,836	4,627,185	7,408,239
Հիփոթեքային վարկեր	1,923,180	1,919,048	46,823	3,220	(581,106)	1,387,985	535,195	557,268
Սպառողական վարկեր	4,289,359	1,167,686	111,530	45,255	(379,471)	945,000	3,344,359	2,979,546
Ընդամենը	**29,797,560**	**17,214,354**	**711,442**	**6,443,753**	**(3,078,728)**	**21,290,821**	**8,506,739**	**10,945,053**

Առգրավված գրավ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել 2,530,398 հազար դրամ (2020թ-ին՝ 181,485 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով ակտիվներ՝ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրված միջոցների առգրավման միջոցով: Առգրավված գրավից 2,962,540 հազար դրամ գումարով գրավը վաճառվել է 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում (2020թ-ին՝ 1,454,203 հազար դրամ): 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առգրավված գրավը ներառում է.

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Անշարժ գույք	1,325,905	1,905,402
Այլ	158,718	11,363
Նվազեցում մինչև իրացման զուտ արժեք	(158,343)	(92,877)
Ընդամենը առգրավված գրավ	**1,326,280**	**1,823,888**

Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները հնարավորինս սեղմ ժամկետներում:

(iii) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են տնտեսության հետևյալ ճյուղերում գործունեություն իրականացնող հաճախորդներին.

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մեծածախ առևտուր	60,088,783	107,520,522
Շինարարություն	48,905,283	29,940,834
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	42,468,352	29,530,102
Սննդի և խմիչքի արտադրություն	37,974,102	38,329,741

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Տրանսպորտ	37,835,056	43,796,861
Մանրածախ առևտուր	33,958,590	31,209,552
Հյուրանոցային ոլորտ	31,295,097	36,438,293
Էներգետիկայի ոլորտ	29,210,379	51,052,777
Հանքարդյունաբերություն/մետալուրգիա	29,142,735	34,392,138
Անշարժ գույք	22,686,452	26,125,399
Կապի ծառայություններ	20,400,077	26,957,558
Ֆինանսներ և ներդրումներ	9,931,454	6,588,265
Արդյունաբերություն	9,849,730	9,134,331
Այլ	14,365,484	15,202,151
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	220,437,296	196,622,644
	648,548,870	**682,841,168**
Պարտքային կորստի գծով պահուստ	(16,405,548)	(22,966,663)
	632,143,322	**659,874,505**

Ստորև ներկայացված է Բանկի իրավաբանական անձանց տրված վարկերի (զուտ վարկեր) աշխարհագրական կենտրոնացվածությունը:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Հայաստանի Հանրապետություն	415,181,330	440,711,659
ՏՀՁԿ և ԵՄ	-	13,619,101
Այլ երկրներ	1,450,140	17,540,481
	416,631,470	**471,871,241**

(iv) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ վարկառու կամ կապակցված վարկառուների խմբեր (2020թ-ին՝ ութ), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 14,216,785 հազար դրամ (2020թ-ին՝ 90,559,754 հազար դրամ):

(v) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելը կազմող վարկերի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև պայմանագրով նախատեսված վարկերի մարման ժամկետը մնացած ժամանակահատվածը:

(բ) Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	10,820,379	11,352,912
Պարտքային կորստի գծով պահուստ	(13,379)	(20,561)
	10,807,000	**11,332,351**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հաճախորդ, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2020թ-ին նման հաճախորդներ չկային):

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքերի համախառն հաշվեկշռային արժեքի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	11,352,912	-	-	11,352,912
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	10,820,379	-	-	10,820,379
Մարված ակտիվներ	(11,352,912)	-	-	(11,352,912)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**10,820,379**	**-**	**-**	**10,820,379**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	10,707,784	-	-	10,707,784
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	11,352,912	-	-	11,352,912
Մարված ակտիվներ	(10,707,784)	-	-	(10,707,784)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**11,352,912**	**-**	**-**	**11,352,912**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքերի կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	20,561	-	-	20,561
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	13,379	-	-	13,379
Մարված ակտիվներ	(20,561)	-	-	(20,561)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**13,379**	**-**	**-**	**13,379**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	7,012	-	-	7,012
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	20,561	-	-	20,561
Մարված ակտիվներ	(7,012)	-	-	(7,012)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**20,561**	**-**	**-**	**20,561**

Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքերն ապահովված են անշարժ գույքով, սարքավորումներով և փոխադրամիջոցներով:

(գ) Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր

	2021թ. հազ. դրամ	**2020թ. հազ. դրամ**
Իրավաբանական անձանց դեբիտորական պարտքեր ակրեդիտիվների գծով	10,702,129	12,859,539
Պարտքային կորստի գծով պահուստ	(42,599)	(55,462)
	10,659,530	**12,804,077**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հաճախորդ, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2020թ-ին նման հաճախորդներ չկային):

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքերի համախառն հաշվեկշռային արժեքի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	12,859,539	-	-	12,859,539
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	17,750,093	-	-	17,750,093
Մարված ակտիվներ	(19,907,503)	-	-	(19,907,503)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**10,702,129**	-	-	**10,702,129**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	5,060,739	-	-	5,060,739
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	10,210,732	-	-	10,210,732
Մարված ակտիվներ	(2,411,932)	-	-	(2,411,932)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**12,859,539**	**-**	**-**	**12,859,539**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքերի կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	55,462	-	-	55,462
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	88,750	-	-	88,750
Մարված ակտիվներ	(101,613)	-	-	(101,613)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**42,599**	-	-	**42,599**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	14,537	-	-	14,537
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	35,925	-	-	35,925
Մարված ակտիվներ	(6,815)	-	-	(6,815)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	11,815	-	-	11,815
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**55,462**	**-**	**-**	**55,462**

(դ) Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերում		
Մինչև մեկ տարի ժամկետով	6,477,120	3,841,013
Մեկից հինգ տարի ժամկետով	16,339,246	10,788,243
Ավելի քան հինգ տարի ժամկետով	2,028,022	1,122,663
	24,844,388	**15,751,919**
Չվաստակած ֆինանսական եկամուտ	(4,943,647)	(2,718,413)
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերում	**19,900,741**	**13,033,506**
Արժեզրկման գծով պահուստ	(424,329)	(548,916)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**19,476,412**	**12,484,590**
Ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումները ներառում են՝		
Մինչև մեկ տարի ժամկետով	5,072,802	3,075,850
Մեկից երկու տարի ժամկետով	4,574,317	3,052,556
Երկուսից երեք տարի ժամկետով	3,755,284	2,512,927
Երեքից չորս տարի ժամկետով	2,844,554	1,852,526
Չորսից հինգ տարի ժամկետով	1,641,133	1,099,538
Ավելի քան հինգ տարի ժամկետով	1,588,322	891,193
	19,476,412	**12,484,590**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի համախառն հաշվեկշռային արժեքի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	12,363,152	91,744	578,610	13,033,506
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	11,198,007	-	-	11,198,007
Մարված ակտիվներ	(3,590,108)	(292,192)	-	(3,882,300)
Տեղափոխում 1-ին փուլ	44,648	(25,936)	(18,712)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(242,513)	242,513	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(404,097)	-	404,097	-
Դուրսգրված գումարներ	-	-	(586,870)	(586,870)
Վերականգնումներ	-	-	138,398	138,398
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**19,369,089**	**16,129**	**515,523**	**19,900,741**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	5,577,779	-	329,073	5,906,852
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	8,497,747	-	-	8,497,747
Մարված ակտիվներ	(1,339,750)	-	(31,343)	(1,371,093)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(91,744)	91,744	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(280,880)	-	280,880	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**12,363,152**	**91,744**	**578,610**	**13,033,506**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	161,774	18,937	368,205	548,916
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	55,990	-	-	55,990
Մարված ակտիվներ	(41,344)	-	-	(41,344)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(31,380)	31,380	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(169,068)	-	169,068	-
Դուրսգրված գումարներ	-	-	(586,870)	(586,870)
Վերականգնումներ	-	-	138,398	138,398
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա և ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխությունները	172,711	(46,697)	167,093	293,107
Ձեղչի ծախսագրում	-	-	16,132	16,132
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**148,683**	**3,620**	**272,026**	**424,329**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
Մնացորդը առ 1 հունվարի	15,746	-	231,416	247,162
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	76,311	-	-	76,311
Մարված ակտիվներ	-	-	(21,859)	(21,859)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(268)	268	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(638)	-	638	-
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա և ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխությունները	70,623	18,669	160,087	249,379
Ձեղչի ծախսագրում	-	-	(2,077)	(2,077)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**161,774**	**18,937**	**368,205**	**548,916**

(i) Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի որակի վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի պարտքային որակի վերաբերյալ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
• ոչ ժամկետանց	19,251,813	16,129	-	19,267,942
• մինչև 30 օր ժամկետանց	117,276	-	18,278	135,554
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	497,245	497,245
Ընդամենը համախառն դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով	**19,369,089**	**16,129**	**515,523**	**19,900,741**
Պարտքային կորստի գծով պահուստ	(148,683)	(3,620)	(272,026)	(424,329)
Ընդամենը զուտ դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով	**19,220,406**	**12,509**	**243,497**	**19,476,412**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի պարտքային որակի վերաբերյալ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
• ոչ ժամկետանց	11,959,564	91,744	89,915	12,141,223
• մինչև 30 օր ժամկետանց	403,588	-	-	403,588
• ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	488,695	488,695
Ընդամենը համախառն դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով	**12,363,152**	**91,744**	**578,610**	**13,033,506**
Պարտքային կորստի գծով պահուստ	(161,774)	(18,937)	(368,205)	(548,916)
Ընդամենը զուտ դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով	**12,201,378**	**72,807**	**210,405**	**12,484,590**

(ii) Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի կենտրոնացում

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հաճախորդ, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2020թ-ին նման հաճախորդներ չկային):

(iii) Գրավի վերլուծություն

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերն ապահովված են անշարժ գույքով, սարքավորումներով և ավտոմեքենաներով: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3-րդ փուլ դասված ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի համար ապահովություն ծառայող գրավի վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2021թ.	Գրավի գնահատված շուկայական արժեք							
հազ. դրամ	Համախառն հաշվեկշռային արժեք	Անշարժ գույք	Ավտոմե-քենաներ	Այլ	Ավելցուկ	Ընդամենը գրավ	Զուտ ենթարկվա-ծություն	Համապա-տասխան ԱՊԿ
Ֆինանսական վարձակալություն	515,523	-	601,278	-	(152,194)	449,084	66,439	272,026
Ընդամենը	**515,523**	**-**	**601,278**	**-**	**(152,194)**	**449,084**	**66,439**	**272,026**

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերն ապահովված են անշարժ գույքով, սարքավորումներով և ավտոմեքենաներով: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3-րդ փուլ դասված ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի համար ապահովություն ծառայող գրավի վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2020թ.	Գրավի գնահատված շուկայական արժեք							
հազ. դրամ	Համախառն հաշվեկշռային արժեք	Անշարժ գույք	Ավտոմե-քենաներ	Այլ	Ավելցուկ	Ընդամենը գրավ	Զուտ ենթարկվա-ծություն	Համապա-տասխան ԱՊԿ
Ֆինանսական վարձակալություն	578,610	39,293	154,020	76,078	(17,843)	251,548	327,062	368,205
Ընդամենը	**578,610**	**39,293**	**154,020**	**76,078**	**(17,843)**	**251,548**	**327,062**	**368,205**

20 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Վարձակալ-ված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	4,776,246	7,896,178	2,644,771	303,730	3,815,266	19,436,191
Ավելացումներ	510,166	377,942	233,303	49,924	1,408,953	2,580,288
Օտարումներ/ դուրսգրումներ	(240,415)	(257,129)	(19,364)	(32,500)	(551,852)	(1,101,260)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**5,045,997**	**8,016,991**	**2,858,710**	**321,154**	**4,672,367**	**20,915,219**
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	1,815,030	4,279,764	769,909	154,184	1,676,768	8,695,655
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	275,310	998,802	232,381	39,677	870,297	2,416,467
Օտարումներ/ դուրսգրումներ	(31,397)	(237,790)	(2,257)	(25,249)	(549,292)	(845,985)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**2,058,943**	**5,040,776**	**1,000,033**	**168,612**	**1,997,773**	**10,266,137**
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**2,987,054**	**2,976,215**	**1,858,677**	**152,542**	**2,674,594**	**10,649,082**

հազ. դրամ	Վարձակալ-ված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	4,759,362	7,643,528	2,506,026	303,730	3,151,700	18,364,346
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	116,029	767,617	54,212	-	1,037,870	1,975,728
Ավելացումներ	(99,145)	(328,572)	(101,862)	-	(374,304)	(903,883)
Օտարումներ/ դուրսգրումներ	-	(186,395)	186,395	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**4,776,246**	**7,896,178**	**2,644,771**	**303,730**	**3,815,266**	**19,436,191**
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	1,545,436	3,616,602	605,485	114,429	1,320,000	7,201,952
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	279,714	894,559	216,553	39,755	722,332	2,152,913
Օտարումներ/ դուրսգրումներ	(10,120)	(215,036)	(68,490)	-	(365,564)	(659,210)
Տեղափոխումներ	-	(16,361)	16,361	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,815,030**	**4,279,764**	**769,909**	**154,184**	**1,676,768**	**8,695,655**
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**2,961,216**	**3,616,414**	**1,874,862**	**149,546**	**2,138,498**	**10,740,536**

21 Վարձակալություն

Բանկը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի գրասենյակների տարածքները և այլ տարածքներ: Վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 10-ից 20 տարի:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	10,643,891	11,235,119
Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներին	763,001	192,695
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	(1,017,247)	(943,483)
Վարձակալության պայմանագրի փոփոխություններ	773,457	159,560
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**11,163,102**	**10,643,891**

(բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածություն	1,017,247	943,483
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	1,343,129	1,359,428

(գ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալության գծով	1,988,756	1,853,981

(դ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	**11,231,832**	**11,373,257**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մարումներ	(1,988,756)	(1,853,981)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(1,988,756)**	**(1,853,981)**
Այլ փոփոխություններ		
Ավելացումներ վարձակալության գծով պարտավորություններին	1,520,105	353,128
Տոկոսային ծախս	1,343,129	1,359,428
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**12,106,310**	**11,231,832**

22 Այլ ակտիվներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Չավարտված գործարքների գծով դեբիտորական պարտքեր	1,753,611	1,839,832
Բրոքերային հաշիվներ	1,214,055	765,568
Սահմանափակումով հաշիվներ քլիրինգային կազմակերպություններում	573,370	622,671
Պարտքային կորստի գծով պահուստ	(24,903)	(70,434)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	**3,516,133**	**3,157,637**
Կանխավճարներ մատակարարներին	6,563,381	6,030,644
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ	1,031,181	1,215,094
Պաշարներ	153,669	194,032
Այլ	13,771	16,371
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**7,762,002**	**7,456,141**
Ընդամենը այլ ակտիվներ	**11,278,135**	**10,613,778**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է այլ ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	10,278	344	59,812	70,434
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	4,654	304	(491,898)	(486,940)
Դուրսգրումներ	-	-	(67,099)	(67,099)
Վերականգնումներ	-	-	508,508	508,508
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**14,932**	**648**	**9,323**	**24,903**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	4,343	467	37,685	42,495
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	5,935	(123)	42,541	48,353
Դուրսգրումներ	-	-	(301,061)	(301,061)
Վերականգնումներ	-	-	280,647	280,647
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**10,278**	**344**	**59,812**	**70,434**

23 Բանկերի ավանդներ և մնացորդներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	21,216,786	15,496,687
Վարկեր և ժամկետային ավանդներ առևտրային բանկերից	4,331,441	7,352,076
• մինչև 12 ամիս սկզբնական մարման ժամկետով	14,414,774	15,676,267
• ավելի քան 12 ամիս սկզբնական մարման ժամկետով	16,364,003	17,058,096
Ակրեդիտիվների գծով պարտավորություններ	322,757	262,390
Լորո հաշիվներ	**56,649,761**	**55,845,516**

Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն Բանկին տրամադրում է վարկեր, որն իր հերթին վարկեր է տրամադրում համապատասխան պայմանները բավարարող վարկառուներին: Վարկերի մշտադիտարկումը և վարչարարությունն իրականացվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի կողմից:

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկն ունի մեկ պայմանագրային կողմ, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային կողմի մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 14,414,774 հազար դրամ (2020թ-ին՝ 15,676,267 հազար դրամ):

24 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
• Ֆիզիկական անձիք	119,887,810	90,671,553
• Իրավաբանական անձինք	189,457,843	261,862,919
Ժամկետային ավանդներ		
• Ֆիզիկական անձիք	182,878,019	157,045,702
• Իրավաբանական անձինք	108,390,624	89,380,492
	600,614,296	**598,960,666**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հաճախորդների ընթացիկ հաշիվներից և ավանդներից 12,846,772 հազար դրամ (2020թ-ին՝ 9,571,865 հազար դրամ) մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխատվության հանձնառությունների դիմաց:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք հաճախորդ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու հաճախորդ), որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 81,659,035 հազար դրամ (2020թ-ին՝ 151,070,677 հազար դրամ):

25 Թողարկված պարտքային արժեթղթեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	88,283,791	77,966,049
Միջազգային ֆինանսական կազմակերպությունների համար թողարկված կանաչ պարտատոմսեր	22,791,152	26,959,811
Մուրհակներ	-	1,990,453
	111,074,943	**106,916,313**

2021թ. դեկտեմբերի դրությամբ Բանկը թողարկել և տեղաբաշխել է պարտքային արժեթղթեր ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով՝ համապատասխանաբար 35.5 միլիարդ դրամ և 52.0 միլիոն ԱՄՆ դոլար անվանական արժեքով (2020թ-ին՝ պարտքային արժեթղթեր ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով՝ համապատասխանաբար 22.1 միլիարդ դրամ և 105.7 միլիոն ԱՄՆ դոլար անվանական արժեքով): 2021թ. դեկտեմբերի դրությամբ պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է համապատասխանաբար 36,017,636 հազար դրամ և 52,266,155 հազար դրամ (2020թ-ին՝ համապատասխանաբար 22,385,424 հազար դրամ և 55,580,625 հազար դրամ):

Բանկի կողմի թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի արժեթղթերի ֆոնդային բորսայում:

2020թ-ին Բանկը թողարկել է 42 միլիոն եվրո գումարով կանաչ պարտատոմսեր՝ 3.05% տոկոսադրույքով, որոնց մարման ժամկետը լրանում է 2025թ. նոյեմբերի 26-ին: Կանաչ պարտատոմսերը թողարկվել են Նիդերլանդների ձեռնարկատիրական զարգացման բանկի (FMO) հետ սերտ համագործակցությամբ, որը նաև այս գործարքի հիմնական ներդրողն է: Կանաչ պարտատոմսերի թողարկման նպատակը շրջակա միջավայրի կայունությանը նպաստող «կանաչ» ծրագրերի ֆինանսավորումն է:

(ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	106,916,313	54,573,055
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Թողարկված պարտքային արժեթղթերի վաճառք	113,175,030	61,954,944
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(99,882,931)	(15,091,797)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**13,292,099**	**46,863,147**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	**(8,882,959)**	**5,235,413**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	6,471,167	3,880,180
Վճարված տոկոսներ	(6,721,677)	(3,635,482)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**111,074,943**	**106,916,313**

26 Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	127,494,752	128,879,544
Փոխառություններ հայկական ֆինանսական կազմակերպություններից	217,666	27,818
	127,712,418	**128,907,362**
Ստորադաս փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	27,393,716	48,416,832
	27,393,716	**48,416,832**

(ա) Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների կենտրոնացում

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի չորս ֆինանսական կազմակերպությունից (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հինգ) ստացված փոխառություններ, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 94,968,710 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 133,062,388 հազար դրամ):

(բ) Ստորադաս փոխառություն

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորադաս փոխառություններն իրենցից ներկայացնում են հինգ ֆինանսական կազմակերպությունից ստացված փոխառություններ՝

- 4,350,235 հազար դրամ՝ 2026թ. հունվարի 15-ին մարման ամսաթվով,
- 7,234,031 հազար դրամ՝ 2027թ. հունվարի 15-ին մարման ամսաթվով,
- 241,756 հազար դրամ՝ 2031թ. հունվարի 3-ին մարման ամսաթվով,
- 7,013,171 հազար դրամ՝ 2031թ. հունվարի 3-ին մարման ամսաթվով,
- 4,541,285 հազար դրամ՝ 2029թ. հունվարի 8-ին մարման ամսաթվով,
- 4,013,238 հազար դրամ՝ 2032թ. հունվարի 2-ին մարման ամսաթվով:

Ստացված փոխառությունները Բանկը դիտարկում է որպես ստորադաս փոխառություններ, եթե սնանկության դեպքում փոխառությունը մարվում է Բանկի մյուս բոլոր այլ պարտավորությունների ամբողջական մարումից հետո:

(գ) Սահմանափակումներ (կովենանտներ)

Բանկը պարտավոր է համապատասխանել որոշակի սահմանափակումների փոխառության պայմանագրերի հետ կապված: 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը համապատասխանում էր բոլոր սահմանափակումներին:

(դ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	Այլ փոխառություններ	Ստորադաս փոխառություններ
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	**128,907,362**	**48,416,832**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր	51,265,871	9,176,598
Մարումներ	(63,438,777)	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(12,172,906)**	**9,176,598**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(15,055,988)	(4,157,705)
Տեղափոխում ստորադաս փոխառությունների կազմից այլ փոխառություններ	26,322,960	(26,322,960)
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	4,971,972	1,548,167
Վճարված տոկոսներ	(5,260,982)	(1,267,216)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**127,712,418**	**27,393,716**

հազ. դրամ	Այլ փոխառություններ	Ստորադաս փոխառություններ
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	126,685,607	36,495,281
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր	22,405,950	7,280,620
Մարումներ	(33,524,720)	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(11,118,770)**	**7,280,620**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	13,370,552	4,994,383
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	5,560,007	2,977,669
Վճարված տոկոսներ	(5,590,034)	(3,331,121)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**128,907,362**	**48,416,832**

27 Այլ պարտավորություններ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	6,204,477	2,452,591
Կրեդիտորական պարտքեր ճանապարհին	2,544,251	1,795,366
Ֆակտորինգի պայմանագրերին վերաբերող ֆինանսական պարտավորություններ	726,794	837,651
Կրեդիտորական պարտքեր	795,497	656,800
Ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամին վճարվելիք գումարներ	175,312	152,325
Այլ կրեդիտորական պարտքեր	434,309	246,338
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**10,880,640**	**6,141,071**
Այլ վճարվելիք հարկեր	1,524,071	1,128,154
Հետաձգված եկամուտ	31,376	29,362
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**1,555,447**	**1,157,516**
Ընդամենը այլ պարտավորություններ	**12,436,087**	**7,298,587**

28 Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
ՀՀ կենտրոնական բանկին վճարվելիք գումարներ	18,011,594	20,005,910
Ընդամենը կրեդիտորական պարտքեր հետգնման պայմանագրերի գծով	**18,011,594**	**20,005,910**

(ա) Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքերի կենտրոնացում

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկը չունի այնպիսի պայմանագրային կողմ, որի գծով մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

29 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 116,959 սովորական բաժնետոմսից (2020թ-ին՝ 116,834): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 465 հազար դրամ (2020թ-ին՝ 320 հազար դրամ) և բոլոր բաժնետոմսերն ամբողջությամբ վճարված են:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրության համաձայն որոշվող Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2021թ-ին և 2020թ-ին Բանկը շահաբաժիններ չի հայտարարել և չի վճարել է:

(դ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվել է սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող 19,416,067 հազար դրամ (2020թ-ին՝ 9,000,204 հազար դրամ) շահույթի և շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվի՝ 116,936 (2020թ-ին՝ 116,817) հիման վրա, ինչպես ներկայացված է ստորև: Բանկը չունի նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսեր:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Թողարկված բաժնետոմսերը առ 1 հունվարի	116,834	116,710
Փետրվարին թողարկված բաժնետոմսերի ազդեցությունը	-	124
Մարտին թողարկված բաժնետոմսերի ազդեցությունը	125	-
Բաժնետոմսերի կշռված միջին թիվը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	**116,936**	**116,817**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	**166.04**	**77.05**

30 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան/փորձն արտացոլելու նպատակով:

Տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման,

կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Տնօրինությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որը գլխավորում է Գլխավոր տնօրենը: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Տնօրինության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Տնօրինության կողմից:

Բացի այդ, Բանկն իրականացնում է մեծ թվով սթրես թեստեր առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր դիրքի վրա շուկայի բազմաթիվ բացառիկ սցենարների ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար: Սթրեսի թեստերը ցույց են տալիս կորուստների հավանական չափը, որոնք կարող են առաջանալ ծայրահեղ պայմաններում:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում

Դիտարկում

Աշխարհում իրականացվում է հիմնական ուղենիշային տոկոսադրույքների ֆունդամենտալ բարեփոխում, որի շրջանակում նախատեսվում է որոշ միջբանկային առաջարկի տոկոսադրույքները (IBORs) փոխարինել այլընտրանքային գրեթե ոչ ռիսկային տոկոսադրույքներով (IBOR բարեփոխում): Բանկն ունի ֆինանսական գործիքներ, որոնց տոկոսադրույքները հիմնված են IBOR-ի հիման վրա, որոնք ենթարկվում են բարեփոխման այս շուկայական նախաձեռնությունների շրջանակում:

Հիմնական ռիսկերը, որոնց Բանկը ենթարկվել է IBOR բարեփոխման արդյունքում, գործառնական ռիսկերն են, օրինակ՝ վարկային պայմանագրերի պայմանների վերաբանակցումը փոխառուների հետ երկկողմանի բանակցությունների միջոցով,

պայմանագրերի պայմանների վերանայումը, IBOR կորերն օգտագործող համակարգերի թարմացումը և գործառնական գործունեության հսկողության մեխանիզմների վերանայումը, որոնք կապված են բարեփոխման և կանոնակարգերի փոփոխության ռիսկերի հետ: Ֆինանսական ռիսկը հիմնականում սահմանափակվում է տոկոսադրույքի ռիսկով:

Ֆինանսական և գործառնական դեպարտամենտը վերահսկում և կառավարում է Բանկի անցումն այլընտրանքային տոկոսադրույքներին: Ֆինանսական և գործառնական դեպարտամենտը գործառնական սեգմենտ հետ մեկտեղ գնահատում է տրամադրված վարկերը, փոխատվության հանձնառությունները, պարտավորությունները և ածանցյալ գործիքները IBOR-ի վրա հիմնված դրամական հոսքերի առկայության տեսանկյունից, թե արդյոք այդ պայմանագրերում կպահանջվեն փոփոխություններ IBOR բարեփոխման արդյունքում և ինչպես կառավարել IBOR բարեփոխման վերաբերյալ հաղորդակցման գործընթացը պայմանագրային կողմերի հետ: Ֆինանսական և գործառնական դեպարտամենտը հաշվետու է Տնօրինությանը և անհրաժեշտության դեպքում համագործակցում է այլ բաժինների հետ: Այն պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում ԱՊԿԿ-ին տոկոսադրույքի ռիսկի կառավարմանն օժանդակելու համար:

Այն պայմանագրերի համար, որոնց տոկոսադրույքները հաշվարկված են IBOR-ի հիման վրա և որոնց գործողության ժամկետը լրանում է IBOR տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ակնկալվող դադարեցումից հետո, Բանկը սահմանել է պայմանագրային պայմանները փոխելու քաղաքականություն: Այդ փոփոխությունները ներառում են վերապահում նախատեսող կետերի ավելացումը կամ IBOR տոկոսադրույքի փոխարինումն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքով, եթե նման փոփոխությունը թույլատրվում է տեղական օրենսդրությամբ:

Բանկը հաստատել է քաղաքականություն, որը պահանջում է, որպեսզի 2022թ. փետրվարի 1-ից բոլոր նոր սկզբնավորված, լողացող տոկոսադրույք ունեցող վարկերը կապակցված լինեն Չիկագոյի ապրանքային բորսայի (CME) կողմից հրապարակված ժամկետային ապահովված օվերնայթ ֆինանսավորման տոկոսադրույքին (SOFR) ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի համար և եվրոպական միջբանկային առաջարկի տոկոսադրույքին (EURIBOR)՝ եվրոյով տրամադրված վարկերի համար:

Բանկը վերահսկում է IBOR-ից նոր ուղենիշային տոկոսադրույքներին անցման գործընթացը ուսումնասիրելով այն պայմանագրերի ընդհանուր արժեքը, որոնք դեռ չեն անցել այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքի, և այն պայմանագրերի արժեքը, որոնք ներառում են վերապահում նախատեսող համապատասխան կետ: Բանկը համարում է, որ պայմանագրի տոկոսադրույքը դեռ չի փոխարինվել այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքով («չբարեփոխված պայմանագիր»), եթե պայմանագրի տոկոսադրույքը հաշվարկված է այնպիսի ուղենիշային տոկոսադրույքի հիման վրա, որը դեռ ենթակա է IBOR բարեփոխման, նույնիսկ եթե այն ներառում է վերապահում նախատեսող կետ, եթե գործող IBOR տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը դադարեցվի:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ IBOR բարեփոխումն այն արտարժույթների հետ կապված, որոնցով Բանկն ունի ֆինանսական գործիքներ, ընդհանուր առմամբ ավարտված էր: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն Բանկի ֆինանսական գործիքների IBOR տոկոսադրույքների, նոր ուղենիշային տոկոսադրույքների վերաբերյալ, որոնցով փոփարինվել կամ փոխարինվում են ֆինանսական գործիքների տոկոսադրույքները, ինչպես նաև նոր տոկոսադրույքներին անցման գործընթացի կարգավիճակի վերաբերյալ:

Արտարժույթ	Ուղենիշային տոկոսադրույքը նախքան բարեփոխումը	Ուղենիշային տոկոսադրույքը բարեփոխումից հետո	Կարգավիճակը առ 31 դեկտեմբերի 2021թ.
ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլարի LIBOR	SOFR	Ավարտված է
Եվրո	Եվրոյի LIBOR	EURIBOR բարեփոխված	Ավարտված է

2021թ. մարտին Ֆինանսական վարքագծի մարմինը (FCA)՝ որպես Միջմայրցամաքային բորսայի (ICE) կարգավորիչ (LIBOR-ի լիազորված ադմինիստրատոր), հայտարարեց, որ 2021թ. դեկտեմբերի 31-ից հետո LIBOR տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվությունը ֆունտ ստերլինգի, եվրոյի և մեկշաբաթյա և երկամսյա տոկոսադրույքների վերաբերյալ

տեղեկատվությունը ԱՄՆ դոլարի համար կամ կդադարի հրապարակվել, կամ այլևս չի հանդիսանա ներկայացուցչական: ԱՄՆ դոլարի համար մնացած LIBOR տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվությունը կամ կդադարի հրապարակվել, կամ այլևս չի հանդիսանա ներկայացուցչական 2023թ. հունիսի 30-ից հետո:

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ և փոխատվության հանձնառություններ

2021թ. ընթացքում Բանկն ուներ հետևյալ ածանցյալ ֆինանսական ակտիվները և փոխատվության հանձնառությունները, որոնց տոկոսադրույքները հիմնված են IBOR բարեփոխման ենթակա տոկոսադրույքների վրա.

- հաճախորդներին տրված լողացող տոկոսադրույքով վարկեր՝ ԱՄՆ դոլարի LIBOR, եվրոյի LIBOR, որոնք Բանկի կողմից տրամադրվում են իր գործունեության իրականացման շրջանակում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների չբարեփոխված պայմանագրերի և վերապահում նախատեսող համապատասխան կետ ներառող պայմանագրերի ընդհանուր արժեքները 2021թ. հունվարի 1-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլարի LIBOR		Եվրոյի LIBOR	
հազ. դրամ	**Չբարեփոխված պայմանագրերի ընդհանուր արժեքը**	**Վերապահում նախատեսող կետ ներառող պայմանագրերի արժեքը**	**Չբարեփոխված պայմանագրերի ընդհանուր արժեքը**	**Վերապահում նախատեսող կետ ներառող պայմանագրերի արժեքը**
31 դեկտեմբերի 2021թ.				
Իրավաբանական անձանց տրված վարկեր	63,663,436	24,988,330	30,507,900	27,256,345
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	32,345,343	21,590,573	8,889,603	5,341,316
1 հունվարի 2021թ.				
Իրավաբանական անձանց տրված վարկեր	77,161,300	23,780,480	25,153,015	17,521,779
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	28,386,325	14,334,492	7,959,231	3,633,996

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների չբարեփոխված պայմանագրերի և վերապահում նախատեսող համապատասխան կետ ներառող պայմանագրերի ընդհանուր արժեքները 2021թ. հունվարի 1-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Աղյուսակի գումարներն իրենցից ներկայացնում են հաշվեկշռային արժեքները:

	ԱՄՆ դոլարի LIBOR	
հազ. դրամ	**Չբարեփոխված պայմանագրերի ընդհանուր արժեքը**	**Վերապահում նախատեսող կետ ներառող պայմանագրերի արժեքը**
31 դեկտեմբերի 2021թ.		
Այլ փոխառություններ	79,883,032	79,883,032
Ստորադաս պարտավորություններ	11,163,255	11,163,255
	91,046,287	**91,046,287**

	ԱՄՆ դոլարի LIBOR	
հազ. դրամ	**Չբարեփոխված պայմանագրերի ընդհանուր արժեքը**	**Վերապահում նախատեսող կետ ներառող պայմանագրերի արժեքը**
1 հունվարի 2021թ.		
Այլ փոխառություններ	64,268,980	64,268,980
Ստորադաս պարտավորություններ	31,209,100	31,209,100
	95,478,080	**95,478,080**

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2021թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			**2020թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %**		
	ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար**	**Այլ արտարժույթ**	**ՀՀ դրամ**	**ԱՄՆ դոլար**	**Այլ արտարժույթ**
Տոկոսաբեր ակտիվներ						
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	9.2%	6.4%	2.7%	8.2%	7.1%	3.4%
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	8.9%	4.7%	-	8.7%	7.7%	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8.0%	4.8%	-	7.8%	-	-
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	-	7.1%	0.7%	6.8%	3.7%	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	9.2%	-	-	6.6%	3.6%	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	14.0%	8.1%	6.5%	11.8%	7.9%	6.2%
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	11.4%	8.0%	6.1%	10.8%	7.1%	5.8%
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	15.9%	9.9%	19.1%	12.0%	8.5%	5.9%
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր	-	5.0%	5.1%	-	4.8%	4.4%

	2021թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			2020թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր Պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	6.2%	2.9%	0.6%	6.3%	2.1%	0.5%
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	7.8%	-	-	5.4%	-	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	10.0%	4.9%	3.2%	9.5%	5.0%	3.1%
Հաճախորդների ժամկետային ավանդներ	9.3%	3.5%	1.8%	8.8%	3.6%	1.5%
Ստորադաս փոխառություններ	-	6.4%	6.5%	-	3.6%	6.3%
Այլ փոխառություններ	11.0%	2.8%	3.3%	8.0%	3.0%	2.8%

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների, եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի հիման վրա:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
100 բկ զուգահեռ աճ	(610,497)	(461,000)
100 բկ զուգահեռ նվազում	610,497	461,000

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2021թ. Սեփական կապիտալ հազ. դրամ	2020թ. Սեփական կապիտալ հազ. դրամ
100 բկ զուգահեռ աճ	(212,596)	(307,040)
100 բկ զուգահեռ նվազում	212,596	307,040

(ii) Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	132,971,234	59,480,233	4,190,504	196,641,971
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	2,738,543	57,407	-	2,795,950
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,681,858	-	-	5,681,858
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9,051,475	-	-	9,051,475
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	28,977,049	11,596,034	97,334	40,670,417
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	260,854,673	102,480,675	1,896,971	365,232,319
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր	5,617,441	5,042,088	-	10,659,529
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	2,787,101	4,948,458	-	7,735,559
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	6,434,437	3,289,391	46,912	9,770,740
Այլ ֆինանսական ակտիվներ	2,381,348	3,860	36,725	2,421,933
Ընդամենը ակտիվներ	**457,495,159**	**186,898,146**	**6,268,446**	**650,661,751**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	44,391	-	-	44,391
Բանկերի ավանդներ և մնացորդներ	28,419,464	7,514,023	17,547	35,951,034
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	316,603,478	61,249,209	7,233,377	385,086,064
Թողարկված պարտքային արժեթղթեր	52,266,155	22,791,153	-	75,057,308
Ստորադաս փոխառություններ	11,268,166	16,125,550	-	27,393,716
Այլ փոխառություններ	75,235,761	41,916,172	-	117,151,933
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	146,840	-	-	146,840
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,023,165	775,715	10,076	1,808,956
Ընդամենը պարտավորություններ	**485,007,420**	**150,371,822**	**7,261,000**	**642,640,242**
Զուտ դիրքը	**(27,512,261)**	**36,526,324**	**(992,554)**	**8,021,509**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը*	29,854,566	(37,982,700)	8,221	(8,119,913)
Զուտ դիրքը	**2,342,305**	**(1,456,376)**	**(984,333)**	**(98,404)**

* 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ստորագրել էր մի շարք կարճաժամկետ արժութային սվոպի պայմանագրեր միջազգային և տեղական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ ԱՄՆ դոլարի և եվրոյի զգալի զուտ արտարժութային դիրքը կառավարելու համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	156,408,740	22,510,097	4,394,666	183,313,503
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	2,928,048	87,445	-	3,015,493
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	2,863,402	-	-	2,863,402
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	28,213,458	5,003,217	32,050	33,248,725
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	7,699,295	-	-	7,699,295
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	311,549,981	129,309,804	2,026,516	442,886,301
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր	5,069,483	7,734,594	-	12,804,077
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	2,995,076	4,737,101	-	7,732,177
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	7,162,697	3,603,282	10,376	10,776,355
Այլ ֆինանսական ակտիվներ	1,807,199	79,843	35,341	1,922,383
Ընդամենը ակտիվներ	**526,697,379**	**173,065,383**	**6,498,949**	**706,261,711**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	424,588	-	-	424,588
Բանկերի ավանդներ և մնացորդներ	30,251,908	10,012,647	707	40,265,262
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	345,067,858	67,547,624	7,825,550	420,441,032
Թողարկված պարտքային արժեթղթեր	57,571,078	26,959,811	-	84,530,889
Ստորադաս փոխառություններ	34,731,325	13,685,507	-	48,416,832
Այլ փոխառություններ	72,121,984	44,120,072	-	116,242,056
Այլ ֆինանսական պարտավորություններ	857,489	609,531	45,017	1,512,037
Ընդամենը պարտավորություններ	**541,026,230**	**162,935,192**	**7,871,274**	**711,832,696**
Զուտ դիրքը	**(14,328,851)**	**10,130,191**	**(1,372,325)**	**(5,570,985)**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	6,724,532	(16,668,860)	21,182	**(9,923,146)**
Զուտ դիրքը	**(7,604,319)**	**(6,538,669)**	**(1,351,143)**	**(15,494,131)**

Ստորև աղյուսակում ներկայացված 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առաջացող եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	234,231	(760,432)
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	(145,638)	(653,867)

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի և Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրինության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Բանկը ենթարկված է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկավորման բաժին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական բաժնի կողմից՝ կախված առանձին ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային դիմումներն ուսումնասիրվում են Մանրածախ վարկավորման ստորաբաժանման կողմից: 2020թ-ից Բանկը ներդրել է մեքենայական ուսուցման վրա հիմնված նոր սքորինգային համակարգ ապառիկ գնումների պորտֆելի և օնլայն սպառողական վարկերի տրամադրման համար:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գրավի և այդ վարկերի և փոխատվությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 19-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Ստորև ներկայացված են ակնյալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և առանցքային տարրերը:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականության	Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
Պարտքի գումարը պարտազանցման պահին	Պարտքի գումարը պարտազանցման պահին ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:
Կորուստը պարտազանցման դեպքում	Կորուստը պարտազանցման դեպքում դա այն կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտազանցում տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, ինչպես ներկայացված է ստորև.

1-փուլ	Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
2-րդ փուլ	Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
3-րդ փուլ	Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով:
Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: Ակնկալվող պարտքային կորուստների ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Պարտազանցման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով ղեկավարության դատողությունից: Եթե այդ դեպքը տեղի է ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունները և պայմանագրային կողմերն իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ և դիլերներ, ֆոնդային բորսաներ և քլիրինգային կազմակերպություններ: Այս հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի

տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշերը:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Խմբավորում

Բանկը չունի ներքին վարկանիշային համակարգ իրավաբանական անձանց տրված վարկերի համար, որը կարող է օգտագործվել պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը գնահատելու համար: Բանկն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները.

- կորպորատիվ վարկեր,
- հիփոթեքային վարկեր,
- սպառողական վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցների միջոցով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը: Հավանականությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ընդհանուր վարկերի ժամկետանց դասերի միջև տեղափոխվող վարկերի մասնաբաժինը: Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը հետագայում ճշգրտում է ապագայամետ տեղեկատվության հիման վրա:

Պարտքի գումարը պարտազանցման պահին

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը՝ հաշվի առնելով թե՛ պարտքի գումարը մեծացնելու հաճախորդի հնարավորությունը առաջիկա պարտազանցման դեպքում և թե՛ հնարավոր վաղաժամ մարումը: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտազանցման պահին պարտքի գումարը դիտարկվում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի համախառն գումարին:

Պարտքի գումարը պարտազանցման պահին որոշվում է նախքան պարտազանցման տեղի ունենալու ամսաթիվը չկատարված պարտականություններով վարկերի ամորտիզացված արժեքի վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում

Հաճախորդներին տրված 1-ին փուլի վարկերի, ինչպես նաև անհատական հիմունքով ոչ էական 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար, Բանկը պարտազանցման դեպքում կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները չկատարված պարտականություններով բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և զեղչվում է պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է չկատարված պարտականություններով վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից ստացված դրամական միջոցներ, երաշխավորողից ստացված դրամական միջոցներ, գրավի վաճառքից ստացված դրամական միջոցներ և այլն): Առանձին վերցված նշանակալի 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում կորուստը հաշվարկում է անհատական

հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, ներառյալ գրավի իրացումից ստացվելիք դրամական հոսքերը:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վճարումները ավելի քան 30 օր ժամկետանց են:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններում,
- վարկառուի զգալի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով,
- մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացումը և դրանց հնարավոր ազդեցությունը վարկառուի ֆինանսական արդյունքների վրա:

Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը որպես ապագայամետ տեղեկատվություն օգտագործում է մակրոտնտեսական ցուցանիշներ լայն շրջանակ, որոնցից են՝

- սպառողական գների ինդեքսը,
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը,
- ՌԴ ռուբլի /ՀՀ դրամ փոխարժեքը,
- արտահանման ծավալները,
- ներմուծման ծավալները,
- ՀՆԱ-ի իրական աճը,
- արդյունաբերական արտադրության աճը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից): Բանկի Պարտքային ռիսկի բաժնի փորձագետները գնահատում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի յուրաքանչյուր սցենարում օգտագործված մակրոտնտեսական ցուցանիշները/ենթադրությունները:

	ԱՊԿ սցենար	Որոշված հավանականություն, %	2022թ.	2023թ.
Հիմնական գործոններ				
Սպառողական գների ինդեքս				
	Լավատեսական	20%	102.098	100.998
	Բազային	50%	105.100	104.000
	Վատատեսական	30%	108.102	107.002
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք				
	Լավատեսական	20%	447.299	450.699
	Բազային	50%	496.000	499.400
	Վատատեսական	30%	544.701	548.101
ՌԴ ռուբլու/ՀՀ դրամ փոխարժեք				
	Լավատեսական	20%	9.4893	9.5293
	Բազային	50%	6.8800	6.9200
	Վատատեսական	30%	4.2707	4.3107
Արտահանում, մլն. ՀՀ դրամ				
	Լավատեսական	20%	4,157.81	4,454.81
	Բազային	50%	3,531.00	3,828.00
	Վատատեսական	30%	2,904.19	3,201.19
Ներմուծում, մլն. ՀՀ դրամ				
	Լավատեսական	20%	6,595.91	7,001.91
	Բազային	50%	5,890.00	6,296.00
	Վատատեսական	30%	5,184.09	5,590.09
ՀՆԱ-ի իրական աճ				
	Լավատեսական	20%	108.315	108.115
	Բազային	50%	104.200	104.000
	Վատատեսական	30%	100.084	99.885
Արդյունաբերական արտադրության աճ				
	Լավատեսական	20%	10.349	8.249
	Բազային	50%	5.500	3.400
	Վատատեսական	30%	0.651	(1.449)

Վերը աղյուսակում ներկայացված բազային կանխատեսումների հետ մեկտեղ (50% հավանականությամբ) Բանկը օգտագործում է նաև ցնցումային մակրոտնտեսական փոփոխականներ ակնկալվող պարտքային կորուստները լավատեսական (20% հավանականությամբ) և վատատեսական (20% հավանականությամբ) սցենարներով հաշվարկելու համար: Այս ցուցանիշները գնահատվում են ակնկալվող պարտքային կորուստների վերջնական ցուցանիշը ստանալու համար: 2020թ-ին Բանկը սցենարների համար կիրառել էր հետևյալ ցուցանիշները. բազային սցենարի 50% հավանականություն, լավատեսական սցենարի 20% հավանականություն և վատատեսական սցենարի 30% հավանականություն:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Այս գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. Պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	7,533,683	-	7,533,683	(7,533,683)	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**7,533,683**	**-**	**7,533,683**	**(7,533,683)**	**-**
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	(18,011,594)	-	(18,011,594)	18,011,594	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(18,011,594)**	**-**	**(18,011,594)**	**18,011,594**	**-**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	17,258,217	-	17,258,217	(17,258,217)	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**17,258,217**	**-**	**17,258,217**	**(17,258,217)**	**-**

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	(20,005,910)	-	(20,005,910)	20,005,910	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(20,005,910)**	**-**	**(20,005,910)**	**20,005,910**	**-**

Վերը աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է այլ բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Ակտիվների և պարտավորությունների բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և փոխատվություններից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ:

Ակտիվների և պարտավորությունների բաժինն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «ստրեսային թեսթեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է Ռիսկերի կառավարման բաժնի և ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Ակտիվների և պարտավորությունների բաժնի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխավորությունը կարող է օգտագործվել: Վճարումները, որոնց մասին հաճախորդները պետք է ծանուցվեն, դիտարկվում են այնպես, ինչպես եթե ծանուցումն անմիջապես ներկայացված լիներ, բացառությամբ հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների, որոնց համար նշված են մարումների ակնկալվող ժամկետները: Այնուամենայնիվ Բանկն ակնկալում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումն այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որին Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված ավանդներին վերաբերող Բանկի անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ֆինանսական պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,257,681	389,501	15,995,313	2,622,322	36,091,343	6,497,534	62,853,694	56,649,761
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	18,011,594	-	-	-	-	-	18,011,594	18,011,594
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	331,990,455	50,168,337	58,809,736	111,310,877	57,228,465	3,382,112	612,889,982	600,614,296
Թողարկված պարտքային արժեթղթեր	511,974	11,692,803	7,308,512	25,110,565	75,722,295	-	120,346,149	111,074,943
Ստորադաս փոխառություններ	-	479,860	365,880	858,550	10,912,913	26,770,951	39,388,154	27,393,716
Այլ փոխառություններ	24,381,958	9,969,585	11,445,894	32,786,958	53,692,070	5,334,749	137,611,214	127,712,418
Վարձակալության գծով պարտավորություններ	411,667	84,381	496,048	991,394	6,989,806	15,185,796	24,159,092	12,106,310

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**376,565,329**	**72,784,467**	**94,421,383**	**173,680,666**	**240,636,892**	**57,171,142**	**1,015,259,879**	**953,563,038**
Փոխատվության հանձնառություններ	**67,222,556**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**67,222,556**	**67,222,556**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ֆինանսական պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	671,173	9,788,969	2,140,395	10,044,487	27,041,389	8,879,204	58,565,617	55,845,516
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	20,005,910	-	-	-	-	-	20,005,910	20,005,910
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	377,784,438	33,918,155	62,517,276	102,828,820	29,500,256	31,671	606,580,616	598,960,666
Թողարկված պարտքային արժեթղթեր	289,902	1,809,383	9,345,396	13,882,209	92,369,439	-	117,696,329	106,916,313
Ստորադաս փոխառություններ	382,925	246,845	429,396	1,047,523	32,043,921	24,811,934	58,962,544	48,416,832
Այլ փոխառություններ	44,891	2,169,847	25,886,044	24,629,226	81,521,573	2,234,003	136,485,584	128,907,362
Վարձակալության գծով պարտավորություններ	381,931	78,286	460,217	920,433	6,526,415	16,143,973	24,511,255	11,231,832
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**399,561,170**	**48,011,485**	**100,778,724**	**153,352,698**	**269,002,993**	**52,100,785**	**1,022,807,855**	**970,284,431**
Փոխատվության հանձնառություններ	**63,218,127**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**63,218,127**	**63,218,127**

Վերը և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցներում ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Բանկը պարտավոր է վճարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն ըստ ավանդատուի պահանջի՝ կորցնելով հաշվեգրված տոկոսները: Վերը ներկայացված աղյուսակում այս ավանդները դասակարգված են ըստ պայմանագրային մարման ժամկետների: Ստորև առանձին ներկայացված է այս ավանդների դասակարգումն ըստ մարման ժամկետների:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	12,670,205	15,504,582
1-ից 3 ամիս ժամկետով	24,128,072	22,458,045
3-ից 6 ամիս ժամկետով	34,370,019	28,460,763
6-ից 12 ամիս ժամկետով	89,933,056	72,668,859
Ավելի քան 1 տարի ժամկետով	21,776,667	17,953,453
	182,878,019	**157,045,702**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	264,090,145	-	-	-	-	-	-	264,090,145
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	100,781	238,861	2,128,106	5,048,285	707,927	-	-	8,223,960
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	599,712	890,335	6,362,801	4,127,105	36,832	-	12,016,785
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	168,420	9,202,239	25,558,858	18,756,791	-	-	53,686,308
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	8,142,953	-	244,424	240,070	-	34,705,814	-	43,333,261
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	7,533,683	-	-	-	-	-	-	7,533,683
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	16,142,251	26,281,774	114,696,923	274,659,773	188,505,427	-	11,857,174	632,143,322
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր	12,287	-	7,254,082	3,393,161	-	-	-	10,659,530
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	501,240	787,418	3,788,991	12,808,925	1,536,158	-	53,680	19,476,412
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	1,822,319	5,015,987	3,968,694	-	-	-	-	10,807,000
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	10,649,082	-	10,649,082
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	-	-	-	-	-	11,163,102	-	11,163,102
Առգրավված ակտիվներ	-	-	-	-	-	1,326,280	-	1,326,280
Այլ ակտիվներ	3,797,175	154,262	5,718,216	-	-	1,608,482	-	11,278,135
Ընդամենը ակտիվներ	**302,142,834**	**33,246,434**	**147,892,010**	**328,071,873**	**213,633,408**	**59,489,592**	**11,910,854**	**1,096,387,005**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	48,436	3,415	3,415	37,561	-	-	-	92,827
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	18,011,594	-	-	-	-	-	-	18,011,594
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,073,040	386,129	18,478,015	31,798,407	4,914,170	-	-	56,649,761
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	227,912,582	80,205,899	192,026,344	97,842,183	2,627,288	-	-	600,614,296
Թողարկված պարտքային արժեթղթեր	509,715	11,582,804	31,079,421	67,903,003	-	-	-	111,074,943
Ստորադաս փոխառություններ	-	473,725	1,170,804	8,871,702	16,877,485	-	-	27,393,716
Այլ փոխառություններ	24,380,554	10,003,838	43,012,382	47,236,012	3,079,632	-	-	127,712,418
Վարձակալության գծով պարտավորություններ	278,947	-	649,879	2,218,529	8,958,955	-	-	12,106,310
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	-	454,831	-	-	-	-	454,831
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	664,044	-	-	-	-	664,044
Հանձնառությունների գծով պահուստ	244,929	-	-	-	-	-	-	244,929
Այլ պարտավորություններ	3,846,937	1,641,858	6,947,292	-	-	-	-	12,436,087
Ընդամենը պարտավորություններ	**276,306,734**	**104,297,668**	**294,486,427**	**255,907,397**	**36,457,530**	**-**	**-**	**967,455,756**
Զուտ դիրքը	**25,836,100**	**(71,051,234)**	**(146,594,417)**	**72,164,476**	**177,175,878**	**59,489,592**	**11,910,854**	**128,931,249**

Աղյուսակում ներկայացված մարման ժամկետների վերլուծությունն արտացոլում է անցյալ ժամանակաշրջանների օրինաչափությունը և հաճախորդների ընթացիկ հաշիվների փաստացի մարումների ծավալը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	234,412,812	-	-	-	-	-	-	234,412,812
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	52,946	479,885	1,563,706	6,095,657	1,284,372	-	-	9,476,566
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	32,306	2,492,014	6,638,866	1,961,850	82,965	-	11,208,001
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	4,494,005	11,658,102	23,599,731	11,785,455	-	-	51,537,293
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	-	1,836,523	-	528,866	-	33,158,420	-	35,523,809
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	17,258,217	-	-	-	-	-	-	17,258,217
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	28,948,628	35,955,332	104,829,225	307,555,342	160,860,344	-	21,725,634	659,874,505
Ակրեդիտիվների գծով դեբիտորական պարտքեր	30,071	4,899,987	3,349,425	4,524,594	-	-	-	12,804,077
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	297,048	508,848	2,238,398	8,550,502	728,961	-	160,833	12,484,590
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	110,107	4,221,344	7,000,900	-	-	-	-	11,332,351
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	10,740,536	-	10,740,536
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	-	-	-	-	-	10,643,891	-	10,643,891
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	1,028,409	-	-	-	-	1,028,409
Առգրավված ակտիվներ	-	-	-	-	-	1,823,888	-	1,823,888
Այլ ակտիվներ	2,549,148	194,624	6,028,531	-	-	1,841,475	-	10,613,778
Ընդամենը ակտիվներ	**283,658,977**	**52,622,854**	**140,188,710**	**357,493,558**	**176,620,982**	**58,291,175**	**21,886,467**	**1,090,762,723**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	13,465	74,373	8,013	408,561	-	-	-	504,412
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	20,005,910	-	-	-	-	-	-	20,005,910
Բանկերի ավանդներ և մնացորդներ	665,161	9,770,834	11,403,483	25,113,016	8,893,022	-	-	55,845,516
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	283,685,459	51,887,128	194,398,418	68,964,206	25,455	-	-	598,960,666
Թողարկված պարտքային արժեթղթեր	201,919	1,367,669	19,282,112	86,064,613	-	-	-	106,916,313
Ստորադաս փոխառություններ	352,429	133,162	35,022	26,278,835	21,617,384	-	-	48,416,832
Այլ փոխառություններ	44,820	1,794,210	47,750,301	77,208,100	2,109,931	-	-	128,907,362
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	-	2,610,472	-	-	-	-	2,610,472
Վարձակալության գծով պարտավորություններ	43,445	94,841	394,153	1,853,007	8,846,386	-	-	11,231,832
Հանձնառությունների գծով պահուստ	359,219	-	-	-	-	-	-	359,219
Այլ պարտավորություններ	2,694,114	1,595,189	3,009,284	-	-	-	-	7,298,587
Ընդամենը պարտավորություններ	**308,065,941**	**66,717,406**	**278,891,258**	**285,890,338**	**41,492,178**	**-**	**-**	**981,057,121**
Զուտ դիրքը	**(24,406,964)**	**(14,094,552)**	**(138,702,548)**	**71,603,220**	**135,128,804**	**58,291,175**	**21,886,467**	**109,705,602**

Աղյուսակում ներկայացված մարման ժամկետների վերլուծությունն արտացոլում է անցյալ ժամանակաշրջանների օրինաչափությունը և հաճախորդների ընթացիկ հաշիվների փաստացի մարումների ծավալը:

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները: Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում.

	2021թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	**2020թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված**
Առ 31 դեկտեմբերի	118.5%	105.5%
Դեկտեմբեր ամսվա միջին ցուցանիշ	110.18%	85.32%

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափի հետ համապատասխանությունը գնահատելու համար, որը չպետք է պակաս լինի 60%-ից:

31 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել համապատասխանություն Բանկի կապիտալի համար գործող արտաքին պահանջներին և պահպանել բարձր պարտքային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը կառուցվածքը պահպանելու կամ դրա հետ կապված ճշգրտումներ կատարելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակները, քաղաքականությունը և ընթացակարգերը որևէ կերպ չեն փոխվել նախորդ տարիների համեմատությամբ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2020թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 12%: 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը՝ հետագա փոփոխություններով, այդ թվում՝ շուկայական ռիսկերի ներառման հետ կապված փոփոխություններով, դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2021թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2020թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
1-ին դասի կապիտալ	117,695,856	109,740,188
2-րդ դասի կապիտալ	26,136,335	19,383,780
Ընդամենը կապիտալ	**143,832,191**	**129,123,968**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	**940,874,175**	**927,581,125**
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	**15.29%**	**13.92%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով պահանջներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

32 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այս հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի:

Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկային քարտերի գծով հանձնառություններ	19,626,093	17,191,180
Ոչ ֆինանսական երաշխավորություններ	17,939,675	16,357,723
Ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ	6,716,448	12,085,764
Չօգտագործված վարկեր և վարկային գծով	8,068,230	9,094,265
Չօգտագործված օվերդրաֆտներ	14,872,110	8,489,195
	67,222,556	**63,218,127**
Արժեզրկման գծով պահուստ	(**244,929**)	**(359,219)**

Բացի վերը նշված փոխատվության հանձնառություններից, Բանկն ունի չօգտագործված վարկեր և վարկային գծեր, որոնց օգտագործումը պետք է լրացուցիչ հաստատվի Բանկի կողմից: Բանկը համարում է, որ մնացորդների գծով հանձնառություններ չեն ստանձվել: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները, որոնց գծով հանձնառություններ չեն ստանձվել, կազմում են 22,241,919 հազար դրամ (2020թ-ին՝ 11,884,119 հազար դրամ):

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխատվության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարվելը:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է հանձնառությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Հանձնառություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	325,743	14,145	19,331	359,219
Սկզբնավորված նոր հանձնառություններ	65,457	-	-	65,457
Ժամկետը լրացած հանձնառություններ	(125,433)	(4,058)	(60)	(129,551)
Տեղափոխում 1-ին փուլ	28,085	(8,814)	(19,271)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(397)	397	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(4,202)	-	4,202	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(50,482)	-	286	(50,196)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**238,771**	**1,670**	**4,488**	**244,929**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Հանձնառություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	111,188	3,620	1,414	116,222
Սկզբնավորված նոր հանձնառություններ	78,641	-	-	78,641
Ժամկետը լրացած հանձնառություններ	(28,812)	(2,068)	(1,414)	(32,294)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(9,674)	9,674	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(3)	(1,552)	1,555	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	174,403	4,471	17,776	196,650
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**325,743**	**14,145**	**19,331**	**359,219**

33 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

34 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝ «Իմաստ Գրուպ» (Սի-Ուայ) (48.90%), ՎՁԵԲ (17.74%), ԱՁԲ (13.93%), «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» (11.92%) և «Աֆեյան հիմնադրամ Հայաստանի համար» Ինկ. (7.51%):

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չուներ վերջնական վերահսկող կողմ:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	**3,139,168**	**1,799,729**

Այս գումարները ներառում են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների դրամային հատուցումները, որոնք հաշվեգրված են համապատասխան ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2021թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	2020թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր	863,356	7.13%	811,902	7.5%
Այլ ակտիվներ	1,697	-	2,331	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	714,739	6.22%	783,339	5.72%
Պարտատոմսեր	1,880,277	5.55%	-	-
Այլ պարտավորություններ	2,100,000	-	855,026	-

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	59,241	79,657
Տոկոսային ծախս	(25,453)	(17,183)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2021թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր ընկերություն		Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր		Անմիջական մայր ընկերության դուստր ընկերություններ		Համատեղ հսկողության ներքո գտնվող այլ ընկերություններ և այլ կապակցված կողմեր		
	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն									
Ակտիվներ									
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	-	-	-	-	-	2,216,840	8.97%	2,216,840
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	-	331	-	331
Պարտավորություններ									
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ									
• Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	10,217	-	188,113	0.00%	84,382	0.00%	1,788,473	0.00%	2,071,185
• Ժամկետային ավանդներ			-	-	52,831	2.2%	408,390	3.50%	461,221
Թողարկված պարտատոմսեր			-	-	768,761	6.86%	710,548	4.85%	1,479,309
Այլ փոխառություններ			4,011,965	3.86%	-	-	-	-	4,011,965
Այլ պարտավորություններ			5,823	0.0%	28	-	-	-	5,851
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ									
Ստացված երաշխավորություններ	-	-	9,205,743	0.64%	-	-	-	-	9,205,743
Շահույթ/(վնաս)									
Տոկոսային եկամուտ	-	-	4,241	-	-	-	151,121	-	155,362
Տոկոսային ծախս			(598,548)	-	(17,649)	-	(12,627)	-	(628,824)
Այլ ծախսեր	-	-	-	-	(47,864)	-	(41,210)	-	(89,074)

Ստորև ներկայացված են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2020թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր ընկերություն		Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր		Անմիջական մայր ընկերության դուստր ընկերություններ		Համատեղ հսկողության ներքո գտնվող այլ ընկերություններ և այլ կապակցված կողմեր		Ընդամենը հազ. դրամ
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն									
Ակտիվներ									
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	-	-	-	-	-	1,535,715	8.89%	1,535,715
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	-	364	-	364
Պարտավորություններ									
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ									
• Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	22,369	-	570,317	-	119,459	-	1,012,132	-	1,724,277
• Ժամկետային ավանդներ	-	-	-	-	520,051	5.64%	223,520	3.16%	743,571
Այլ փոխառություններ	-	-	24,812,076	2.68%	-	-	-	-	24,812,076
Այլ պարտավորություններ	-	-	77,936	-	6	-	-	-	77,942
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ									
Ստացված երաշխավորություններ	-	-	5,090,815	1.00%	-	-	-	-	5,090,815
Շահույթ/(վնաս)									
Տոկոսային եկամուտ	-	-	953	-	-	-	128,393	-	129,346
Տոկոսային ծախս	-	-	(852,535)	-	(40,216)	-	(10,233)	-	(902,984)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	-	-	-	(81,868)	-	-	-	(81,868)

35 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի, գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, իսկ ամորտիզացված արժեքով չչափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային և իրական արժեքները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2021թ.	**Հաշվեկշռային արժեք հազ. դրամ**	**Իրական արժեք հազ. դրամ**	**Տարբերություն հազ. դրամ**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	673,086,264	673,496,654	410,390
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	53,686,308	51,373,099	(2,313,209)
Ընդամենը	**726,772,572**	**724,869,753**	**(1,902,819)**

2020թ.	**Հաշվեկշռային արժեք հազ. դրամ**	**Իրական արժեք հազ. դրամ**	**Տարբերություն հազ. դրամ**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	696,495,523	695,334,192	(1,161,331)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	51,537,293	51,276,359	(260,934)
Ընդամենը	**748,032,816**	**746,610,551**	**(1,422,265)**

Ստորև բերվող աղյուսակում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
• Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	8,146,238	-	8,146,238
• Ածանցյալ ակտիվներ	-	77,722	-	77,722
• Ածանցյալ պարտավորություններ	-	(92,827)	-	(92,827)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				
• Ներդրումային արժեթղթեր	474,498	11,542,287	-	12,016,785
	474,498	**19,673,420**	**-**	**20,147,918**

Ստորև բերվող աղյուսակում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
• Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	9,459,051	-	9,459,051
• Ածանցյալ ակտիվներ	-	17,515	-	17,515
• Ածանցյալ պարտավորություններ	-	(504,412)	-	(504,412)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				
• Ներդրումային արժեթղթեր	978,804	10,229,197	-	11,208,001
	978,804	**19,201,351**	**-**	**20,180,155**

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

Սովորական և ավելի պարզ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ միայն դիտելի շուկայական տվյալներ օգտագործող և ղեկավարության դատողություններ և գնահատումներ գրեթե չպահանջող տոկոսադրույքի և արժութային սվոփերի, իրական արժեքը որոշելու համար Բանկը կիրառում է ընդունված գնահատման մոդելները: Դիտելի գները և մոդելի ելակետային տվյալները սովորաբար հասանելի են շուկայում՝ ցուցակված պարտքային և բաժնային արժեթղթերի, բորսայում շրջանառվող ածանցյալ գործիքների և բորսայում չշրջանառվող պարզ ածանցյալ գործիքների, այդ թվում՝ տոկոսադրույքի սվոփերի համար:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրությամբ՝ արտարժույթով արտահայտված վարկերի գծով 5.9%-12.1% զեղչման դրույքները և ՀՀ դրամով արտահայտված վարկերի գծով 9.4%-16.1% զեղչման դրույքները կիրառվում են հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից ակնկալվող դրամական հոսքերը զեղչելու համար:

36 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

2022թ. մարտի 1-ին Բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատեց «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» ընկերության կողմից լրացուցիչ 62 բաժնետոմսերի գնումը՝ 938,987 դրամով մեկ բաժնետոմսի համար (մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում էր 465,000 դրամ): Գործարքի արդյունքում Բանկի բաժնետերերի կազմը փոխվեց հետևյալ կերպ՝ «Իմաստ Գրուպ» (Սի-Ուայ) (48.87%), ՎԶԵԲ (17.73%), ԱԶԲ (13.92%), «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» (11.97%) և «Աֆեյան հիմնադրամ Հայաստանի համար» Ինկ. (7.51%):

37 Տերմինների բառարան

Հապավում	Սահմանում
IFRS	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ
ISAs	Աուդիտի միջազգային ստանդարտներ
IESBA Code	Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագիրք
IMF	Արժույթի միջազգային հիմնադրամ
CBA	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ALCO	Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի
FCA	Ֆինանսական վարքագծի մարմինը
ECL	Ակնկալվող պարտքային կորուստներ
PD	Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն
LGD	Կորուստը պարտազանցման դեպքում
FVTPL	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող
FVOCI	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող
EIR	Արդյունավետ տոկոսադրույք
SPPI	Միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ
EPS	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ
LTECL	Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ
12mECL	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները
POCI	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված
EAD	Պարտքի գումարը պարտազանցման պահին
SOFR	Ապահովված օվերնայթ ֆինանսավորման տոկոսադրույք
LIBOR	Լոնդոնի միջբանկային առաջարկի տոկոսադրույք
EURIBOR	Եվրոպական միջբանկային առաջարկի տոկոսադրույք

07.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԺԱՊԿ	ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ
ԱՁ	անհատ ձեռներեց
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՄՍ	Աուդիտի միջազգային ստանդարտներ
ԱՊԿ	Ակնկալվող պարտքային կորուստներ
ԱՊԿԿ	Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՊՊԱ	Ավտոտրանսպորտային միջոցների պատասխանատվության պարտադիր ապահովագրություն
ԱՔՌԱ	Արմենիան Քրեդիտ Ռեփորթինգ Էյջնսի՝ ՀՀ վարկային բյուրո
ԲԲԸ	բաց բաժնետիրական ընկերություն
ԵՄ	Եվրամիություն
ԶՊՄԿ	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ
ԷԿԵՆԳ	«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ66
ԼԻԲՈՐ	Լոնդոնի միջբանկային տոկոսադրույք
ԿԶՆ	կայուն զարգացման նպատակ
ԿՍՊ	կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
ՀԷՄՍԽ	Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհուրդ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ
ՀՀՄՍ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՀՊՃՀ	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
Մլն	միլիոն
Մլրդ	միլիարդ
ՄՎԿ	Մեծ վարկային կոմիտե
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՄՖՀ	միջազգային ֆինանսական հաստատություն
ՅՈՒՆԻՍԵՖ	Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՍԳԻ	սպառողական գների ինդեքս
ՍՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏՏ	տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերություն
ՓԼ/ԱՖ	փողերի լվացման/ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

ՓՄՁ	փոքր և միջին ձեռնարկություններ
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ
ACCA	Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիա
AEA	Ամերիկյան տնտեսական ասոցիացիա
AMD	ՀՀ դրամ
AMEX	Ամերիկայի ֆոնդային բորսա
AMX	Հայաստանի Հանրապետության ֆոնդային բորսա
API	կիրառական ծրագրերի ինտերֆեյս
ARCA	Արմենիան Քարդ
ASX	Ավստրալիայի ֆոնդային բորսա
AZN	ադրբեջանական մանաթ
BCA	(Baseline Credit Assessment)՝ սեփական վարկունակության ցուցանիշ (Moody's)
BSTDB	Սևծովյան առևտրի և զարգացման բանկ
CBOT	Չիկագոյի առևտրի խորհուրդ
CEI	(Customer Experience Index)՝ հաճախորդների փորձառության ցուցանիշ
CFA	երդվյալ ֆինանսական վերլուծաբան
CRA	(Counterparty Risk Assessment)՝ կոնտրագենտի ռիսկի գնահատական (Moody's)
CRM	հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարում
DEG	Գերմանիայի ներդրումային կորպորացիա
EBITDA	շահույթը մինչև տոկոսագումարի, հարկերի վճարումը և ամորտիզացիոն մասհանումները
EDB	Եվրասիական զարգացման բանկ
EMEA	Եվրոպա, Մերձավոր Արևելք և Աֆրիկա
EV	ձեռնարկության արժեք
FMO	Նիդերլանդների զարգացման բանկ
FWB	Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսա
GCPF	Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամ
GEL	վրացական լարի
HoReCa	հյուրանոցային, ռեստորանային և հանրային սննդի բիզնես
IBOR	միջբանկային առաջարկի տոկոսադրույք
IBX	Interactive Brokers կազմակերպության առցանց հարթակ
IFC	Միջազգային ֆինանսական կորպորացիա
INSEAD	Բիզնես-վարչարարության եվրոպական ինստիտուտ
IPO	արժեթղթերի առաջնային հրապարակային տեղաբաշխում
KBC	Kredietbank, բելգիական ունիվերսալ բազմաֆունկցիոնալ բանկ
KPI	արդյունավետության հիմնական ցուցանիշ
KYC	Know Your Customer՝ ճանաչիր քո հաճախորդին
KZT	ղազախական տենգե
LIBOR	Լոնդոնի միջբանկային տոկոսադրույք
LSE	Լոնդոնի ֆոնդային բորսա
MBA	գործարար կառավարման մագիստրոս
NASDAQ	արժեթղթերի դիլերների ազգային ասոցիացիայի ավտոմատ գնանշման համակարգ
OMX	
NPS	(Net Promoter Score)՝ հաճախորդների հավատարմության ցուցանիշ

NYSE	Նյու-Յորքի ֆոնդային բորսա
ODDO BHF	Ֆրանս-գերմանական ֆինանսական ծառայությունների խումբ
OeEB	Ավստրիական զարգացման բանկ
OFID	ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամ
PMP	նախագծերի կառավարման պրոֆեսիոնալ մասնագետ
POS	առևտրի կետ
RUB	ռուսական ռուբլի
SACP	(Stand-Alone Credit Profile)՝ սեփական վարկունակության ցուցանիշ (S&P)
SBF	ֆրանսիական ֆոնդային շուկայի ինդեքս
SEHK	Հոնկոնգի ֆոնդային բորսա
SME	փոքր և միջին ձեռնարկություններ
SOFR	ապահովված մեկօրյա ֆինանսավորման տոկոսադրույք
SUNY	Նյու-Յորքի պետական համալսարան
SWX	Շվեյցարիայի ֆոնդային բորսա
TRY	թուրքական լիրա
TSE JPN	Տոկիոյի ֆոնդային բորսա
UBS	Union Bank of Switzerland, շվեյցարական բանկ
VaR	Value-at-Risk՝ ռիսկի ենթարկված արժեք
VISA	VISA միջազգային վճարահաշվարկային համակարգ
VSE	Վիեննայի ֆոնդային բորսա



010 56 11 11 | ameriabank.am

Ամերիաբանկ ՓԲԸ-ն վերահսկվում է
ՀՀ կենտրոնական բանկի կողմից: